

ՍԱՄԿԵԼ ՖԱՐՄԱՆՅԱՆ

ԾԱՊՈՂԱԿԱՆ
ԴՐՎԵՔԸ ԵՎ
ԾԱՊՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ФАРМАНЯН САМВЕЛ

ЯПОНСКОЕ ЧУДО И ЯПОНЦЫ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

FARMANYAN SAMVEL

THE JAPANESE MIRACLE AND THE JAPANESE

ЕРЕВАН - АЙАГИТАК
YEREVAN - HAYAGITAK

2012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՄՎԵԼ ՖԱՐՄԱՆՅԱՆ

A 97992
11

**ՃԱՊՈՐԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ
ԵՎ
ՃԱՊՈՐԱՅԻՆԵՐԸ**



ԵՐԵՎԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿ
2012

ՀՏԴ. 391/395:93/94:323
ԳՄԴ. 63.5+63.3+66.3
Ֆ 291

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԼԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԻ ՈՐՈՇՍԱԼՄԵ

*Խմբագրական խորհուրդ՝ Պ. Ավետիսյան,
Ս. Հարությունյան, Լ. Աբրահամյան,
Ա. Ղազիյան, Ս. Հոբոսյան*

Գիրքը հրատարակության են երաշխավորել
պ. գ. դ. Հարություն Մարությանը և պ. գ. ք. Մխիթար Գաբրիելյանը

Ֆ 291

Ճապոնական հրաշքը և ճապոնացիները/Ս.Ֆարմանյան; ՀՀ Գիտ.
ազգ. ակադեմիա, հնագիտության և ազգագրության ինստիտուտ.-Եր.:
Հայագիտակ, 2012. - 228 էջ

Աշխատությունում քննարկվում են երկրորդ համաշ-
խարհային պատերազմից հետո Ճապոնիայում տեղի ունեցած
սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական զարգա-
ցումները, ինչպես նաև հետպատերազմյան ճապոնական
հասարակության էթնոմշակութային կերպավորման հիմնա-
կան առանձնահատկությունները: Հիմնվելով Ճապոնիայում
անցկացրած դաշտային ազգագրական աշխատանքի
արդյունքների վերլուծության և անձնական դիտարկումների
վրա՝ հեղինակը արդի ազգաբանության դիտանկյունից վեր է
հանել ճապոնացիների էթնիկական ինքնության և Ճապոնիայի
հետպատերազմյան արդիականացման փոխառնչության
խնդիրները:

Նախատեսվում է ազգագրագետների, պատմաբանների և
արևելագետների համար:

ՀՏԴ. 391/395:93/94:323
ԳՄԴ. 63.5+63.3+66.3

ISBN 978-9939-823-11-9

© Հայագիտակ, 2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ	6
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	11
ԳԼՈՒԽ Ա	
ՃԱՊՈՆԻԱՅԻ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	31
ԳԼՈՒԽ Բ	
ՃԱՊՈՆԱՑԻՆԵՐԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՊՈՆԻԱՅԻ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....	70
ԳԼՈՒԽ Գ	
ՃԱՊՈՆԻԱՅԻ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱԿԱԴԱՐՁ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՊՈՆԱՑԻՆԵՐԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՎՐԱ	121
ՎԵՐՋԱԲԱՆ	180
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	186
Հավելված 1	
Խմբային հարցախույզի հարցաշար	196
Հավելված 2	
Խմբային հարցախույզի ամփոփ տվյալներ	200
Հավելված 3	
Անհատական հարցազրույցների ցանկ	226

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՅ

Ճապոնիան, երկրորդ համաշխարհային պատերազմում կրելով պարտություն ու ծանր կորուստներ, այդուհանդերձ, կարողացավ շատ կարճ ժամանակամիջոցում՝ շուրջ 30 տարում, ոչ միայն հասնել իր տնտեսական զարգացածության մինչպատերազմյան մակարդակին, այլև աճման բարձր տեմպերի շնորհիվ դառնալ աշխարհի տնտեսապես զարգացած գերտերություններից և համաշխարհային տնտեսական գործընթացները թելադրող հիմնական կենտրոններից մեկը: Մասնագիտական գրականության մեջ այդ երևույթը բնութագրվեց ամենատարբեր որակումներով՝ «ճապոնական հրաշք», «ճապոնական տնտեսական բում», «զարգացման ճապոնական մոդել» և այլն¹:

Դեռ 16-րդ դարից, երբ ճապոնացիներն առաջին անգամ շփման մեջ մտան հոլանդացի ծովագնացների հետ, և ավելի հաճախ ու ինտենսիվ կերպով՝ 19-րդ դարի 60-ական թվականներից Ճապոնիան մեծ հետաքրքրություն առաջ բերեց Արևմուտքում: Ընդ որում, այն չսահմանափակվեց զուտ էկզոտիկ մշակույթ ունեցող հասարակության նկատմամբ ցուցաբերվող հետաքրքրությամբ. այլ, համակելով ինչպես արևմտյան հասարակությունների մտավորականությանը, այնպես էլ հասարակ քաղաքացիներին, վերածվեց դեպի իրեն ձգող մի յուրահատուկ մագնիսական ուժով օժտված հասարակության նկատմամբ զարմանքի ու հիացմունքի:

Ընդհանուր առմամբ, ընդունված է Ճապոնիայի նոր պատմության պարբերականացման հիմքում դնել Մեիձիի հեղափոխությունը, թեև քիչ չեն այն պատմաբանները, որոնց կարծիքով Ճապոնիայի նոր պատմությունն սկսվում է երկրորդ

¹ Թեև որոշ մասնագետներ այս բնութագրումներն օգտագործում են միայն Ճապոնիայի աննախադեպ տնտեսական թռիչքը շեշտելու համար, սակայն պակաս արտառող և աննախադեպ չէր նաև Ճապոնիայի արագ անցումը բացարձակ միապետականության վարչակարգից ժամանակակից ժողովրդավարական կարգերի:

համաշխարհային պատերազմի ավարտով: Հարկ է նշել, որ ճապոնագիտական գրականության մեջ հաճախ երկրորդ համաշխարհային պատերազմն անվանվում է նաև «խաղաղօվկիանոսյան պատերազմ», այսինքն՝ որպես հիմնական բնութագրիչ ընդունվում է Խաղաղ օվկիանոսի երկու կողմերի՝ ԱՄՆ-ի և Ճապոնիայի միջև տեղի ունեցած պատերազմը, ինչով դիտարկումից դուրս է թողնվում համաշխարհային պատերազմի ինչպես ասիական, այնպես էլ եվրոպական համատեքստը:

Սույն աշխատության մեջ մենք փորձել ենք ներկայացնել Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման հիմնական առանձնահատկությունները, այդ գործում էթնիկական ինքնության ունեցած դերակատարությունը, ինչպես նաև արդիականացման հակադարձ ազդեցությունը ճապոնացիների էթնիկական ինքնության հետագա շարունակական փոխակերպումների վրա, վերլուծել արդիականացման ու էթնիկական ինքնության կերպափոխման հիմնական գործոնները, առանձնահատկությունները և ճապոնացիների էթնոմշակութային առանձնահատկությունների համար դրանց կարճաժամկետ, միջնաժամկետ ու երկարաժամկետ հետևանքները:

Հետազոտության համակողմանիությունն ապահովելու նպատակով մենք փորձել ենք պատասխան գտնել հետևյալ հարցերին.

- ի՞նչ հիմնական առանձնահատկություններ է ունեցել Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացումը,
- ինչպե՞ս կարելի է բնութագրել էթնիկական ինքնության և հետպատերազմյան արդիականացման փոխառնչությունները,
- ի՞նչ դերակատարություն է ունեցել ճապոնացիների էթնիկական ինքնությունը Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման գործում,
- ինչպե՞ս են հետպատերազմյան զարգացումներն ազդել ճապոնացիների էթնիկական ինքնության հետագա փոխակերպումների վրա, և էթնիկական ինքնության ո՞ր հարթություններում և ինչպե՞ս է դա դրևորվել,

- կարող են *Նիհոնշինոռնի* և *Նիհոնբունկառոնի*² տեսությունները դիտարկվել իբրև հակադարձ ազդեցություն, և, որպես այդպիսին, ի՞նչ ազդեցություն են դրանք ունեցել ճապոնացիների էթնիկական ինքնության հետագա փոխակերպման գործում,
- ի՞նչ ազդեցություն է ունեցել հետպատերազմյան արդիականացումը ճապոնացիների պատմական հիշողության՝ որպես էթնիկական ինքնության կարևոր տարրերից մեկի հետագա փոխակերպումների վրա, կարելի՞ է «ճապոնական հրաշքից» հետո նկատելիորեն ինտենսիվացած և մինչ օրս չդադարող՝ ճապոնիայի պատմության վերանայման, վերագնահատման ու վերաարժեքավորման փորձերը դիտել որպես *Նիհոնշինոռնի* մաս,
- ի՞նչ գործընթացներով են ուղեկցվել և որպես հետպատերազմյան արդիականացման հետևանք ճապոնացիների էթնիկական ինքնության վրա ի՞նչ ազդեցություն են ունեցել ճապոնիայի «միջազգայնացումը» և համընդհանրացումը,
- վերջին տասնամյակներում ասիական այլ երկրների տնտեսական առաջընթացը և միջազգային դերի բարձրացումը արդյոք նպաստե՞լ են ճապոնացիների էթնիկական ինքնության մեջ «ասիական» շերտի ավելի մեծ չափով ակտիվացմանը:

Հարկ ենք համարում նշել, որ թեև սույն աշխատության մեջ քննարկման առարկան երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ճապոնիայի արդիականացման և ճապոնացիների էթնիկական ինքնության փոխառնչության խնդիրներն են, սակայն տարբեր հարցերի վերլուծության համար ուսումնասիրության նյութ է դառնում ավելի վաղ՝ Մեիժիի հեղափոխությանը հաջորդած, պատմական ժամանակաշրջանը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ճապոնիայի արդիականացումը և ժամանակակից պատմությունը սկսվում են հենց այդ ժամանակաշրջանից: Նման մոտեցումը մեզ հնարավորություն է տվել պատմական

² Սույն աշխատության մեջ ճապոնական հատուկ անունները և այլ տերմիններ ներկայացված են տառադարձության »Hebburn« համակարգով, որը ճապոներենի բառարանագիտության մեջ այսօր ամենագործածականն է:

մտազուգորդումներ անցկացնել հետպատերազմյան զարգացումների և ավելի վաղ ժամանակներում տեղի ունեցած իրողությունների միջև:

Սույն ուսումնասիրության համար սկզբնաղբյուր են ծառայել հեղինակի կողմից 2002 թ. աշնանը Ճապոնիայում կատարված դաշտային ազգագրական աշխատանքների շնորհիվ ձեռք բերված նյութերը՝ ընդհանուր թվով 11 հարցազրույցի և 200 հոգու մասնակցությամբ անցկացված հարցախույզի արդյունքները, ինչպես նաև որոշ ժամանակ ճապոնացիների հետ շփումների միջոցով նրա կատարած դիտարկումները և էթնոմեթոդաբանական եղանակով հավաքված տվյալները:

Ելնելով գիտական անհրաժեշտությունից՝ հեղինակը սույն աշխատության մեջ օգտագործել է օտարալեզու, հիմնականում՝ ճապոներենից փոխառված կամ հիմքում ճապոնական արմատներ ունեցող, տերմինաբանություն, որի մի մասը հայրենական ճապոնագիտության ասպարեզում առաջին անգամ է դրվում շրջանառության մեջ: Հաշվի առնելով տերմինների համատեքստային առանձնահատկությունները՝ մենք համապատասխան տեղերում տալիս ենք դրանց իմաստային, ինչպես նաև՝ հարկ եղած դեպքում, ստուգաբանական բացատրությունները:

Ավարտելով սույն համառոտ ներկայացումը՝ անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ այս աշխատության նյութն ընդհանուր առմամբ չի առնչվում հայությանը, ուստի առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծվել, թե հիմնական եզրակացություններն էլ չեն կարող կիրառական նշանակություն ունենալ հայ իրականության համար: Սակայն մեր կարծիքով դա այդպես չէ. տարբեր բաժիններում քննարկվող մի շարք համընդհանրական իրողություններով պայմանավորված՝ սույն գիտական վերլուծությունից բխող եզրահանգումները կարող են կիրառական նշանակություն ունենալ նաև արագ զարգացման ու արդիականացման մարտահրավերի առջև կանգնած այնպիսի պետությունների համար, ինչպիսին Հայաստանն է: Ըստ այդմ՝ մերօրյա հայաստանյան իրականությունում տեղի ունեցող գործընթացների ինչպես ընկալման, այնպես էլ ծրագրման և ուղղորդման տեսանկյունից ճապոնական մոդելի ուսումնասիրությունն ունի կարևոր նշանակություն:

Բացի այդ, կարծում ենք, որ սույն աշխատության մեջ առաջ քաշված հիմնական դրույթները, մեկնաբանություններն ու եզրահանգումները, ինչպես նաև դաշտային հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման, Ճապոնիայի պատմության ու ճապոնացիների էթնիկական ինքնության հարցերով զբաղվող հայ մասնագետների համար: Աշխատության որոշ դրույթներ կարող են նաև օգտակար լինել բուհական դասագրքերի կազմման, ինչպես նաև Ճապոնիայի նկատմամբ քաղաքականության մշակման հարցերում՝ ճապոնական հասարակության խորքային կերպավոր-խումբների դիմամիկան հստակորեն պատկերացնելու համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր դրույթներ: Ինչպես Ճապոնիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս մինչ օրս շարունակվում են բանավեճերն ու գիտական տարակարծություններն այն հարցում, որ արդյոք Ճապոնիայի այսպես կոչված «կոկոսայկան», կամ միջազգայնացումը, որակական իրողություն է, թե սոսկ մակերեսային բնույթի է և արտացոլված է միայն տնտեսական հարթությունում՝ թելադրված լինելով զուտ տնտեսական շահերով և համընդհանուր շուկայական ռազմավարությամբ: Խոսքը վերաբերում է տարբեր աշխարհամասերում գտնվող և մշակութային տեսակետից միմյանցից միանգամայն տարբեր հասարակություններում ընթացող գրեթե նույնաբովանդակ բանավեճին՝ նվիրված հատուկ ինտենսիվությամբ տեղի ունեցող համընդհանրացման երևույթների պայմաններում ժողովուրդների էթնոմշակութային առանձնահատկությունների հնարավոր համադրման կամ անխուսափելի համահարթեցման երկրնտրանքին:

Քանի որ հիմնավորված կարելի է համարել այն փաստը, որ երկրորդ համաշխարհային պատերազմից և առավել շեշտված՝ Ճապոնիայի արդիականացումից հետո «արդիականացումը» և «արևմտականացումը» ճապոնացիների էթնիկական ինքնության մեջ ուղեկցվեցին որոշակի «ապաստիականացմամբ», իսկ վերջին երկու-երեք տասնամյակներին՝ նաև «վերաասիականացմամբ», անշուշտ, հետաքրքրական կլիներ խոր վերլուծության ենթարկել այն հարցը, թե ինչպես է ճապոնացիների հավաքական ինքնությունն արձագանքել 1980-ական թթ. Արևելյան և Հարավարևելյան Ասիայի այլ երկրների արագ զարգացմանը:

Թեև «ճապոնական հրաշքի», դրա հիմքում եղած պատճառների ու դրան նպաստած գործոնների ուսումնասիրությամբ ինչպես առանձին հումանիտար գիտությունների, այնպես էլ միջգիտաճյուղային տեսանկյունից զբաղվել են մեծ թվով հետազոտողներ, հրապարակվել են սովորաժավ աշխատություններ,

սակայն առ այսօր չկա Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման և ճապոնացիների էթնիկական ինքնության փոխառնչության խնդիրներին մվիրված համընդգրկուն աշխատություն, որը լույս սփռեր ոչ միայն «ճապոնական հրաշքի» կերտման գործում էթնիկական ինքնության տարբեր տարրերի դերի վրա, այլև, ինչն ավելի կարևոր է, հետպատերազմյան արդիականացման և էթնիկական ինքնության փոխառնչությունն ուսումնասիրեր որպես մեկ ամբողջություն՝ բավարար ուշադրություն դարձնելով նաև այն հակադարձ ազդեցությանը, որ Ճապոնիայի արդիականացումն ունեցավ ճապոնացիների էթնիկական ինքնության հետագա փոխակերպումների վրա:

Եթե կատարվել են էթնիկական ինքնության դերակատարությանը վերաբերող արժեքավոր միջգիտաճյուղային հետազոտություններ, ապա դեռ չկան ինքնության հետ արդիականացման հակադարձ կապի ազգաբանական կամ բազմաշերտ միջգիտաճյուղային ուսումնասիրություններ: Ինչպես այստեղ փորձ է արվում ցույց տալ, էթնոմշակութային առանձնահատկությունները եղել են Ճապոնիայի հետպատերազմյան արագ արդիականացման կարևոր, բայց ոչ միակ գործոնը: Մյուս կողմից՝ արդիականացումն իր հերթին կարևոր դեր է ունեցել ճապոնացիների էթնիկական ինքնության հետագա փոխակերպումների գործում. ճապոնացիների էթնիկական ինքնության մեջ և էթնոմշակութային առանձնահատկություններում նկատվում են զարգացման այդ գործոններով պայմանավորված բավական ինքնատիպ փոփոխություններ, ինչը վկայում է, որ տվյալ դեպքում գործ ունենք շատ բարդ, երկսայր և փոխպայմանավորված շարունակական գործընթացի հետ:

Իհարկե, անհնար է վիճակագրական ճշգրտության պայմաններում պարզել ճապոնացիների էթնիկական ինքնության և Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման փոխառնչությունը, ինչը, մեր խորին համոզմամբ, դուրս է ինչպես հեղինակի առջև դրված խնդիրների շրջանակից, այնպես էլ գիտության մեկ ճյուղի կամ գիտական մեկ ուսումնասիրության հնարավորությունների սահմաններից: Փոխարենը կփորձենք պարզություն մտցնել այս խնդիրներում՝ հենվելով ինչպես տեսական դատողությունների ու տեսական դրույթների, այնպես էլ փաստացի ազգագրական նյութի

ու հեղինակի կողմից Ճապոնիայում 2002 թ. աշնանը կատարված դաշտային ուսումնասիրությունների արդյունքների վերլուծության վրա, հարկ եղած դեպքում չխուսափելով նաև համեմատական վերլուծություններից ու հարակից գիտությունների ընձեռած մեթոդաբանական հնարավորություններից:

Մենք նպատակ ունենք, հիմնվելով առկա ազգաբանական, պատմագիտական, սոցիոլոգիական, հոգեբանական ստվարածավալ գրականության, Ճապոնիայում հեղինակի կատարած դաշտային ազգագրական հետազոտության արդյունքների վերլուծության ու անձնական դիտարկումների վրա, արդի ազգաբանության տեսանկյունից ուսումնասիրել ճապոնացիների էթնիկական ինքնության և Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման փոխառնչության խնդիրները: Հետպատերազմյան արդիականացման վրա ճապոնացիների էթնիկական ինքնության գործած ազդեցությունը հետազոտելիս նպատակահարմար ենք համարել որպես հիմնական հարցադրումներից մեկը դիտարկել այն հակադարձ ազդեցությունը, որը էթնիկական ինքնության վրա ունեցել է Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացումը, այսինքն՝ թե որքանով և ինչպես է հետպատերազմյան արդիականացումն իր հերթին պայմանավորել ճապոնացիների էթնիկական ինքնության հետագա փոխակերպումները: Չնայած այն բանին, որ սույն աշխատության մեջ բերվող փաստարկումների և հիմնական եզրակացությունների համար մասնակի հիմք են ծառայել 10 տարի առաջ կատարված դաշտային հետազոտության արդյունքները, այդուհանդերձ, էթնոմշակութային կերպափոխումների տարբեր գործընթացների և դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ նման կարճ ժամանակահատվածում հիմնարար ու որակական փոփոխությունների հավանականությունը փոքր է, ուստի քննարկվող փաստերը և հիմնական եզրահանգումները շարունակում են արդիական մնալ նաև այսօր:

Հետազոտության մեթոդաբանությունը: Գիտական առարկայականության սկզբունքն ապահովելու համար սույն հետազոտության առանցքային դրույթները մեր կողմից քննարկվել են պատմաքննադատության, պատմահամեմատականության և միջգիտաճյուղային հետազոտության մեթոդների կիրառմամբ: Պատմահամեմատականությունը ինչպես ազգաբանության, այնպես էլ

հասարակական այլ գիտությունների և առաջին հերթին սոցիոլոգիայի մեթոդաբանական առավելություններից մեկն է³: Նման մեթոդաբանական հիմքի վրա հնարավոր է դառնում ուսումնասիրությանն առնչվող ազգաբանական, պատմական, մշակութաբանական, սոցիոլոգիական և հոգեբանական շատ հարցեր դիտարկել մեկ ամբողջական համակարգի մեջ: Զանի որ հետազոտությունը, ազգաբանական բնույթ ունենալով հանդերձ, միևնույն ժամանակ սերտ առնչություններ ունի գիտության այլ ճյուղերի հետ, մենք նպատակահարմար ենք համարել օգտագործել նաև պատմագիտության, սոցիոլոգիայի, մշակութաբանության տեսական ու մեթոդաբանական նորագույն սկզբունքները, որոնք լայն կիրառություն են ստացել հատկապես արևմտյան գիտության մեջ՝ կապված էթնիկական ինքնության ուսումնասիրությանը վերաբերող խնդիրների հետ:

Հասարակական-քաղաքական և էթնոմշակութային վերափոխումներում ու զարգացումներում էթնիկական ինքնության դերի ուսումնասիրությունն օբյեկտիվորեն ստեղծում է որոշակի մեթոդաբանական բարդություններ, ինչն առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ շատ դժվար է առանձնացնել ուսումնասիրության կոնկրետ առարկան և խնդիրները, որոշել այդ ուսումնասիրության սահմանները, սահմանափակվել կոնկրետ գիտության հետազոտական մեթոդներով կամ նրա առաջարկած հասկացութային-տերմինաբանական ապարատով: Այս առումով հասարակական զարգացումներում էթնիկական կամ խմբային ինքնության այլ դրսևորումների դերի հետազոտությունը օբյեկտիվորեն թելադրում է տարբեր մեթոդների կիրառում, իսկ ուսումնասիրության առարկայի ու խնդիրների ծավալը պայմանավորում է նման հետազոտությունների հիմնականում միջգիտաճյուղային բնույթը:

Զննության առնելով հումանիտար գիտությունների բնագավառում կիրառվող երկու հիմնական՝ որակական և քանակական, մեթոդների առավելություններն ու թերությունները՝ մենք դրված խնդիրների համակողմանի ուսումնասիրության համար

³ Stu Schneider L. and Dilverman A., *Global Sociology: Introducing Five Contemporary Societies*. WCB/McGraw-Hill, 1997, էջ XXVI:

առավել նպատակահարմար ենք համարել ամբողջ նյութը դիտարկել այդ երկու մեթոդների համադրությամբ: Նման մեթոդաբանական ընտրությունը բխում է աշխատության ազգաբանական-սոցիոլոգիական-պատմագիտական բնույթից: Ինչպես հիմնավորում են Ռ-ալխարդտը և Քուկը, հետազոտությունների որակական ու քանակական մեթոդները կարող են արդյունավետ կերպով կիրառվել ազգաբանական-սոցիոլոգիական և պատմագիտական բնույթի հետազոտություններում⁴, քանի որ նման դեպքերում դրվող խնդիրները սովորաբար լինում են լայն և դուրս են գալիս կոնկրետ ազգաբանական, պատմագիտական կամ սոցիոլոգիական հետազոտության շրջանակներից: Միևնույն ժամանակ, այդ խնդիրների բազմազանությունը պահանջում է նաև ընտրվող մեթոդների բազմազանություն և համադրում: Մյուս կողմից՝ հետազոտությունը տվյալ մեթոդների համադրությամբ կատարելու դեպքում ապահովվում են ավելի համապարփակ արդյունքներ և ծանրակշիռ եզրակացություններ, քան դա հնարավոր կլիներ անել միայն մեկ մեթոդի կիրառման պարագայում: Դրա հետ մեկտեղ, քանի որ յուրաքանչյուր մեթոդ ունի իր բացերն ու սահմանափակումները, մեթոդների համադրումը կարող է հետազոտողին օգնել համակողմանիորեն քննության ենթարկել դրված խնդիրները և բացառել սխալ հետևությունների հանգեկու հնարավորությունը:

Ուսումնասիրությունների ընթացքում անհրաժեշտ է լինում նաև քննել ու վերլուծել տարբեր հետազոտողների, գիտահետազոտական խմբերի և անհատների կարծիքներ, տեսակետներ, մտքեր և տեսություններ: Այս տեսանկյունից ևս նման մեթոդաբանական ընտրությունն ու համադրումն ապահովում են քննարկվող երևույթների համակողմանի և խոր վերլուծության լայն մեկնարկային հնարավորություններ:

Որպես որակական մեթոդաբանության կարևոր տարր սույն հետազոտության մեջ լայնորեն կիրառված է հարցազրույցների և խմբային հարցախույզների մեթոդը: Հարցազրույցի մեթոդը, որը սովորաբար սահմանվում է որպես «նպատակային

⁴ Stu Reichardt C. and Cook T., *Qualitative and Quantitative Methods in Evaluation Research*. Beverly Hills, London, Sage Publications, 1979:

երկխոսություն⁵», որակական հետազոտության ամենաընդունելի տարբերակներից մեկն է: Հարցազրույցին՝ որպես որակական հետազոտության մեթոդի նվիրված հարուստ գրականության մեջ հատկապես ուշագրավ է Բերգի հիմնարար աշխատությունը: Այդ գիտնականը, հղում կատարելով Դենզինին, Բաբիեին և Գորդոնին, առանձնացնում է հարցազրույցի հետևյալ երեք հիմնական տարատեսակները՝ ստանդարտ (ձևարկված), ոչ ստանդարտ (ոչ ձևարկված) և կիսաստանդարտ (հետազոտողի կողմից ուղղորդվող-կիսավարտ): Միևնույն ժամանակ, հարցազրույցը՝ որպես ազգաբանական հետազոտության մեթոդ, պետք է բավարարի հետևյալ երեք հիմնական գիտական պահանջներին. այն պետք է ապահովի ճշգրիտ արդյունքներ (արժանահավատություն), արդյունքների վավերականություն (ստույգություն) և, վերջապես, արդյունքները պետք է կիրառելի լինեն ընդհանրացումներ անելու համար: Այսպես, 2002 թ. աշնանը Ճապոնիայում կատարված դաշտային ազգագրական աշխատանքների ժամանակ մենք կիրառեցինք կիսաստանդարտ հարցազրույցը, ինչը պայմանավորված էր թեմայի առանձնահատկություններով և հարցազրույց տվող մարդկանց մասնագիտական պատրաստականության աստիճանով:


Հարցազրույցի միջոցով հավաքված նյութերի արժանահավատությունն ապահովելու համար մենք դաշտային աշխատանքի ընթացքում անցկացրինք փորձնական հարցազրույցներ՝ հիմնականում տարբեր սեռի մայրաքաղաքաբնակ երիտասարդների հետ: Այս մեթոդը հնարավորություն տվեց բացառելու հարցարանի այն հարցերը, որոնք «չաշխատեցին», ինչն էլ իր հերթին մեծապես օգնեց զարգացնելու այն հարցերը, որոնք ապահովում էին թեմայի ուսումնասիրության համար արժանահավատ արդյունքներ, և վերջնական տեսքի բերելու հարցարանը: Վավերականության ապահովման համար հարցազրույցի հրավիրվեցին տարբեր սեռատարիքային խմբերի և տարբեր մասնագիտությունների մարդիկ, ինչը նպաստեց ստացված արդյունքների հիման վրա որոշակի ընդհանրացումների կատարմանը: Թեև միջոցների անբավարարության և դաշտային աշխատանքների կարճատևության պատճառով

⁵ Berg B., *Qualitative Research Methods for the Social Sciences*, Boston, 1989, էջ 15:

26676 II A
հարցազրույցների ընդհանուր թիվը սահմանափակ էր՝ ընդամենը ութ, սակայն հնարավոր եղավ ստացված արդյունքների վերլուծությամբ անել որոշ ընդհանրացումներ: Հարցազրույցների սահմանափակությունը մեթոդաբանական առումով համակշռվեց այն բանով, որ դրանք անցկացվեցին միևնույն հարցարանով (ներկայացվում է որպես հավելված): Դրա հետ մեկտեղ հարցազրույցի ընթացքում ծագում էին նաև իրադրությունից բխող նոր հարցեր, որոնցից հեղինակը չխուսափեց, ինչն օգնեց մինչև վերջ պարզելու և հասկանալու քննարկվող թեմայի վերաբերյալ պատասխանողի տեսակետները: «Հարցազրույցը՝ որպես որակական հետազոտության մեթոդ, պետք է լինի նպատակային, սակայն երբեք՝ ոչ քարացած»⁶:

Մեր հարցազրույցների՝ որպես դաշտային աշխատանքի մեթոդի մյուս, թերևս ամենակարևոր առանձնահատկությունն այն էր, որ դրանցում ներգրավվեցին գերազանցապես մտավորականության ներկայացուցիչներ՝ գիտնականներ, համալսարանական դասախոսներ, երիտասարդ հետազոտողներ, տեղացի և օտարերկրյա գործարարներ, որոնց տարիքը հիմնականում 40-ից բարձր էր: Հասարակական դիրքի առումով նման նեղ շրջանով պատասխանողների ընտրությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ դաշտային նյութի առավել մեծ մասն ստացվելու էր Տոկիոյի արվարձանի ավագ դպրոցի և մասնավոր համալսարաններից մեկի ուսանողության շրջանում 65 հարցերից բաղկացած հարցարանով անցկացված հարցախոյզի միջոցով: Փաստորեն, խմբային հարգախոյզը, որպես թիրախ ունենալով թեմայից բխող տարբեր հարցերի նկատմամբ երիտասարդ և պատանի ճապոնացիների վերաբերմունքը, նպատակ էր հետապնդում պարզել տվյալ տարիքային խմբի, գործնականում՝ այն սերնդի մոտեցումները, որը «ճապոնական հրաշքի» արդյունքների հիմնական հասցեատեր-սպառողն է, մինչդեռ հարգազրույցների միջոցով պետք է պարզվեին գրեթե նույն խնդիրների նկատմամբ ավելի ավագ սերնդի մոտեցումները, մի սերնդի, որն իրեն համարում է «ճապոնական հրաշքի» կերտողների մաս: Նման տարբերակված

⁶ Kvale S., *Interviews: An Introduction to Qualitative Research Interviewing*, California, Sage Publications, Inc., 1996:



մոտեցման կարևորությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ հնարավորություն էր տալիս բացահայտելու թեմայից բխող բազմաթիվ առանցքային խնդիրների նկատմամբ տարբեր սերունդների վերաբերմունքների միջև եղած տարբերությունները:

Հարցազրույցների հարցարանը կազմված էր հաջորդականության սկզբունքով, երբ յուրաքանչյուր հաջորդ հարց նպատակ ունի առավելագույնս մանրամասնել նախորդ հարցի վերաբերյալ տրված պատասխանի շարժառիթները և բացառել հարցազրույցի հրավիրվածների տված պատասխանների իրավիճակայնությունը: Մենք առաջնորդվում էինք այն գաղափարով, որ նախապես կազմված սոցիոլոգիական հարցախույզի միջոցով ստացված տվյալները ոչ թե ընդհանրացումների ու եզրակացությունների համար միակ աղբյուրն են, այլ կարող են առավելագույնս օգնել խոր գիտական վերլուծությամբ ստացված տվյալների հաստատմանը կամ ժխտմանը:

Քանի որ հարցախույզին մասնակցած խմբերը խիստ սահմանափակ էին, ապա սահմանափակ ու մասնակի բնույթ ունեին նաև այդ միջոցով ստացված տվյալների ամփոփումն ու դրանից բխող եզրակացությունները: Դաշտային հետազոտության ընթացքում նյութը հավաքելիս մենք ընդհանուր առմամբ առաջնորդվել էինք ինչպես մեր կողմից Երևանի պետական համալսարանում կատարվող թեկնածուական աշխատանքի թեմայի, այնպես էլ շվեդական Լուդի համալսարանում մագիստրոսի գիտական աստիճանի ավարտաճառի պատրաստման ժամանակ մեր առջև դրված խնդիրների առանձնահատկություններով ու կարիքներով: Այդ իսկ պատճառով սույն աշխատության մեջ ինչպես անհատական հարցազրույցների, այնպես էլ խմբային հարցախույզի արդյունքների տվյալները և նյութերը ոչ ամբողջությամբ են քննվել կամ օգտագործվել:

Ճապոնական էթնոմշակութային իրողությունների վերաբերյալ ուսումնասիրություններ կատարելիս, մանավանդ՝ դաշտային ազգագրական աշխատանքների ժամանակ, ճապոներեն լեզվի բավարար իմացության կարևորությունը նշել են շատ

մասնագետներ⁷: Ճապոնիայի վերաբերյալ միայն օտարալեզու գրականության օգտագործումը կամ ճապոնագիներից անգլերենով հարցազրույց վերցնելը, հատկապես եթե հաշվի առնենք, որ ճապոնագիներին բնորոշ է իրենց բուն կարծիքը մինչև վերջ չհայտնելու՝ ճապոնագետներին վաղուց հայտնի հատկությունը, կարող է հանգեցնել որոշ օբյեկտիվ սահմանափակումների: Այս առնչությամբ ճապոնագիների էքզիստենցիալության դրսևորումների վերաբերյալ նույնիսկ այն կարծիքն է արտահայտվել, թե ճապոնացու ֆենոմենը հնարավոր չէ վերլուծել, այլ կարելի է հասկանալ միայն կենսափորձի շնորհիվ, և որ ճապոնացի լինելը ճապոնացու համար այնքան բնական վիճակ է, որ նա նույնիսկ էթնիկ պատկանելությունը չի գիտակցում որպես ինքնության կարևոր տարր⁸:

Եթե նման հետազոտությանը մոտենանք պատմական գիտության դիրքերից, ապա մեթոդաբանական առումով այն ունի և՛ առավելություններ, և՛ թերություններ: Որպես կարևոր առավելություն կարող ենք նշել այն, որ քննվում են ոչ վաղ անցյալի պատմական իրադարձությունները, կենդանի շփումներ են հաստատվում ուսումնասիրվող ժամանակաշրջանում ակտիվ աշխատանքային տարիքում գտնվող մարդկանց հետ, տեղեկություններն ստացվում են «առաջին ձեռքից»: Իսկ թերությունն այն է, որ հետպատերազմյան շրջանի, Ճապոնիայի արդիականացման, էթնիկական ինքնության փոխակերպումների ու հարակից խնդիրների բազմակողմանի և անաչառ վերլուծության համար անհրաժեշտ է որոշակի ժամանակային տարանջատվածություն:

Սույն աշխատության մեջ մենք առաջնորդվել ենք նաև մշակույթի պատմականության սկզբունքով. մշակույթը, էթնիկական ինքնությունը չեն դիտվում որպես ժամանակից դուրս գտնվող իրողություններ, հակառակը՝ դրանք, ինչպես նաև դրանց փոխակերպումները, պատմական զարգացումների և էթնիկական ինքնության առնչությունը քննվում են ժամանակի հոլովությամբ: Ինչպես հայտնի է, «շատ հեղինակներ են հաճախ մեղադրվում

⁷ Տես, օրինակ, Yoshimura N. and Anderson Ph., *Inside the Kaisha: Demystifying Japanese Business Behaviours*. Harvard Business School Press, 1997, էջ 4:

⁸ Տես նույն տեղում:

շարունակականությունը շեշտելու մեջ⁹», սակայն տվյալ դեպքում նման մոտեցումը կարող է միայն մեծացնել հետազոտության արժեքն ու արժանահավատությունը:

Մասնագիտական գրականության մեջ բազմիցս խոսվել է և տարբեր տեսանկյուններից քննարկվել այն հարցը, որ շատ դեպքերում լայն ընդունելություն գտած տեսություններն ու մեթոդաբանությունն այսօր անկարող են լիարժեք կերպով բացատրել ինչպես Ճապոնիայի հետպատերազմյան բացառիկ արդիականացումը, այնպես էլ Ճապոնիայի հասարակական-քաղաքական կյանքին բնորոշ բազում այլ էական խնդիրներ¹⁰ (օրինակ՝ ժողովրդավարական կարգերի պայմաններում համարյա միակուսակցական համակարգի գոյությունը, որոշումների կայացումը կուսակցության մեջ գոյություն ունեցող տարբեր խմբակցությունների հավասարակշռման մեխանիզմների կիրառմամբ, ընդդիմադիր քաղաքական ուժերի և իշխող կուսակցության իրարից գրեթե ոչնչով չտարբերվող գաղափարախոսությունները, կառավարման համակարգում բյուրոկրատիայի էական դերը, հավաքական որոշումների ու բազմաթիվ խորհրդատվությունների արդյունքներով, ինչպես նաև ընդդիմադիր քաղաքական փոքրամասնության հետ տեսակետների համադրմամբ որոշումների կայացման պրակտիկան, հասարակության ընտանեկան կառուցվածքագործառության և այլ առանձնահատկություններ, Ճապոնիայի, ճապոնացիների ու ճապոնականության հետ մտազուգորդում առաջացնող այնպիսի բառերի լայն տարածումը, ինչպիսիք են *իկեբանան*, *սուշին*, *յակու-ձան*, *սումոն*, *կամիկաձեն*, *կարաթեն*, *հարակիրին*, *կարակիուցին* և այլն):

Մեր կիրառած մեթոդաբանության մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ մենք հիմնվում ենք գիտական գրականության մեջ հաստատում ստացած հետևյալ թեզի վրա. էթնիկական ինքնությունը ոչ թե անշարժ ու անփոփոխական է, այլ օժտված է փոխակերպվելու և ազդեցության ենթարկվելու ընդունակությամբ: Այլ կերպ ասած՝ մենք ճապոնացիների էթնիկական

⁹ Dennis S., *Japan Since 1945: The Rise of an Economic Superpower*: London, MacMillan Press, 1995, էջ XI:

¹⁰ Shu Yoshida K., *How to View Japanese Style Management*. "The Japanese Economy", v. 25, N 4, 1997, էջ 63:

ինքնությունը դիտում ենք որպես ժամանակի հոլովություն տարբեր հանգամանքներով ու գործոններով պայմանավորված հարավոփոխ, մշտական ազդեցությունների ու փոխազդեցությունների գործընթացում գտնվող հավաքական իրողություն:

Թեմային վերաբերող գրականության համառոտ տեսություն: Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման գործում ճապոնացիների էթնիկական ինքնության և մշակութային առանձնահատկությունների ունեցած դերակատարության մասին գրվել են բազմաթիվ աշխատություններ, սակայն դրանք մեծ մասամբ սահմանափակվել են գործընթացի միայն մեկ՝ արդիականացման հարցում էթնիկական ինքնության ունեցած դերակատարության խնդրի ուսումնասիրությամբ: Հետպատերազմյան արդիականացման և էթնիկական ինքնության փոխառնչության խնդիրը երկսայր գործընթացի համատեքստում դիտարկվելու պարագայում մեր պատկերացումները կլինեն ավելի համապարփակ և ամբողջական:

Արևմտյան երկրներում Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման պատճառները փնտրել են մշակութային և սոցիալական մարդաբանության, սոցիոլոգիայի և մասամբ նաև պատմագիտության բնագավառներում: Էթնիկության և արդիականացման առնչությունների հիմնական խնդիրներն էլ շատ հաճախ քննարկվել են ավելի լայն տեսանկյունով, օրինակ՝ ընդհանուր քաղաքականության համատեքստում կամ պատմության, աշխարհագրության և մշակութային առանձնահատկությունների ու բացառիկության առումով:

Ճապոնիայի հետպատերազմյան զարգացումների վերաբերյալ մինչ օրս շարունակվող հասարակագիտական բանավեճերը հանգեցրին հիմնախնդրի նկատմամբ երկու տարբեր գիտական ուղղությունների բյուրեղացմանը: Դրանցից առաջինը, որի ձևավորումն սկսվեց երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո, հետագայում ստացավ «Զրիգանտեն և սուր», կամ «ամերիկյան դպրոց», անվանումը՝ ըստ այդ ուղղության հիմնադիրներից մեկի՝ Ռուդ Բենեդիկտի համանուն աշխատության¹¹: Ոչ առանց Միացյալ Նահանգ-

¹¹ Steu Benedict, R. *The Chrysanthemum and the Sword*. Boston: Houghton Mifflin, 1946:

ների քաղաքական շահերի հաշվառման ձևավորված այս դպրոցի հետևորդները Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման հիմնական ուղին են համարում «պարտադիր արևմտականացումը»՝ արևմտականացած և Սիացյալ Նահանգների դաշնակից դարձած նորօրյա Ճապոնիան դիտելով որպես իր նախկին մշակութային դիմագծի հետ անհամատեղելի:

Ի հակադրումն Ճապոնիայի հետպատերազմյան աննախադեպ արդիականացման ծայրահեղ արևմտականացվածության տեսության՝ 1970-ական թթ. ձևավորվեց մեկ այլ՝ ռեվիզիոնիստական, տեսություն, որի կարկառուն ներկայացուցիչներն են ամերիկացի Չալմերս Ջոնսոնը, հայտնի ճապոնացի հետազոտող Չիե Նականեն և հոլանդացի Կարել վան Վոլֆերենը¹²: Վերջին շրջանում ընդլայնելով իր կողմնակիցների շրջանը՝ այս տեսությունը Ճապոնիայի հետպատերազմյան հաջողության հիմնական բանալին փնտրում է նրա մշակութային ինքնատիպության և հասարակական կյանքի կազմակերպման յուրօրինակության, ճապոնացիների էթնիկական ինքնության և աշխարհընկալման առանձնահատկությունների, քաղաքական կազմակերպությունների և հաստատությունների բացառիկության մեջ, այլ կերպ ասած՝ այդ երևույթի պատճառները տեսնում է ոչ թե Ճապոնիայի սահմաններից դուրս, այլ նրա ներսում: Այսպիսով՝ այս տեսության կողմնակիցները հետպատերազմյան արդիականացման հիմքերը որոնում են նախապատերազմյան և հետպատերազմյան Ճապոնիայի պատմական շարունակականության մեջ, մինչդեռ ամերիկյան դպրոցի ներկայացուցիչները ձգտում են արդիականացման գաղտնիքը բացահայտելու միայն 1945 թ. հաջորդած իրադարձությունների համատեքստում:

Չնայած նշված երկու դպրոցների տարբեր մեկնարկային դիրքորոշումներին ու տեսություններին՝ դրանցից և ոչ մեկը չի ժխտում, որ «ճապոնական հրաշքը» պատմական իրողություն է: Միևնույն ժամանակ, այդ երկու ուղղությունները ներկայացնող տեսաբանների ուսումնասիրությունների առանցքային

¹² Stu Johnson, Ch., *MITI and the Japanese Miracle, the Growth of Industrial Policy 1925 – 1975*. Stanford: Stanford University Press, 1982; Nakane, Chic, *Japanese Society*. London: Weidenfeld and Nicolson, 1970; Karel van Volferen, *The Enigma of Japanese Power*. New York, Knopf, 1989:

խնդիրներից մեկն առնչվում է Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման գործում «էթնիկական ինքնության», «ճապոնականության», «ազգային ոգու» կամ «մշակութային ինքնատիպության» դերակատարությանը, ընդսմին առաջին ուղղությանը հարողների դեպքում՝ այդ գործոնների դերի հերքմամբ, երկրորդ ուղղության կողմնակիցների պարագայում՝ այդ դերի փաստմամբ ու հիմնավորմամբ¹³:

Ճանաչված ճապոնացի հետազոտող Նասիբե Սուսումուն, քննության առնելով երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ամբողջ աշխարհում, մասնավորապես՝ Միացյալ Նահանգներում և Եվրոպայում, կատարված այն ստվարածավալ ուսումնասիրությունները, որոնք նվիրված էին ճապոնական հասարակությանն ու մշակույթին, կարծիք է հայտնում, որ տվյալ վերլուծությունների մեջ գերակայում է մշակութային համեմատականության սկզբունքը, այն է՝ ճապոնական հասարակությանը, մշակույթին կամ ճապոնացիների էթնիկական ինքնությանը բնորոշ առանձին գծեր վերլուծության են ենթարկվում տարբեր արևմտյան մշակույթների հետ համեմատության մեջ: Նա համարում է, որ նման պատմահամեմատական ուսումնասիրությունները մակերեսային են ինչպես ճապոնական ինքնատիպ մշակույթի գնահատման, այնպես էլ արևմտյան մշակույթի առանձնահատկությունների խոր ուսումնասիրության տեսանկյունից: Այդ աշխատությունների մեթոդաբանությունը նա որակում է որպես «ծայրահեղ համեմատականություն»:

Իր տեսակետը հիմնավորելու համար Սուսումուն քննության է առել այն աշխատությունները, որոնցում ճապոնական հասարակությունը և մշակույթը բնութագրվում են որպես կոլեկտիվիստական սկզբունքների, իսկ արևմտյանը՝ բացառապես անհատականության վրա խարսխվող, կամ՝ որպես ծայրահեղական դրսևորում, ճապոնական մշակույթը բնութագրվում է իբրև «ամոթի մշակույթ», իսկ արևմտյանը՝ «մեղքի մշակույթ», ճապոնական հասարակությունը՝ հիմնված ուղղաձիգ սոցիալական կառույցների վրա,

¹³ Տես Ֆարմանյան Ս., *Ճապոնիայի արդիականացման և ճապոնացիների էթնիկ ինքնության փոխառնչության մի քանի հարցեր*: «Կանթեղ - գիտական հոդվածներ», 2012 թ, N 1, էջ 109 – 114:

իսկ արևմտյանը՝ հորիզոնական, ճապոնացիների պարագայում շեշտվում է ցայտուն ձգտումը փոխպայմանավորված միջանձնային հարաբերությունների, իսկ արևմտյան հասարակությունների պարագայում՝ անկախ միջանձնային հարաբերությունների¹⁴:

Ճապոնական հասարակության և մշակույթի ուսումնասիրություններում «ծայրահեղ համեմատականության» սկզբունքը զարմանալիորեն տիրապետող էր ինչպես երկրորդ համաշխարհային պատերազմին անմիջապես հաջորդած, այնպես էլ ավելի ուշ շրջանում՝ Ճապոնիայի տնտեսական զարգացումից ու արդիականացումից հետո: Եթե սկզբնական շրջանում ճապոնական մշակույթի յուրահատկությանն էին վերագրվում պատերազմում Ճապոնիայի կրած պարտության, զարգացած արևմտյան երկրներից հետ մնալու պատճառները, ապա նույնը տեղի էր ունենում նաև 1970-ական թթ., երբ ճապոնական մշակույթի բացառիկությամբ էին բացատրվում Ճապոնիայի աննախադեպ տնտեսական զարգացումը և քաղաքական բարեփոխումները, սակայն արդեն՝ դրական շեշտադրումներով: 1960-ական թվականներից՝ տնտեսական և հասարակական-քաղաքական բնույթի բարեփոխումների արդյունքների շուշափելի դառնալուն գուգահեռաբար, սկսվեց Ճապոնիայի պատմության, մշակույթի և ինքնության վերաիմաստավորման և վերանայման փուլը՝ *Նիհոնշինոնը* (ճապոնացիների բացառիկության տեսություն) և *Նիհոնբունկաշինը* (ճապոնական մշակույթի բացառիկության տեսություն)¹⁵:

1960-1970-ական թթ. Ճապոնիայի նկատմամբ գիտական հետաքրքրությունը նկատելիորեն աճեց նաև ԽՍՀՄ-ում, որտեղ ճապոնագիտական ուսումնասիրությունները կենտրոնացած էին հիմնականում Մոսկվայում ու մեկ-երկու մեծ քաղաքներում, և կարելի է փաստել, որ այս շրջանում է, որ վերջնականապես ձևավորվեց ճապոնագիտության խորհրդային դպրոցը, հրատարակվեցին Ճապոնիայի պատմության, մշակույթի, գրականության,

¹⁴ Սուսումուն այստեղ առաջին հերթին նկատի ունեն ճապոնացի հետազոտող Չիե Նականեի, ամերիկացի մշակութային մարդաբան Ռուդ Բենեդիկտի, ճապոնացի հոգեբան Դոի Տակեոյի հիմնարար տեսությունները և դրանց հիման վրա հետազոտում ծավալված բանավեճի մաս կազմող այլ աշխատություններ:

¹⁵ «Япония в сравнительных социокультурных исследованиях». ИНИОН АН СССР, Москва, 1990, էջ 8-20:

տնտեսության, ազգագրության և քաղաքականության վերաբերյալ ինչպես ստվարածավալ աշխատություններ, այնպես էլ գիտական ու գիտահանրամատչելի ամսագրեր և տեղեկագրեր: Այս առումով կարևոր էր, մասնավորապես, 1974 թվականից Մոսկվայում «Ճապոնիա» տարեգրքի հրատարակումը, որը ժամանակագրորեն համընկավ Ճապոնիայի տնտեսական զարգացման զագաթնակետին:

ԽՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի կողմից 1960, 1965 և 1984 թթ. հրատարակվեց «Ճապոնիայի մատենագրություն» եռահատոր աշխատությունը, որում ներկայացվեց Ճապոնիային նվիրված ռուսերեն լեզվով (հիմնականում՝ ռուս կամ ռուսերեն թարգմանությամբ օտարազգի հեղինակների հրապարակած) աշխատությունների ամբողջական մատենագրությունը¹⁶:

Ճապոնագիտության խորհրդային դպրոցը զարգանում էր հիմնականում Ճապոնիայի պատմության, մշակույթի, արվեստի, ազգագրության, կրոնագիտության, աշխարհագրության, մարդաբանության ոլորություններով: Ճապոնիայի հետպատերազմյան մշակույթի և հասարակության, էթնիկական ինքնության ուսումնասիրության բնագավառում կարևորվում են Գրիշևայի, Երմակովի, Կոռնիլովի, Կորոլյովի, Չուգրովի և ուրիշների աշխատությունները¹⁷: Առանձնակի հիշատակման են արժանի հայազգի

¹⁶ «Библиография Японии», Литература, изданная в Советском Союзе на русском языке с 1959 по 1979 гг. Москва, Издательство восточной литературы, 1984; «Библиография Японии», Литература, изданная в Советском Союзе на русском языке с 1917 по 1958 гг. Москва, Издательство восточной литературы, 1960; «Библиография Японии», Литература, изданная на русском языке с 1734 по 1917гг. Москва, Издательство «Наука», 1965.

¹⁷ Сбл Гриншлева Л., *Культура послевоенной Японии*. Москва, 1981; Корнилов М., *О типологии японской культуры (японская культура в теориях "Нихондзин рон" и "Нихон бункарон")*. В кн.: «Япония: Культура и Общество в эпоху научно-технической революции». Москва, 1985; Королев С., *Изучение этнопсихологии в Японии. Проблемы этнографии и этнической истории народов. Культурные традиции, история и модернизация (Сравнение Японии и Китая со странами Запада)*: обзор. В кн.: «Япония в сравнительных социокультурных исследованиях». Москва, ИНИОН АН СССР, 1990; Котова Р., *Япония и Китай в культурно-компаративистских исследованиях китайских ученых*. В кн.: «Япония в сравнительных социокультурных исследованиях». Москва, ИНИОН АН СССР, 1990; Латышев И., *Лицо и изнанка "экономического чуда" Японии*. Москва, «Наука», 2000; Чугров

ճապոնագետ Ս. Արությունովի աշխատությունները¹⁸: Ընդամին խորհրդային դպրոցը, հատկապես՝ մշակութաբանները, լուրջ խորքային հետազոտություններով հանդերձ, Ճապոնիայի հետպատերազմյան մշակույթը որակում էր որպես «սպառողական» և ըստ այդմ՝ ենթարկում քննադատության:

Հետպատերազմյան արդիականացման և ճապոնացիների էթնիկական ինքնության փոխառնչության երկակիության և հակադարձ ազդեցությունների մասին խորհրդային հետազոտողներից համառոտակի խոսել են իր հոդվածներից մեկում Չուգրովը, ինչպես նաև Արությունովը՝ մի շարք աշխատություններում: Դրանցում արվող հարցադրումների համատեքստում առկա են հեղինակների մանրօրինակ մոտեցումները, ըստ որոնց՝ հիմնավոր չէ էթնիկական ինքնության և հետպատերազմյան արդիականացման առնչակցությունը դիտել որպես միակողմանի գործընթաց, և որ այստեղ գործ ունենք երկկողմանի գործընթացի՝ փոխառնչության հետ: Չուգրովը, քննության առնելով ճապոնացիների մտածելակերպում կարծրատիպերի ունեցած պատմական նշանակությունը, գրում է. «Համաշխարհային շուկաներում Ճապոնիայի առաջին հաջողություններին զուգահեռաբար նկատելի դարձավ հասարակական հարաբերությունների վրա տնտեսական բուռն զարգացման հակադարձ ազդեցությունը¹⁹»: Սակայն մա նպատակ չի դրել այդ երկկողմանի գործընթացն ուսումնասիրելու լայն համատեքստում

С., *Стереотипы в общественном сознании Японии*. В кн.: «Япония: Культура и общество в эпоху научно-технической революции», сб. статей. Москва, 1985:

¹⁸ Տես Արутյոնով С., *Современный быт японцев*. Москва, 1968; Арутюнов С., *Старые и новые боги Японии*. Москва, «Наука», 1968; Арутюнов С., *Японцы в Бразилии*. «Расы и Народы», 1972, N 2; Арутюнов С. и Чебоксаров Н., *Передача информации как механизм существования этносоциальных и биологических групп человечества*. «Расы и Народы», 1972, N 2; Арутюнов С., *Двуединство дивергенции и гомогенизации*. «Советская этнография», 1976, N 4, 1986; Арутюнов С., *Народы и культуры: Развитие и взаимодействие*. Москва, 1989; Арутюнов С., *Соотношение традиций и инноваций и ротационный механизм их взаимодействия*. «Slovensky narodopis», Bratislava, 1986, N 1-2, 12; Арутюнов С., *К проблемам этничности и интерэтничности культуры*. «Советская этнография», 1980, N 3; Arutyunov S., *Specific Features and Approaches in the Study of Japanese Society and Culture in the Soviet School of Orientalogy*. «Othernesses of Japan», München, 1992, էջ 259-269:

¹⁹ Чугров С., *Стереотипы в общественном сознании Японии*, էջ 112:

և ճապոնացիների էթնիկական ինքնության վրա հետպատերազմյան արդիականացման գործած հակադարձ ազդեցության մասին իր դատողությունները սահմանափակել է միայն իրենց քաղաքական դիրքերի ամրապնդման նպատակով կառավարող շրջանների կողմից «ճապոնական հրաշքի»՝ ճապոնական հասարակությանը բնորոշ մշակութաբանական որոշ առանձնահատկությունների, մասնավորապես՝ «արդյունաբերական գիտակցության» (*կիզյո իսիկի*), «ձեռնարկությանը կամ ընկերությանը նվիրվածության ոգու» (*կայշա սեյսին*) և արտադրական միավորներում պատեռնալիստական հիմունքներով աստիճանակարգման շահարկման թեզերով, որոնք մեծապես իրենց վրա էին կրում խորհրդային գիտական սահմանափակումների կնիքը:

Ճապոնիայի հետպատերազմյան արագընթաց արդիականացման և Արևելյան ու Հարավարևելյան Ասիայի մյուս երկրների, մասնավորապես՝ Չինաստանի զարգացման տեմպերի միջև տարբերությունների ու բացատրության գիտական վերլուծության ժամանակ հետպատերազմյան ճապոնագիտությունը ինչպես Արևմուտքում, այնպես էլ Ճապոնիայում քննության առարկա դարձրեց նախընթաց պատմության տրամաբանությամբ և մշակութային արժանատիների յուրօրինակությամբ այդ գործընթացների պայմանավորվածության դրույթը: Եթե մինչև 1960–1970-ական թթ. արևմտյան ուսումնասիրողների աշխատություններում Ճապոնիան ընկալվում էր որպես արևելասիական մշակութային գոտու մաս, ապա այդ տարիներից նա դիտվեց որպես մի առանձին՝ կղզիացած, միավոր, ավելի շատ շեշտվեց ճապոնական և արևմտյան մշակույթների ընդհանրականությունը, և ճապոնական հասարակությունն սկսեց ընկալվել որպես իր մշակույթով ավելի շատ Արևմուտքին, քան Արևելյան Ասիային մոտ գտնվող: Այս համատեքստում քննության առարկա էին դառնում ճապոնական, արևմտյան և ասիական այլ մշակույթների ընդհանրություններն ու տարբերությունները, ինչն էլ երբեմն դրվում էր արդիականացման, զարգացման, արդյունաբերականացման արագության և դանդաղման պատճառների հիմքում: Այս միտումն ավելի ակնառու դարձավ Ճապոնիայի բացառիկ արդիականացումից հետո:

Ինչպես նկատեցինք, Ճապոնիայի արդիականացման տարբեր ընկալումներ համեմատական ուսումնասիրությունների

պակաս չեն գգում: Տվյալ համապատկերում առանձնանում են ազգագրագետներ Սերգեյ Արությունովի և Հարումի Բեֆուի աշխատությունները: Այդ հեղինակները, չծայրահեղականացնելով և միմյանց չհակադրելով ներքին զարգացման տարբեր օրինաչափություններ ունեցող մշակույթները, հետպատերազմյան Ճապոնիայի վերաբերյալ հարուստ ազգագրական նյութի խոր վերլուծության հիման վրա ճապոնական և արևմտյան մշակույթների փոխազդեցությունն ու փոխյուրացումը դիտում են որպես համընդհանուր մշակութային իրողություններով պայմանավորված երկկողմանի գործընթաց, երբ արևմտյան ծագում ունեցող մշակութային արժեքները տեղայնացվում կամ ճապոնականացվում էին: Մյուս կողմից՝ ճապոնական մշակույթը հանդես էր գալիս ոչ միայն ապառողի, այլև մատակարարի ու սնուցողի դերում: Էթնիկական ինքնության և մշակույթի փոխհարաբերությունների վերաբերյալ Ս. Արությունովը գրում է. «այդ կապերը երկկողմ են. ոչ միայն մշակույթն է ազդում էթնիկության վրա, այլև էթնիկությունն ինքն է ազդում մշակույթի վրա»²⁰:

Ինչպես պատկերավոր բնութագրում է ռուսաստանաբնակ ճապոնագետ Սարկիսովը, «եթե Ամերիկյան հայտնագործեցին մեկ անգամ և վերջնականապես, ապա Ճապոնիան շարունակաբար հայտնագործում են մինչ օրս՝ փորձելով հասկանալ այդ երկիրը, որի խորհրդավորությունը վաղուց հետաքրքրություն է առաջացնում»²¹: Իրականում, խորհրդային պատմագրությունը, Ճապոնիայի հետպատերազմյան արագ արդիականացման խնդիրը դիտարկելով մարքս-լենինյան գաղափարախոսության տեսանկյունից և հղում անելով Լենինի այն թեզին, թե կապիտալիզմի համընդհանուր ճգնաժամի փուլում ավելի ցայտուն է դառնում կապիտալիստական երկրների տնտեսական զարգացման տեմպերի անհամաչափությունը, առաջ էր քաշում այն տեսակետը, որ Ճապոնիայի հետպատերազմյան զարգացումը հենց դրա վկայություններից մեկն է: Վկայակոչելով ՄԱԿ-ի կողմից հրապարակված՝ անդամ պետությունների 1958-1967 թթ. տնտեսական զարգացմանը վերաբերող

²⁰ Арутюнов С., *Народы и культуры. Развитие и взаимодействие*. Москва, 1989:

²¹ Саркисов К., *Предисловие к книге Саканни Т. "Что такое Япония?"*. Москва, 1992, էջ 5:

վիճակագրական տվյալները և եզրակացնելով, որ սոցիալիստական ճամբարի երկրները զարգանում են ավելի արագ, քան հակադիր ճամբարի պետությունները, Լատիշը արագ արդիականացման իրողությունը համարում էր բացառություն՝ շեղում օրինաչափությունից, և պնդում էր, որ բացառությունները գալիս են հաստատելու օրինաչափությունների ճշմարտացիությունը, այն է՝ սոցիալիստական ճամբարի երկրների տնտեսությունները զարգանում են ավելի արագ տեմպերով²²:

Շատ հաճախ, հատկապես՝ օտարազգի ճապոնագետների համահեղինակությամբ գրված աշխատություններում, գիտական ընկալումների հիմքում դրվում են էթնիկական ինքնության և էթնոմշակութային առանձնահատկությունների զուտ պատմագիտական չափումները, ինչն իր հերթին երբեմն հանգեցնում է հիմնագուրկ տեսակետների: Այս առումով համաշխարհային ճապոնագիտությունը տուժել է մշակույթի ուսումնասիրություններում զուտ պատմագիտական մոտեցումների կիրառման պատճառով:

Մեր առջև դրված խնդիրների լուծման տեսանկյունից ավելի արդյունավետ է թվում ազգաբանական հետազոտությունն իր մեթոդիկայով հանդերձ՝ դաշտային ազգագրական աշխատանք, երկարատև բնակություն այդ հասարակության մեջ և այլն, մանավանդ, որ ճապոնացիների ավանդական էթնոմշակութային առանձնահատկությունները պակաս ցայտունորեն չեն արտահայտված կենցաղում, առօրյայում, քան, ասենք, միջնադարյան սամուրայական վարքականոմում կամ հեյանյան գրականության մեջ: Այսօր դեռ պահպանվել են ավանդական մշակույթի այնպիսի երևույթներ, ինչիսիք են *նո* դրաման, *կարուկի* քատրոնը, թեյատները, *հայկուն*, *իկեբանան* և զբոսաշրջիկների տեսակետից էկզոտիկ այլ մշակութային նմուշներ: Ռիսումնասիրողների կարծիքով՝ այստեղ մեծ դեր է խաղում պրագմատիզմը, ըստ որի՝ անցյալից հենց այնպես ոչինչ չի պահպանվում, և եթե ժամանակի ընթացքում չի ծառայում հասարակությանը, ապա ինքնին անհետանում է: Մյուս կողմից՝ պետք է նկատի ունենալ նաև ակադեմիական

²² Стил Латышев И., *Лицо и изнанка "экономического чуда" Японии*. Москва, 1970, էջ 5:

շրջաններում գոյություն ունեցող այն տեսակետը, համաձայն որի՝ հետպատերազմյան տարիներից սկսած հետզհետե նկատելիորեն ուժեղանում է ճապոնացիների կենցաղի ու մշակույթի վրա արևմտյան մշակույթի ազդեցությունը, հետևաբար՝ հեռու չեն այն ժամանակները, երբ ճապոնական ավանդական մշակույթի տարրերը կայահպանվեն սոսկ իբրև «թանգարանային նմուշներ»:

ՃԱՊՈՆԻԱՅԻ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1945 թ. սեպտեմբերի 2-ին ամերիկյան «Սիսուրի» հաժանավի վրա ստորագրվեց Ճապոնիայի անվերապահ կապիտուլյացիայի մասին պայմանագիրը: Այսպես ավարտվեց Ճապոնիայի պատմության տխրահռչակ ժամանակաշրջաններից մեկը, որը հայտնի է նաև «խավարի ժամանակաշրջան» (*անկոկու շիդայ*) անվամբ²³: Սինչ այդ՝ 1945 թ. օգոստոսի 15-ին, այն օրը, որն ստացավ «Ճապոնիայի ամենաերկար օրը» բնութագրումը, կայսր Հիրոհիտոն դիմեց իր հպատակներին՝ հայտարարելով դաշնակից զորքերի առջև Ճապոնիայի անվերապահ կապիտուլյացիայի մասին, և կոչ արեց «տանելու անտանելին և հանդուրժելու անհանդուրժելին»²⁴: Ճապոնիան հանձնվեց պատերազմում իր հակառակորդների՝ Դաշնային ուժերի կառավարմանը և մնաց բռնազավթված 7 տարի՝ մինչև 1952 թ., երբ ամերիկյան զինուժը լքեց Ճապոնիան, և երկրի կառավարումն ամբողջությամբ անցավ ճապոնացիներին:

Իր հազարամյա պատմության ընթացքում Ճապոնիան առաջին անգամ էր հանձնվում ուրիշների իշխանությանը և պետք է կառավարվեր ոչ ճապոնացիների կողմից: Ստեղծված իրավիճակի աննախընթացությունը պայմանավորված էր ոչ միայն և ոչ այնքան վերոնշյալ հանգամանքով, որքան Ճապոնիայի տնտեսության, հասարակական և քաղաքական կյանքի համար Խաղաղօվկիանոսյան պատերազմի²⁵ ունեցած ավերիչ հետևանքներով: Պատերազմի ընթացքում զոհվեց և վիրավորվեց շուրջ 8 մլն ճապոնացի, ամբողջությամբ կամ մասամբ ավերվեց մոտ 2,5 մլն շինություն, իսկ Տոկիոյի բնակչությունը 6,7 մլն-ից նվազեց՝

²³ Տես Гриншлева Л., *Культура послевоенной Японии*. Москва, 1981, էջ 6:

²⁴ Smith D., *Japan since 1945: The Rise of an Economic Superpower*. London, MacMillan Press, 1995, էջ 42: Horsley W. and Buckley R., *Nippon: New Superpower - Japan Since 1945*, London, BBC Books, 1990, էջ 141:

²⁵ Ինչպես վերը նշել էինք, Ճապոնիային նվիրված պատմագիտական աշխատություններում երկրորդ համաշխարհային պատերազմը նաև այդպես է անվանվում:

հասնելով 2,8 մլն-ի: Մասնագետների հաշվարկով՝ պատերազմում Ճապոնիան ընդհանուր առմամբ կորցրեց իր ազգային հարստության 41,5 %-ը²⁶:

Պատերազմում Ճապոնիայի պարտությունը բացառիկ էր այն առումով, որ նա ընդունեց անվերապահ կապիտուլյացիան՝ առանց իր ցամաքային տարածքում ռազմական գործողությունների: Այդ պատճառով, չնայած ամերիկյան օդուծի ձեռնարկած ռմբակոծությունների աղետալի հետևանքներին, պետության շատ ենթակառուցվածքներ մնացին գործող: Պատերազմում կրած պարտության հետևանքով Ճապոնիան կորցրեց իր մինչպատերազմյան՝ կայսերական, տարածքի 46 %-ը: Որպես անվերապահ կապիտուլյացիայի արդյունք՝ Ճապոնիան զիջեց ոչ միայն պատերազմի ընթացքում իր կողմից նվաճված տարածքները, այլև ավելի վաղ՝ ճապոնական գաղութատիրության սկզբնական փուլերում, նվաճված տարածքները, ներառյալ՝ Թայվանը, Կորեան, Հարավային Սախալինը, Մանջուրիան և Մարշալյան կղզիները:

Դաշնակիցների կողմից Ճապոնիայի բռնազավթումից հետո ԱՄՆ-ն ստանձնեց գերակա դեր, իսկ բռնազավթիչ վարչակարգի կառավարիչ նշանակվեց ամերիկացի գեներալ Դուգլաս Մակարթուրը: Շուտով բռնազավթիչ ուժերը նախաձեռնեցին լայնածավալ բարեփոխումներ, որոնք նկատակ ունեին Ճապոնիային զրկել կրկին ռազմականանալու հնարավորությունից, ապահովել ժողովրդավարական քաղաքական համակարգի հաստատում և Հեռավոր Արևելքում ամրապնդել ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական շահերը:

1946 թ. նոյեմբերի 3-ին ընդունված և 1947 թ. մայիսի 3-ին ուժի մեջ մտած «խաղաղության սահմանադրության» հայտնի 9-րդ հոդվածի համաձայն՝ Ճապոնիան զրկվեց զինված ուժեր ունենալու իրավունքից, և ցրվեցին բոլոր ռազմական ստորաբաժանումները: Երկրորդ աշխարհամարտի ժամանակ գործած ռազմական հանցանքների բացահայտման և դատապարտման նպատակով հատուկ ստեղծվեց Տոկիոյի ռազմական տրիբունալը, որը մահվան կամ ազատազրկման դատապարտեց մեծ թվով ռազմական հանցագործների, իսկ որոշ քաղաքացիական ծառայողներ, որոնք

²⁶ Shu Kosaka M., *A History of Postwar Japan*. Tokyo, 1972, էջ 65:

հայտնի էին ճապոնական նվաճողականության նկատմամբ ունեցած դրական վերաբերմունքով, հեռացվեցին պետական ծառայության համակարգից:

Սահմանադրությամբ պահպանվեց կայսեր հաստատությունը, ինչը հնարավորություն տվեց հասարակական գիտակցության մեջ այն ամրագրելու իբրև անցյալն ու ներկան կապող կամուրջ, իսկ հետպատերազմյան շրջանի շատ բարեփոխումներ իրականացվեցին ավելի մեծ հեշտությամբ: Երկար ժամանակ անխաթար գործած սահմանադրական միապետությունը հաջողությամբ փոխարինվեց ժողովրդավարական կարգերով²⁷: Սահմանադրության ընդունմամբ կայսեր հաստատությունն «աշխարհիկացվեց», իսկ բացարձակ իշխանություն ունեցող կայսրը վերածվեց «ազգի միասնության խորհրդանիշի»²⁸ և դարձավ Ճապոնիայի պատմության երկու խիստ հակասական՝ մինչպատերազմյան և հետպատերազմյան, ժամանակաշրջանները միմյանց կապող մի յուրօրինակ օղակ:

Սահմանադրությամբ երաշխավորվեցին քաղաքական ազատությունները և մարդու քաղաքացիական իրավունքները: Որպես կառավարման բարձրագույն մարմին հաստատվեց երկպալատ խորհրդարանը, որն ընտրվում էր ուղղակի ընտրության միջոցով: Սահմանադրությամբ վերացվեց մարդկանց հասարակական դասակարգման նախկինում գործող համակարգը (սամուրայների և հասարակ քաղաքացիների միջև հաստատութենական և գործնական խտրականությունը): «Խաղաղության սահմանադրությունը» նպաստեց նաև քաղաքական կուսակցությունների դերի ակտիվացմանը, ինչն զգալի նշանակություն ունեցավ ճապոնական՝ իր էությամբ խիստ բացառիկ, քաղաքական համակարգի ստեղծման համար: Իմ զրուցակիցներից մեկը՝ հետազոտող Նոբուկի Սուգիտան, հարցազրույցի ժամանակ դիպուկ նկատեց, որ հետպատերազմյան արդիականացման հիմնապատճառների շարքում անհրաժեշտ է հավուր պատշաճի ուշադրություն դարձնել նաև այն մեծ դերակատարությանը, որն ունեցավ

²⁷ Gerald C., *The Japanese Way of Politics*. New York, Columbia University Press, 1988, էջ 249:

²⁸ Шу "История Японии", под ред. Ю. Кузнецова. Учебник для вузов по специальности "История". Москва, 1988, էջ 298:

հասարակական-քաղաքական կյանքի կայունությունը, որի հաստատություննական հիմքերը դրվեցին երկրի նոր սահմանադրության ընդունմամբ, «միլիտարիզմից ճապոնիայի փախուստով և դեպի խաղաղություն հասարակության համընդհանուր ձգտմամբ»²⁹։ Իրոք, հակառակ հետպատերազմյան ճապոնիային բնորոշ կառավարությունների ու կառավարական ծրագրերի հաճախակի և փոքր պարբերականությամբ կատարվող փոփոխությունների՝ քաղաքական կյանքը բնութագրվում էր կայունությամբ և զերծ էր համակարգային ցնցումներից։

Ճապոնիայի ժողովրդավարացման տեսանկյունից մեծ նշանակություն ունեցան մասն և սոցիալ-տնտեսական բարեփոխումները։ Բռնագավթիչ ուժերի, հետագայում մասն ճապոնական կառավարությունների նախաձեռնած քիրախային տնտեսական բարեփոխումները հսկայական նշանակություն ունեցան ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման համար։ Այս ուղղությամբ առավել կարևոր էին ճապոնական տնտեսության ողնաշարը համարվող «ձայբացունների»³⁰ տարալուծումը և օրենսդրության ու նորմատիվ-իրավական ակտերի միջոցով կորպորատիվ սեփականության սկզբունքների վրա հիմնված սեփականության պարտադրված վերաբաշխումը։ Թեև որոշ ուսումնասիրողներ մնան քաղաքականության հենքում հակված են տեսնելու ամերիկացիների «այն, ինչ մեծ է, չարիք է» կարգախոսը, սակայն իրականում դա առաջին հերթին ուղղված էր փոխելու տնտեսական հարաբերությունների գոյություն ունեցող համակարգը։ Անշուշտ, պակաս էական չէր մասն հնարավոր ռազմականացումից խուսափելը, քանի որ հայտնի է, որ այդ գերիզոր տնտեսական հողդինգների շահերից էին բխում ճապոնական ծավալապաշտական քաղաքականությունը և գաղութատիրությունը։

ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև խորացող աշխարհաքաղաքական հակասությունների համատեքստում ճապոնիայի արդյունաբերական հզորացումը ԱՄՆ-ի համար դարձավ հեռավորարևելյան տարածաշրջանում իր աշխարհաքաղաքական շահերի

²⁹ Հարցազրույց Նոբուկի Սուգիտայի հետ, Տոկիո, 2002 թ. հոկտեմբերի 11։

³⁰ Արդյունաբերական և ֆինանսական բիզնես-կոնգլոմերատներ, որոնք լայն տարածում էին ստացել 19-րդ դարի վերջից։

ամրապնդման կարևոր նախապայման: Հետպատերազմյան արդիականացման տեսանկյունից, ԱՄՆ-ի կողմից Ճապոնիային հատկացվող արտաքին օգնությունից բացի, նպաստավոր էր նաև 1950 թ. ամռանը Կորեական պատերազմի բռնկումը: Այդ պատերազմի երեք տարիների ընթացքում Ճապոնիան շուրջ 930 մլն ԱՄՆ-ի դոլարի հասնող պատվեր ստացավ, ինչը Ճապոնիայի վարչապետ Շիգեթո Յոշիդային առիթ տվեց Կորեական պատերազմն անվանելու «աստվածների պարզե³¹»:

Դաշնակից ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Մակարթուրը Ճապոնիայից հեռացավ 1950 թ. ամռանը՝ Կորեական պատերազմում ներգրավված ամերիկյան զինուժում նոր նշանակում ստանալու կապակցությամբ: 1951 թ. սեպտեմբերին Սան-Ֆրանցիսկոյում ԱՄՆ-ի և Ճապոնիայի միջև կնքված հաշտության պայմանագիրն ուժի մեջ մտավ արդեն 1952 թ. ապրիլի 28-ին, և Ճապոնիան վերականգնեց իր լիակատար ինքնիշխանությունը: Այդ պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո երկրում ամբողջ իշխանությունը վերադարձվեց ճապոնացիներին, ինչով ավարտվեց Ճապոնիայի պատմության մեջ աննախադեպ, շուրջ յոթ տարի տևած օտար տիրապետությունը³²:

1955 թ. նոյեմբերին՝ հետպատերազմյան Ճապոնիայում առավել երկարատև կառավարած վարչապետներից մեկի՝ Շ. Յոշիդայի հրաժարականից հետո, տեղի ունեցավ Լիբերալ (ազատական) և Դեմոկրատական (ժողովրդավարական) կուսակցությունների միավորումը. ձևավորվեց հետպատերազմյան Ճապոնիայի քաղաքական կյանքի հիմնական դերակատար համարվող Լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը, որը մինչև 2009 թ. խորհրդարանական ընտրություններում կրած պարտությունը միայնակ կամ կոալիցիոն սկզբունքներով 54 տարի ղեկավարեց Ճապոնիան³³: Այդ իսկ պատճառով Ճապոնիայի

³¹ Stew Smith D., *Japan Since 1945: The Rise of an Economic Superpower*. New York, St. Martin's Press, 1995, էջ 86:

³² Stew Gordon A., *A Modern History of Japan: From Tokugawa Times to the Present*. Oxford, Oxford University Press, 2003, էջ 241-242:

³³ Լիբերալ-դեմոկրատական կուսակցության երկարամյա կառավարումն ընդհատվել է միայն 1993-1994 թթ.՝ 11 ամսով:

քաղաքական համակարգը կոչվում է նաև «1955-ի համակարգ»³⁴։ Սկզբից և եթե Լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը միասեռ քաղաքական միավոր չէր, այլ ավելի շատ միևնույն քաղաքական արժեքներ ու մոտեցումներ դավանող և առանձին ազդեցիկ քաղաքական գործիչների շուրջ ձևավորված խմբակցությունների միավորում էր։ Սա իր հերթին հանգեցնում էր այն բանին, որ պետական կառավարման լծակների բաշխումը կատարվում էր ըստ յուրաքանչյուր համապետական ընտրությունից առաջ կուսակցության ներսում այդ խմբակցությունների միջև տեղի ունեցող բանակցությունների արդյունքների և պայմանավորվածությունների։ Երբեմն ճապոնական քաղաքական համակարգը անվանում են նաև միակուսակցական կամ ամբողջատիրական³⁵։ Դրա հիմնավորումն այն է, որ կուսակցության՝ ընտրություններին նախորդող համագումարում արդեն ուրվագծվում էր հաջորդ կառավարության կազմը, որովհետև կուսակցության առաջնորդը ինքնըստինքյան գլխավորում է համամասնական ցուցակը և ստանձնում պետության վարչապետի պաշտոնը։

1951–1960 թթ. ընթացքում կրկնակի աճեցին Ճապոնիայի ազգային եկամուտները, իսկ համախառն ազգային արդյունքը եռապատկվեց։ 1975 թ. տնտեսական ցուցանիշները վկայեցին, որ արդյունաբերությունն արդեն ապահովում էր Ճապոնիայի համախառն ազգային արդյունքի ավելի քան 45 %-ը, մինչդեռ 1950-ական թթ. սկզբին այն կազմում էր ընդամենը 25 %-ը։ 1953–1971 թթ. արձանագրվեց արդյունաբերության միջին հաշվով տարեկան 14%, իսկ ազգային եկամուտների՝ 8,8 % կայուն աճ։

Մինչև 1980-ական թթ. Ճապոնիան միակ արևելասիական պետությունն էր, որին հաջողվել էր գերազանցել տնտեսական զարգացման և արդյունաբերականացման՝ Արևմտյան Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում մինչ այդ արձանագրված առավել բարձր տեմպերը։ Արագ տնտեսական զարգացման համար խորհրդանշական էր հատկապես 1964 թ., երբ Ճապոնիան

³⁴ Stockwin J., *Dictionary of Modern Politics of Japan*, London, Routledge, 2003, էջ xviii:

³⁵ Բանավոր զրույցներից մեկի ժամանակ մման կարծիք հայտնեց 2001–2002 թթ. ուստարում ԵՊՀ պատմության ֆակուլտետում սովորած ճապոնացի ասպիրանտ Տակայուկի Յոշիմուրան։

դարձավ «Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության» (*OECD*) անդամ: Նույն թվականին Տոկիոյում կազմակերպվեցին 18-րդ ամառային Օլիմպիական խաղերը³⁶, որոնք հասարակական գիտակցության մեջ ընկալվեցին որպես տնտեսական զարգացման զագաթնակետի և «հասարակական գիտակցությունից երկրորդ համաշխարհային պատերազմի ավերիչ հետևանքների անհետացման յուրօրինակ խորհրդանիշ»³⁷:

1960–1990 թթ. մեծ թվով պետություններում ուսումնասիրվեց տնտեսական ու քաղաքական զարգացման ճապոնական փորձն ընդօրինակելու հնարավորությունը, իսկ որոշ երկրներ այդ ուղղությամբ անգամ նախաձեռնեցին կոնկրետ քայլեր³⁸: Ամերիկացի նշանավոր հետազոտող Էզրա Ֆոգելը 1979 թվականին, երբ ճապոնական հրաշքն արդեն իրականություն էր, հրապարակեց մի աշխատություն, որում գրեց. «արդյոք մենք (ամերիկացիները, – *Մ.Ֆ.*) չե՞նք շահի, եթե համարձակություն ունենանք սովորելու Արևելքից, ինչպես ճապոնիան է երկար ժամանակ սովորել Արևմուտքից»³⁹: Տվյալ ժամանակահատվածում մեծ թվով գիտնականներ, հասարակագետներ և քաղաքական գործիչներ հանդես եկան սովարածավալ հրապարակումներով՝ պնդելով, որ 21-րդ դարը պատկանելու է ճապոնիային, և զարգացման դինամիկայով նա լինելու է անվիճելի համաշխարհային առաջատարը՝ «համար առաջինը»⁴⁰:

Ընդհանուր առմամբ, հետպատերազմյան ճապոնիայի տնտեսական վերականգնման համար բնութագրական էր նոր՝ «խաղաղության տնտեսության» ստեղծումը, քանի որ նախապատերազմյան տնտեսությունը մեծ մասամբ կառուցված էր ճապոնական միլիտարիզմի պահանջարկի վրա: Այդ պատճառով ավերված հին գործարանները կամ արտադրամասերը

³⁶ Նախկինում ճապոնիան ստացել էր 1940 թ. ամառային Օլիմպիական խաղերն անցկացնելու իրավունք, սակայն Չինաստան ներխուժելու պատճառով զրկվել էր այդ իրավունքից: 1964թ. Օլիմպիական խաղերն առաջին անգամ էին անցկացվում Ասիայում:

³⁷ Lie J., *Multicultural Japan*. Cambridge, Mass., Harvard University Press, 2001, էջ 55:

³⁸ Shu Kimura H., *Japan as a Model for Russia*. "Japan Review", 2000, N 12, էջ 41–74:

³⁹ Vogel E., *Japan as Number One: Lessons for America*. Cambridge, Mass., Harvard University Press, 1979, էջ 8:

⁴⁰ Նույն տեղում, էջ 8:

վերականգնելու փոխարեն շատ հաճախ կառուցվում էին նորերը: Հետպատերազմյան տնտեսության վերականգնման հարցում, անշուշտ, չպետք է թերագնահատել Միացյալ Նահանգների դերակատարությունը, որովհետև նրա պնդմամբ Սահմանադրության 9-րդ հոդվածի ուժով Ճապոնիան ապառազականացվեց: Որպես արդյունք՝ այն հսկայական միջոցները, որոնք պետք է ծախսվեին ռազմական տնտեսության բնագավառում, ուղղվեցին տնտեսության զարգացմանը: Ռիստի պատահական չէ, որ որոշ քաղաքագետներ, քննարկելով «ճապոնական հրաշքին» առնչվող խնդիրները, առաջ են քաշում այն թեզը, թե հետպատերազմյան արագ արդիականացումը Սառը պատերազմի հետևանք էր, նկատի ունենալով խորհրդա-ամերիկյան մրցակցության պայմաններում ստեղծված «նպաստավոր» աշխարհաքաղաքական մթնոլորտը: Ճապոնացիներն իրենք հետպատերազմյան տնտեսությունն անվանում են ոչ թե անցումային, ինչպես մյուս երկրների պարագայում է, այլ *սենզո կեյձայ*, այսինքն՝ հետպատերազմյան տնտեսություն, դրանով իսկ ինչ-որ չափով շեշտելով նաև պատերազմի մասին ծանր հիշողությունները և նրա դերը Ճապոնիայի արդի պատմության մեջ:

Տնտեսության տարբեր ճյուղերում իրականացված փոփոխություններից առանձնացնենք այն փոփոխությունները, որոնք էապես նպաստեցին արագ տեմպերով երկրի տնտեսական վերելքին: Դրանք են.

- 1945 թ. սեպտեմբերին լուծարվեցին երկրի 15 խոշորագույն ֆինանսական ընկերությունները, որոնց թվում էին «Միցուին», «Միցուիսին» և այլն: Դրա նպատակն էր վերացնել պետության հետ տնտեսական համակարգի սերտաճածությունը և Ճապոնիային զրկել հետագայում ռազմականանալու հնարավորությունից,
- 1945 թ. դեկտեմբերին սկսվեցին ագրարային բարեփոխումները, որոնք կարևոր դեր ունեցան ժամանակակից ֆերմերային տնտեսությունների ստեղծման ու մրցունակ գյուղատնտեսական համակարգի ձևավորման գործում,
- 1945 թ. դեկտեմբերին ընդունվեց օրենք արհմիությունների, իսկ 1946 թ. սեպտեմբերին՝ աշխատանքային հարաբերությունների կարգավորման մասին: Այդ օրենքների

ընդունմամբ ազատականացվեցին ոչ միայն աշխատանքային հարաբերությունները, այլև տնտեսությունն ընդհանրապես: Դրանց և մի քանի այլ կարևոր օրենքների ընդունման շնորհիվ Ճապոնիան աշխատուժի և կապիտալի միջև համեմատաբար կայուն հարաբերություններ հաստատելու տեսանկյունից դարձավ աշխարհի ամենաառաջադիմական երկրներից մեկը,

- 1946–1947 թթ. կառավարությունը նախաձեռնեց մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված էին բանկային համակարգի կատարելագործմանը, ներդրումային միջավայրի բարելավմանը, դրամավարկային քաղաքականության արդյունավետության մեծացմանը և սղաճի կանխմանը,
- նույն ժամանակահատվածում ստեղծվեց «Վերականգնման հիմնադրամը», որը ֆինանսական օգնություն էր ցուցաբերում արդյունաբերությանը: Կառավարական միջոցների հատկացմամբ ստեղծված այս հիմնադրամի օժանդակությամբ շատ ընկերություններ կարողացան կառուցել ժամանակակից գործարաններ, ձեռք բերել նոր սարքավորումներ և արտադրության մեջ ներդրել նորամուծական մոդելներ: Հիմնադրամի գործունեության շնորհիվ մեծ թափ ստացավ տնտեսության մեջ նոր տեխնոլոգիաների ներդրումը:

Նշված և այլ բարեփոխումների շնորհիվ արդեն 1952 թ. Ճապոնիային հաջողվեց հասնել իր համախառն ազգային արդյունքի (ՀԱԱ) նախապատերազմյան ցուցանիշներին, իսկ 1960 թ.` կրկնապատկել դրանք: 1951 թ. վերականգնվեց տնտեսության մեջ կատարված մասնավոր ներդրումների նախապատերազմյան ծավալը, իսկ 1956 թ. այն ևս կրկնապատկվեց, 1958 թ. վերականգնվեց արտահանման նախապատերազմյան ծավալը, իսկ 1957 թ.` ներմուծման, 1960 և 1964 թթ. այդ ցուցանիշները, համապատասխանաբար, կրկնապատկվեցին: Սեկ շնչին բաժին հասնող ՀԱԱ-ի ցուցանիշներով Ճապոնիան կարողացավ իր նախապատերազմյան մակարդակին հասնել 1955 թ., իսկ 1964 թ. կրկնապատկել դրանք:

Մասնագիտական գրականության մեջ նշվող հիմնական պատճառները և գործոնները գրեթե ամբողջությամբ անփոփոխել

են Դապոնիայի «Տնտեսության ուսումնասիրության կենտրոնի» տնօրեն, հայտնի տնտեսագետ Յ. Կանեմորիի⁴¹ և ԱՄՆ-ի նախագահ Ջ. Քարտերի ազգային անվտանգության գծով խորհրդական, հայտնի քաղաքագետ Ջ. Բժեզինսկու⁴² տեսակետներում:

Կանեմորին թվարկում է հետևյալ 9 պատճառները, որոնք, ըստ նրա, կարևոր դերակատարություն են ունեցել «ճապոնական հրաշքի» կերտման գործում.

1. հետպատերազմյան բարեփոխումներ,
2. մասնավոր ընկերությունների ներդրումային քաղաքականություն,
3. բարձր մակարդակի խնայողություն,
4. տնտեսության մեջ նոր տեխնոլոգիաների ներդրում,
5. բարձր մակարդակի կրթվածություն,
6. աշխատուժի և կապիտալի կայուն փոխհարաբերություն,
7. բանկերի կողմից տրվող վարկերի արդյունավետ տնօրինում,
8. աննշան ռազմական ծախսեր,
9. քաղաքական կայունություն⁴³:

Բժեզինսկին նշում է այն 12 կարևոր գործոնները, որոնք իր կարծիքով նպաստել են Դապոնիայի հետպատերազմյան արդիականացմանը: Դրանք են՝

1. բացառիկ որակյալ աշխատուժ,
2. ճապոնացիներին բնորոշ աշխատանքի ծարավ,
3. աշխատանքի ցածր վարձատրություն,
4. քաղաքական ծրագրման հարցերում կառավարության ճիշտ մոտեցումներ,
5. տնտեսական վերականգնմանը մասնավոր կապիտալի լայն մասնակցություն,
6. հասարակական կյանքում կայունություն,

⁴¹ Shu Kanemori Y., *Postwar Japan: Lessons for Asia*. New York, Columbia University Press, 1988

⁴² Shu Brzezinski Z., *The Fragile Blossom: Crisis and Change in Japan*. New York: Harper and Row, 1972, էջ 24 -108:

⁴³ Ինչպես Կանեմորին, այնպես էլ Բժեզինսկին նշված գործոնների թվարկման հերթականությունը չեն ներկայացրել ըստ կարևորության աստիճանի:

7. մասնավոր ներդրումների համար ստեղծված բարենպաստ միջավայր,
8. նվազ ռազմական ծախսեր,
9. գնավորման ցածր սանդղակ,
10. Միացյալ Նահանգների հովանավորություն և օժանդակություն,
11. ազատ շուկայի ձևավորման համար ստեղծված նպաստավոր օրենսդրական դաշտ,
12. արտադրության բնագավառում նոր տեխնոլոգիաների ներդրում:

Ինչպես տեսնում ենք, երկու հեղինակների թվարկած գործոնները մասամբ կրկնում են միմյանց, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ ընդհանրապես որևէ ազգային տնտեսության առաջընթացի համար օբյեկտիվորեն անհրաժեշտ է որոշակի գործոնների համադրություն: Մյուս կողմից՝ ինչպես տեսնում ենք, երկու հայտնի հեղինակների նշած գործոնները բավականին հեռու են Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման պատճառների և գործոնների ամբողջական ներկայանակը ներկայացնելուց:

Ճապոնիայի հետպատերազմյան տնտեսական զարգացման առանձնահատկություններից մեկն այն էր, որ ազատ շուկայի պայմաններում էլ տնտեսությունը պլանային բնույթի էր: Այսպես, 1955 թ. դեկտեմբերին ընդունվեց 1956–1960 թթ. համար վարչապետ Իչիրո Հատոյամայի «Ինքնուրույն տնտեսության ստեղծման» ծրագիրը: Այն նախատեսում էր տարեկան նվազագույնը 5% տնտեսական աճ: Սակայն տնտեսական աճի միջին տեմպերը նշված ժամանակաշրջանում գերազանցեցին ծրագրվածը և կազմեցին միջինը 8,8 %: Տնտեսական զարգացման «Ինքնուրույն տնտեսության ստեղծման» ծրագրին հաջորդեց 1958–1962 թթ. համար «Նոր երկարաժամկետ տնտեսական ծրագիրը», որն ընդունվեց վարչապետ Կիսիի դեկլարությամբ 1957 թ. դեկտեմբերին և նախատեսում էր տարեկան 6,5 % միջին տնտեսական աճ, սակայն փաստացի տնտեսական աճի տարեկան միջին ցուցանիշը կազմեց 9,7 %: Հաջորդ՝ 1961–1964 թթ. համար, տնտեսական պլանավորման ռազմավարական ծրագիրն ընդունվեց Հայաթո Իկեդայի վարչապետության օրոք՝ 1960 թ. դեկտեմբերին:

Այն կոչվում էր «Ազգային եկամուտների կրկնապատկման ծրագիր»: Դրանով նախատեսվում էր տարեկան նվազագույնը 7,2 % տնտեսական աճ, սակայն իրական տեմպերը տարեկան միջին կտրվածքով կազմեցին ուղիղ 10 %:

Ճապոնիայի հետպատերազմյան տնտեսական զարգացման հաջորդ երեք ռազմավարական ծրագրերն ընդունվեցին Էյսակու Սատոյի վարչապետության օրոք (1964-1972), երբ, կարելի է ասել, արտաքին աշխարհը վերջնականապես փաստեց «ճապոնական հրաշքի» իրողությունը: Սատոյի՝ տնտեսական առաջընթացի ռազմավարություններն ընդունվեցին 1965, 1967 և 1970 թվականներին և կրում էին, համապատասխանաբար, «Միջնաժամկետ տնտեսական ծրագիր», «Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր» և «Սոցիալ-տնտեսական զարգացման նոր ծրագիր» անվանումները: Առաջին երկու ծրագրերն ապահովեցին տարեկան միջինը 10 % տնտեսական աճ, իսկ 1970–1975 թթ. ընթացքում Ճապոնիայի տնտեսության աճման տեմպերը կազմեցին տարեկան միջինը 5,1 %: Կարելի է նշել, որ շուրջ 15 տարի՝ 1955–1970 թթ., Ճապոնիայի տնտեսության զարգացման միջին տեմպերը կազմում էին տարեկան մոտ 10 %, և այս առումով 1970–1971 թթ. դարձան շրջադարձային, քանի որ դրանից հետո այդ տեմպերն սկսեցին որոշ չափով նվազել: Արդեն 1973 թվականին վարչապետ Կակուեի Տանակայի «Սոցիալ-տնտեսական հիմքերի ծրագիրը» 1973–1977 թթ. ապահովեց տարեկան ընդամենը 3,5 % միջին աճ՝ նախատեսված 9,4 %-ի փոխարեն, իսկ 1976–1985 թթ. ընթացքում ապահովվեց տարեկան շուրջ 4,2 % միջին տնտեսական աճ՝ նախատեսված 6 %-ի փոխարեն: Ինչևէ, բերված վիճակագրական տվյալներից ակնհայտ է դառնում այն մեծ տնտեսական թռիչքը, որը տեղի ունեցավ հետպատերազմյան Ճապոնիայում և դարձավ, ըստ էության, Ճապոնիայի արդիականացման գեներատորը:

Տնտեսության պլանավորման նշված ծրագրերը վկայում են, որ հետպատերազմյան Ճապոնիայի տնտեսական առաջընթացի գործում հետևողական քաղաքականության մշակման և իրականացման առումով մեծ դեր ունեցավ պետությունը: Այդ գործընթացն ուղեկցվում էր տնտեսական զարգացման տեմպերի պլանավորմամբ, ինչի շնորհիվ էլ ձևավորվեց զարգացման կանխատեսումների պրակտիկան: Այսպես, որոշ տնտեսագետներ

կանխատեսում էին, որ 20-րդ դարի վերջում կամ 21-րդ դարի առաջին տասնամյակում Ճապոնիան մեկ շնչին բաժին հասնող համախառն ներքին արդյունքով և տնտեսության ընդհանուր ծավալով աշխարհում կգրավի առաջին տեղը, ինչը, սակայն, տեղի չունեցավ: Իհարկե, քիչ չէին մասն ալն փորձագետները, որոնք հակված էին Ճապոնիայի տնտեսական թռիչքը համարելու ժամանակավոր երևույթ: Նրանք, հաշվի առնելով կապիտալիստական տնտեսության ընդհանուր բնույթը, կանխատեսում էին աննախադեպ զարգացմանը հաջորդող ճգնաժամ, ապա և տնտեսական անկում: Այս խումբը կազմող հեղինակները անգամ 1960-ական թթ. վերջին շրջանառության մեջ դրեցին մի պատկերավոր արտահայտություն, թե հետպատերազմյան տնտեսական զարգացումը «կանաչ ազդանշան» էր՝ տրված 1945 թ. հետո, որին արդեն հաջորդել է 60-ականների «դեղին ազդանշանը», և եթե Ճապոնիան չհասցնի ճիշտ ժամանակին արգելակել, ապա «վթարը կդառնա անխուսափելի»⁴⁴:

Ճապոնացի տնտեսագետները Ճապոնիայի հետպատերազմյան տնտեսությունը որակում էին իբրև «խաղաղության տնտեսություն», մինչդեռ իշխող կառավարությունների ցանկությունն էր երկիրը վերածել «համընդհանուր բարեկեցության հասարակության»⁴⁵: Հետպատերազմյան արդիականացումն ուղեկցվում էր մասն ընդհանուր, հատկապես՝ առանձին բնակավայրերի ժողովրդագրական պատկերի փոփոխություններով: Այն, մասնավորապես, բնութագրվում էր ուրբանիզացիայի բարձր տեմպերով և գյուղական բնակչության թվաքանակի կտրուկ նվազմամբ: Նկատելի էր գյուղական բնակչության արտագաղթը դեպի խոշոր և արագ զարգացող արդյունաբերական քաղաքներ, որտեղ հիմնականում կենտրոնացնում էին արտադրական հզորությունները: Այսպես, միայն 1966 թ. գյուղական բնակչության թվաքանակը նախորդ տարվա համեմատությամբ կրճատվեց 2,5%-ով, 1967 թ.՝ ևս 2,3%-ով, իսկ 1968 թ.՝ ևս 2%-ով⁴⁶:

⁴⁴ Japan Today, 1969, v. 10, էջ 13:

⁴⁵ Латышев И., *Лицо и изнанка "экономического чуда" Японии*, էջ 5:

⁴⁶ Ssu "The Yomiuri", 8 May, 1969:

Տ.Կուվաբարան նշում է Ճապոնիայի արդիականացման հետևյալ երեք գլխավոր գործոնները: Նրա կարծիքով՝ առաջինն այն էր, որ դեռ Տոկուգավայի շրջանում Ճապոնիայում հասունացել էին ժամանակակից հասարակությանն անցնելու համար անհրաժեշտ բոլոր պատմական նախապայմանները: Դրանց շարքում հարկ է առանձնացնել նաև այն հանգամանքը, որ Ճապոնիան երկար ժամանակ չէր ենթարկվել նվաճումների և չէր ներքաշվել պատերազմական գործողությունների մեջ: Ճապոնիայի արդիականացման սկզբից ևեթ ուրվագծվեցին զարգացման հիմնական ուղղությունները և գաղափարախոսությունը՝ կապիտալիստական տնտեսություն, ժողովրդավարական քաղաքական համակարգի ներդրում, անցում արհեստագործությունից գործարանային արտադրության, համընդհանուր կրթական աստիճանի բարձրացում և այլն:

Ըստ Կուվաբարայի՝ արդիականացման երկրորդ կարևոր գործոնն այն էր, որ ճապոնացիների ազգային բնավորությանը բնորոշ չեն պահպանողականությունն ու քարացած մտածելակերպը, ինչի շնորհիվ նրանք չեն կառչում այն ավանդականից, որը խանգարում է նորի յուրացմանը և առաջադիմականի ընդօրինակմանը: Այս առումով ընդունված ակադեմիական կարծիք է, որ ճապոնացիները, ներմուծելով որևէ օտար կամ նոր բան, այն հարմարեցնում են իրենց ընկալումներին և կիրառում մեծ արդյունավետությամբ՝ ստանալով ոչ ավանդական և ավանդական մշակութային արժեքների մի յուրօրինակ հիբրիդ: Տվյալ հանգամանքով է նաև պայմանավորված այն տարածված արտահայտությունը, որ «ճապոնացիները չեն կրկնօրինակում, այլ յուրացնում են»:

Կուվաբարայի կարծիքով՝ երրորդ գործոնն այն է, որ ճապոնական կրոնական համակարգում չկա միաստվածություն: Ճապոնացիները, լինելով տարբեր կրոնների հետևորդներ, պաշտում են տարբեր աստվածությունների, միևնույն ժամանակ, պատմականորեն չեն համարվում շատ կրոնասեր ժողովուրդ: Զրիստոնեությունը՝ իր բնութագրական մաքսիմալիզմով հանդերձ, չթափանցեց Ճապոնիա, մյուս կողմից՝ կրոնական արմատականություն չլինելու հանգամանքը Ճապոնիային զերծ պահեց ներքին կրոնական բախումներից և խժոժություններից, որոնք դարերի ընթացքում եվրոպական շատ երկրներից պահանջեցին մեծ զոհողություններ:

Այս հարցում Կուվաբարան չի կիսում կապիտալիզմի զարգացման գործում կրոնական արմատների գոյության մասին Վեբերի կարծիքը և համարում է, որ Ճապոնիայի օրինակը ապացուցում է Վեբերի տեսության սխալականությունը⁴⁷:

Սովորաբար ճապոնացի տնտեսագետները որպես ճապոնական հրաշքի և տնտեսական գերկայսրության Ճապոնիայի վերածվելու ցուցիչներ բերում են երեք տվյալներ: 1980 թ. ավտոմեքենաների արտադրության քանակը Ճապոնիայում կազմեց տարեկան 10 մլն, և այդ ցուցանիշով Ճապոնիան շրջանցեց ԱՄՆ-ին: Այդ նույն ժամանակ Ճապոնիան սկսեց արտադրել ավելի շատ պողպատ, քան ԱՄՆ-ը, և այդ ցուցանիշով գրավեց ԽՍՀՄ-ից հետո երկրորդ տեղը: Ճապոնական «Հիտաչի» ընկերությունն սկսեց արտադրել երկու անգամ ավելի քանակությամբ էլեկտրական տեխնիկա, քան ամերիկյան «Ջեներալ էլեկտրիկ-սը», ճապոնական «Տոյոտա» ավտոարտադրող ընկերությունն արտադրեց տարեկան երկու անգամ ավելի ավտոմեքենա, քան գերմանական «Բենցը», և 7 անգամ ավելի, քան ամերիկյան «Ջեներալ մոտորսը»:

* * *

Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման, տնտեսական զարգացման և «ճապոնական հրաշքի» պատճառները պարզելիս անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ չորս կարևոր հանգամանքները.

1. Ճապոնիայի տնտեսական համակարգը տարբերվում է այլ զարգացած արդյունաբերական երկրների համակարգերից, և այդ տնտեսական մոդելը⁴⁸ կարևոր դերակատարություն ունեցավ Ճապոնիայի արդիականացման գործում,
2. չնայած տնտեսության հետպատերազմյան վերականգնումը և զարգացումը հիմնված չէին նրա

⁴⁷ Shu Kuwabara T., *Japan and Western Civilization: Essays on Comparative Culture*. Tokyo, 1983:

⁴⁸ Որոշ մանագետներ ազատ շուկայական տնտեսությունների տիպաբանության մեջ առանձնացնում են երեք՝ գերմանական, ճապոնական և ամերիկյան, մոդելները: Ավելի հանգամանորեն տես Бок Зи Кой, *Экономика Японии: Какая Она*. Москва, “Экономика”, 2000, էջ 131:

նախապատերազմյան կառուցվածքի վրա, սակայն դրանում պահպանվեցին նախապատերազմյան շրջանի տնտեսությանն ու տնտեսական կյանքին բնորոշ որոշ էական առանձնահատկություններ, ինչը, մասնագետների կարծիքով, պայմանավորված էր ճապոնացիների էթնոմշակութային յուրահատկություններով կամ պատմական գործոններով,

3. որքան էլ արտաքինապես գրավիչ թվա տնտեսական զարգացման ճապոնական մոդելը, այդուհանդերձ, դրա մեխանիկական կրկնօրինակումն անհնար է, որովհետև յուրաքանչյուր տնտեսություն ունի զարգացման իր ներքին և երբեմն միայն իրեն հատուկ օրինաչափությունները,
4. ժամանակակից, այլ կերպ ասած՝ հատուկ ինտենսիվությամբ ընթացող, համընդհանրացման պայմաններում ճապոնական տնտեսական համակարգի շատ տարրեր «արտահանվելով» նպաստում են այդ գործընթացների է՛լ ավելի խորացմանը, քանի որ ճապոնիան հանդես է գալիս, մի կողմից, «մատակարարի», մյուս կողմից՝ «սպառողի» դերում:

Ընդհանուր առմամբ, արդիականացման տեսությունները և դրանց հիմքում դրված փաստարկները գործ ունեն նաև պատմության պարբերացման հետ: Արդիականացմանն անցումը եվրոպական զարգացած արդյունաբերական երկրների պարագայում սովորաբար համընկնում է նոր պատմության սկզբին: Այս հարցում առավել լայն ճանաչում ստացած երկու տեսությունները մշակել են Մարքսը և Վեբերը: Ըստ Մարքսի՝ արդիականացումն սկսվում է արդյունաբերական կապիտալի ի հայտ գալով, դասակարգային պայքարի առաջացմամբ և լայն առումով՝ բուրժուական հասարակության ստեղծմամբ: Ինչպես կարելի է եզրակացնել, Մարքսի տեսությունը հենվում է հիմնականում արևմտաեվրոպական երկրների, հատկապես՝ Անգլիայի և Ֆրանսիայի պատմական փորձի վրա: Ի տարբերություն Մարքսից՝ Վեբերը շեշտը դնում է ոչ թե տնտեսական նախապայմանների, այլ հանրային հաստատությունների արդյունավետության ու հասարակական բանականության վրա: Թեև այս երկու տեսությունները մեծապես օգտակար են նաև այլ՝ ոչ եվրոպական, երկրների ուսումնասիրության համար,

սակայն տարբեր ասիական կամ նույնիսկ լատինաամերիկյան երկրների պատմության նկատմամբ դրանց կիրարկման դեպքում պարզվում է, որ այդ երկրների արդիականացման առանձնահատկությունները բացատրելու համար անհրաժեշտ է վերանայել տվյալ տեսությունները:

Ինչպես վերը նշել էինք, մասնագիտական գրականության մեջ ընդունված է Ճապոնիայի արդիականացման մեկնակետ համարել Մեիձիի հեղաշրջումը (այն ընդունված է նաև անվանել հեղափոխություն կամ վերականգնում): Կա նաև տեսակետ, որ, ի տարբերություն այլ երկրներից, Ճապոնիայի արդիականացումը տեղի է ունեցել արտաքին ազդակների կամ արտաքին «ճնշումների» հետևանքով: Որոշ հետազոտողների կողմից Ճապոնիայի արդիականացման մեկ այլ կարևոր հատկանիշ է համարվում այն, որ արդիականացումը եղել է «վերևից» թելադրված, քանի որ, ի տարբերություն արևմտյան շատ երկրներից, ճապոնական հասարակության լայն շերտերն էապես չեն մասնակցել այդ գործընթացներին:

Մեիձիի հեղաշրջումը կոչվում է նաև *Մեիձի իսին*, կամ «վերականգնում», որովհետև այն նպատակ ուներ վերականգնել կայսեր սասանված դիրքերը և վերջ տալ Տոկուգավայի շրջանում հաստատված սամուրայների իշխանությանը: Մյուս կողմից՝ կայսրը կարող էր դառնալ այն կենտրոնը, որի շուրջը կարող էր համախմբվել հասարակությունը, մանավանդ՝ արտաքին ներխուժման ուժեղացող վտանգի պարագայում: Ճապոնական գաղութատիրությունը, թեև «արևելասիական բարգավաճ տարածքի» գաղափարախոսությունն օգտագործվեց միայն գաղութատիրության հետագա ծավալման համար, ըստ էության, նպաստեց նաև ռեգիոնալիզմի գիտակցության ուժեղացմանը, ինչը հետագայում պարարտ հող դարձավ տարածաշրջանային ինտեգրացիայի հարցի հետզհետե թափ առնող քննարկումների համար: Սակայն այժմ տարածաշրջանային ինտեգրացիայի անհրաժեշտությունն արդեն ոչ թե բխեցվում էր անմիջական արտաքին սպառնալիքից, այլ պայմանավորվում էր ներքին ընդհանուր տնտեսական շահերով ու հավաքական անվտանգության խնդիրներով:

1980-ական թթ. վերջին Ճապոնիան վերածվեց աշխարհի երկրորդ խոշորագույն տնտեսության: Ճապոնիայի պատմության

մեջ ընդունված է 1990-ական թթ. համարել «կորսված տասնամյակ», երբ տնտեսական աճման տեմպերը նկատելիորեն նվազեցին, ինչը մի խումբ մասնագետների կողմից մեկնաբանվեց որպես Սառը պատերազմի համակարգի փլուզման արդյունք: Դա պայմանավորված էր նաև Ճապոնիայի հարևան երկրների՝ Կորեայի, Թայվանի և Սինգապուրի զարգացմամբ՝ ու նրանց հետ տնտեսական սուր մրցակցությամբ: Մասնագետների գնահատմամբ՝ չնայած 1990-ական թթ. վերջին Ճապոնիայի տնտեսության մեջ արձանագրված անկմանը և «պղպջակային տնտեսությանը», այդ փուլն արդեն կարելի է համարել հաղթահարված, և Ճապոնիայի տնտեսությունն այսօր էլ գտնվում է անշեղ զարգացման ճանապարհին: Չինաստանի աճող ազդեցությունը, ինչպես նաև 2008 թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը և 2011 թ. մարտյան ցունամին տնտեսությանը մեծ վնաս պատճառեցին, սակայն Ճապոնիան դրանց հետևանքների վերացման ուղղությամբ բավական մեծ ջանքեր ու միջոցներ ներդրեց: Մինչդեռ աճող չինական մարտահրավերին դիմակայությունը պահանջում է միանգամայն այլ՝ ավելի համակարգային և երկարաժամկետ, մոտեցումներ, թեև հարկ է նշել, որ այսօր համաշխարհային տնտեսության մյուս հսկաները ևս չունեն այդ ուղղությամբ մշակված հստակ ռազմավարություններ:

* * *

Ինչպես նշվեց, Ճապոնիայի հետպատերազմյան զարգացումների վերաբերյալ երկարատև հասարակագիտական բանավեճերը հանգեցրին հիմնախնդրի ուսումնասիրության երկու տարբեր՝ ամերիկյան և ճապոնական, գիտական դպրոցների ձևավորմանը: Այդ երկու ուղղություններին հակվող տեսաբանների հետազոտման առանցքային խնդիրներից մեկն առնչվում է հետպատերազմյան զարգացումներում էթնիկական ինքնության գործոնի դերակատարությանը: Հիմնվելով հասարակական զարգացումների պատճառահետևանքային բնույթի վրա և զարգացնելով ազգությամբ հրեա նշանավոր հասարակագետ Ս. Էյզենշտատի տեսությունը՝ շատ ուսումնասիրողներ համոզված են, որ էթնիկական ինքնությունը Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման հիմնական,

բայց ոչ երբեք միակ առանցքային գործոններից էր⁴⁹: Այս գործընթացում էթնիկական ինքնությունն ունեցել է երկակի դերակատարություն. հետպատերազմյան տնտեսական, քաղաքական ու հասարակական զարգացումների նախադրյալների շարքում այն հանդես է եկել ոչ միայն որպես էական ազդեցություն ունեցած գործոն, այլև հետագայում իր հերթին մեծապես փոխազդել է «ճապոնական հրաշքի» հետ՝ ենթարկվելով որոշակի որակական փոխակերպումների⁵⁰:

Տվյալ պարագայում հարկ է հստակեցնել, թե ինչով են ճապոնացիները տարբերվում կամ առանձնանում աշխարհի էթնիկական քարտեզը ձևավորած այլ ժողովուրդներից, և ճապոնացիների էթնիկական ինքնությունն ինչ կոնկրետ պատմական դերակատարություն է ունեցել այդ երկրի հետպատերազմյան հասարակական վերափոխումներում: Ինչպես Ճապոնիայում 2002թ. աշնանը հեղինակի կատարած դաշտային ազգագրական աշխատանքի ընթացքում նշեց ճապոնագիտության կենտրոնական գիտական օջախներից մեկի՝ Կիոտոյի ճապոնագիտական ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի ղեկավար պրոֆեսոր Հայաո Կաուային, «Նման հարցադրումն ինքնին մեր՝ ճապոնացիներին, յուրօրինակ բնութագրիչներից է: Առօրյա կյանքում մենք մնանատիպ հարցադրում անում ենք ավելի հաճախակի, քան, օրինակ, ֆրանսիացիները, գերմանացիները, չինացիները, հնդիկները կամ ինդոնեզացիները⁵¹»: Նման պնդումն, անշուշտ, վկայում

⁴⁹ Steu Farmanyan S., *The Role of Japanese Ethnic Identity in Postwar Economic and Social Transformation: Feedback Impacts on the Content of Ethnic Identity*. MA thesis, Lund, Library of the Center of East and Southeast Asian Studies, 2003.

⁵⁰ Էթնիկական ինքնության խնդիրներին նվիրված մինչ օրս ստեղծված տեսական բնույթի սովորաբար գիտական գրականության մեջ էթնիկական ինքնության և աշխարհընկալման մեջ պատմական ինչ-ինչ գործոնների ազդեցությամբ պայմանավորված փոփոխությունները և փոխակերպումները նկարագրելու համար գործածվում են ամենատարբեր, երբեմն նույնիսկ խիստ հակասական և իրարամերձ տերմիններ: Սույն աշխատության հեղինակը առավել ընդունելի է համարում «փոխակերպում» կամ «կերպափոխում» (տրանսֆորմացիա) տերմինները: Այս պրոբլեմի վերաբերյալ ավելի հանգամանորեն տե՛ս Barth F., *Ethnic Groups and Boundaries: The Social Organization of Culture Difference*. Boston, Little Brown, 1969; Eriksen Th., *Ethnicity and Nationalism: Anthropological Perspectives*. London, Boulder, Pluto Press, 1993:

⁵¹ Steu Farmanyan S., նշվ. աշխ., էջ 5:

է, որ էթնիկական և մշակութային ինքնաճանաչման, ինչպես նաև դրա պատմական դերակատարության բացահայտման շարունակական գործընթացը քննարկման առարկա է մույնիսկ մերօրյա ճապոնիայում:

Ինչպես ցույց են տալիս դաշտային ազգագրական աշխատանքների արդյունքները, այդ պնդումն ուղղակի առնչություն ունի նաև էթնիկական ինքնության կամ էթնիկական ինքնագիտակցության առանցքը կազմող կարևոր բաղադրատարրերից մեկի՝ հայրենիքի գաղափարի ընկալման հետ, որը տարբեր ժամանակաշրջաններում որոշակիորեն պայմանավորել է ճապոնացիների էթնիկական ինքնությունը: Չնայած հասարակագիտության տարբեր ճյուղեր տարբեր կերպ են սահմանում «էթնոս» և ածանցյալ կամ հարակից հասկացությունները, այնուամենայնիվ, բոլոր ուղղությունների համար որպես առանցքային բաղադրիչ առանձնացվում է ընդհանուր պատմական կենսատարածքի, կամ հայրենիքի, և դրա գիտակցման գաղափարը⁵²:

Ճապոնացի ուսումնասիրող Յոշինոն հակված է կարծելու, որ այլ հասարակությունների պարագայում էթնիկական ինքնության գիտակցումը ներկայանում է որպես մի «գործընթաց, երբ «նրանց» էթնիկական և մշակութային տարբերությունների գիտակցումը ծառայում է «մեր» առանձնահատկությունների և տարբերությունների բացահայտմանը կամ այլ կոնկրետ նպատակների, մինչդեռ մեր (ճապոնացիների, – *Մ.Զ.*) պարագայում ճիշտ հակառակն է. ուրիշների առանձնահատկությունների բացահայտումը ածանցվում է «մեր»-ի ինքնաճանաչումից⁵³»: Ինչպես հարցազրույցի ժամանակ նշեց Կիոտոյի ճապոնագիտության միջազգային ուսումնասիրությունների կենտրոնի հետազոտող Այակո Հոնդան, «հետպատերազմյան տնտեսական զարգացմանը հաջորդած

⁵² Smith A., *National Identity*, London, 1991, էջ 14:

⁵³ Yoshino K., *Japan's Nationalism in a Marketplace Perspective*, in K. Yoshino (ed.) *Consuming Ethnicity and Nationalism: Asian Experiences*. Curzon, Richmond, Surrey, 1999, էջ 8-25:

Նհիհոնձինոռնում⁵⁴ «մենք»-ի գիտակցումը չի հիմնվում «նրանք»-ի առանձնահատկությունների ու տարբերությունների ճանաչման վրա, այլ «մեր» ինքնաճանաչումից և ինքնաբացահայտումից է ածանցվում «նրանց» տարբերությունների ընկալումը և գիտակցումը՝ հավելելով, որ «Ճապոնիան լավագույնս հասկանալու կարևորագույն նախապայմաններն են ճապոնական ինքնության և մշակույթի մասին ոչ համեմատական մոտեցումն ու վերլուծությունը⁵⁵»:

Այս առումով թերևս հետաքրքրական է ուսումնասիրել երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ճապոնացիների հավաքական գիտակցության մեջ ասիական տարածաշրջանի՝ որպես առավել ընդարձակ քաղաքակրթական միավորի ընկալման նկատելի փոխակերպումները, որոնք հետագայում իրենց յուրօրինակ արտացոլումն ստացան նաև լեզվաբանության մեջ: Նախապատերազմյան Ճապոնիայում «Ասիա» տեղանունը գրվում էր *կսնջիուլ*՝ ճապոներենի հիմնական գրային համակարգերից մեկով, որը ժամանակին չինարենից փոխառված գաղափարագրերի համակարգ է, մինչդեռ հետպատերազմյան զարգացումներին զուգընթաց՝ ոչ այնքան և ոչ զուտ լեզվաբանական բարեփոխումների հետևանքով, այն սկսեց գրվել *կալսակսնայուլ*՝ երկինշյունային այբբենական համակարգով, որը ճապոներենում օգտագործվում է օտար և փոխառյալ բառերը գրելու համար: Հաստատելով այն միտքը, որ հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած զարգացումների պատճառով ճապոնացիների էթնիկական ինքնության մեջ ասիական շերտը որոշակի նահանջ ապրեց, Կիոտոյի ճապոնագիտության միջազգային ուսումնասիրությունների կենտրոնի մեկ այլ հետազոտող՝ Յոկինո Օկունոն, հարցազրույցի ժամանակ փաստեց հետևյալը. «1980-ական թթ., երբ ճապոնական տնտեսությունը հասել էր իր զարգացման բարձրակետին, Տոկիոյի

⁵⁴ Այդպես են կոչվում 1970-ական թթ. սկզբնավորված լայնածավալ ուսումնասիրությունները, որոնք նպատակ էին հետապնդում խոր և բազմակողմանի քննության առնել ճապոնացիների էթնիկ և մշակութային ինքնատիպության հարցերը: Այդ հարցը հանգամանորեն կքննարկվի սույն աշխատության երրորդ գլխում:

⁵⁵ Steu Farmanyan S., նշվ. աշխ., էջ 21:

առաջադեմ մտավորականության շրջանում մեծ տարածում ուներ Յուրումի Յոշիյուկիի «Աջիա ուս մաշե մաշուշիկա»⁵⁶ աշխատությունը: Յ. Յոշիյուկիի և նրա այլ առաջադեմ ընկերների համար Ասիան հետպատերազմյան հայտնի զարգացումների հետևանքով չէր ներառում Ճապոնիան, իսկ ճապոնացիների էթնիկական գիտակցությունը ժամանակի մեջ բացառեց Ասիայի հետ ինքնանույնացումը: Այստեղ, անշուշտ, իր մեծ դերն ունեցավ Նիհոնշիկոնոնի ակունքներում կանգնած ճապոնական քաղաքական ու մտավորական ընտրախավը⁵⁷: Հետպատերազմյան Ճապոնիայում տեղի ունեցած զարգացումներում էթնիկական ինքնության դերի մասին խոսելիս պետք է նկատի ունենալ նաև այն կարևոր հանգամանքը, որ մասնագիտական գրականության մեջ սովորաբար առանձնացվում են «նախապատերազմյան» և «հետպատերազմյան» սերունդները, որոնք ոչ միատեսակ են ընկալում այդ զարգացումներին առնչվող շատ ու շատ երևույթներ:

Վերջին չորս տասնամյակների ընթացքում Ճապոնիայում և հիմնականում նրա սահմաններից դուրս ստեղծված ճապոնագիտական հսկայածավալ գրականությունը փորձում է հիմնավորել և կանխորոշել Ճապոնիայի անխուսափելի «արևմտականացումը»՝ հենվելով գիտական շրջաններում վերջերս լայնորեն քննարկվող այն թեզի վրա⁵⁸, որ ժամանակակից ճապոնական երիտասարդությունն անդառնալիորեն վերածվել է արևմտյան արժեհամակարգի կրողի և, ըստ էության, բավական հեռացել է իր էթնիկ ու մշակութային արմատներից: Որպես լրացուցիչ հիմնավորում երբեմն վկայակոչվում են նաև համաշխարհային համընդհանրացման արդի գործընթացները և Ճապոնիայի *կոկոսայկան*, կամ «միջազգայանցումը»⁵⁹: Այսպես. Տոկիոյի համալսարանի Արդյունաբերական ինստիտուտի ուսանողության հետ հեղինակի ունեցած հարցազրույցի ժամանակ տեղական ուսանողական

⁵⁶ Այսինքն՝ «Ինչու է Ասիան աղքատ»:

⁵⁷ Տես Farmanyanyan S., նշվ. աշխ., էջ 21:

⁵⁸ Ճապոնիայի «արևմտականացման» տվյալ թեզի մասին ավելի հանգամանորեն տես Itoh M., *Globalization of Japan: Japanese Sakoku Mentality and U.S. Efforts to Open Japan*. New York, St. Martin's Press, 2000:

⁵⁹ Տես նույն տեղում:

կազմակերպություններից մեկի ներկայացուցիչ Սեկի Սակա-
կինն նշեց. «Ճապոնիայի ժամանակակից պատմությունը՝ սկսած
հատկապես 1868 թվականից, երբ Ճապոնիան «բացվեց» արտա-
քին աշխարհի առջև, կարելի է բնութագրել որպես արևմտակա-
նացման ճանապարհով դիմամիկ մշակութային ինքնամա-
քրագործության մի երկարատև գործընթաց: Իսկ դրա հիմքում
անպայմանորեն պետք է տեսնել դեռ 19-րդ դարի կեսերին ձևա-
վորված և հետագա հասարակական զարգացումների համար
գաղափարական ակունքի վերածված երկու հայտնի կարգա-
խոսները՝ *haugunai nishin* («փախչել Ասիայից դեպի Արևմուտք») և
nasukon jousai («ճապոնական ոգի և արևմտյան տեխնոլո-
գիաներ»⁶⁰)»: Այնուամենայնիվ, 2001 թ. ճապոնական երիտա-
սարդության շրջանում կատարված ուսումնասիրությունների
արդյունքների ամփոփումը ցույց է տալիս, որ հարցման ենթա-
րկված երիտասարդ տղաների 93 %-ը և աղջիկների 94 %-ը Ճապո-
նիան համարել են այն ամենակարևոր և առաջնային մարմինը,
որին իրենք պատկանում են, այն դեպքում, երբ տղաների միայն
1,2 %-ը և աղջիկների 1,1 %-ն են հակված «ասիական» պատկա-
նելությունը համարելու իրենց ինքնության առանցքային տարրե-
րից մեկը⁶¹:

Այս և այլ արժեքավոր հետազոտություններով փաստվում է,
որ ճապոնացիների էթնիկական ինքնության վերը բննարկված
առանձնահատկությունները, պատմական կենսատարածքի
ընկալումը կարելի է որակել որպես էթնոմայրամասականության
(էթնոպերիֆերիզմ) դրսևորում (ի հակադրումն էթնոկենտրո-
նության, որի մեջ արևմտյան շատ մասնագետներ հաճախ «մեղա-
դրում» են ճապոնացիներին), ըստ որի՝ էթնիկ կենսատարածքն
ընկալվում է որպես «սահմանային»՝ հարևան և ոչ հարևան այլ
հասարակությունների ու քաղաքակրթությունների հետ շփման
միջավայրում գտնվող: Ճապոնիայի պատմության նոր և նորա-
գույն շրջանները ևս գալիս են ապացուցելու այն ածանցյալ
պնդումը, որ ճապոնացիների էթնիկական ինքնությանը բնորոշ

⁶⁰ Տե՛ս Farmanyen S., նշվ. աշխ., էջ 21:

⁶¹ Տե՛ս Bergström J., *Me and My Nation: National Identity, Group Narcissism, and Historical Discourses in the Wake of Crisis in Japan*. Lund, Psykologexamensuppsats, Institutionen för Psykologi av Lund Universitet, v. 3. N 15, 2001, էջ 41- 42:

Էթնոժայրամասականության շնորհիվ Ճապոնիան հեշտությամբ յուրացրեց օտար մշակութային առաջադիմական արժեքները, միևնույն ժամանակ, զարմանալի կերպով նշանակալի փոփոխությունների չենթարկելով իր ինքնությունն ու արժեհամակարգը: Ճապոնացիներն իրենց հավաքական գիտակցության մեջ էթնիկ կենսատարածքը և քաղաքակրթական ինքնությունը պատմականորեն ընկալել են որպես սահմանային՝ «կենտրոնական» և «ունիվերսալ» քաղաքակրթությունների մի յուրատեսակ «հանդիպման վայր»⁶², այլ կերպ ասած՝ ծայրամասային միջավայր: Իսկ Ճապոնիայի պատմական պրակտիկայում միմյանց հերթափոխած այնպիսի խորքային դրույթներ, ինչպիսիք են մշակութային և քաղաքական համատեքստ ենթադրող Ճապոնիայի «ապաստիականացման», «վերաասիականացման», «ճապոնականացման», «արևմտականացման» կամ այլ մանատիպ կարգախոսներ, պետք է դիտել որպես ճապոնացիների էթնոժայրամասական ինքնության դրսևորում: Նման աշխարհընկալումը, որը բնորոշվում է մշակութային ինքնապահպանման և օտար մշակութային արժեքների արագ յուրացման համակցությամբ, անշուշտ, իր որոշակի դերակատարությունն է ունեցել երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ծավալված հասարակական զարգացումներում՝ *ուսկոնը յոսային* («ճապոնական ոգի») համատեղելով արևմտյան ձեռքբերումների յուրացման հետ, նպաստելով Ճապոնիայի տնտեսական ու գիտատեխնիկական հեղափոխական առաջընթացին: Սա ևս մեկ անգամ հաստատում է գիտական գրականության մեջ շրջանառող այն պնդումը, թե «ճապոնացիները չեն կրկնօրինակում, այլ յուրացնում են»⁶³:

Ինչպես նկատում են Ճապոնիայի պատմության ուսումնասիրությամբ զբաղվող շատ մասնագետներ, «ծագող արևի երկրի» պատմության փիլիսոփայության թերևս ամենազարմանալի առանձնահատկություններից են հասարակական-քաղաքական

⁶² «Կենտրոնական» ասելով նկատի է առնվում չինական քաղաքակրթությունը, որի՝ Ճապոնիայի վրա գործած մշակութային ազդեցությունը փաստված պատմական իրողություն է, իսկ «ունիվերսալ» ասելով նկատի են առնվում սկզբում «եվրոպական», իսկ վերջին շրջանում նաև արևմտյան տարասեռ մշակութային միջավայրները:

⁶³ Farmanyan S., նշվ. աշխ., էջ 22:

համակարգային փոփոխությունների արագ տեմպն ու անցումը ցեղային միապետությունից ավատատիրությանը, ապա՝ բացարձակ միապետությանը և, վերջապես, նշանավոր ճապոնագետ Իշիի բառերով ասած, «իր բնույթով հեղափոխական արդիականացմանն ու Մեյձիի հեղաշրջումից հետո Արևմուտքի առջև ճապոնիայի «բացմանը»⁶⁴»։ Ճապոնիայի՝ պատմականորեն միմյանց հաջորդած հասարակական-քաղաքական և պետական կարգերի այդչափ յուրօրինակ ու ներդաշնակ հաջորդականության նկատմամբ հասարակական և ակադեմիական հետաքրքրությունն է՛լ ավելի աճեց երկրորդ աշխարհամարտից հետո, երբ Ճապոնիան Հեռավոր և Հարավարևելյան Ասիայի երկրներից թերևս առաջինը միապետությունից անցում կատարեց սահմանադրական կարգի վրա հիմնված արդի ժողովրդավարական հասարակությանը՝ շատ կարճ պատմական ժամանակահատվածում ձեռք բերելով տարածաշրջանում ժողովրդավարության օջախի համբավ։

Ինչպես իրավացիորեն նշում է ճապոնագետ Տեցուկո Կոսետոն, «Ճապոնիայի հետպատերազմյան տնտեսական հրաշքը հասարակական ու գիտական ուշադրությունից դուրս՝ սովերի մեջ, թողեց նրա ինքնատիպ քաղաքական անցումը ժողովրդավարության և ազատական գաղափարների վրա հիմնված հասարակությանը»⁶⁵։ Բանն այն է, որ երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած տարիներին, երբ Ճապոնիան դեռևս չէր հաղթահարել Միացյալ Նահանգներից իր տնտեսական ու ռազմական լիովին կախվածությունը, ինչն ուղեկցվում էր հասարակագիտության մեջ Ճապոնիայի հետպատերազմյան քաղաքական ու տնտեսական զարգացման և պլանավորման խնդիրների վերլուծության գործում ամերիկյան դպրոցի գերակայությամբ, փորձ էր արվում Ճապոնիայի քաղաքական նոր ժողովրդավարական համակարգի ձևավորման հիմքում դնել ամերիկյան ժողովրդավարական հաստատությունների «կրկնօրինակման» մոդելը։

Այստեղ անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ մտավորականության լայն խավերի շրջանում Ճապոնիայի

⁶⁴ Տե՛ս Ishii Sh., *Beyond Paradoxology*. "Japan Review", 2000, N 12, էջ 78:

⁶⁵ Interview with Tetsuko Koseto. Museum of the Meiji Restoration Shrine, Tokyo. Farmanyan S., նշվ. աշխ., էջ 29:

հասարակական-քաղաքական զարգացման ուղիների հնարավոր ընտրության շուրջ քննարկումները նոր իրողություն չէին. դրանից դեռ գրեթե մեկ դար առաջ՝ 1873 թ., երբ Մեիծիի հեղաշրջման հետևանքով Ճապոնիան «բացվեց Արևմուտքի առջև», կրկին մեծ հասարակական ակտուալություն էր ստացել իր մշակութային ու ավանդական արժեհամակարգին ապավինելու կամ դեպի արևմտյան մշակութային ու քաղաքական արժեքներ դեմքով դառնալու երկընտրանքը: Այս առնչությամբ 19-րդ դարի նշանավոր ճապոնացի լուսավորիչ Օկուբո Տոշիմիչին գիտական քննարկումների ասպարեզ բերեց *սեյուսյի* (քաղական համակարգ) և *կոկյուսյի* (էթնիկ համակարգ) անբաժանելիության և ամբողջականության տեսությունը: Ըստ Օկուբոյի՝ ցանկացած երկրի *սեյուսյը* պետք է հիմնված լինի ու մշակութային արմատներով սնվի իր *կոկյուսյից*, և որ, օրինակ, Ռուսաստանի *սեյուսյը* հնարավոր չէ պատճենել Անգլիայում, Անգլիայինը՝ Միացյալ Նահանգներում, դրանցից և ոչ մեկը՝ Ճապոնիայում: «Մեր քաղաքական համակարգը պետք է անհրաժեշտորեն խարսխվի մեր էթնիկական ինքնության, երկրի ավանդույթների, ժողովրդի զգացմունքների և հասարակության մշակութային զարկերակի վրա»⁶⁶, գրել է Օկուբոն:

* * *

Հետպատերազմյան Ճապոնիայում տեղի ունեցած արդիականացումն էթնիկական, մշակութային կամ պատմական պատճառականությամբ պայմանավորելու մոտեցումը ինչպես Ճապոնիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս մեծ թափ ստացավ Ճապոնիայի պատմության ընդհանուր վերանայման, վերաարժեքավորման ու պատմության առանձին հարցերի ուսումնասիրությունը գիտական շրջանակներից դուրս գալու և հասարակական լայն սպառման ու քննարկման առարկա դառնալու համատեքստում: Այդ հարցում, բացի *Նիհոննշինոննից*, որը պատմության վերանայման համար ստեղծում էր ընդհանուր բարենպաստ միջավայր, կարևոր էին այլ գործոններ ևս, որոնց մանրամասն քննարկումը

⁶⁶ Eisenstadt Sh., *Japanese Civilization: A Comparative View*. Chicago and London, Chicago University Press, 1996, էջ 31:

չի մտնում սույն աշխատության խնդիրների շարքը: Այդ ամենով հանդերձ՝ դրանց համառոտ քննարկումը, մեր կարծիքով, մեծապես կօգնի ճիշտ պատկերացնելու Ճապոնիայի՝ արագ տեմպերով հետպատերազմյան արդիականացմանը զուգահեռաբար մեծ թափ հավաքող պատմության վերանայման շարժման էությունը և առավել լայն համատեքստում մեկնաբանելու այդ արդիականացման ազդեցությունը ճապոնացիների էթնիկական ինքնության հետագա փոխակերպումների վրա:

Արդիականացման և արդյունաբերականացման հիմնապատճառները ավանդական արժեքային համակարգի ու մշակութային ինքնատիպության մեջ փնտրելու հայեցակարգը ձևավորվեց Մաքս Վեբերի «Բողոքականության բարոյականությունը և կապիտալիզմի ոգին» աշխատության շնորհիվ⁶⁷: Ինչպես հայտնի է, Վեբերն այդ աշխատության մեջ հիմնավորում էր այն դրույթը, որ արդիականացման և արդյունաբերականացման հիմնապատճառները պետք է փնտրել մշակութային, առաջին հերթին՝ կրոնական արժեհամակարգերում: Հանգամանալից քննության ենթարկելով արևմտյան երկրների արդյունաբերականացման գործում բողոքականության, հատկապես՝ կալվինականության բարոյական արժեհամակարգի դերակատարությունը՝ Վեբերն, այնուամենայնիվ, սահմանափակվեց միայն բողոքականության ուսումնասիրությամբ և չտեսավ նմանություն այնպիսի կրոնական համակարգերում, ինչպիսիք են կոնֆուցիականությունը, բուդդայականությունը և իսլամը: Չնայած 20-րդ դարի առաջին տասնամյակում Ճապոնիան հանդես բերեց տնտեսական և ռազմական հզորությունները բազմապատկելու ակնառու ներուժ՝ Վեբերը, սակայն, չգնաց ճապոնական մշակութային ու կրոնական արժեհամակարգերում բողոքականության համարժեքների որոնման ճանապարհով: Այդուհանդերձ, նրա առաջ քաշած հայեցակարգը հետագայում տեսական պարարտ հող դարձավ, որպեսզի ճապոնացի և արևմտյան ուսումնասիրողներն իրենց աշխատություններում Ճապոնիայի արդիականացման պատճառները տեսնեն ավանդական մշակութային ու կրոնական արժեհամակարգի մեջ:

⁶⁷ Stü Weber M., *The Protestant Ethic and the Spirit of Capitalism*. New York, Scriber, 1958:

Այսպես. արդեն 1941 թ. ճապոնացի ուսումնասիրող Նաիոտո Կանձին, հիմք ընդունելով Վեբերի՝ կապիտալիզմի ոգու վրա բողոքական բարոյականության ազդեցության տեսությունը, քննության ենթարկեց բուդդայական *ջյոդո սինայու*, կամ «մաքուր երկրի նոր աղանդ», կրոնական հոսանքի բարոյական արժեհամակարգը և դրանով պայմանավորեց Ճապոնիայի նկատելի առաջընթացը՝ սկսած Մեիձիի հեղաշրջումից⁶⁸: Հետագայում նրա գաղափարները զարգացվեցին ամերիկացի ճապոնագետ Ռոբերտ Բելաիի աշխատություններում: Բելաիը, քննության առնելով Տոկուգավայի ժամանակաշրջանում Ճապոնիայում տարածված հիմնական կրոնական ուղղությունների գաղափարախոսությունները (կոնֆուցիականություն, բուդդայականություն, սինտոյականություն, ինչպես նաև այդ շրջանում սկիզբ առած բազմաթիվ աղանդավորական շարժումներ ու հոսանքներ) և հասարակական հաստատությունների արդիականացման գործում դրանց ունեցած դերը, հանգեց այն եզրակացությանը, որ «ճապոնական կրոնական համակարգերն իրենց ուղղափառ և աղանդավորական ձևերով հանդերձ հատկապես մեծ ներդրում ունեցան հասարակական համախմբման գործում՝ ամրապնդելով, կարծրացնելով հասարակական արժեհամակարգը, ինչն էլ իր հերթին բարենպաստ միջավայր ստեղծեց Ճապոնիայի արդիականացման համար⁶⁹»: Նա առանձնակի շեշտեց այն թեզը, որ ճապոնական կրոնական արժեհամակարգերը կարևոր դեր ունեցան բարձր կարգապահության և աշխատանքին գերլարումով նվիրվածության հասարակական որակների արմատավորման գործում, ինչով էլ Ճապոնիայում պայմանավորվեց «կազմակերպված» հասարակության ստեղծումը: Նա հավատարիմ մնաց Վեբերի այն համոզմունքին, որ մշակութային գործոնները առաջնային և կարևոր դերակատարություն ունեն մեծ սոցիալական փոփոխության, մանավանդ՝ արդիականացման գործում:

Վեբերի տեսության տեղայնացման հարցում կարելի է հիշատակել նաև Է. Այալի և Հ. Նակամուռայի աշխատությունները:

⁶⁸ Shu Naioto K., *Religion and Economic Logics*. Tokyo, 1941, v. 8, էջ 243-286:

⁶⁹ Bellah R., *Tokugawa Religion: The Values of Pre-industrial Japan*. Glencoe, 1957, էջ 195:

Դիտարկելով ճապոնական հասարակության առանձին անդամների վրա բուդդայականության և կոնֆուցիականության բարոյական արժեհամակարգի ազդեցությունը՝ Այալը Ճապոնիայի արդիականացման գործում մեծ առաքելություն էր վերագրում սինտոյականությանը՝ հատկապես կարևորելով «պետությանը ճապոնացու նվիրվածության ինտենսիվացումը»⁷⁰։ Նա նաև քննության առավ կրոնական տարբեր հոսանքների՝ *սինի*, *սինզակուի*, *հույոկուի* բարոյական նորմերի դերը ճապոնացիների՝ աշխատանքին բացառիկ նվիրվածության, ավելի շատ վաստակելու ձգտման, մի խոսքով՝ նյութական բարիքների ստեղծմանն ու տնտեսական զարգացմանն առնչվող հարցերում։

Ճապոնացի հետազոտող Նականուռա Հաձիմեն որպես Արևմուտքի արդիականացման գործում բողոքական բարոյախոսության ունեցած դերակատարության համարժեք էր դիտում աշխատանքային վարքականոցի մասին ձեռն-բուդդայականության հետևորդ միապետ Սուձուկի Սյոսանի ուսմունքը։ Համաձայն այդ ուսմունքի՝ յուրաքանչյուր աշխատանք հավատքի մի յուրատեսակ փորձություն է, քանի որ յուրաքանչյուր մասնագիտություն տրված է ի վերուստ՝ Աստծո կողմից։ Սյոսանը քարոզում էր, որ չկա բուդդայական կրոնական պրակտիկայի այլ ճանապարհ, քան ամբողջովին նվիրվելը աշխատանքին և զբաղվելը երկրային գործունեությամբ, որովհետև «աշխատանքով ստեղծվածի չափից է կախված հետերկրային կյանքում անձի նկատմամբ Երկնքի բարեհաճ վերաբերմունքը»⁷¹։

Մեկ այլ խումբ ուսումնասիրողներ համարում էին, որ Ճապոնիայի արդիականացման հարցում Վեբերի տեսության կիրառումը արհեստական է և հաշվի չի առնում երևույթի բացատրության այլ օբյեկտիվ եղանակներն ու միջոցները։ Այսպես, ճապոնացի հետազոտող Օգասավարա Սինը, առաջնորդվելով վերը նշված մոտեցումներով, պնդում էր, որ Ճապոնիայի արդիականացման գործում պետք չէ ո՛չ գերազնահատել, ո՛չ էլ ժխտել ինչպես *ձյոդո*

⁷⁰ Ayai E., *Value Systems and Economic Development in Japan and Thailand*, Journal of Social Issues, v. 19, no. 1, 1963, էջ 41:

⁷¹ “Культурные традиции, история и модернизация (Сравнение Японии и Китая со странами Запада): Обзор”. В кн.: “Япония в сравнительных социокультурных исследованиях”. Москва, ИНИОН АН. СССР, 1990, էջ 29:

սինայուի, այնպես էլ կրոնական ու մշակութային այլ արժեհամակարգերի դերը: Նրա հիմնական կռվանն այն էր, որ Բելաիը և ուրիշներ քննության էին առնում *ձյոդո սինայուի* բարոյախոսության կապը առևտրային կապիտալի հետ, մինչդեռ Վեբերը նկատի ուներ բողոքական բարոյականության կապը արդյունաբերական կապիտալի հետ: Նա կարծում էր նաև, որ Ճապոնիայի տնտեսական զարգացման և կրոնական արժեքների ու ավանդույթների միջև կապ փնտրելը լավագույն դեպքում կրում է «ընտրովի և հատվածական բնույթ»⁷²:

Վեբերի տեսության հետևորդների շատ քննադատներ հակված են կարծելու, որ ճապոնական կրոնասիրությունն իր բնույթով խիստ տարբերվում է արևմտյանից. այն խոր ու դոգմատիկ չէ, հետևաբար հասարակական-տնտեսական զարգացումների վրա նրա հայեցակարգային ազդեցությունը այնքան էլ հիմնավորված չէ: Այս խմբի հեղինակները, որոնք հիմնականում արևմտյան ճապոնագետներ են, համարում են, որ քննարկվող արժեհամակարգերը և առանձնահատկությունները, ինչպիսին է, օրինակ, իշխանությունների նկատմամբ քաղաքացիների բացառիկ լոյալությունը, իրականում չունեն խոր պատմական արմատներ, և ճապոնական երիտասարդ բուրժուազիան դրանք խրախուսել և ամրապնդել է Մեիձիի հեղաշրջումից հետո՝ իր հասարակական դիրքերն ուժեղացնելու նպատակով: Այս առնչությամբ ամերիկացի մշակութաբան Ջոն գրել է. «Ճապոնացիների աշխատասիրությունը, զգուշավորությունը և կարգապահությունը, որոնք նման են բողոքականության աշխատանքային բարոյախոսությանը, խոր պատմական արմատներ ունեն ճապոնական սովորույթների ու գաղափարների մեջ և կապված չեն որոշակի կրոնական ուղղության հետ: Փաստորեն, հնարավոր է, որ Ճապոնիայի տնտեսական «հրաշքը» և արդիականացումը տեղի ունեցած լինեին ճապոնական կրոնական արժեքներից անկախ»⁷³:

⁷² “Культурные традиции, история и модернизация (Сравнение Японии и Китая со странами Запада): Обзор”. В кн.: “Япония в сравнительных социокультурных исследованиях”. Москва, ИНИОН АН. СССР, 1990, էջ 29:

⁷³ Jo M., *Japanese Traditional Values and Industrialization*, International Social Science Review, v. 62, no. 1, 1987, էջ 7:

Մեկ այլ խումբ արևմտյան ճապոնագետներ Ճապոնիայի արագ արդիականացումն ու զարգացումը պայմանավորում են ոչ թե կրոնական արժեհամակարգերի և դրանց կառուցվածքների մասնակի կամ ամբողջական նույնությամբ, այլ Ճապոնիայի և առաջավոր արևմտյան արդյունաբերական երկրների պատմական ու պատմամշակութային զարգացման, այդ թվում նաև արժեքային համակարգերի փոխակերպման, փիլիսոփայության նույնությամբ: Նրանք, ի հավելումն Տոկուգավայի (1603-1867) շրջանում տնտեսական և արտադրական հարաբերությունների զարգացմանը, մատնանշում են նաև այդ ժամանակվա Ճապոնիայում ունիվերսալ արժեքների տարածումը: Այսպես, ճապոնացի լեզվաբան ու փիլիսոփա Նիշիո Կանձիի կարծիքով՝ Ճապոնիան, ի տարբերություն Չինաստանից և ասիական այլ հասարակություններից, Մեիձիի հեղաշրջումից հետո շեշտված հետաքրքրություն ցուցաբերեց արևմտյան մշակույթի և արժեքների նկատմամբ, ինչի հիմքերն արդեն առկա էին՝ պայմանավորված Ճապոնիայի պատմության նախընթաց իրողություններով և զարգացման՝ արևմտյանին համանման տրամաբանությամբ: Կանձին համարում է, որ Ճապոնիան և Արևմուտքը, զարգանալով թեև ուրույն, բայց զուգահեռ ճանապարհներով, անցնելով նույնպիսի պատմական զարգացումներ, 18–19-րդ դդ. եկան իրենց զարգացման գրեթե նույնատիպ արգասիքների: Սակայն Նիշիոն և այդ խմբի այլ հեղինակներ շրջանցում են այն կարևոր հարցը, թե այդ դեպքում ինչպես եղավ, որ Ճապոնիայում արդյունաբերականացման գործընթացն սկսվեց մոտ մեկ դար ուշ, քան արևմտյան երկրներում: Նրանք հիմնական շեշտը դնում են այն թեզի վրա, որ Ճապոնիայի կողմից արևմտյան գիտատեխնիկական առաջընթացի և արտադրական հարաբերությունների յուրացումը հնարավոր դարձավ միայն այն բանի շնորհիվ, որ դեռ Տոկուգավայի շրջանում էին ստեղծվել Ճապոնիայի արդիականացման հիմքերը: «Անգամ եթե Ճապոնիան 19-րդ դարից սկսած ինտենսիվորեն չհարաբերվեր արևմտյան մշակույթի հետ, նրա զարգացման աստիճանն անկասելի էր դարձնելու Ճապոնիայում մմանատիպ «ժամանակակից

ոգու⁷⁴» ծնունդը ... այլ կերպ ասած՝ թեև ճապոնական ժամանակակից քաղաքակրթության բյուրեղացումն ընթացել է Արևմուտքի ազդեցության պայմաններում, արևմտյան աշխարհն ընդամենը առաջ մղեց զարգացման այն միտումները, որոնք երկրում հասունացել էին դեռ Տոկուգավայի շրջանում: Ժամանակակից Ճապոնիայի ծնունդը հնարավոր դարձավ երկրի զարգացման իր միտումների շնորհիվ... Հնայած արդիականացման գործում Արևմուտքի ազդեցությունը եղել է որոշակի, սակայն այն չի եղել հիմնականը⁷⁵», եզրակացնում է Նիշիոն և տեսնում մեկ այլ կարևոր նախապայման՝ ճապոնական և արևմտյան ավատատիրության որոշ ընդհանրությունները: Այս ուղղության մեկ այլ հետազոտող՝ պատմաբան Սիցուսիմա Սանիտիրոն, Ճապոնիայի արդիականացման պատմական նախապայմանները տանում է ավելի խոր անցյալ և կարծիք հայտնում, թե «Ճապոնիայի արդիականացման հիմքերը դրվել էին դեռ 17-րդ դարում՝ ինքնամեկուսացման քաղաքականությունից անմիջապես հետո⁷⁶»:

Կան նաև մի խումբ հեղինակներ, որոնք Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման հիմքերը տեսնում են մշակութային բացառիկ ժառանգության, ավանդապաշտության և հասարակության այնպիսի առանձնահատուկ որակների մեջ, ինչպիսիք են հավաքականությունը և խմբայնությունը: Այս մոտեցման դիրքերն ազդեցիկ դարձան հատկապես 1970-ական թթ. սկսած՝ հարցի հեղինակավոր ուսումնասիրողներից մեկի՝ Չիե Նականեի «Ճապոնական հասարակությունը⁷⁷» աշխատության հրապարակմամբ:

Որոշ հետազոտողներ, ընդունելով, որ Ճապոնիայի արդիականացման պատմական հիմքերը դրվել էին դեռ Տոկուգավայի շրջանում, դրա բուն պատճառները հիմնականում տեսնում էին Ճապոնիայի մտավոր և սոցիոմշակութային կյանքում

⁷⁴ «Ժամանակակից ոգի» ասելով՝ Կանձին նկատի ունի ժամանակակից արևմտյան մշակութային արժեհամակարգը, որն Արևմուտքի զարգացած երկրներում հնարավոր դարձրեց արդիականացումը և արդյունաբերականացումը:

⁷⁵ Nishio K., *Japan's Parallel Path to Modernity*. "Japan Echo", v. 10, N 1, Tokyo 1983, էջ 66-67:

⁷⁶ Sanichiro M., *Cultural and Social Background of the Rapid Modernization of Japan*. Proceedings of the American Philosophical Society. Philadelphia, v. 123, N 3, 1979, էջ 165:

⁷⁷ Shu Nakane Ch., *Japanese Society*. Berkeley, University of California Press, 1970:

տեղի ունեցած լուրջ բովանդակային փոփոխություններում, երբ արտաքնապես Տոկուգավայի ժամանակ ձևավորված հասարակական հաստատությունների և համակարգերի կայունության ապահովմանը միտված միջոցառումները հասարակական կյանքում ինքնաբերաբար խթանում էին խորքային՝ «հեղափոխական», փոփոխություններ⁷⁸: Այս ուղղության ներկայացուցիչ Հիրաշի Նատակին հետաքրքրական զուգահեռներ է անցկացնում 17-րդ դարի վերջի և 18-րդ դարի սկզբի Ճապոնիայում մտավոր ու մշակութային կյանքի և գրեթե նույն ժամանակահատվածում Եվրոպայում սկսված մտավոր-լուսավորական հեղափոխության միջև, որոնք փոխեցին մարդու ու հասարակության ավանդական ընկալումները և՛ Ճապոնիայում, և՛ Արևմուտքում: Որպես օրինակ Հիրաշին բնութային է առնում ուշ միջնադարի հայտնի կոնֆուցիական մտածող Օգյու Սորայի հայացքները, որոնք, անշուշտ, մեծ ազդեցություն գործեցին Ճապոնիայում գիտական մտքի զարգացման վրա: Հեղինակը, վերլուծելով Օգյու Սորայի տեսակետները, հանգում է այն եզրակացությանը, որ դրանց ձևավորումը «նշանավորում էր ճապոնական մտքի պատմության մեջ նոր դարաշրջանի սկիզբը⁷⁹»:

Այս ուղղության մեկ այլ նշանավոր ճապոնագետ՝ Լոնդոնի Տնտեսագիտության դպրոցի պրոֆեսոր Ռոլանդ Դորը, զարգացնելով Տոկուգավայի շրջանում մտավոր կյանքում տեղի ունեցած փոփոխությունները որպես Ճապոնիայի արդիականացման հիմնական պատճառ դիտելու մասին թեզը, համարում է, որ արդեն 19-րդ դարի սկզբին Արևմուտքի նկատմամբ ճապոնացիների դրսևորած հետաքրքրությունը ոչ թե արևմտյան էկզոտիկայով հիանալու մակերեսային ցանկության բնույթի էր, այլ վերածվել էր խորքային հասարակական ձգտման և պահանջմունքի՝ յուրացնելու արևմտյան գիտական միտքը⁸⁰, ինչի նախադրյալներն, ըստ Միտչելի, առկա էին դեռ 18-րդ դարի վերջին, երբ, «չնայած

⁷⁸ Stu Mitchell P., *Roots of the Modernization Experience in Japan*. "Journal of Asian and African Studies", v. 10, N 3/4, 1975, էջ 129:

⁷⁹ Hirashi N., *Ogyu Sorai's Confucianism: An Analysis of its Modern Nature*. "Annals of the Institute of Social Sciences", Tokyo, 1986, N 4, էջ 126:

⁸⁰ Stu Dore R., *Education in Tokugawa Japan*. Berkeley, University of California Press, 1984:

Ճապոնիայի «փակ» լինելուն, «հոլանդական գիտությունը, կամ *ռանգակուն*», սկսել էր կարևոր դեր խաղալ Ճապոնիայի հասարակական կյանքում⁸¹»:

Զննարկելով Ճապոնիայի արդիականացման պատմական մախապայմանները՝ քաղաքագետ Լիպսետը գրել է. «Եթե անհատականությունը, հավասարապաշտությունը և ազատականությունը դիտարկենք որպես թույլ պետության ցուցիչներ, ապա հետպատերազմյան Ճապոնիան շատ ավելի վատ վիճակում էր, քան մեծ թվով այլ պետություններ⁸²»: Մասնավորապես՝ շարունակում էին ազդեցիկ մնալ դասային գիտակցությունը, կենտրոնացված քաղաքական համակարգը և զարգացման արևմտյան մոդելի հետ անհամատեղելի խմբայնությունը:

Ճապոնացի հետազոտող Տացուո Օգուոուն, երկար ժամանակ բնակվելով Գերմանիայում և համեմատական վերլուծության ենթարկելով ճապոնացիների ու գերմանացիների մտածողությունը, կարծիք է հայտնում, որ կարելի է պատմականորեն առանձնացնել ճապոնացիների կողմից օտար մշակույթի փոխառության ու յուրացման չորս հիմնական փուլաշրջաններ: Առաջինը կորեական մշակույթի փոխառումն էր մ. թ. 5-6-րդ դդ.: Երկրորդը, որն ավելի երկարատև էր, չինական մշակույթի փոխառությունն ու տեղայնացումն էին, որոնք սկսվեցին 6-րդ դարում: Երրորդը արևմտյան, հատկապես՝ գերմանական, մշակույթի յուրացումն ու տեղայնացումն էին, որ սկսվեցին 19-րդ դարի վերջին քառորդում և տևեցին մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը: Իսկ վերջին՝ չորրորդ, փուլաշրջանը ամերիկյան մշակույթի ուժեղ ազդեցության հետևանքով դրա տեղայնացումն էր՝ սկսած պատերազմում Ճապոնիայի կրած պարտությունից⁸³: Ուշագրավ է այն, որ մշակութային փոխառությունների վերջին երկու փուլաշրջանները, ի տարբերություն առաջին երկուսից, բնութիվով գերազանցապես ստիպողական էին՝ ռազմական ուժի կամ դրա վտանգի ազդեցությամբ:

⁸¹ Mitchell P., նշվ. աշխ., էջ 133:

⁸² Lipset S., *Tradition and Modernity in Japan and the United States*. "International House of Japan Bulletin", Tokyo, 1987, v. 7, N 1, էջ 2:

⁸³ Seta Oguro T., *Die Ratselhafte Nation: Mentalitet und Denkweise der Japaner*. Poller, 1988:

Ճապոնիայում «տնտեսական հրաշքի» և Գերմանիայում արագ տեմպերով տնտեսական զարգացման իրողությունները շատ մասնագետների համար դարձան պարարտ հող՝ խոսելու ճապոնացիների և գերմանացիների մեծածախ մասին, ավելի ստույգ՝ վերակենդանացնելու դեռ 19-րդ դարի վերջին ձևավորված առասպելը: Այժմ արդեն նշվում էր ոչ այնքան վարքագծային, որքան պատմական զարգացման փիլիսոփայությունների մեծածախ մասին: Մասնավորապես՝ ասվում էր, որ և՛ Ճապոնիայում, և՛ Գերմանիայում արդիականացումները տեղի են ունեցել էապես պահպանված ավատատիրության հիմքի վրա, երկու երկրներն էլ արդիականացման ճանապարհին անցել են ռազմականացման ուղի, երկուսն էլ եղել են ագրեսորներ և երկրորդ համաշխարհային պատերազմը սանձազերծողներ, երկու երկրներն էլ պատերազմի արդյունքներով նվաճվել են Միացյալ Նահանգների կողմից և իրենց վրա կրել ամերիկյան մշակութային ազդեցությունը, և, վերջապես, երկուսն էլ հասել են հետպատերազմյան արդիականացման գրեթե մեծամասնի պարզունքների: Օգուրոն այս մեծածախների պատճառները փնտրում է այն բանում, որ 19-րդ դարի վերջին քառորդում ճապոնացիները, ենթարկվելով գերմանական մշակույթի ուժեղ ազդեցությանը, կարողացել են այն տեղայնացնել, յուրացնել ու դարձնել իրենց մշակույթի մաս⁸⁴:

Ուշագրավ է, որ հետպատերազմյան շրջանում պանասիական միասնության գաղափարը քայլեց ճապոնական էթնիկական ինքնության գերադասելիության և արևելասիական տարածաշրջանը միավորելու ճապոնացիների պատմական առաքելության մասին տեսությունների հետ կողք-կողքի⁸⁵: Հետպատերազմյան արդիականացումը Ճապոնիային է՛լ ավելի տարանջատեց ասիական հարևաններից⁸⁶: Ինչպես պատերազմում կրած ծանր պարտության հետևանքով ճապոնացիների հավաքական ինքնագիտակցության մեջ թափանցեց արևմտյան մշակույթի և արժեքային համակարգի գերադասության ու ճապոնականի

⁸⁴ Տես նույն տեղում, էջ 39:

⁸⁵ Տես Lie J., նշվ. աշխ., էջ 41:

⁸⁶ Տես McCormack G., *The Emptiness of Japanese Affluence*. Armonk, New York, M.E Sharpe, 1996, էջ 171-174:

ստորադասության գաղափարը, այնպես էլ աննախադեպ հետպատերազմյան զարգացման շնորհիվ հավաքական ինքնագիտակցության մեջ տեղի ունեցան որոշակի փոխակերպումներ, և արդեն ճապոնական մշակույթն սկսեց տարբեր ասիական հարևան մշակույթների համեմատությամբ դիտվել իբրև գերադաս: Հեղինակը Շվեդիայում ուսանելու և Ճապոնիայում դաշտային ազգագրական աշխատանքներ կատարելու ընթացքում ճապոնացի երիտասարդների հետ հանդիպումների ու քննարկումների ժամանակ նկատել է, որ ճապոնացիներին հատուկ է աշխարհագրական առումով հարևան, հատկապես՝ դանդաղ զարգացող, հասարակությունների և մշակույթների նկատմամբ իրենց որոշակի գերաբեքության զգացումը: Միևնույն ժամանակ, վերջին շրջանում մի շարք ասիական երկրների աննախադեպ զարգացումը և ճապոնական հասարակության մեջ տեղի ունեցած սերնդափոխությունը գերաբեքության ու թերաբեքության ընկալումներում առաջ բերեցին էական փոխակերպումներ: Օրինակ՝ ճապոնացիների հավաքական ինքնության բնութագրական հատկանիշներում գերաբեքության գիտակցման նորագույն դրսևորում կարելի է համարել ճապոնացիների վերաբերմունքը երկրում առկա սակավաթիվ անօրինական օտարերկրացի աշխատողների նկատմամբ:

Ճապոնիան արդիականացման մախաշեմին պահպանել էր նաև պետության դերի յուրահատուկ ընկալումը: Եթե արևմուտքում դա ազատականության դասական մոդելն էր, որտեղ պետությանը վերապահված էր ընդամենը կարգավորիչի սահմանափակ դեր, ապա Ճապոնիայում դա կենտրոնացված ավատատիրության ավանդույթն էր՝ դրանից բխող հասարակական հարաբերությունների առանձնահատկություններով և մշակութային իրողություններով:

Տարածված է այն տեսակետը, թե արդյունաբերական զարգացման և արդիականացման գործընթացներն անխուսափելիորեն տանում են դեպի տարբեր արժեհամակարգերի համահարթեցում, արևմտյան արժեքների շուրջ մշակութային շաղախում և հասարակական հարաբերություններում անհատապաշտության գաղափարախոսության ազդեցության ուժեղացում, կամ թե նման հասարակությունները վաղ թե ուշ հիշեցնելու են ժամանակակից Միացյալ Նահանգները: Ճապոնիային դեռ Մեիձիի հեղաշրջումից

հետո հաջողվեց իր էթնիկական ինքնության կարևոր համակարգերը համադրել այդ գործընթացներով պայմանավորված հարափոփոխ մշակութային ազդեցությունների հետ:

Խոցելի է ավատատիրությունից զարգացած արդյունաբերական հասարակություններին անցնելու վերաբերյալ այն թեզը, թե «Ճապոնիան՝ որպես բարձր մակարդակի զարգացած արդյունաբերական երկիր, բացառություն է, քանի որ պահպանել է պատմական ավելի վաղ ժամանակներում ձևավորված հավաքական ինքնության և մշակույթի առանցքային արժեհամակարգերը, որոնց բնորոշ շատ առանձնահատկություններ մտազուգորդվում են ուշ ավատատիրության իրողությունների հետ: «Զարգացումը նաև որոշ ավանդույթների ու գործոնների ազդեցությամբ պայմանավորված մշտական փոխակերպումների արդյունք է⁸⁷»: Երբ յուրաքանչյուր մշակութային նոր ավիք ավանդականի հետ ճիշտ փոխառնչության ու խաչասերման շնորհիվ ներծծվում է, ապա անցումային շրջանում գտնվող հասարակությունները խուսափում են իրենց էթնոմշակութային կերպին սպառնացող համահարթեցման վտանգներից, որոնք, որպես կանոն, առաջանում են հասարակությունների արդիականացման և հասարակության մեջ տեղի ունեցող խորքային փոփոխությունների պատճառով:

Լայն առումով՝ որևէ հասարակությունում, հատկապես՝ ժամանակակից համընդհանրացման գործընթացների համատեքստում, հին և նորի, ավանդականի և օտարի համադրման ճանապարհով ապահովվում է առավել կայուն զարգացումը, որը զերծ է տարբեր սերունդների՝ որպես այդ երկու հակադիր արժեհամակարգերի կրող շերտերի միջև հնարավոր բախումից և այլ սուր հասարակական երևույթներից ու պայթյուններից: Իհարկե, այստեղ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ յուրաքանչյուր մշակույթ զարգացման իր ներքին օրենքներով և տրամաբանությամբ գտնում, յուրացնում, համադրում է օտար մշակութային ազդեցությունները, ինչը մշակույթի կարևոր համընդհանուր բնութագրական հատկանիշներից մեկն է: Այս առումով կորեացի տնտեսագետ Բոկ Ջի Կոուն տվել է բավական ինքնատիպ ձևակերպում. «Ճապոնիան միակ երկիրն է, որը հաջողությամբ

⁸⁷ Lipset S., նշվ. աշխ., էջ 5:

արդյունաբերականացել է առանց Արևմուտքի արմատական ազդեցության⁸⁸»:

* * *

Ամփոփելով առաջին գլուխը՝ կարող ենք նշել, որ երկրորդ համաշխարհային պատերազմում Ճապոնիայի կրած պարտությունը, Դաշնային ուժերի կողմից երկրի փաստացի ղեկավարումը խոր ազդեցություն գործեցին հետպատերազմյան ճապոնական հասարակության ինքնության ու հիմնական արժեհամակարգային ուղղությունների ձևավորման վրա: Իր հերթին բարձր տեմպերով երկրի հետպատերազմյան արդյունաբերական զարգացման դինամիկան հասկանալու համար անհրաժեշտ է հետահայաց կերպով վերլուծել ու համատեքստում տեղավորել ճապոնական արդիականացման առանձնահատկությունները, ինչպես նաև այդ գործընթացի մշակութային ու պատմական ակունքները:

Հասարակագիտության մեջ արդիականացման վերաբերյալ լայն տարածում գտած մի շարք տեսություններ Ճապոնիայի պարագայում ունեն սահմանափակ կիրառում: Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման գործում էթնիկական ինքնությունն ունեցել է երկակի դերակատարություն, և այդ նույն արդիականացումն իր հերթին պայմանավորել է ճապոնացիների էթնիկական ինքնության հետագա փոխակերպումները: Այսինքն՝ Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման և էթնիկական ինքնության առնչությունները իրականում փոխազդեցություններ էին: Անշուշտ, հետպատերազմյան արդիականացման գործում էական դերակատարություն են ունեցել նաև աշխարհաքաղաքական իրադարձությունները, նախապատերազմյան տնտեսական համակարգերի կառավարման մոդելի վերանայումը, քաղաքական համակարգի ժողովրդավարացումը, հասարակական հարաբերությունների կառուցման նախապատերազմյան սկզբունքների վերանայումը և այլն:

Այսքանով հանդերձ՝ ո՛չ մասնագիտական հարուստ գրականությունն ու ստվարածավալ ուսումնասիրությունները, ո՛չ էլ Ճապոնիայում տարբեր մասնագետների, այդ թվում և հեղինակի,

⁸⁸ Koy B., նշվ. աշխ., էջ 5:

կատարած դաշտային աշխատանքների միջոցով ձեռք բերված արժեքավոր ազգագրական նյութի ամփոփումը չեն ապահովում բավարար ակադեմիական հիմքեր՝ առանձնացնելու այն մեկ կամ նույնիսկ հինգ կարևորագույն գործոնները, որոնք պայմանավորեցին այդ արևելյան երկրի հետպատերազմյան բացառիկ արդիականացումը: Դա եղել է պատմական կոնկրետ ժամանակահատվածում ու պատմական կոնկրետ միջավայրում շատ ավելի մեծ թվով գործոնների համադրման հետևանք և իր էությամբ բացառիկ է ու ենթակա չէ արհեստական կրկնօրինակման: Տվյալ գործոնների շարքում էթնիկական ինքնությունը միայն կարևոր գործոններից մեկն էր:

Գ Լ ՈՒ Խ Ք

ՃԱՊՈՆԱՅԻՆԵՐԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՊՈՆԻԱՅԻ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հետպատերազմյան Ճապոնիայում տեղի ունեցած հասարակական-քաղաքական համակարգային վերափոխումների վերլուծությունն ամբողջական չի լինի, եթե դրանք չդիտարկվեն ճապոնացիների էթնիկական ինքնության ու նրա առանձին դրսևորումների ունեցած առանցքային դերակատարության համատեքստում: Այս գլխում փորձ կարվի ներկայացնել, թե ինչպես է էթնիկական ինքնությունն ազդել Ճապոնիայի հետպատերազմյան աննախադեպ արդիականացման վրա, և ինչ հետևանքներ է դա ունեցել:

* * *

Սկսած 19-րդ դարի վերջերից, բայց առավել համակարգված ու լայնամասշտաբ՝ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, Ճապոնիայում և նրա սահմաններից դուրս մեծ թափ ստացավ ճապոնական հասարակության առանձնահատկությունների ուսումնասիրության մի ծավալուն գիտական գործընթաց, որը, ինչպես արդեն նշվեց, 1970-ական թթ. ստացավ *Նիհոնշինոն* անվանումը: Այս լայնածավալ ակադեմիական պրպտումներում ու հասարակական քննարկումներում գիտական քաղաքացիությունն ստացան մի շարք հարցադրումներ, որոնք վերաբերում էին ճապոնական հասարակության ներդաշնակությանը, էթնիկական ինքնության առանցքը կազմող անհատականությանը, խմբային և էթնիկ պատկանելության ինքնատիպ ընկալումներին, դրանց մշակութային դրսևորումներին: Ինչպես իրավացիորեն եզրակացնում է հարցի ուսումնասիրողներից մեկը՝ Յոշիհոն, նման մեծածավալ ուսումնասիրությունները նպատակ ունեին վերհանել Ճապոնիայի աննախադեպ տնտեսական զարգացման մշակութային հիմքերը և հիմնավորել դրա առնչությունն ու անմիջական

պայմանավորվածությունը ճապոնացիների էթնիկ և մշակութային իրողություններով⁸⁹: Համաձայնվելով նման պնդման հետ, այնուամենայնիվ, հարկ ենք համարում նշել, որ, չնայած այդ բնագավառում առկա հարուստ գրականությանը և ուսումնասիրություններին, արված տարբեր եզրակացություններին, չկա համընդհանուր ընդունելության արժանացած տեսակետ, թե էթնիկական ինքնության հարթությունում ինչպես են հարաբերվում «ես»-ը, հանրային-սոցիալական խումբը և ընդհանուր էթնիկ պատկանելության ինքնագիտակցությունը, սույն աշխատությունում քննարկվող գործընթացներում ի՛նչ դերակատարություն է ունեցել և «ճապոնական հրաշքով» պայմանավորված ի՛նչ փոխակերպման է ենթարկվել ինքնության այդ երեք շերտերի փոխառնչությունը:

Հետպատերազմյան հասարակական-քաղաքական փոխակերպումներում զգալի էր այն դերը, որը խաղացին էթնիկ միատարրության և ազգային միասնականության մասին պատմության ավելի վաղ շրջաններում կարծրացած պատկերացումները, որոնք բյուրեղացել էին *իկկոկու իսսին*, կամ «ողջ ժողովուրդը մեկ սիրտ է», արտահայտության մեջ⁹⁰: Նահապետական «*իե*» (ընտանիք) հաստատությունը, որը կարևոր նշանակություն ունեցավ ճապոնացիների շրջանում խմբային ինքնության ուժեղ արտահայտվածության համար, երբեմն օրինաչափորեն դառնում էր նաև պետական կառավարման տեսանկյունից հարմար սոցիոմշակութային գործիք, երբ ընտանիքի ոգին թափանցում էր հասարակական աստիճանակարգության բոլոր մակարդակները: Թերևս այդ գործոնով էր նաև պայմանավորված այն հանգամանքը, որ ճապոնիայում հասարակական հարաբերությունները գրեթե միշտ բնութագրվել են հավատարմությամբ, հարաբերությունների ներդաշնակությամբ և երբեք չեն եղել հակամարտային:

Անվիճելի է, որ ինքնությունը կարող է ենթարկվել փոխակերպումների՝ պայմանավորված տարբեր գործոններով: Նման պնդումը հավաստի է ինչպես անհատական, այնպես էլ հավաքական ինքնությունների մակարդակում: Մարդն իր բնույթով

⁸⁹ Yoshino K., նշվ. աշխ., էջ 8-25:

⁹⁰ Նույն տեղում:

ինքնություն փնտրող սոցիալական արարած է՝ և՛ որպես անհատ, և՛ որպես հավաքականություն: Տեսականորեն յուրաքանչյուր մարդ իր մեջ զուգակցում է անհատական և խմբային ինքնության տարբեր շերտեր, որոնք անհատի ինքնագիտակցության մեջ ներդաշնակորեն հարաբերվում են միմյանց, և յուրաքանչյուր մարդ, անկախ բնակության վայրից, գիտակցում է իր պատկանելությունը որևէ խմբի: Ինչպես նշում է Անդերսոնը, մարդկանց համար էթնիկական ինքնությունն ունի բնութագրական և էական նշանակություն: Նրա այն հարցադրումը, թե՝ «ինչու՞ են մարդիկ սովորաբար պատրաստ լինում զոհվելու հանուն իրենց ազգի կամ էթնիկ հանրության, բայց երբեք, ասենք, ո՛չ իրենց սոցիալական դասի կամ քաղաքի համար»⁹¹, ցույց է տալիս էթնիկական ինքնության սոցիալական ու քաղաքական կարևոր ներուժը:

Էթնիկական և ազգային ինքնության, դրանց հետ կապված տեսական շատ այլ հարցերի վերաբերյալ կան համընդհանուր ճանաչում ստացած սովորաժամալ աշխատություններ, որոնց առանձին դրույթներ ու մոտեցումներ մասնագիտական շրջաններում ընկալվում են որպես դասագրքային ճշմարտություն: Սակայն զարգացման և արագ փոփոխությունների ժամանակակից իրողությունների, հատկապես հատուկ ինտենսիվությամբ ընթացող համընդհանրացմանը, տեղեկատվական հոսքերի փոխանակմանը և տեղեկատվական ցանցերի կատարելագործմանը զուգահեռաբար հասունանում է նաև այդ տեսությունների ու մոտեցումների վերանայման մասնագիտական պահանջմունքը: Այս առումով ինչպես արդի ազգաբանության, այնպես էլ հարակից

⁹¹ Stu Anderson B., *Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism*, London, New York, Verso, 1991, էջ 4: Էթնիկական ինքնության, ազգային ինքնության տարբեր տեսական խնդիրների բնության մասին ավելի հանգամանորեն տես Hugh Seton-Watson, *Nations and States: An Enquiry into the Origins of Nations and the Politics of Nationalism*, London, Methuen, 1977; Gellner E., *Thought and Change*, Chicago, University of Chicago Press, 1964; նույնի՝ *Nations and Nationalism*, Ithaca, Cornell University Press, 1983; Eriksen T., *Ethnicity and Nationalism: Anthropological Perspectives*, London, Boulder, Colorado, Pluto Press, 1993; Barth F., *Ethnic Groups and Boundaries: The Social Organization of Culture Difference*, Boston, Little, Brown and Co., 1969; Smith A., *Ethnicity and Nationalism*, Leiden, New York, E.J. Brill, 1992; նույնի՝ *National Identity*, Reno, University of Nevada Press, 1991:

հասարակական գիտությունների ոլորտներում դեռ քիչ է խոսվել, մի կողմից, էթնիկական մշակույթների և էթնիկական ինքնության ու, մյուս կողմից, պատմական զարգացման փոխառնչության հարցերի մասին:

Էթնիկական ինքնությունը և մշակույթը, որոնք լայն առումով հիմնվում են «մենք»-ի և «նրանք»-ի գիտակցման վրա, շփումների ու տեղեկության փոխանակման հետևանք են: ՌԻստի անհնար է պատկերացնել որևէ մեկուսացած մշակույթ, որն այս կամ այն կերպ իր վրա չկրեր տվյալ էթնոսի կամ նրա առանձին անդամների կողմից այլ մշակույթների հետ փոխշփումների և նոր տեղեկատվական հոսքերի յուրացման կնիքը: Այստեղ կարևոր է նաև նկատի ունենալ այն հանգամանքը, որ ձևավորվող տեղեկատվական տիրույթում մույնչափ անհնար է պատկերացնել որևէ միակողմանի ազդեցություն: Եթե այդ հսկայական տեղեկատվական տիրույթում երկու կամ ավելի մշակույթներ գտնվում են փոխազդեցության մեջ, ապա, ինչպես տերմինն ինքն է հուշում, երկուսն էլ ենթարկվում են որոշակի փոխակերպումների: Այս տեսական մոտեցումը առաջ է քերում նաև ժամանակակից, հատուկ ինտենսիվության փուլում գտնվող համընդհանրացման տեսությունների արմատական վերանայման անհրաժեշտություն, քանի որ տվյալ տեսություններից շատերի պարագայում սովորաբար ընդունված է ասել, թե այդ գործընթացները միակողմանի երևույթներ են և հանգեցնում են փոքր ժողովուրդների էթնիկական մշակույթների արմատական փոփոխությունների և ոչնչացմանը: Ժամանակակից Ճապոնիայի օրինակը, թերևս, կարող է նպաստավոր լինել այդ տեսությունների վերանայման համար՝ ապացուցելով, որ արդարացված չէ հատուկ ինտենսիվությամբ ընթացող համընդհանրացման պայմաններում միայն Ճապոնիայի միջազգայնացման, համընդհանրացման և դրանց հետևանքով ճապոնացիների էթնիկական ինքնության առանձնահատկությունների միակողմանի վերացման վկայակոչումը:

* * *

Էթնիկական ինքնությունը մի քարացած և անշարժ երևույթ չէ: Այն դինամիկ է և ունակ փոխակերպումների: Այս թեզը ժամանակակից ազգաբանության և սոցիոլոգիայի մեջ հետզհետե ավելի

մեծ ընդունելություն է ստանում, և այս առումով նշանակալի դեր է ունեցել Բարտի «Էթնիկ խմբերը և սահմանները» աշխատությունը⁹²: Այս աշխատությունում մասնակիորեն քննության են առնված էթնիկական ինքնության՝ տարբեր գործոններով պայմանավորված տեղաշարժերն ու փոխակերպումները, առաջ է քաշվում մի թեզ, համաձայն որի՝ էթնիկական ինքնությունը՝ որպես գործոն, իրեն առավել զգացնել է տալիս խոր հասարակական վերափոխումների, անցումային շրջանների համար բնութագրական անորոշության, անկայունության, ինչպես նաև էթնիկ կենսատարածքին սպառնացող արտաքին վտանգների առկայության դեպքերում, մինչդեռ պատմության առավել միալար և ուղղագիծ հատվածներում այն՝ որպես գործոն, ավելի պասիվ է: Բարտի առաջ քաշած տեսությունը հիմնավորվում է նաև այն բանով, որ էթնիկական կամ մշակութային առանձնահատկությունների վրա խարսխվող քաղաքական կամ քաղաքականացված գաղափարախոսությունները սովորաբար ծնվում են այն հասարակություններում և այն պատմական ժամանակահատվածում, երբ տվյալ հասարակությունը կանգնած է արմատական փոփոխությունների շեմին: Բարտի տեսությունը դառնում է ավելի խոսում, երբ առաջ քաշված թեզերը բաղդատում ենք Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացմանն առնչվող իրողությունների հետ: «Ճապոնական հրաշքին» զուգընթաց *Նիհոնշինոն* և *Նիհոնբունկառոնի* ծաղկումը, որոնք ուղղված էին ճապոնացիների էթնիկական և մշակութային առանձնահատկությունների և ինքնատիպության բացահայտմանը, համապատասխանում է Բարտի տեսությանը: Ըստ էության, դա խոր հասարակական վերափոխումներ ապրող, զարգացող և արդյունաբերականացող երկրի մշակութային ազգայնականության շարժում էր, որն առաջին հերթին պայմանավորված էր հետպատերազմյան Ճապոնիայի հանրային կյանքում տեղի ունեցող արմատական փոփոխություններով: Նշված մոտեցումը մեզ հնարավորություն է տալիս ենթադրելու, որ *Նիհոնշինոն* և *Նիհոնբունկառոնի* ծավալումը ճապոնացիների էթնիկական ինքնության վրա հետպատերազմյան արդիականացման ունեցած

⁹² Barth F., նշվ. աշխ.:

հակադարձ ազդեցության վառ օրինակ է, ուստի և այն պետք է դիտվի հենց որպես այդպիսին:

Այս տեսակետը կիսում է նաև Կոուիցի Տակուցին՝ նշելով, որ «Ճապոնիայի տնտեսական զարգացմանը զուգահեռաբար տեղի ունեցող ճապոնականության անվերջ պրպտումները հետևանք էին այն բանի, որ զարգացման, նաև այլ հանգամանքների բերումով ճապոնացիները հայտնվեցին որակապես նոր իրավիճակում, երբ հասարակությունը ենթարկվում էր համընդհանուր փոփոխությունների, ինչն իր հերթին օրինաչափ անհանգստություն էր առաջացնում ճապոնացիների հավաքական գիտակցության մեջ՝ ծնունդ տալով իրենց տեսակի իրական ինքնաճանաչման, իսկ հետագայում նաև՝ իրենց պատմության վերաարժեքավորման մղումների»⁹³։ Ինչպես փորձեցինք ցույց տալ սույն աշխատության առաջին գլխում, սոցիալ-տնտեսական, ներքաղաքական և աշխարհաքաղաքական փոփոխությունները, մշակութային-տեղեկատվական նոր միջավայրը ստեղծում էին որակապես նոր իրավիճակ, և ճապոնացիների հավաքական ինքնությունը պետք է անպայման այս կամ այն կերպ արձագանքեր դրանց: Այն, որ տարբեր ժողովուրդների էթնիկական ինքնագիտակցությունն առավել սուր արտահայտվում և դրսևորվում է խոր հասարակական փոփոխությունների պայմաններում, ապացուցվում է նաև կայսրությունների փլուզման կամ էթնիկ սահմանների վերաձևման օրինակով, երբ այլ արմատական փոփոխություններին զուգահեռաբար տեղի է ունենում ցայտունորեն արտահայտված էթնիկական համախմբում, երբ էթնիկ պատկանելությունը և հավաքական ինքնությունը հանդես են գալիս որպես հավաքական համախմբմանը նպաստող հիմնական ուժ կամ գործոն, որոնք միավորում են տարբեր տարիքի ու սեռի, տարբեր գաղափարներ կրող մարդկանց: Սա կարևոր, բայց, իհարկե, ոչ միակ գործոնն է, որն անհրաժեշտ է անպայմանորեն նկատի ունենալ *Նիհոն-ձինոոնի* և *Նիհոնբունկառոնի* ալիքների քննական վերլուծության ժամանակ:

Վերը շարադրվածից կարելի է հանգել հետևյալ եզրակացությանը. Ճապոնիայի հետպատերազմյան գործընթացները

⁹³ Հարցազրույց Կոուիցի Տակուցիի հետ, Տոկիո, 2002 թ. հոկտեմբերի 7:

վկայում են, որ հասարակական ճգնաժամը, անորոշությունն ու անցումային անհանգստությունը կարող են պարարտ հող ստեղծել հասարակական զարգացումներում էթնիկական ինքնության դերի մեծացման և, շատ հաճախ, այդ հիմքի վրա քաղաքականացած ազգայնական գաղափարախոսությունների հզոր ալիքների ստեղծման համար: Դապոնիայում, մասն ալլ էական հանգամանքներով պայմանավորված, մասն ազգայնականությունն ընդունեց ավելի «չափավոր» տեսք, ինչը դրսևորվեց *Նիհոնշինոն-նի* և *Նիհոնբունկստոնի* ծավալմամբ:

Կարելի է մասն պնդել, որ էթնիկական ինքնությունը հավաքական երևույթ է, երբ նրանց ու մեր միջև տարբերությունները գիտակցվում են «մեր»-ի ինքնաճանաչման ու առանձնահատկությունների շեշտման և ընկալման համար: Այսպես, միջմշակութային հաղորդակցության ուսումնասիրողներից Յոշիոնոն համարում է, որ այլ էթնիկ պատկանելությամբ և այլ մշակույթի կրող մարդկանց հետ ճապոնացիների շփումները առանձնահատուկ են⁹⁴: Այդ պարագայում օտար մշակույթի ընկալումն սկսվում է ինքնաճանաչումից, հետևաբար՝ օտարի ճանաչումը և բացահայտումը խարսխված են իր էթնիկ կերպի ու մշակութային ինքնաճանաչման վրա: Ինչպես նշեց իմ գրուցակիցներից մեկը՝ Դապոնագիտական ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի փորձագետ Այակո Հոնդան, «ճապոնական ինքնության այս առանձնահատկությունը դրսևորվեց մասն *Նիհոնշինոն-նի* ալիքի ժամանակ, երբ այդ շարժման ամբողջ տրամաբանությունը ոչ թե իր տեսակի և ինքնության վերհանումն էր՝ խարսխված օտարի ճանաչման վրա, այլ ընդհակառակը՝ իր տարբերվածության վերհանումն ու ճանաչումը և միայն այս պրոյեկցիայի միջոցով օտարի ընկալումը և բացահայտումը... *Նիհոնշինոն-նի* լայնածավալ գրականության անգամ մակերեսային ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ոչ թե *նրանց*, այլ *մեր* առանձնահատկություններն էին, որ ծառայեցվում են *մեր* (ճապոնացիների. – Ս. Ջ.) էթնիկական ինքնության և ինքնաճանաչման նպատակներին: Եվ ընհանրապես՝ Դապոնիան հասկանալու լավագույն միջոցն այն է,

⁹⁴ Տե՛ս Yoshino K., նշվ.աշխ., էջ 17:

որ նրա մասին մտածում ես որպես ճապոնիացի. այստեղ հակա-
դրությունը կամ համեմատությունը անօգուտ են⁹⁵»:

* * *

Խմբայնության՝ որպես ճապոնական հասարակությանը բնորոշ առանձնահատկության շեշտադրմանը կարելի է հանդի-
պել բազմաթիվ ճապոնագիտական ուսումնասիրություննե-
րում: Համեմատական ուսումնասիրություններում ճապոնական
խմբայնությանը սովորաբար հակադրվում է արևմտյան անհատա-
կանությունը: Այդ մասին, օրինակ, գրում է Օձակի Սիգեուն ամերի-
կացիների և ճապոնացիների համեմատական վերլուծությանը
նվիրված իր ուսումնասիրություններից մեկում⁹⁶: Խմբայնության՝
որպես Ճապոնիայի սոցիալ-տնտեսական ու քաղաքական արդի-
ականացմանը նպաստած կարևոր գործոնի վրա հատուկ ուշադ-
րություն դարձվեց հատկապես 1960–1970-ական թվականներից:
«Խմբայնություն բառը, – գրում է Հաձամա Հիրոշին, – վերջին
ժամանակներս սկսել են լայնորեն օգտագործել մեր տնտեսա-
կան ֆեռոմենը հասկանալու համար⁹⁷»: Կալիֆոռնիայի համալ-
սարանի պրոֆեսոր Ռոբերտ Օձակին համարում է, որ ճապոնա-
կան խմբայնությունն այն մոբիլիզացնող ուժն է, որը ոչ միայն
ճապոնացիներին օգնեց արագ արդիականանալու, այլև ստեղծեց
նրանց տնտեսական զարգացման կայուն բարձր աճի հնարավո-
րություններ: Ճապոնական մշակութային իրողությանը բնորոշ
այնպիսի երևույթներ, ինչպիսիք են միևնույն աշխատավայ-
րում գրեթե ցմահ զբաղվածությունը, գերադասության սկզբունքի
վրա հիմնվող աշխատանքի վարձատրումը կամ աշխատանքա-
յին հարաբերություններում անհատի ու խմբի պատասխանա-
տվության չափերի սահմանազատման գրեթե անհնարինույն-
ունը, արևմտյան մտածողության տեսանկյունից մինչ օրս թվում են
անտրամաբանական և անիրական, սակայն դառնում են հասկա-
նալի, եթե այդ խնդիրներին մոտենում ենք «իրավիճակային

⁹⁵ Հարցազրույց Այակո Հոնդայի հետ, Կիոտո, 2002 թ. հոկտեմբերի 14:

⁹⁶ Steu Shigeo O., *Americans and Japanese*, Tokyo. Kodansha, 1980, էջ 52:

⁹⁷ “Японское Общество и Культура”, էջ 43:

բանականության դիրքերից, ինչը բնորոշ է Ճապոնիայի խմբային հասարակական կառուցվածքին⁹⁸»:

Ճապոնական մշակույթին հատուկ չէ երկփեղկված մտածելակերպը, ինչի հետևանքով ճապոնացիների պարագայում չի առաջանում հարց, թե ով է ավելի կարևոր՝ անհատը, թե՛ խումբը: Ե՛վ առաջինի, և՛ երկրորդի բարեկեցությունը կազմում են մեկ ընդհանրություն, մեկ միասնություն: «Ճապոնական խմբայնության տրամաբանությունը ենթադրում է, որ մասերի գումարը հաճախ կարող է ավելի մեծ լինել, քան ամբողջը, հետևաբար անհատին ավելի նպատակահարմար է գործել որպես ամբողջի մաս, քան հույսը դնել միայն իր գործողությունների վրա⁹⁹»:

Իսկ ինչպե՞ս են ճապոնագիտության մեջ բնութագրվում խմբայնության հիմնական առանձնահատկությունները: Հարցի հետազոտողներից մեկը՝ Հաձամա Հիրոշին, վկայակոչելով խմբայնության երևույթի էության և բուն հասկացության սահմանումների ու մեկնաբանությունների միջև եղած տարբերությունները, նշում է. «ի տարբերություն անհատականությունից, որը ենթադրում է եսակենտրոնություն, անկախություն և ինքնաօժանդակություն, խմբայնությունը ենթադրում է խմբակենտրոնություն, փոխօգնություն և փոխկախվածություն¹⁰⁰»: Խմբակենտրոնությունը մտածելակերպի ձև է, երբ անհատի գործունեության և վարքագծի վերջնական շահառուն ոչ թե անհատն ինքն է, այլ այն խումբը, որին պատկանելությունը տվյալ անհատը գիտակցում է: Նման մտածելակերպի տիպիկ օրինակներ են Ճապոնայի ինչպես հետպատերազմյան, այնպես էլ նախապատերազմյան ժամանակաշրջանում այնպիսի կարգախոսների տարածումը, ինչպիսիք են «հանուն ընտանիքի», «հանուն հայրենիքի» և այլն: Նման մտածողության պարագայում փոխկախվածությունը և միմյանց օգնության գալու պատրաստականությունը դառնում են բոլորի առջև դրված խնդիրները լուծելու բավական արդյունավետ գործիքներ, մինչդեռ այդ գծերն իրենց բնույթով միայն ներխմբային են,

⁹⁸ Ozaki R., *Groupism and Japanese Economic Growth*. The 19th Edward Shann Memorial Lecture in Economics Delivered at the University of Western Australia, 14 October 1980, Nedlands, 1980, էջ 1:

⁹⁹ Նույն տեղում, էջ 1:

¹⁰⁰ “Японское Общество и Культура”, էջ 8:

այսինքն՝ գործում են տվյալ կոնկրետ խմբի ներսում, տվյալ խմբին պատկանող անդամների միջև, քեւ, ինչպէս կոտանենք ստորև, ճապոնացիների էթնիկական ինքնությանը բնորոշ է նաև կախվածությունն այլ՝ երկրորդային, խմբային պատկանելությունից¹⁰¹:

Էթնիկական ինքնության և Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման փոխառնչության խնդիրները, մասնավորապէս՝ ճապոնական հասարակության խմբայնության դերակատարությունը քննելիս անհրաժեշտ է նշել, որ չիմնավորված և ծայրահեղականացված են թվում ինչպէս արդիականացման հարցում խմբայնության դերի բացարձականացումը, այնպէս էլ լրիվ ժխտումը, մի տեսակետ, որը բավական տարածված է մասնագիտական գրականության մեջ:

Հետպատերազմյան արդիականացման գործում խմբայնության՝ որպէս ճապոնացիների էթնոմշակութային կարևոր առանձնահատկության դերակատարության վերլուծության ամբողջականությունն ապահովելու համար դիտարկենք ճապոնացիների էթնիկական ինքնության քննվող առանձնահատկության պատմամշակութային արմատների խնդիրը: Այսպէս, ամերիկացի հետազոտող Ինամոտո Նոբորուն կարևորում է ճապոնացիների խմբայնության ձևավորման պատմամշակութային արմատները: Նա համարում է, որ դեռ հին ժամանակներից Ճապոնիայի զարգացման ընթացքը պայմանավորող հասարակական ազդակները, ի տարբերություն ամերիկյանից, որոնք հանգեցրին անկախ և ազատ անհատականության ձևավորմանը, Ճապոնիայում առաջ բերեցին լրիվ այլ կարծրատիպեր: «Աշխարհագրական, տնտեսական, ընկերային և կրոնական՝ պատմականորեն գոյություն ունեցած համալիրը ճապոնացիների շրջանում բացառեց արևմտյան չափանիշներով ընդունված անհատականության գիտակցման առաջացումը և նպաստեց խմբայնության ձևավորմանը¹⁰²»:

¹⁰¹ Նույն տեղում:

¹⁰² Noboru I., *Japanese and Americans*. Tokyo, 1975, էջ 55:

Տարածության իմաստավորումը և նույնականացումը էթնիկ հանրության հավաքական գիտակցության մեջ տեղայինը վերածում են էթնիկականի, ազգայինի կամ հավաքականի: Մարդկային հիշողությունը տարբեր խմբային հիշողությունների շրջանակում գործում է ավելի շատ որպես հավաքական հիշողություն, որը մարմնավորվում է անհատի ու խմբի առօրյա գործունեության՝ տոնածիսական կյանքի, բարոյական ու մշակութային արժեհամակարգի միջոցով¹⁰³: Ինչպես հետևում է Անդերսոնի¹⁰⁴, Գելների¹⁰⁵, Հոբսբաումի¹⁰⁶ և ուրիշների առաջ քաշած տեսություններից, հավաքական, անգամ՝ անհատական, հիշողությունը առանցքային գործիք է դառնում իր անցյալը (վերա)գնահատելու, (վերա)արժեքավորելու, անցյալի դեպքերն ու փաստերը ընտրողաբար առանձնացնելու ու մեկնաբանելու, առանձին դեպքերի առասպելացման և կաստայականացման շուրջ իր ինքնությունը, պատմական հիշողությունն ու էթնիկական ինքնագիտակցությունը կառուցելու, փոխակերպելու կամ ուղղորդելու համար: Այս ամենով հանդերձ՝ շատ էական էթնոմշակութային առանձնահատկություններից մեկը, թվում է, չի ենթարկվում որևէ որակական փոխակերպման. խոսքը օտար, մարդաբանական տիպով ճապոնացիներից չտարբերվող մարդկանց ու խմբերի բնական ճանապարհով ծուլման, ճապոնական հասարակությանն ամբողջովին ինտեգրման և իրեն ճապոնացի զգալու ինքնագիտակցության ձևավորման համար իրական հնարավորություններ չլինելու մասին է, անգամ եթե նրանք երկրորդ, երրորդ սերնդի ալյազգիներ են, որոնց համար ճապոներենն արդեն դարձել է մայրենի լեզու, իսկ իրենց անունները ճապոնական են:

Այսպիսով՝ իր մշակութային ու արժեհամակարգային առանցքային որակներով ճապոնացիների էթնիկ համակարգը,

¹⁰³ Sten Yano Ch., Distant Homelands: Nation as a Place in Japanese Popular Song, in Yoshino K. (ed.) *Consuming Ethnicity and Nationalism: Asian Experiences*. Curzon, Richmond, Surrey, 1999, էջ 76:

¹⁰⁴ Sten Anderson B., նշվ. աշխ.:

¹⁰⁵ Sten Gellner E., *Thought and Change*, 1964; նույնի՝ *Nations and Nationalism*, 1983:

¹⁰⁶ Sten Hobsbawm E., *Nations and Nationalism since 1780*. Cambridge, Cambridge University Press, 1990:

կամ *կոկորայը*, պատմականորեն փոխալսմանավորել ու սերտաճել է Ճապոնիայի՝ իր բնույթով հարափոփոխ, վաղանցիկ ու հատվածական հասարակական-քաղաքական համակարգի, կամ *սեյրայի* հետ, ձևավորելով Ճապոնիային ու ճապոնացիներին բնորոշ քննարկվող առանձնահատկությունը: Ճապոնացիների էթնիկ և քաղաքական համակարգերի ամբողջականության վերոնշյալ տեսությունը և Ճապոնիայի՝ առնվազն վերջին երկու հարյուրամյակների պատմության քննական վերլուծությունը հնարավորություն են տալիս բացատրելու Մեիձիի հեղաշրջումից հետո Ճապոնիայի հաջող «բացումը Արևմուտքի առջև», ինչպես նաև յուրահատուկ անցնցում, խաղաղ և արագ հետպատերազմյան անցումը միապետությունից ժողովրդավարության¹⁰⁷:

Չնայած մասնագիտական գրականության մեջ շատ է խոսվում ճապոնական հասարակության խմբային գիտակցության տիրապետության և անհատականության թույլ արտահայտվածության մասին՝ Ճապոնիայում հեղինակի կողմից անցկացված հարցախույզի մասնակիցներից և ոչ մեկը չէր ընդունում Մոերանի այն կարծիքը, թե «անհատականությունը կամ անհատապաշտությունը՝ որպես կապիտալիզմի անխուսափելի ուղեկիցներ, անհարիր են ժամանակակից Ճապոնիային¹⁰⁸»: Հարցախույզի արդյունքներն այս առումով հաստատվում են նաև լեզվաբանական նյութով. «ճապոներենում «անհատականություն» բառը հնչում է *կոջինշուգի* կամ *ռիկոշուգի*, որոնք երկուսն էլ ունեն բացասական երանգ և լեզվագործածության ու ճապոնական գիտակցության մեջ ընկալվում են իբրև արևմտյան արժեքային համակարգին հատուկ երևույթ, այլ կերպ ասած՝ *արևմտյան անհատապաշտություն*: «Անհատականության» զուտ ճապոնական ընկալումը պետք է փնտրել ոչ թե այդ երկու, այլ առաջին

¹⁰⁷ Տես Ֆարմանյան Ս., *Ճապոնացիների էթնիկ ինքնության և Ճապոնիայի հնրապատերազմյան տնտեսական զարգացման ու ժողովրդավարացման առնչության հարցի շուրջ* (Էթնոպերիֆերիալ ինքնության և էթնիկ համակարգի ճապոնական մոդելի վերլուծության փորձ): «Գիտություն և տեխնիկա», հմ. 9 (481), 2003, էջ 32:

¹⁰⁸ Moeran B., Individual, Group and Seishin: Japan's Internal Cultural Debate, in T. S. Lebra and W. P. Lebra (eds.) Japanese Culture and Behaviour. Revised Edition. Honolulu, University of Hawaii Press, 1986, էջ 76:

հայացքից նույնիմաստ *կոսեյ* տերմինի մեջ¹⁰⁹։ Սակայն *կոսեյը* ընտանիքի և սոցիալական այլ միավորների հետ ներդաշնակությամբ և ինքնանույնականացման արտահայտումն է, միավորների, որոնց իր պատկանելությունը գիտակցում է անհատը։ Գիտակցության ճապոնական այս ինքնատիպ մոդելը ենթադրում է ոչ թե իր «ես»-ի առանձնացում կամ հակադրում մյուսներին, այլ հակառակը՝ միասնություն և ամբողջություն սոցիալական այն օրգանիզմի հետ, որին պատկանում է տվյալ անհատը։ Գործնականում անձնական «ես»-ի նմանօրինակ ընկալումը, ինչպես իրավացիորեն նշում է Իտոն, «պետք է պայմանավորեր իր անձի պատասխանատվության բարձր զգացումն ու նվիրվածությունը ինչպես իր, այնպես էլ իր ընտանիքի, աշխատավայրի և երկրի առջև ծառացող խնդիրները լուծելու համար։ Հետևաբար էթնիկական ինքնության այս հավաքական որակները, մասնավորապես՝ անվերապահ նվիրվածությունն աշխատանքին, զգալի ներդրում ունեցան ճապոնիայի հետպատերազմյան տնտեսական զարգացման գործում՝ որպես արդյունք ծնունդ տալով մաս ճապոնացիների՝ «տնտեսական կենդանիներ» մականվանը¹¹⁰։

* * *

Ճապոնացիների էթնիկական ինքնության երկրորդ շերտը խմբային ինքնությունն է, որով պայմանավորված է ճապոնական հասարակության հաճախակի բնորոշումը որպես *խմբային հասարակություն*։ Դա հիմնականում կապված է ճապոնական ընտանիքի լայն հասարակական գործառույթների և հետագա փոխակերպումների հետ։ Ավանդական ընտանիքը՝ *իե*-ն, հիմքային հասկացություն է. այն ճապոնական խմբայնության առանցքային մոդելն է, նրա կազմակերպման գլխավոր սկզբունքը։ «Ճապոնիայի պատմության ամբողջ ընթացքում, – գրում է Մարաիին, – հասարակության վերջնային անտրոհելի բջիջը եղել է ոչ այնքան անհատը, որքան ընտանիքը, բայց ընտանիքը ոչ թե մեր (արևմտյան, – *Մ.Ֆ.*) ընկալմամբ, այլ *իե*-ն՝ ճյուղավորված մեծ ընտանիքը,

¹⁰⁹ Farmanyan S., նշվ. աշխ., էջ 23:

¹¹⁰ Itoh M., *Globalization of Japan: Japanese Sakoku Mentality and U.S. Efforts to Open Japan*. New York, St. Martin's Press, 2000, էջ 4:

գերդաստանը¹¹¹»։ Արդիականացող ճապոնիայում երկրի սոցիալական-խմբայնական համակարգը կազմված էր մեծ և տրոհունակ ընտանիքներից։ Ճապոնական խմբայնության համար նախաձև է ծառայել մեծ ընտանիքը։ Ոմանք դրան էին պատկանում ծննդով, մյուսները դրա անդամ էին դառնում ամուսնության հետևանքով, երրորդները կարող էին անդամ դառնալ հեռու ազգակցական կապերի միջոցով։ Այստեղ տեղին է նկատել, որ նախապատերազմյան շրջանում երկրի տնտեսական կյանքի հիմնական ռիթմերը թելադրող ընտանեկան կոնցեռնները (*չայքսցուներ*) կամ այսօրվա մեծ մասնավոր ընկերությունները (*կայսսակեր*) ճապոնիայի խմբայնության առանձնահատկությունների մաս են։

«Սահմանափակված խմբային» կողմնորոշման հիմքը այն է, որ ճապոնացիների սոցիալականացման և դրա հիմնական միջավայրի առանձնահատկությունները ենթադրում են այդ գործընթացում անհատի անվտանգության խնդիրների ավելի սերտ առնչում առաջնային խմբին՝ ընտանիքին, կամ պետական-քաղաքական կառույցներին, քան հավատարմությանը երկնային աստվածությանը։ Պետք է անձնավորության՝ դեռևս մանուկ հասակից սոցիալականացման հենց տվյալ առանձնահատկություններով բացատրել ճապոնական մտածելակերպի այն յուրահատկությունը, որ նախապատվությունը տրվում է ոչ թե համընդհանրական կամ ունիվերսալիստական գաղափարներին, այլ պրագմատիկությանը, համատեքստավորմանը (կոնտեքստուալություն)։

Պատկերավոր ասած՝ ճապոնական հասարակությունը ավանդական ընտանիքի պրոյեկցիան է անսահմանության վրա¹¹²։ Ինչպես եզրակացնում է ճապոնական խմբայնության հոգեբանական վերլուծությամբ զբաղվող մասնագետներից դր Վոսը, ճապոնիայի պատմության դեռ վաղնջական շրջանից հասարակական հարաբերություններում հատկանշական են եղել անձնավորության վարքագծի ածանցումն ու ազդվածությունը ընտանիքում իր ունեցած սոցիալական դերից¹¹³, ինչն արտացոլվել է նաև ընտանեկան և ազգակցական հարաբերությունների տերմինաբանության

¹¹¹ Maraini F., *Meeting with Japan*. New York, Viking Press, 1960, էջ 366:

¹¹² Տես նույն տեղում, էջ 365:

¹¹³ Տես De Vos G., *Socialization for Achievement: Essays on the Cultural Psychology of the Japanese*. Berkeley: University of California Press, 1973, էջ 392:

մեջ¹¹⁴: Կարելի է պնդել, որ ճապոնական հասարակության բնութագրական հատկանիշներից մեկը՝ քվազիլընտանեկան համակարգը, Ճապոնիայի արդիականացմանը զուգահեռաբար ձևավորվում էր խմբայնության բոլոր աստիճաններում ընտանեկան հարաբերությունների արտատպմամբ: Ավելին. անգլիացի ճապոնագետ Դորը 1950-ականների վերջերին նույնիսկ կարծիք հայտնեց, թե արդիականացող Ճապոնիայում անձի անվտանգության երաշխավորի դերում նախկին գյուղական համայնքի փոխարեն կարող է հանդես գալ առաջնային խումբը՝ ընտանիքը¹¹⁵:

Ճապոնական ավանդական ընտանիքը՝ որպես հասարակության սոցիալական առանցքային միավոր, իր հիմնական գործառույթներով տարբերվել է ինչպես ասիական, այնպես էլ արևմտյան հասարակությունների համանման կառույցից: Չնայած այս ամենին՝ քիչ չեն այն ուսումնասիրողները, որոնք պնդում են, թե երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կատարվող սերնդափոխությանը համընթաց տեղի ունեցող նոր սահմանադրության ու քաղաքացիական օրենսգրքի ընդունման և լայնամասշտաբ տնտեսական բարեփոխումների ու արդիականացման հետևանքով Ճապոնիայում *իե*-ի համակարգը հետզհետե տեղի տվեց և սկսեց վերանալ: Սակայն ձգտելով հիմնավորելու ճապոնացիների էթնիկական ինքնության եռաշերտության մասին առաջ քաշված վարկածը և առաջնորդվելով այն պարզ ճշմարտությամբ, որ կարճ պատմական ժամանակահատվածում էթնիկական ինքնությունը չի կարող կրել զգալի որակական փոփոխություններ կամ անհետանալ, ստորև փորձենք ներկայացնել այն փաստված փոխակերպումները, որոնց ճապոնացիների էթնիկական գիտակցության մեջ ենթարկվեց ավանդական *ընտանիքը*:

Բանն այն է, որ Արևմուտքի մշակութային ազդեցության և հետպատերազմյան շրջանում ԱՄՆ-ի նախաձեռնած քաղաքական ու տնտեսական լայնամասշտաբ բարեփոխումների հետևանքով էթնիկական ինքնության հարթությունում ընտանիքն իր գործառույթներով և դրանց հավաքական ընկալմամբ

¹¹⁴ Տե՛ս Петрова О., *Древнеяпонские термины родства*. “Советская этнография”, 1965, № 3, էջ 79-89:

¹¹⁵ Տե՛ս Dore R., *City Life in Japan*. London, Routledge, 1958:

ենթարկվեց որոշակի փոխակերպումների և մասնակիորեն փոխարինվեց մեկ այլ՝ հարակից, սոցիալական օրգանիզմով՝ *ընկերություն* (կոմպանիա)¹¹⁶: Ուշագրավ է, որ հետպատերազմյան շրջանում ճապոնական ավանդական ընտանիքի քայքայումը և գնալով աճող արևմտյան մշակութային ազդեցությունը պայմանավորեցին փոքր ընտանիքի գերակշռումը, ինչը մասնագիտական գրականության մեջ երբեմն նշագրվում է «մայիոմականություն» (*myhomism*) տերմինով (ճապոնական գրականության մեջ՝ *մայիոմուշուզի*)¹¹⁷:

Հակառակ ճապոնական ավանդական ընտանիքի հաստատության անհետացման մասին եղած ծայրահեղ պնդումներին՝ ուսումնասիրություններով հաստատված է, որ Ճապոնիայի հետպատերազմյան տնտեսական թռիչքին զուգընթաց ավանդական ընտանիքն սկսեց իր շատ գործառույթներ պարզապես զիջել ընկերությանը, կամ կոմպանիային: Ճապոնական իրականության մեջ մեծ կոնցենդումների և ավելի փոքր ընկերությունների ի հայտ գալով՝ անհատի բարեկեցության հիմնական խնդրի լուծումն սկսեց կապվել ոչ թե նախկին փոքր ընտանեկան տնտեսության, այլ անհամեմատ ավելի մեծ տնտեսական միավորների գործունեության հետ: Հետպատերազմյան շրջանում ձևավորվեցին անձնավորված աշխատանքային ծառայության, երբեմն «ցմահ» կոչվող, ճապոնական մոդելի մի շարք էական առանձնահատկություններ, այդ թվում՝ ընկերության կողմից իր աշխատողների համար առանձին բնակելի շենքերի ու հիվանդանոցների կառուցում, նշանակալի իրադարձությունների կապակցությամբ մեծ դրամական պարգևների տրամադրում, ընկերության ներսում աշխատողների հարաբերություններում ենթակայության համակարգի հստակեցում և ընկերության ղեկավարի կողմից ընտանիքի հոր գործառույթների ստանձնում, երբեմն մույնիսկ աշխատողների ընտանեկան պլանավորման հատուկ բաժինների ստեղծում կամ մեկ խոշոր ձեռնարկության համար նախատեսված հատուկ գերեզմանատների սարքավորում: Դրանք վկայում են, որ

¹¹⁶ Stu Kawai H., Japan's Self-Image: What distinguishes the Japanese? *Japan Review of International Affairs*, 1998, v. 12, № 2, էջ 145–147:

¹¹⁷ Stu Lie J., նշվ. աշխ., էջ 126:

Ճապոնիայի տնտեսության արդյունաբերականացմամբ և խոշոր ընկերությունների ի հայտ գալով՝ ավանդական ընտանիքը ենթարկվեց որոշ գործառնության օրինաչափ փոխակերպումների, ինչը ոչ միայն չփոխեց ճապոնական հասարակության և էթնիկական ինքնության խմբային կողմնորոշումը, այլ հակառակը՝ ավելի ամրապնդեց այն: «*Ընկերությունն* սկսեց ընկալվել որպես ընտանիք, նրա աշխատողները՝ որպես միևնույն ընտանիքի անդամներ, իսկ ընկերության ղեկավարը՝ որպես այդ ընտանիքի հայր: Ընկերության նոր աշխատողը նոր միջավայրում ընդունվում է ճիշտ այնպես, ինչպես ընտանիքում կընդունեին նոր զավակի ծնունդը, նոր որդեգրված երեխային կամ հարսին¹¹⁸»:

Ջարգացնելով այս մոտեցումը՝ հետազոտող Կոուիչի Տագուչին հարցազրույցի ժամանակ նշեց. «սովորաբար, եթե ճապոնացուն հարցնեք, թե ինչ աշխատանք է կատարում, նա իր զբաղեցրած հաստիքը կամ կատարած աշխատանքի բնույթը ներկայացնելու փոխարեն, իր պատասխանում, հավանաբար, կնշի նաև այն ընկերության կամ կազմակերպության անվանումը, որտեղ աշխատում է: Նման մտածելակերպը, որը հատկապես մեծ տարածում ստացավ հետպատերազմյան տնտեսական զարգացման շրջանում, վկայում է նվիրվածությունն այն սոցիալական օրգանիզմին, որից ճապոնացին իր կյանքի համարյա ամբողջ ընթացքում եկամուտներ է ստանում¹¹⁹»: Այսպիսով՝ էթնիկական ինքնության խմբային կողմնորոշումը, կամ խմբային շերտը, հանգեցնում է այն բանին, որ ճապոնացին ձգտում է իրեն տեսնելու և գործելու սոցիալական հնարավորինս մեծ միավորի կազմում:

Ինքնության այս մոդելը ենթադրում է նաև խմբի անդամների կողմից ցուցաբերվող հարմարվողականություն և համագործակցելու պատրաստականություն, որոնք, միևնույն ժամանակ, գուցակցվում են անդամների միջև բաց մրցակցությամբ և ճգնաժամային իրավիճակների բացակայությամբ: Ուստի հիմնական շեշտը դրվում է ներդաշնակության վրա, որի շնորհիվ ճապոնացիների նույնիսկ առօրյա վարքագիծը շատ հաճախ կրում է ծիսական

¹¹⁸ Interview with Sakaki H., a professor at IIS, University of Tokyo, in *Farmanyan S.*, նշվ. աշխ., էջ 24:

¹¹⁹ Interview with Taguchi K., a professor at NIRA, in *Farmanyan S.*, նշվ. աշխ., էջ 24:

բնույթ՝ ներկայացնելով հստակորեն սահմանված և ավանդական մշակութային նորմերով կարգավորվող գործողությունների մի կուռ ու անփոփոխ համակարգ: Նման գիտակցությունը և վարքագիծը պայմանավորում են իր շահերի ու նպատակների ստորադասումն ընտանիքի, ընկերության կամ ավելի մեծ սոցիալական միավորի՝ ազգի շահերին, ինչպես նաև մեծացնում են անհատական ու խմբային պատասխանատվությունը դրանց կենսագործունեության հսմար: Դապոնիայում ձեռներեցությամբ զբաղվող նորգեղանդացի գործարարներից մեկը՝ Ջոն Ռիլլամսոնը, հարցազրույցի ժամանակ նշեց. «Ես՝ որպես օտարերկրացի գործարար, արդեն քսան տարուց ավելի է, ինչ գործ ունեմ ճապոնական տարբեր ընկերությունների հետ, սակայն մինչ օրս ինձ պարզ չէ, թե ինչպես են ճապոնացիները զուգակցում անհատական և խմբային պատասխանատվությունը... շատ դժվար է ուրվագծել այն սահմանը, որը ճապոնացուն բաժանում է այն ընկերությունից, որտեղ աշխատում է¹²⁰»:

* * *

Դապոնացիների էթնիկական ինքնության խմբային շերտի կարևոր բացահայտիչ հասկացություններից մեկն է *սենսյայը*, որը կարելի է թարգմանել «ավագ, ղեկավար կամ ուսուցիչ»: Առօրյա գործունեության ընթացքում ցանկացած անհատ մեկից ավելի խմբերի ու սոցիալական միավորների մաս է կազմում, և շատ հաճախ դժվար է պարզել, թե այդ շերտերից որն է առանցքային, մինչդեռ ճապոնացիների պարագայում գործում է «միևնույն մարդը չի կարող միաժամանակ լավ ծառայել երկու տերերի» ասացվածքը, և նրանց բնորոշ է ուղիղ գծով մեկ խմբի ու մեկ ուսուցչի պատկանելու գիտակցությունը: Դապոնացի մտավորականի, գիտնականի կամ մարզիկի հատուկ է ուղղակիորեն միայն մեկ *սենսյայի* կամ *սենսեյի* (ուսուցչի) ուղիղ գծով պատկանելու գիտակցությունը, որը վերածվել է վարքագծային նորմի, և որի պարագայում իր ուսուցչի կամ մարզչի հետ մրցակցության մեջ գտնվող այլ ուսուցչի կամ մարզչի հետ նույնքան լավ հարաբերություններ ունենալն ընկալվում է որպես դավաճանություն: Նման վարքագծի

¹²⁰ Interview with Williamson J., in Farmanyan S., նշվ. աշխ., էջ 43:

մշակութային արմատները գալիս են վաղ միջնադարյան ճապոնական առասպելաստեղծության իրականությունից: Նման պնդման համար հիմք է դեռ վաղ միջնադարում ձևավորված «*Չուշինգուրան*», կամ «*47 ոռնիկների հեքիաթը*», որում 47 ճապոնացի սամուրայներ դաժանությամբ պատժում են իրենց ընդհանուր ուսուցչին դավաճանած մեկ այլ սամուրայի¹²¹: Ուսուցչի, ավագի և մեծ կենսավորձ ու արժանավոր հասարակական դիրք ունեցող *սենպայի* նկատմամբ հարգանքի և նվիրվածության վարքագիծը առկա է նաև ձեռնարկատիրական ընկերություններում և մասամբ պայմանավորված է ճապոնական հասարակության աստիճանակարգային կառուցվածքով, որը բնութագրվում է հստակ ենթակարգային հարաբերություններով՝ ըստ ունեցած հասարակական դիրքի: Նման հավաքական հատկությունները, անշուշտ, իրենց ներդրումը պիտի ունենային ճապոնիայի հետպատերազմյան աննախադեպ տնտեսական զարգացման գործում՝ տնտեսության արդյունավետ կառավարման, ընկերությունների ներսում ծառայողական պարտականությունների հստակ կատարման, ընդհանուր նպատակին հասնելուն անվերապահ նվիրվածության և մասնագիտական առաջընթացի կանխատեսելիության ձևով:

Մասնագետները հակված են նաև այն կարծիքին, որ մասամբ հենց տվյալ վարքագծային ու մշակութային նորմերով է պայմանավորված այն, որ ճապոնական ընկերություններում ծառայողական համակարգը ժամանակի ընթացքում ընդունեց պարտաձև տեսք, երբ ընկերության ներսում բարձր պաշտոն զբաղեցնելու համար յուրաքանչյուր անձ պետք է պարտադիր կերպով նախապես անցնի ծառայողական համակարգի բոլոր աստիճանները: 1978 թ. 235 ճապոնական ընկերություններում անցկացված ուսումնասիրությամբ պարզվել է, որ 3277 ղեկավար հաստիքներ զբաղեցնողների միջին տարիքը 57,2 տարեկան է, և ընդամենը նրանց 10 %-ից պակաս պաշտոնյաներին է հաջողվել ղեկավար դիրք զբաղեցնել 50 տարեկանից ցածր տարիքում, մինչդեռ 35 %-ի տարիքը 60-ից էլ բարձր էր¹²²: Այլ կերպ ասած՝ այստեղ գործ

¹²¹ Steu Lie J., նշվ. աշխ., էջ 183:

¹²² Steu Brown W., *Japanese Management: The Cultural Background*, in Lebra T. and Lebra W. (eds.) *Japanese Culture and Behaviour*. Honolulu, University of Hawaii Press, 1974, էջ 175:

ունենք ճապոնացիների էթնիկական ինքնության խմբային շերտի մյուս տիպային դրսևորման՝ բյուրոկրատիայի հաստատության հետ: Արևմուտքում և նախկին ԽՍՀՄ-ում սովորաբար բացասաբար ընկալվող այս հաստատությունը հետպատերազմյան ճապոնիայի արմատական վերափոխումներում հանդես եկավ որպես տնտեսական ու քաղաքական բարեփոխումների ներդաշնակ իրականացման հաստատուն երաշխավոր՝ բացառելով անցումային շրջանին բնութագրական շատ երևույթներ¹²³: Հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմից և Դաշնակից ուժերի կառավարմանը ճապոնիայի անցնելուց հետո՝ հասարակության ներդաշնակ կենսագործունեությունն ապահովող տարբեր համակարգերի դեռևս չձևավորված լինելու պարագայում, ճապոնական բյուրոկրատիան իր վրա վերցրեց հասարակական զարգացումների գլխավոր զարկերակի դերը՝ հանդես գալով որպես վերափոխումների սահունության և շարունակականության հիմնական գրավական, դրանց հաջողությունը կապելով ոչ թե առանձին անհատների, այլ «քաղաքացիական ծառայողների բազմահազարանոց բանակի հետ, որն ամեն առավոտ դուրս էր հորդում Տոկիոյի Կասումիգասեկի կայարան՝ զբաղեցնելու իր կառավարական գրասենյակները¹²⁴», կամ, այլ կերպ ասած, ճապոնիայի պատմության հավաքական հերոսի՝ բյուրոկրատիայի հետ:

Ճապոնացի ուսումնասիրող Իիդա Յունեոն, քննության առնելով շարունակական զբաղվածության և առաջխաղացման ու վարձատրության ավագության սկզբունքները՝ որպես ճապոնիայում արդյունաբերական հարաբերությունների և խմբայնության ամենաառանցքային առանձնահատկություններ, եզրակացնում է. «մենք (ճապոնացիները,–Ս.Ֆ.) սխալ պատկերացումներ ունենք այս առանձնահատկությունների մասին և մեծապես ազդվում ենք դրանցից¹²⁵»: Նա հակված է ճապոնական բացառիկության

¹²³ Տես Ֆարմանյան Ս., Ճապոնացիների էթնիկ ինքնության և ճապոնիայի հետպատերազմյան տնտեսական զարգացման ու ժողովրդավարացման առնչության հարցի շուրջ (էթնիկ ինքնության եռաշերտ ներդաշնակություն): «Գիտություն և տեխնիկա», հմ. 10 (482), 2003, էջ 6:

¹²⁴ Godement F., *The New Asian Renaissance*, London. New York, Routledge, 1997, էջ 5:

¹²⁵ Tsuneo I., On the Egalitarian Aspects of the Japanese Economy and Society. *Japan Review*, v. 3, 1992, էջ 141:

տեսությունները դիտելու որպես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ճապոնացիների շրջանում առաջացած թերաթեքության, իսկ հետագայում՝ Ճապոնիայի հետպատերազմյան հաջող արդիականացումից հետո, գերաթեքության բարդության հետևանք։ Ինչպես, համեմատական վերլուծության ենթարկելով արևմտյան և ճապոնական տնտեսություններում նշված համակարգերը, եզրակացնում է, որ խոսքը այդ երևույթների ոչ թե բացառիկության, այլ դրսևորման չափերի մասին է։

* * *

Խոսենք ճապոնացիների էթնիկական ինքնության հետ անմիջական աղերսներ ունեցող և 1960–1970-ական թթ. մեծ ծաղկում ապրած ճապոնական ժողովրդական *էնկա*, կամ հայրենաբաղձություն, երաժշտական ժանրի մասին։ Այդ ժանրը, որն իր հիմքում ուներ *ֆուրուսատոյի*, կամ հայրենի գյուղի, նկատմամբ տաժած կարոտի գաղափարը, ինչպես արդեն նշվեց, հասարակական մեծ ճանաչում ստացավ և զարգացում ապրեց հատկապես Ճապոնիայի տնտեսական առաջընթացի տարիներին։ Մասնագիտական գրականության մեջ լայնորեն օգտագործվող «ֆուրուսատոյի բումի» հետ մեկտեղ այդ ժանրի կենտրոնական առանցքը կազմող հայրենի գյուղը ճապոնացիների հավաքական էթնիկական գիտակցության մեջ սկսեց նույնացվել ընդհանուր պատմական կենսատարածքի՝ հայրենիքի կամ մոր հետ, իսկ նրանց փառաբանումն ու գովերգումը դարձան այդ երաժշտական ժանրի հիմնական թեման¹²⁶։ Եվ դա բնական էր, քանի որ մայրը՝ որպես անհատի կենսաբանական *ֆուրուսատո*, հավաքական գիտակցության մեջ նույնականանում էր հայրենի բնակավայրի և ընդհանուր հայրենիքի հետ։ Ինքնության անհատ–ընտանիք–ազգ եռաշերտ միասնության պարագայում մայրը դառնում էր ոչ միայն անձնավորության անհատականության, այլև ընտանիքի և ազգի խորհրդանիշ. *էնկա* երգերում, ըստ էության, մոր կրկնվող կերպարը խորհրդանշում էր հայրենիքը՝ Ճապոնիան, իսկ երեխաները, որոնց անունից հեղինակվում էին այդ երգերը, խորհրդանշում

¹²⁶ Stu Robertson J., *Native and Newcomer: Making and Remaking a Japanese City*. Berkeley, University of California Press, 1991:

էին ճապոնացիներին: «Մայրն ընտանիքում դառնում է սոցիալականացման, հակամարտային իրավիճակների հարթման ու ներդաշնակման հիմնական երաշխավորը: *Էնկա* ժանրում մոր և մանկան, ճապոնացու և նրա ինքնության միասնությունն անքակտելի են. մորից բաժանված երեխան առմիշտ կարոտում և փնտրում է նրան, ճիշտ այնպես, ինչպես հայրենիքից դուրս ճապոնացին *ճապոնականության* պակասը լրացնելու մշտական որոնումներում է¹²⁷»: Էթնիկական ինքնության նշված երեք շերտերը համահարաբերակցական կապի մեջ են և կազմում են մեկ ընդհանուր միասնություն, իսկ յուրաքանչյուր ճապոնացի այդ ինքնության կրողն է:

* * *

Անշուշտ, վերը քննարկված երկու դրվագները չեն արտացոլում հետպատերազմյան զարգացումներում ճապոնացիների էթնիկական ինքնության առանցքային դերակատարության ամբողջական պատկերը, այլ ընդամենը վկայում են, որ որոշ էթնիկական ու մշակութային առանձնահատկություններ ազդեցություն են ունեցել «ճապոնական հրաշքի» կերտման վրա: Ըստ այդմ՝ որպես Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման կարևոր գործոն առաջին հերթին քննության առարկա էին դառնում էթնիկական ինքնության և մշակույթի դեմքը պայմանավորող այնպիսի կարևոր երևույթներ, ինչիսիք են կրոնական հավատալիքները և ավանդույթները:

Ճապոնացիների մտածելակերպում առաջնային դիրքերում գտնվող խմբայնության ամրապնդման տեսանկյունից անհրաժեշտ է ուսումնասիրել նաև կրոնական արմատները: Ճապոնիայում տարածված բոլոր հիմնական կրոնները՝ սինտոյականությունը, բուդդայականությունը, կոնֆուցիականությունը, նպաստել են անհատի դերի նվազեցմանը և խմբային մտածելակերպի ամրապնդմանը¹²⁸: Սինտոյականությունը քարոզում է, որ մարդը չի կարող գոյություն ունենալ անկախ: Մարդը բարի գործեր է կատարում և բարիքներ ձեռք բերում, երբ գտնվում է բնության,

¹²⁷ Yano Ch., *Distant Homelands*, էջ 76:

¹²⁸ Seta Noboru I., նշվ. աշխ., էջ 56:

աստվածությունների և նախնիների հետ բացարձակապես ներդաշնակ հոգեկան համերաշխության մեջ: Բուդդայականության մեջ մարդու հիմնական նպատակն է «իր ես»-ից հրաժարվելու, տարանջատվելու միջոցով «բացարձակ ես»-ին հասնելը. փոփոխական աշխարհում «իր ես»-ին տրվելը տանում է տառապանքների ու փորձությունների: Անհրաժեշտ է վերանալ անձնականից և ձգտել հասնելու *մոու*, կամ «*ոչինչ*», վիճակին¹²⁹: Կոնֆուցիականությունն ընդունում է ընտանիքի առաջնայնությունը, նախնիների պաշտամունքը և մարդու գոյության իմաստը տեսնում է նրա՝ ընտանիքի անդամ լինելու, դրա մասը կազմելու և տանը գտնվելու մեջ: Այլ կերպ ասած՝ կոնֆուցիականությունը չի ընդունում մեկուսացած անհատին, կրոնական այդ համակարգում անհատականությունը գոհողության է ենթարկվում հանուն ընտանիքի:

Ճապոնացի հետազոտող Օձակին, Ճապոնիայում խմբայնության հիմքերի ձևավորումը վերագրելով վաղնջական ժամանակներին, այն կապում է սինտոյականության հետ¹³⁰: Նրա կարծիքով՝ այդ կրոնում աշխարհի ոգեպաշտական ընկալումը ենթադրում է մարդու, բնության և աստվածությունների միջև բախումներն ու հակադրությունները բացառող ներդաշնակ հարաբերություններ. աստվածությունները ոչ թե մարդկանց, այլ նրանց խմբերի հովանավորներն են¹³¹: Ի տարբերություն համաշխարհային կրոններից, ըստ որոնց՝ արարիչն ստեղծում է ամբողջ մարդկությունը, սինտոյական աստվածություններն ստեղծում են միայն ճապոնացիներին, և սինտոյականություն էլ դավանում են միայն ճապոնացիները: «Սինտոյականությունը դրեց ոչ միայն ճապոնացիների զգացմունքային, գեղարվեստական, կրոնական և մտավոր կյանքի հիմքերը, այլև միասնականության առանցքային գիտակցությունը, որը բնորոշ է ճապոնական ժողովրդին, գրում է Ճապոնիայի պատմության և մշակույթի տեսաբան Բերին և ավելացնում, — նա ճապոնացիներին տվեց նաև քաղաքական կառավարման պատրաստի տեսություն և անգամ՝ պատմական ճակատագրի զգացում»¹³²:

¹²⁹ Տե՛ս «Японское Общество и Культура», էջ 13:

¹³⁰ Տե՛ս Ozaki R., նշվ. աշխ.:

¹³¹ Տե՛ս «Японское Общество и Культура», էջ 13:

¹³² Berry T., *Approaches to Asian Civilizations*. New York-London, 1964, էջ 80:

Որևէ մշակույթի վրա օտար մշակույթի կամ դրա առանձին տարրի ունեցած ազդեցության վառ օրինակ է նաև Ճապոնիայում *ձեն-բուդդայականության* տարածումը: Հնդկական բուդդայականությունը, հատկապես դրա *դիսայանա* ուղղությունը (չինարեն՝ *չան*, ճապոներեն՝ *ձեն*), թեև Ճապոնիա ներթափանցեց փոքր-ինչ չինականացված տարբերակով, բայց պահպանեց նախնական հնդկական շատ գծեր: Ճապոնիայում ոչ միայն բուդդայականությունը դարձավ հասարակության բոլոր շերտերի կողմից ընդունված հիմնական կրոններից մեկը, այլև *ձենը* մեծ ազդեցություն գործեց ճապոնական միջնադարյան ու վերջինիս միջոցով՝ նաև ժամանակակից մշակույթի ու էթնոմշակութային առանձնահատկությունների վրա, մի իրողություն, որը երբեք տեղի չունեցավ Չինաստանում, թեև այդ կրոնը Ճապոնիա էր ներթափանցել չինական տարբերակով¹³³:

* * *

Ճապոնացիների բացառիկության կամ ոչ բացառիկության հարցի ուսումնասիրությանը նվիրված աշխատությունները երբեմն գերծ չէին լինում փաստական նյութի վրա չհենվող, գիտականորեն չհիմնավորված և մտացածին եզրահանգումներից: Այս երևույթը ևս օրինաչափորեն արտացոլում էր ճապոնացիների էթնիկական ինքնության, հասարակության և մշակույթի առանձնահատկությունների հետ Ճապոնիայի աննախադեպ հետպատերազմյան զարգացման կապը հաստատելուն ուղղված ստվարածավալ աշխատությունների ազդեցությունը: Գրվեցին էթնիկ միատարրության՝ որպես հետպատերազմյան արդիականացման գործոնի մեծ դերը ժխտող աշխատություններ, որոնց հեղինակները, վերլուծելով ճապոնացիների էթնիկական ինքնագիտակցության մեջ տարբեր պատմական գործոնների, հատկապես՝ ճապոնական գաղութատիրության ազդեցությամբ տեղի ունեցած փոխակերպումները, փորձում էին ապացուցել, որ էթնիկ միատարրությունը պատմականորեն եղել է ճապոնացիների էթնիկական ինքնագիտակցությանը անհարիր: Նման աշխատություններից են

¹³³ Ավելի հանգամանորեն տես Арутюнов С., *Народы и культуры: Развитие и взаимодействие*. Москва, 1989:

Օգոմա էյձիի «Էթնիկ միատարրության առասպելի առաջացումը. ճապոնացիների ինքնագիտակցության ծագումնաբանությունը», «Ճապոնացիների սահմանները. Օկինավա, Այնուներ, Թայվան և Կորեա» մենագրությունները¹³⁴, ամերիկաբնակ կորեացի ուսումնասիրող Լիեի «Բազմաէթնիկ Ճապոնիա» աշխատությունը¹³⁵:

Ընտրողաբար հղումներ կատարելով Ճապոնիայի պատմության հիմնականում վաղնջական, հատկապես՝ ճապոնական էթնոսի կազմավորման ժամանակաշրջանի պատմությանը՝ Օգոման փորձեց ճապոնացիների էթնիկական ինքնագիտակցության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, գերազանցապես ճապոնացիների էթնիկ միատարրության կամ բազմաէթնիկության հավաքական ընկալումները դիտարկել պատմական զարգացման դինամիկայի մեջ: Մշակութային և պատմական հարուստ նյութի հիման վրա քննարկելով 19-րդ դարում ճապոնացիների էթնիկական ինքնագիտակցությանն առնչվող խնդիրները՝ նա եկավ այն եզրակացությանը, որ ճապոնացիների ազգային ինքնագիտակցությունը պատմականորեն հանգել է ճապոնացիների՝ որպես «խառը ազգության» (ճապոներեն՝ *կոնգոո մինձոկու*) ընկալմանը: «Խառը ազգության», կամ, այլ կերպ ասած, բազմաէթնիկ Ճապոնիայի, տեսությունը սնվում էր ճապոնացիների էթնիկական ծագման վերաբերյալ գոյություն ունեցող գիտական տարակարծություններից, որոնցից առավել լայն ընդունելություն գտածը, հենվելով տարբեր գիտությունների տվյալների վրա, պնդում է, որ ճապոնական էթնոսը առաջացել է տեղաբնակ բնակչության և Կորեայից ու Չինաստանից ներգաղթած ասիական այլ էթնիկ խմբերի ձուլման միջոցով: Իսկ համաձայն մյուս մոտեցման, որը պարունակում է որոշակի քաղաքականացված տարրեր, ճապոնական էթնոսը ձևավորվել է ոչ թե մ. թ. 4-5 դարերում, այլ անհիշելի պատմական ժամանակաշրջանում, և այդ ժամանակներից սկսած՝ ճապոնական էթնիկական ինքնագիտակցության մեջ արմատացած է եղել

¹³⁴ Askew D., *Ogumi Eiji and the Construction of the Modern Japanese National Identity*, Social Science Japan Journal, v. 4, № 1, 2001, էջ 111-116:

¹³⁵ Lie J., նշվ. աշխ.:

ճապոնացիների՝ որպես էթնիկական առումով «գտարյուն», կամ, այլ կերպ ասած, միատարր, էթնոս լինելու գաղափարը¹³⁶:

Օգոման համարում է, որ ճապոնացիների էթնիկական ինքնության և էթնիկական առանձնահատկությունների վերաբերյալ ձևավորված բոլոր տեսությունները և մոտեցումները խորքային առումով սնվում են այս երկու՝ միմյանց հակադիր, տեսակետներից: Վերը նշված երկու աշխատություններում քննության առնելով ճապոնացիների էթնոժազման հարցը և հանդես գալով որպես առաջին տեսության կողմնակից՝ նա, ըստ էության, հանգում է այն պարզունակացված հետևությանը, թե՛ քանի որ ճապոնացիների ձևավորմանը մասնակցել են ինչպես տեղաբնակ, այնպես էլ օտար էթնիկ խմբեր, ապա «գտարյուն ճապոնացի» ձևակերպումը համապատասխանում է այդ գործընթացին մասնակցած էթնիկ խմբերի ծուլման հետևանքով ձևավորված էթնոսին, և համարում է, որ Ճապոնիան աշխարհում բազմաէթնիկ հասարակության վաղ նախատիպերից մեկն է, իսկ ճապոնացիների էթնիկական ինքնագիտակցության մեջ միշտ էլ գերակայել է «բազմաէթնիկ Ճապոնիայի» ընկալումը: Անշուշտ, Օգոմայի այս կարծիքը գիտական տեսանկյունից բավականին խոցելի է, քանի որ գլխավորապես հենվում է ոչ թե արդեն ձևավորված էթնոսի ինքնության և դրա առանձին տարրերի հետագա փոխակերպումների ուսումնասիրության վրա, այլ ճապոնացիների էթնոժազման գործընթացներին տեղաբնակ և օտար էթնիկ խմբերի մասնակցության փաստի վրա:

Հաջորդ թեզը, որն առաջ քաշեց Օգոման, նույնպես մակերեսային բնույթի է: Այն կարելի է անվանել «հատվածական ինքնության» տեսություն: Խուսափելով էթնիկական ինքնության խոր ազգաբանական վերլուծությունից՝ նա հայտնում է այն կարծիքը, թե ճապոնացիների էթնիկական ինքնագիտակցությունը հատվածական և իրավիճակային բնույթի է, և Ճապոնիայի ազգային շահերին ու նրա շուրջն ստեղծված միջազգային իրավիճակին համապատասխան՝ եղել է հարափոփոխ: Այսպես, նա համարում է, որ Ճապոնիայում բնակվող էթնիկ փոքրամասնությունները

¹³⁶ Ճապոնացիների ծագումնաբանության և էթնիկ պատմության վերաբերյալ տարբեր տեսակետների մասին տես Fukuoka Y., *Who are the Japanese?*, trans. Ross Maurer et. al. Victoria Clayton, Japanese Studies Center, Translation Series, no. 1, 1997:

և ճապոնական գաղութային կայսրությունում բնակվող ազգություններն ու էթնիկ խմբերը դիտվել են որպես ճապոնացիներ, երբ դա են պահանջել Ճապոնիայի ազգային-պետական շահերը: Սակայն այստեղ ևս Օգուման խուսափում է էթնիկական ինքնագիտակցության վրա ճապոնական գաղութատիրության ու Ճապոնիայում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ունեցած ազդեցության խոր ազգաբանական վերլուծությունից և, հիմնվելով տարբեր պատմական ժամանակաշրջաններում իրականացված պետական քաղաքականության սկզբունքների ու կառավարող շրջանների քաղաքական դիրքորոշումների վրա, հանգում է նշված, ըստ էության, չափազանցված հետևությանը:

Անշուշտ, տարբեր պատմական իրողություններ որոշակի ազդեցություն են գործում էթնիկական ինքնության վրա, որն էլ այդ գործոնների ազդեցությամբ ենթարկվում է դանդաղ փոխակերպումների: Սակայն ճապոնացիների էթնիկական ինքնության ազգաբանական վերլուծությունը չի հաստատում այն պնդումը, թե էթնիկական ինքնությունը՝ որպես հավաքական իրողություն, կարող է ըստ ազգային-պետական շահերի իրավիճակային նպատակահարմարության բավական կարճ պատմական ժամանակահատվածում ընդունել կամ մերժել ճապոնացիների՝ որպես միասեռ կամ տարասեռ էթնոսի գիտակցումը:

Օգուման, կարևորելով ճապոնացիների էթնիկական ինքնության փոխակերպման գործում ճապոնական գաղութատիրության դերը, դրա ծավալման պատճառների շարքում որպես առաջնային գործոն է դիտում Արևմուտքի կողմից գաղութացվելու վտանգը և, ըստ այդմ, ձևավորված «էթնիկական ինքնության ճգնաժամը», ինչը, ըստ Օգումոյի, ճապոնացիներին մղեց գաղութատիրացման քաղաքականության: Ճապոնական գաղութատիրության կարևոր առանձնահատկություն համարելով Ճապոնիայի ուշ մասնակցությունը գաղութատիրության ընդհանուր գործընթացներին և այն, որ ճապոնական գաղութատիրությունը, ի տարբերություն արևմտյանից, տարածվեց հարևան երկրների վրա, Օգուման որպես էթնիկական ինքնության հատվածական դրսևորման օրինակ բերում է Ճապոնիայի կառավարող շրջանների ձգտումը ձուլվելու նվաճված երկրների բնակչությանը, տիրացումը Օկինավային և ճապոնացիների էթնիկական ինքնագիտակցության

մեջ Օկինավայի ամրագրումը որպես Ճապոնիայի պատմական հայրենիքի մի մասի:

Նրա գլխավոր պնդումն այն է, որ նախապատերազմյան Ճապոնիայում, երբ խնդիր դրվեց ձուլելու ինչպես նվաճված երկրներում բնակվող տարբեր էթնոսները, այնպես էլ բուն Ճապոնիայի տարածքում ապրող էթնիկ փոքրամասնությունները, ճապոնացիների էթնիկական ինքնագիտակցության մեջ տիրապետում էր ճապոնացիների՝ բազմաէթնիկ ազգություն լինելու ընկալումը, մինչդեռ հետպատերազմյան շրջանում տարբեր պատմական հանգամանքների բերումով սկսեց գերիշխել ճապոնացիների՝ որպես պատմականորեն միատարր էթնոսի ընկալումը: Այլ կերպ ասած՝ հեղինակը Ճապոնիայի հզորությունը կամ թուլությունը անմիջական կապի մեջ է դնում ճապոնացիների հավաքական ինքնագիտակցության մեջ ազգի միատարր կամ բազմաէթնիկ ընկալման հետ: «Երբ Ճապոնիան ուժեղ է, գերակա է դառնում ճապոնացիների բազմաէթնիկ լինելու ընկալումը, իսկ երբ թույլ է, տիրապետում է հակառակ դրույթը», եզրակացնում է Օգուման¹³⁷: Իր այս դրույթից նա եզրակացնում է, որ Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացումը և տնտեսական գերտերության վերածումը հիմք է տալիս ենթադրելու, որ ճապոնացիների էթնիկական ինքնության մեջ շուտով ավելի տիրապետող կդառնա ճապոնացիների՝ որպես բազմաէթնիկ ազգի հավաքական ընկալումը: Նա նաև ուղղակի պատճառահետևանքային կապ է տեսնում էթնիկական ինքնության և Ճապոնիայի աշխարհագրական տարածքի չափերի միջև, ինչը, գիտականորեն ճշմարիտ հարցադրում է, սակայն հեղինակն այստեղ հաշվի չի առնում ճապոնական գաղութատիրության մեկ այլ կարևոր առանձնահատկություն՝ կարճատևությունը:

Ճապոնիայի պատմության փիլիսոփայությունը և ճապոնական մշակույթի պատմությունը հուշում են, որ Ճապոնիայի ու նրան շրջապատող արտաքին աշխարհի հարաբերությունները և նրանց միջև կապը պատմության տարբեր շրջաններում տարբեր կերպ են ընկալվել: Այս առումով հպանցիկորեն դիտարկենք «կղզեբնակ ժողովրդի» ընկալումը, որը հատկապես տիրապետող

¹³⁷ Askew D., նշվ. աշխ., էջ 114:

դարձավ Տոկուգավայի վարչակարգի օրոք: Նպատակ չունենալով մանրամասնորեն բնության ենթարկել պատմության ավելի վաղ շրջաններում այդ հավաքական ընկալման էությունը՝ նշենք միայն, որ մասնագետների համոզմամբ՝ այդ շրջանում մշակութային ազդեցության և քաղաքական շփումների հետևանքով ճապոնացիների ինքնության մեջ առավել ընդգծված է եղել ասիական շերտը, որը Տոկուգավայի «փակման» երկուսուկեսդարյա քաղաքականության ժամանակաշրջանից սկսեց նվազել: Իսկ արդեն Մեիձիի ժամանակաշրջանից և հատկապես երկրորդ աշխարհամարտից հետո ճապոնացիների էթնիկական ինքնության այդ շերտում տեղի ունեցան նկատելի փոփոխություններ՝ պայմանավորված արևմտյան մշակույթի հետ ակտիվ շփումների հանգամանքով:

Մյուս կարևոր պատմական գործոնը, որը ճապոնացիների էթնիկական ինքնության այդ շերտում տեղաշարժեր հարուցեց, այլ ասիական երկրների՝ Հարավային Կորեայի, Թայվանի, Սինգապուրի, Մալայզիայի, Չինաստանի, Թաիլանդի տնտեսական զարգացումն էր, ինչպես նաև ակտիվ տարածաշրջանային համագործակցությունը և տարածաշրջանում առաջնության համար ծավալված պայքարը, որոնք սկսվեցին 1980-ական թվականներին:

* * *

Փորձենք վերլուծել հետպատերազմյան արդիականացման շրջանում ճապոնացիների էթնիկական ինքնության ասիական շերտի ուժեղ կամ թույլ արտահայտված լինելու հանգամանքը՝ հիմնվելով լեզվական և դաշտային աշխատանքի արդյունքների վրա: Նախապես նշենք, որ տվյալ շերտի վերլուծության համար հարկ է հենվել ճապոնական ինքնության զարգացման գործում կրոնի ունեցած դերակատարության առանձնահատկությունների վրա: Ի տարբերություն քրիստոնեությունից, այն, ինչ սկսած դեռ վաղ դիցաբանական պատկերացումներից նկատվում էր ճապոնական կրոնական համակարգերում, կարելի է բնութագրել որպես «խորհրդանշական կենտրոնի մոդել»¹³⁸: Միևնույն ժամանակ, հակված ենք կարծելու, որ նման մոդելը՝ որպես մեթոդաբանական հիմք, հնարավորություն է տալիս վերհանելու ոչ միայն

¹³⁸ Kawai H., նշվ.աշխ., էջ 150:

կրոնական համակարգերի բնույթը, այլև ճապոնական հասարակությանն առանձնահատուկ շատ երևույթներ:

«Խորհրդանշական կենտրոնի մոդելի» հիմնական առանձնահատկությունն այն է, որ դրանում չկա կենտրոնական գերագույն աստվածություն, այսինքն՝ այն առաջնորդը կամ ամենագորեղ ուժը, որի արարչագործ գորեղության շուրջ ձևավորվում է ներդաշնակությունը: Բայց եթե իրականում կենտրոնում ոչինչ չլիներ, ապա համակարգը կփլուզվեր, իսկ ներդաշնակությունը կխախտվեր, ուստի անհրաժեշտ է, որ կենտրոնում լինի խորհրդանշական բնույթի ուժի կրող, որը հանդես գա որպես կայունության և ներդաշնակության երաշխավոր: Ճապոնական դիցաբանությունում կենտրոնը, խորհրդանշելով համընդհանուր ներդաշնակությունը և շարունակականությունը, թեև օժտված է մեծ իշխանությամբ, բայց անգոր է: Նա անկարող է կառավարել բռնի ուժի կիրառմամբ կամ իր անձնական կամքից բխող սկզբունքներով ու օրենքներով: Միևնույն ժամանակ, հասարակության բոլոր անդամները գիտակցում են, որ կենտրոնի դեմ ընթացող և կխախտի համընդհանուր ներդաշնակությունը, և անգամ, երբ առաջանում են անդամների միջև վեճեր կամ նրանց ընդվզումներ, բոլորը համախմբվում են կենտրոնի շուրջը այնքան ժամանակ, քանի դեռ հնարավոր է անցնցում ապրել և խուսափել համընդհանուր ներդաշնակության խաթարումից: Ինչպես ճապոնական դիցաբանական պատկերացումներում, այնպես էլ հասարակական պրակտիկայում որևէ չափի խմբի դեկավարի հիմնական գործառույթը ընդհանուրի ներդաշնակության ապահովումն է: Հետևաբար նախապատվելի է, որ կենտրոնը, օգտագործելով իր խորհրդանշական իշխանությունը, հանդես գա ավելի շատ որպես միջնորդ, քան որպես առաջնորդ: Նման մեծ պատասխանատվություն ունեցող միջնորդը, որը, բնականաբար, կարող է ավելի արդյունավետ գործել, եթե նրա շուրջը տիրող իրավիճակը կայուն է և ներդաշնակ¹³⁹: Անվիճելի է, որ տվյալ հատկանիշները բնորոշ են մասն ճապոնացիների առաջնային և երկրորդային խմբային ինքնություններին, ինչի մասին համառոտ խոսեցինք վերևում: Ելնելով վերը ներկայացված քննարկումից՝

¹³⁹ Տե՛ս Kawai, նշվ. աշխ., էջ 151-153:

կարող ենք եզրակացնել, որ ճապոնացիների էթնիկական ինքնությանը հատկանշական խմբային ինքնագիտակցության ուժեղ արտահայտված լինելն ունի Ճապոնիայի պատմության վաղնջական, նույնիսկ՝ առասպելաստեղծ ժամանակաշրջաններից եկող արմատներ:

«Խորհրդանշական կենտրոնի մոդելը» կարող է օգտակար լինել Ճապոնիայի հետպատերազմյան փոխակերպումներին առնչվող բազմաթիվ խնդիրներ վերլուծելու համար: Մասնավորապես՝ ճապոնացիների էթնիկական ինքնության այս առանձնահատկությամբ կարելի է բացատրել նաև հետպատերազմյան արդիականացման գործում պետական կառավարման համակարգի ներդաշնակությունը: Այսպես, Ճապոնիայի պարագայում դա տեղի ունեցավ շնորհիվ բյուրոկրատիայի՝ քաղաքացիական ծառայողների բանակի, որը, մնալով անփոփոխ ու լինելով քաղաքականության իրական նախաձեռնողն ու կրողը, անկախ առերևույթ տնտեսական-քաղաքական գործընթացներից, ապահովում էր բարեփոխումների ներդաշնակությունը և շարունակականությունը: Դիցաբանությանը վերաբերող հատվածում մենք խոսեցինք «կենտրոնի» մեծ իշխանությամբ օժտված, սակայն անգոր լինելու մասին, ուստի անհրաժեշտ է այդ հանգամանքը մտազուգորդել Ճապոնիայի պատմության ընթացքում՝ մինչ օրս, կայսեր հաստատության՝ որպես հենց այդպիսի կենտրոնի ունեցած դերակատարության հետ, քանի որ այն դեռ միջնադարից սկսած օժտված է մեծ իշխանությամբ, որը, սակայն, ավելի շատ զուտ խորհրդանշական բնույթի է՝ ապահովելով համընդհանուր ներդաշնակությունը: Մեծ թվով հետազոտողներ, հիմնվելով հարուստ նյութի վրա, ներկայացրել են այն հսկայական դերակատարությունը, որը Ճապոնիայի արդիականացման գործում ունեցել է կայսեր հաստատությունը: Մասնավորապես՝ երկրորդ համաշխարհային պատերազմում կրած ծանր պարտությունից հետո այն հանդես եկավ որպես շարունակականության երաշխավոր, Ճապոնիայի պատմության իրար էականորեն հակադրվող երկու տարբեր՝ մինչպատերազմյան և հետպատերազմյան, շրջանները միմյանց կապող օղակ, որի կարևոր գործոն լինելու հանգամանքը նշվեց առաջին գլխում: Հարկ է նաև հավելել, որ Ճապոնիայի քաղաքական համակարգի պահպանողականությունը, զարգացման

անցնցում հողովույթը ունեն պատմական շատ խոր արմատներ (դեռ 603 թ. Սյոտոկու կայսրը Ճապոնիայում ներդրեց պալատական պաշտոնների աստիճանակարգության չինական մոդելը, որը որոշ կոկիչ շտկումներով, ըստ էության, անխախտ է մնացել մինչև մեր օրերը):

Ինչպես վերը նշվեց, դեռ 19-րդ դարի երկրորդ կեսին, բայց ավելի ծավալուն կերպով երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ճապոնական հասարակությանն ու ճապոնական մշակույթին նվիրված ուսումնասիրություններում որպես էթնիկական ինքնության կարևոր առանձնահատկություններ հաճախ շեշտվում էին հավատարմությունը, նվիրումը, ներդաշնակությունը, համաձայնությունը և այլն: *Նիհոնշինոն* շարժման համատեքստում ճապոնական հասարակությանը և հասարակական հարաբերություններին բնորոշ այս գծերին երբեմն հաղորդվում էր անգամ ծիսական իմաստ, իբր դրանք մշտապես առկա են հանրային կյանքի բոլոր բնագավառներում: Նման գիտական մոտեցումների գազաթնակետ դարձավ Չիե Նականեի «Ճապոնական հասարակություն» մենագրությունը, որում հեղինակը որպես ճապոնական հասարակության ամենագլխավոր ինստիտուցիոնալ ու մշակութային առանձնահատկություն առաջ քաշեց ուղղաձիգ կապերի և հաստատությունների տեսությունը: Նրա կարծիքով՝ ճապոնական հասարակությունում հանրային հաստատությունները գործում են ուղղաձիգ կապերի և աստիճանակարգության սկզբունքով՝ ի տարբերություն արևմտյան հասարակություններից, որտեղ գերակա են հորիզոնական կապերն ու հաստատութենական հարաբերությունները: Նականեն ուղղաձիգ կապերի ու ցանցերի տեսությամբ բացատրում էր նաև ճապոնական հասարակությանը վերագրվող ներդաշնակությունը, լոյալությունը, համաձայնությունը և այլ առանձնահատկություններ¹⁴⁰:

Մենք արդեն նշեցինք, որ պատմական զարգացումների վրա ունեցած ազդեցության տեսանկյունից էթնիկական ինքնությունն առավելագույն նշանակություն է ձեռք բերում այն ժամանակ, երբ մշակութային արմատական տեղաշարժեր ապրող հասարակություններում փոխվում է տվյալ հանրության համար

¹⁴⁰ Sſu Nakane Ch., նշվ. աշխ.:

համաշխարհային տեղեկատվական հոսքերի մատչելիության աստիճանը, երբ հանրային կյանքը բնութագրվում է գերազանցապես անորոշությամբ, անհանգստությամբ, հավաքական որակների դանդաղ, բայց տեսանելի փոխակերպումներով: Այս առումով զարմանալի չէ, որ հետպատերազմյան Ճապոնիայի արդիականացման գործընթացները, որոնք բնութագրվում էին վերը նշված հատկանիշներով՝ բացարձակ նոր իրավիճակով և արձատական փոփոխություններով, հենվում էին ճապոնական մշակույթի և էթնիկական առանձնահատկությունների բացառիկության տեսությունների վրա: Հարկ է նաև հիշատակել, որ ճապոնական հասարակությունը հաճախ բնութագրվում է որպես ոչ միայն խմբային, այլ երբեմն նաև՝ կլանային, քանի որ Ճապոնիայի հասարակական-քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքում էական դեր են խաղում ռազմական (*զումբացու*), ընտանեկան-տնտեսական (*ձայբացու*), քաղաքական (*հարբացու*) և նույնիսկ համալսարանական (*զակուբացու*) կլանները:

* * *

Հայտնի է, որ Ճապոնիայի արդիականացման երկու մեծ ալիքներից մեկը Մեիձիի հեղաշրջումն էր: Վերլուծելով տեղի ունեցած հեղափոխությունների բնույթը՝ Էյզենշտատը դրանց ծագման հիմքում դնում է երկու խումբ պատճառներ՝ կառուցվածքային և պատմական: Հեղափոխությունների առաջացման կառուցվածքային պատճառների շարքում նա առանձնացնում է իշխող վերնախավերի միջև առկա հակասությունները, իսկ դա իր հերթին ենթադրում է ածանցյալ բախում նրանց հենարանը կազմող սոցիալական խմբերի միջև, սոցիալական շարժունության աճում, պետական իշխանության թուլացում (հաճախ՝ արտաքին ճնշումների ազդեցությամբ) և նոր քաղաքական ուժերի ձևավորում: Հեղափոխությունների պատճառների պատմական մեկնաբանության ժամանակ նա շեշտը դնում է հասարակությունների՝ ավանդականից զարգացման նոր, ժամանակակից փուլի անցման հասարակական պահանջմունքի առկայության վրա¹⁴¹: Այս երկու

¹⁴¹ Տես Эйзенштадт С., *Конвергенция современных обществ: Предпосылки и границы на примере Японии*. «Япония в сравнительных социокультурных исследованиях». ИНИОН АН. СССР, Москва, 1990, էջ 46:

խումբը, ըստ էության, ոչ թե միմյանց հակասում են, այլ փոխլրացնում: Անվիճելի է, որ ավանդականից ժամանակակից հասարակությանն անցնելու պատմական պատճառներն առկա են եղել ինչպես Արևմուտքում, այնպես էլ Ճապոնիայում տեղի ունեցած հեղափոխությունների պարագայում:

Սակայն հետաքրքրական է նկատել, որ հեղափոխության՝ Էյզենշդադտի առանձնացրած կառուցվածքային պատճառներն առկա չէին 1867–1868 թթ.՝ Մեիձիի հեղափոխության ժամանակ: Պատճառն այն է, որ ի տարբերություն նոր ժամանակների առաջին հեղափոխություններից, որոնք տեղի ունեցան Եվրոպայում՝ իրենց մեջ կրելով ապակենտրոնացված Եվրոպայի ավատատիրական առանձնահատկությունները, Եվրոպայից դուրս հեղափոխությունները տեղի ունեցան կենտրոնացված պետություններում: Արևմտյան ավատատիրական-գաղութատիրական հասարակություններն իրենց մեջ կրում էին մի քանի քաղաքակրթությունների մշակութային և հաստատութենական առանձնահատկություններ, որոնց հիքմի վրա էլ այդ հասարակությունները ձևավորվել էին: Այդ իսկ պատճառով տվյալ հասարակությունների կառուցվածքում զգալի էր ուժեղ փոխներգործություն կենտրոնի՝ որպես խորհրդանիշի և ծայրամասի շատ հաճախ տարբեր մշակութային ու կրոնական խմբերի ու դրանց նույնքան տարբեր քաղաքական ընտրախավերի միջև: Արևմուտքում հենց այս ընտրախավերն էլ մեծ դեր ունեցան այլախոհության զարգացման, քաղաքական պայքարում ու գաղափարախոսություններում ուտոպիական և ունիվերսալիստական միտումների խորացման գործում: Նման պատմական պայմաններում՝ տարբեր ընտրախավերի միջև մոլոր մրցակցության և պայքարի համատեքստում, Արևմուտքում օրինաչափորեն ծնվում էր այդ գաղափարախոսությունների հիմքի վրա զուգամիտման հասարակական պահանջմունք: Եվ պատմականորեն այն հասարակություններում, որտեղ քաղաքակրթական կամ մշակութային նման զուգամիտության խնդիր չկար, ժամանակակից հասարակություններին անցումն ունեցավ արևմտյանից տարբեր՝ ոչ հեղափոխական, դրսևորումներ:

Չնայած նշված պատճառներին և հետևանքներին՝ արդյունաբերականացում, բարձր ուրբանիզացիա, իշխանության

կենտրոնացում, կառավարող վերնախավի փոփոխություն, Մեիծիի հեղաշրջումը նման էր արևմտյան հեղափոխություններին, սակայն, ինչպես ասվեց, ժամանակակից հասարակությանն անցման «հեղափոխականության» չափով այն նաև էապես տարբերվում էր արևմտյան փորձից: Պետության նոր կառավարողները իրենց իշխանությանը օրինականություն տալու և այն պահելու նպատակով հիմնվում էին ոչ թե ունիվերսալիստական և ուտոպիական գաղափարների վրա՝ իրենց իշխանությանը վերագրելով պատմական առաքելություն, այլ ճապոնական ավանդական հասարակությունը փոփոխելու, վերակառուցելու, ինչպես նաև կայսերական իշխանության պաշտամունքի գաղափարների վրա: Մեիծիի հեղափոխության ժամանակ չեղան այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են ձգտումը մտավոր կամ կրոնական ինքնավարության կամ առանձին խմբերի ձգտումը այլախոհության: Անշուշտ, Մեիծիի հեղափոխության այս առանձնահատկությունները քննարկելիս անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ այդ հեղափոխական զարգացումներն իրենց հերթին պայմանավորված էին Ճապոնիայի նախընթաց պատմության, հատկապես՝ ճապոնական ավատատիրության ու շրջանի՝ Տոկուգավայի ժամանակաշրջանի (1603–1867 թթ.) առանձնահատկություններով:

Տակեո Կուվաբարան ևս համաձայն է, որ Ճապոնիայի արդիականացման հարցում որոշիչ է եղել արևմտյան մշակույթի ազդեցությունը: Մինևույն ժամանակ, նա համարում է, որ Ճապոնիան յուրացրեց և ինչ-որ առումով զարգացման նոր մակարդակի հասցրեց մշակութային այն հսկայական փոխառությունը, որն իր ազգային-մշակութային շաղախի հետ մեկտեղ կազմեց Ճապոնիայի հետպատերազմյան մշակույթի հիմնական և անբաժան մասը¹⁴²:

Յուրաքանչյուր հասարակության մշակույթի տարբեր տարրեր կսկսեն վերանալ այն բանին զուգընթաց, որ աշխարհում տեղի ունեցող համընդհանրացման գործընթացները կհանգեցնեն մշակութային համահարթեցմանը և միասեռության ձևավորմանը,

¹⁴² Kuwabara T., *Japan and Western Civilization: Essays on Comparative Culture*, Tokyo, 1983, էջ 127:

և մարդկությունը, նրա առանձին մշակութային միավորները ինչ-որ առումով կանգնած կլինեն այդ տարրերի բնական ընտրության առջև, իսկ դա կողեկցվի ավանդական մշակույթի ոչնչացման շուրջ զանգվածային մտահոգություններով, ինչը տեսնում ենք այսօր միմյանցից տարբեր և աշխարհի տարբեր ծայրամասերում գտնվող հասարակություններում: Արևմտյան մշակութային հոգնականությունը (պլյուրալիզմ) համասեռ միավորների կամ խմբերի բազմազանությունն է, որոնք, վերջին հաշվով, հենվում են միևնույն մշակութային հիմքի վրա, օրինակ՝ կրոնի: Չնայած Արևմուտքում պատմականորեն գոյություն են ունեցել, ունեն և կունենան տարբեր եկեղեցիներ և աղանդներ՝ դրանց հիմքում կրոնական միևնույն սկզբունքն է՝ հավատը դեպի քրիստոնեական Աստված: Ճապոնիայում հակառակը՝ գործ ունենք տարասեռ միավորների և խմբերի հոգնականության՝ բազմազանության հետ, որի տարբեր տարրերն իրենց հիմքում ունեն տարբեր աշխարհայացքային համակարգեր: Ճապոնիայում բուդդայականության և սինտոյականության հետևորդների կողքին կան մահ քրիստոնեություն դավանողներ: Սակայն Ճապոնիայում պատմականորեն երբեք նկատելի չի եղել այլաձին կրոնական ուղղությունների միջև որևէ բախում կամ մույնիսկ սուր մրցակցություն, ինչը չի կարելի ասել Եվրոպայի մասին:

Ճապոնական մշակութային հոգնականության կարևոր հատկանիշներից մեկն այն է, որ այդ համակարգի տարբեր՝ այլաձին, տարրեր հասցրել են խոր արմատներ ձգել յուրաքանչյուր անհատի մեջ, ինչը դրևորվում է կյանքի տարբեր ոճերի, տարբեր ճաշակների, տարբեր ձևերի մտածողության և սովորույթների ներդաշնակ համակեցության մեջ: Մերօրյա Ճապոնիայում ամենուր կարելի է տեսնել մշակութային հոգնականության մահա դրսևորումներ: Օրինակ՝ շատ ճապոնացիներ երեխայի ծննդյան կամ հարսանեկան արարողություններ ու ծեսեր կատարում են ըստ սինտոյական պաշտամունքի, մինչդեռ նույն մարդիկ մահացածներին հուղարկավորում են համաձայն բուդդայական սովորույթների և նախնիների պաշտամունքն իրականացնում են բուդդայական տաճարներում, իսկ իրենց առօրյա կյանքում առաջնորդվում են հիմնականում կոնֆուցիական բարոյականության նորմերով: Եվ այս ամենն այն դեպքում, երբ ճապոնական ընտանիքներում

արդեն սկսել են նկատելիորեն արմատներ ձգել քրիստոնեական բարոյականության սկզբունքները:

Անհատի մակարդակով մշակութային հոգնականության դրսևորման մեկ այլ խոսուն վկայություն կարող է լինել միջին ճապոնացու վերաբերմունքը թերթերին և ամսագրերին: Օրինակ՝ միջին ճապոնացին տանը կարող է ընթերցել մեծ հեղինակություն վայելող և լայն տարածում ունեցող որևէ օրաթերթ, աշխատատեղում՝ ֆինանսական ամսագրեր և տնտեսական տեղեկատվություն պարունակող հրապարակումներ, իսկ աշխատանքի գնալիս կամ տուն վերադառնալիս՝ պոռնոգրաֆիկ նյութերով հագեցած որևէ ամսագիր կամ շաբաթաթերթ: Այս առումով ճապոնացի ընթերցողն էապես տարբերվում է արևմտյան ընթերցողներից, որոնք հիմնականում օգտվում են իրենց մասնագիտական հետաքրքրությունները և մտավոր մակարդակը արտացոլող նեղ մասնագիտացված թերթերից և հանդեսներից:

Ճապոնական մշակութային հոգնականությունը, ըստ որոշ ուսումնասիրողների, ունի նաև պատմական խոր արմատներ և չի սահմանափակվում Մեիծիի հեղափոխությունից կամ երկրորդ աշխարհամարտից հետո Ճապոնիայի «բացվելու» հետևանքով արևմտյան մշակույթի ազդեցության ուժեղացմամբ: Ավելի վաղ ժամանակներում ճապոնական մշակույթի մեջ այն համակցել է չինական, կորեական, իսկ երբեմն միջնորդավորված, կամ ոչ միջնորդավորված, կամ չինական տարբերակով նաև առաջավորասիական կամ հնդկական մշակույթին բնորոշ տարրեր: Այսպես, ճապոնացիները գրային հիմնական համակարգը՝ գաղափարագրերը, վերցրել են Չինաստանից, բուդդայականությունը՝ Հնդկաստանից, ճենապակին՝ Կորեայից:

Ճապոնական մշակութային հոգնականության ձևավորման գործում մեծ դեր են ունեցել Ճապոնիայի պատմական փորձը և աշխարհագրական դիրքը: Շրջապատված լինելով համաշխարհային օվկիանոսով և պատմական շատ երկար ժամանակաշրջան ապահովված լինելով նվաճումներից ու ներխուժումներից՝ Ճապոնիան կարողացել է այլ մշակույթներից համաչափորեն վերցնել, յուրացնել ու ճապոնականացնել տարբեր գաղափարներ, արժեքներ ու ճաշակներ: Մյուս կողմից՝ քանի որ դասական ընկալմամբ Ճապոնիան երբեք չի եղել մաքուր գաղութատիրական

կայսրություն, իսկ գաղութատիրության ծավալման համար անհրաժեշտ է լինում մշակել հատուկ մշակութային գաղափարախոսություն և ռազմական ուժով նվաճվող տարածքներում այն տարածել, ճապոնական գաղութատիրությունը չուղեկցվեց ճապոնական մշակույթի հեգեմոնությունը քարոզող գաղափարախոսությամբ, ինչն էլ իր հերթին կանաչ լույս վառեց մշակութային հոգնականության հետագա խորացման համար: Տվյալ խնդրի լավատեղյակ ուսումնասիրողներից Յամաձակի Մասակաձուն հենց մշակութային հոգնականության հանգամանքով է բացատրում ճապոնացիների հոգեկերտվածքի և բնավորության առանձնահատկություններից շատերը՝ այն անվանելով «ազնոստիցիզմ առանց նիհիլիզմի»¹⁴³:

Մինևույն ժամանակ, հարկ է նկատել, որ ճապոնական մշակույթի հոգնականության առանձնահատկությունների վերհանումը հնարավորություն է տալիս հասկանալու ճապոնացիների՝ այլ մշակույթների կրող մարդկանց համար իրարամերժ կամ տարօրինակ վարքային շատ դրսևորումներ, օրինակ, հասկանալու, թե ինչպես է թեյախմությունն ուղեկցող աննկարագրելի հանգստությունը գուգակցվում ճապոնացիների գործարար կամ, պատկերավոր ասած, «տնտեսական կենդանու» կերպարի հետ:

Ճապոնացիների էթնիկական ինքնությանը բնորոշ այն առանձնահատկությունը, որը բերվում է որպես նոր կամ օտար գաղափարների հեշտ յուրացման համար կարևոր գործոն, մասնագիտական գրականության մեջ երբեմն կապվում է նաև Ճապոնիայի բնակլիմայական պայմանների հետ: Ճապոնացիները վաղնջական ժամանակներից ապրել են բնակլիմայական ու տարերային աղետների մշտական վտանգի տակ: Երկրաշարժները, թայֆունները և ջրհեղեղները անընդհատ մեծ աղետներ են պատճառել ճապոնացիներին՝ քանդելով տները, կամուրջները և տնտեսական կառույցները: Այս հարատև գործոնների ազդեցությամբ ճապոնացիները տներն ավանդաբար շինել են փայտից և թղթից: Ճապոնացիների կենսափորձը վկայում էր, որ մարդու կողմից սարքված ամեն ինչ հավերժ չէ, որ տան պատերը

¹⁴³ Masakazu Y., *The Impact of Japanese Culture on Management in "The Management Challenge: Japanese Views"* edited by Thurow L.C. Cambridge, 1985, էջ 39:

մարդուն չեն կարող պաշտպանել բնության խորհրդավոր ուժերից և աղետներից: Այս կենսափորձն օգնեց ընդունելու բուդդայականության այն դրույթի ճշմարտացիությունը, թե «ամեն ինչ փոփոխական է, այն, ինչ ունի ձև, քանդվում է»: Ճապոնացիների կենսափորձը հուշում էր, որ տները պետք է մշտապես վերակառուցվեն և կատարելագործվեն: «Ամեն ինչ փոփոխական է, այն, ինչ ունի ձև, քանդվում է» արտահայտությունը նշանակում է, որ ամեն բան պետք է նորոգվի, ամեն բան կարելի է կատարելագործել: Այս ամենը խոր ազդեցություն է թողել ճապոնացիների նյութական մշակույթի տարբեր տարրերի ընկալման և դրանց նկատմամբ ունեցած վերաբերմունքի վրա:

Շատ է գրվել նաև ճապոնացիների էթնիկական բնավորության մեկ այլ առանձնահատկության՝ ջանասիրության, կամ աշխատասիրության, մասին: Ճապոնացի գյուղացին իր ամբողջ հոգով նվիրվում է դաշտում եղած բերքը խնամելուն և «24 ժամ ապրում է իր ցանած դաշտերի համար, նրա հետ ընտանիքի բոլոր անդամները ևս հավասարապես պատասխանատվություն են կրում դաշտերը խնամելու համար¹⁴⁴»: Աշխատանքի նկատմամբ մեծ վերաբերմունք դրսևորվում է նաև արդյունաբերության մեջ ու գործարանային միջավայրում:

Ճապոնիայի պատմաաշխարհագրական առանձնահատկությունները պայմանավորեցին շրջապատող բնության նկատմամբ ճապոնացիների ստեղծագործական մոտեցումը. բնական պայմանները և միջավայրը, վերջինիս յուրացումը մարդուն մղում էին շարունակական կատարելագործման և փոքր հողակտորների առավել արդյունավետ մշակման համար նոր տեխնոլոգիաների ստեղծման: Բնավորության այս գիծը՝ ձգտումն առավելագույն արդյունավետությանը, մեծապես նպաստեց նաև հետպատերազմյան տեխնոլոգիական առաջընթացին:

Չինացի հետազոտող Չեն Բանխեն նկատում է. «եթե համաձայնվենք այն պնդման հետ, որ յուրաքանչյուր պատմամշակութային գոտում առկա է մշակութային որևէ ներքին միջուկ կամ

¹⁴⁴ Ермакова Л., Тацуо О.: *Вы немцы – мы японцы. Сравнение менталитета и образа мышления. "Япония в сравнительных социокультурных исследованиях"*. ИНИОН АН СССР, Москва, 1990, էջ 95:

օջախ, ապա Արևելյան Ասիայի պարագայում այդ դերում հանդես է եկել Չինաստանը, իսկ Ճապոնիան եղել է դրա արտաքին կեղևը¹⁴⁵»։ Նա, ճապոնական մշակույթի վրա չինականի գործած ազդեցությանը վերագրելով կենսաքանական բնույթ, պատկերավոր կերպով համեմատում է երկու ցիտրուսային կուլտուրաների՝ նարնջի և մանդարինի հետ, երբ առաջինը երկրորդի տարատեսակն է և սերված է նրանից։ Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ցանկացած սկզբնական կամ նախագո մշակույթ, պատվաստվելով որևէ վայրակի, սկսում է բնական ճանապարհով ինքնափոխվել։ Չինական մշակույթից փոխառված տարրերը Ճապոնիայում վերամշակվեցին և օրգանապես միահիյուսվեցին ճապոնական ավանդական մշակույթին՝ վերջինիս հաղորդելով ավելի ինքնատիպ դիմագիծ։ Այս տեսակետի կողմնակիցները կարծում են, որ նախագո կամ սկզբնական մշակույթը սովորաբար լինում է ավելի պահպանողական, մինչդեռ երկրորդային, կամ «դուստր», մշակույթը ավելի շարժունակ է և պատրաստ փոխակերպումների ու յուրացումների։ Սրանով ևս կարելի է բացատրել ճապոնական մշակույթի ունակությունը արագորեն յուրացնելու՝ ճապոնականացնելու, օտար մշակույթներից, այդ թվում և արևմտյան արդյունաբերական-արտադրական պրակտիկայից, վերցված տարրերը։

Ճապոնական ավանդական մշակույթին բնորոշ առանձնահատկություններից մեկը հավատարմությունն է՝ հավատարմությունը ծնողներին, կայսրին, աշխատանքային կոլեկտիվին և այլն։ Հավատարմության արտահայտման լավագույն ձևերից մեկը խտացված է ճապոնական ասությամբ՝ «ոչ ոք չի կարող միաժամանակ ծառայել երկու տիրոջ»։ Խմբային ինքնությանն ու հավաքական շահերին հավատարմությունն ու նվիրվածությունը հետպատերազմյան Ճապոնիայում կարողացան յուրաքանչյուր ճապոնացու վերածել, այսպես կոչված, «20-րդ դարի սամուրայի», որը, գործելով մեծ նվիրումով և անշեղորեն ձգտելով դեպի նախանշված նպատակը, պայմանավորեց աշխատուժի բարձր

¹⁴⁵ Котова Р., Япония и Китай в культурно-компаративистских исследованиях китайских ученых. «Япония в сравнительных социокультурных исследованиях». ИНИОН АН СССР, Москва, 1990, էջ 98:

արդյունավետություն, ինչն էլ իր հերթին նպաստեց հետպատերազմյան Ճապոնիայի տնտեսական առաջընթացին:

Արդեն արդիականացած Ճապոնիայի մյուս էական առանձնահատկությունը կապվում է եկամուտների հավասարաչափ բաշխման հետ, ինչը որոշ ուսումնասիրողների առիթ է տալիս եզրակացնելու, որ մերօրյա Ճապոնիան դասակարգերից զուրկ հասարակություն է, այս տեսակետից աշխարհում եզակիներից մեկը: Մերօրյա Ճապոնիայում սոցիալական հողի վրա դասակարգային ընդհանուր շահերի գիտակցության շատ թույլ արտահայտվածությունը, չնայած մարքսիստական և կոմունիստական կողմնորոշում ունեցող որոշ կուսակցությունների գաղափարախոսություններին և բավական ակտիվ գործունեությանը, իմ գրուցակիցներից մեկի կարծիքով, որոշակի առնչություն ունի ճապոնացիների խմբային, մասնավորապես՝ էթնիկական, ինքնագիտակցության հետ: Այսպես, ըստ Նոբուկիի՝ սոցիալական կայունությունը և դասակարգային գիտակցության շատ թույլ արտահայտվածությունը նպաստել են այն բանին, որ, ի տարբերություն շատ արևմտյան հասարակություններից, խմբային ինքնության խնդիրներում դասակարգային ընդհանուր շահերը Ճապոնիայում բացակայում են, ինչն էլ իր հերթին պայմանավորում է էթնիկական, հավաքական ինքնագիտակցության բավական ուժեղ արտահայտումը¹⁴⁶:

* * *

Ժողովուրդների, այդ թվում նաև ճապոնացիների, պատմության հենքում նրանց մղած պատերազմների մասին հիշողությունն է: Այդ պատերազմները, տարած հաղթանակներն ու կրած պարտությունները, դրանց հետևանքների հաղթահարումը կազմում են յուրաքանչյուր ժողովրդի պատմության կենտրոնական, իսկ երբեմն նաև՝ պատմությունաստեղծ առանցքը: Իսկ ինչու՞ են դրանք այդքան մեծ նշանակություն ստանում էթնիկական ինքնության, ժողովրդի հավաքական հատկությունների կարծրացման, դրանց նվազման կամ փոխակերպման գործում: Ինչու՞ են պատերազմները դառնում էթնիկ միասնականության գիտակցման ուժեղացման և համախմբման կարևոր գործոն:

¹⁴⁶ Հարցազրույց Նոբուկի Սուգիտայի հետ, Տոկիո, 2002 թ. հոկտեմբերի 11:

Պատերազմը՝ որպես հավաքական ինքնության և գոյապահպանության խաթարմանն ուղղված արտաքին կամ ներքին մարտահրավեր, համահարթեցնում է սոցիալական, տարածաշրջանային, դասային և այլ տարբերություններ՝ գերակա ու մարդու վարքագիծը պայմանավորող դարձնելով ինքնության էթնիկական, ազգային շերտը: Այս ամենը հատկապես ճշմարիտ է տարբեր պետությունների միջև մղված ազգային պատերազմների դեպքում, մինչդեռ առավել մեծ տրամաչափի վտանգների կանխման և չեզոքացման համար վերջին շրջանում պատերազմներն արտաքնապես մղվում են ոչ թե տարբեր ժողովուրդների ու երկրների, այլ, ըստ էության, տարբեր գաղափարախոսությունների և աշխարհի զարգացման տարբեր տեսլականների միջև: Մեր համոզմամբ՝ այս մոտեցումը անմիջականորեն առնչվում է նաև համընդհանրացման ժամանակակից փուլի հետ, երբ ի հայտ է գալիս համաշխարհային մարտահրավերների դեմ առաջադեմ և համընդհանրացող մարդկության ընդհանուր ճակատով պայքարի անհրաժեշտությունը:

Երկրորդ համաշխարհային պատերազմում Ճապոնիայի կրած պարտությունը ևս կարևոր դերակատարություն ունեցավ հետպատերազմյան զարգացումների վրա էթնիկական ինքնության ազդեցությունը պայմանավորելու գործում: «Պարտությունը և պատերազմի ծանր հետևանքները ճապոնացիների հավաքական գիտակցության մեջ բյուրեղացրին պատերազմին Ճապոնիայի մասնակցության անիմաստությունը: Արտաքին ուժերից կրած վերջնական պարտությունը, իրավիճակի անփոփոխելիությունը, նկատելի դարձած թերարժեքության համախտանիշը ճապոնացիների էթնիկական ինքնությունը մղեցին նոր որոնումների, որտեղ կրած դառը պարտության համար վրեժխնդրության միակ հնարավոր եղանակ էին դառնում երկրի վերակառուցումը, պատերազմի հետևանքների վերացումը և զարգացումը: Թեև խնդիրն առավել խոր ուսումնասիրությունների և պարզաբանումների կարիք ունի, սակայն նույնիսկ մակերեսորեն նկատելի էր ճապոնացիների անվերապահ նվիրումը երկրի հետպատերազմյան վերականգնմանը և արդիականացմանը, ինչը որոշ առումով իր մեջ կրում էր

ամենօրյա աշխատանքով «թշնամուց» վրեժ լուծելու մի յուրօրինակ հավաքական մղում¹⁴⁷»:

Զարգացնելով պատերազմում կրած ծանր պարտության՝ որպես տնտեսաշինության մեջ էթնիկ մոբիլիզացիային և հավաքական մվիրումին նպաստած կարևոր գործոնի մասին թեզը՝ Օրգանսկին և Կուզլերը համարում են, որ ջախջախիչ պարտության հավաքական ընկալումը օգնեց մեծացնելու երկիրը պատերազմի ավերակներից ազատելու ճապոնացիների մվիրումը և, ըստ էության, սկիզբ դրեց ժամանակի մեջ հեքիաթային թվացող՝ զարգացման «փյունիկի ֆենոմենին»¹⁴⁸:

Պատերազմի ժամանակ առավել ուժեղանում է միևնույն պետության սահմաններում ապրող քաղաքացիների (ընտրախավ, թե հասարակ քաղաքացիներ) կենսաբանական կապը *Schicksalsgemeinschaft*-ի՝ միևնույն ճակատագիրը կրող համայնքի հետ: «Պարտությամբ ավարտված պատերազմը ևս կարող է ծնունդ տալ ազգայնական սենտիմենտների, երբ ազգի գաղափարը և հավաքական ինքնության որևէ այլ դրսևորում դառնում են խորհրդանշային, ինչը մարդկանց մղում է ընդունելու, հիմնավորելու մեծ գոհողություններն ու կորուստները: Նման պարագաներում հրապարակ են նետվում այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ «նրանք զուր չեն զոհվել», «նրանք զոհվել են հանուն հայրենիքի», «իրենց կյանքը զոհաբերել են մյուսների կյանքն ապահովելու համար » »¹⁴⁹: Նմանատիպ արտահայտությունները խորթ չէին հետպատերազմյան ճապոնիային ևս: Ինչպես պատերազմում կրած ծանր պարտության, այնպես էլ հետագայում արագ արդիականացման և տնտեսական գերտերության վերածման հետևանքով մման հարցադրումները գնալով ավելի ակտիվացան և նպաստեցին ճապոնիայի անցյալի վերաբերյալ գիտական ու հասարակական լայնածավալ քննարկումներին, պատմության վերագնահատմանը, վերաարժեքավորմանը, ինչն ավելի հանգամանորեն քննության կենթարկենք սույն աշխատության հաջորդ գլխում:

¹⁴⁷ Հարցազրույց Տեցուկո Կոսետոյի հետ, Տոկիո, 2002 թ. հոկտեմբերի 19:

¹⁴⁸ Organski A. and Jacek Kugler, The Costs of Major Wars: The Phoenix Factor, *The American Political Science Review*. 1997, v. 71, էջ 1347-1366:

¹⁴⁹ Fujiwara K., History and Nationalism. "Japan Echo", 2001, v. 28, N 4, էջ 38:

Ավելացնենք, որ ճապոնացիների էթնիկական ինքնության առանձին տարրերի վրա երկրորդ համաշխարհային պատերազմի ունեցած շարունակական ազդեցության վկայություններն են ոչ միայն Ճապոնիայի պատմության այդ հատվածի վերաբերյալ պատմաբան մինչ օրս չդադարող փորձերը, այլև այն, որ ճապոնական պետական վերնախավը՝ վարչապետների և կառավարության այլ անդամների մակարդակով, չնայած հարևան երկրների և միջազգային հանրության ուժգնացող ճնշումներին, ամեն տարի այցելում է հայտնի Յասուկունիի տաճարը՝ հարգանքի տուրք մատուցելու երկրորդ համաշխարհային պատերազմում զոհված ճապոնացիների հիշատակին: Մինչդեռ հայտնի է, որ Յասուկունիի սինտոյական տաճարը, որը գտնվում է Տոկիոյի կենտրոնում, «նվիրված է բոլոր այն մարդկանց հոգիներին, որոնք պատերազմների ժամանակ զոհվել են հանուն ազգի»¹⁵⁰։ այդտեղ են ամփոփված նաև երկրորդ աշխարհամարտին Ճապոնիայի մասնակցությունը սանձազերծած շատ ռազմական գործիչների, Տոկիոյի տրիբունալի կողմից պատերազմի հանցագործներ ճանաչված զինվորականների, այդ թվում գեներալ Տոջո Հիդեկիի, անունը: Ճապոնացիների էթնիկական ինքնության հետ պատերազմի փոխառնչության վկայությունն է նաև այն փաստը, որ հետպատերազմյան տնտեսական զարգացման շրջանը ճապոնեթն կոչվում է ոչ թե անցումային, ինչպես ընդունված է տնտեսագիտության մեջ, այլ հետպատերազմյան՝ *սենզո*:

Վերջին տասնամյակների համաշխարհային փորձը ևս ապացուցում է, որ պատմական անցյալի ընկալումն ու մեկնաբանումը պայմանավորված են ամենատարբեր հանգամանքներով, ինչի հետևանքով պատմագիտությունը շատ հաճախ վերածվում է պետական, ազգային կամ իշխող ընտրախավի՝ տվյալ պահի քաղաքական շահերն սպասարկող և զգացմունքայնությամբ շաղախված մի անկայուն գիտաճյուղի: Այս առումով 20-րդ դարի վերջն ու 21-րդ դարի սկիզբն ամենևին էլ աչքի չընկան ժողովուրդների առօրյա կյանքում պատմության ու պատմական անցյալի դերի նվազմամբ, ինչպես կանխատեսվում էր շատ

¹⁵⁰ Յասուկունիի տաճարի մասին ավելի հանգամանորեն տես <http://www.yasukuni.or.jp>:

հետազոտողների կողմից, որոնք ելնում էին համընդհանրացման երևույթների ներքին տրամաբանությունից: Հակառակը՝ զանազան երկրների ու ժողովուրդների պարագայում ամենատարբեր մակարդակներում շարունակվեցին պատմության՝ տարբեր գործոններով պայմանավորված վերանայման, վերագնահատման և վերափմաստավորման փորձերը: Պատմական անցյալի համընդհանուր վերանայման ու վերաարժեքավորման գնալով թափ առնող այս հոսանքը շեշտը հիմնականում դնում է պատմական անցյալի այն խնդիրների վրա, որոնք կարևոր են ներկան ավելի հասկանալի և ընդունելի դարձնելու համար՝ ինչպես անհատական, այնպես էլ խմբային ամենատարբեր մակարդակներում: Այստեղ շատ հաճախ որպես մեկնակետ հանդես է գալիս ոչ թե փաստացի անցյալը, այլ պատմության այսպես կոչված ֆեմոմենոլոգիական ընկալումը, երբ անցյալն սկսվում է այնտեղից, որտեղից տվյալ պահին սկիզբ է առնում հավաքական հիշողությունը:

Գաղտիք չէ, որ էթնիկական ինքնության տարբեր տարրերի փոխակերպման վրա ազդեցություն գործելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն զանազան պատմական անցքեր ու երևույթներ: Հոգեբանական գրականության մեջ հիմնավորված է այն պնդումը, որ հոգեկան ողբերգություն ապրած անհատը այդ վիճակից դուրս գալու ելքը հաճախ տեսնում է իր ապրածը վերաարժեքավորելու, այնտեղ նոր մեկնակետ հայտնաբերելու ու իր ներկան այդ մեկնակետի տրամաբանությամբ իմաստավորելու մեջ¹⁵¹: Նույն կերպ պատմությանը հայտնի են շատ դեպքեր, երբ տարբեր ժողովուրդների ազգայնականության ծնունդը անցումային, մեծ փոփոխությունների և խառնակ ժամանակաշրջաններում ուղեկցվում է պատմական անցյալի վերանայմամբ, վերաարժեքավորմամբ և ցանկալի ապագայի տեսլականը անցյալից սնող կենարար արմատների որոնմամբ:

* * *

Պատմության շարադրման, հավաքական հիշողության մեջ անցյալի բյուրեղացման գործում այսօր մեծ է լրատվամիջոցների դերակատարությունը: Հավաքական հիշողության մեջ անցյալը

¹⁵¹ Sten Bergstrom J., *Discourses on History in Postwar Japan*, 2001:

հատակեցնելու և պատմության մեկնաբանությունը ժամանակի պահանջներին համապատասխան կատարելու գործում թերթերը, հանդեսները, ֆիլմերը, լայն սպառում ունեցող գեղարվեստական զրականությունը, երգիծական նկարները, զանգվածային մշակույթի այլ տարրեր ստանում են ոչ պակաս նշանակություն, քան գիտական պատմագրությունը: Այդ առումով կարելի է պնդել, որ պատմությունը և անցյալը դառնում են ոչ միայն պատմագրության, այլև զանգվածային մշակույթի մենաշնորհ: Ճապոնական հետպատերազմյան պատմագրության օրինակը ցույց է տալիս, որ հասարակության ամենատարբեր խմբերի կողմից պատմությունն օգտագործվում է ամենատարբեր նպատակներով՝ ներկան արժեքավորելու, ապագայի քաղաքական տեսլականը հիմնավորելու, էթնիկական ինքնագիտակցության տարբեր դրսևորումներ կարծրացնելու կամ սրելու, առանձին խնդիրների նկատմամբ ազգային միասնություն ապահովելու և այլ նպատակների համար: Ճապոնական օրինակից հետևում է, որ պատմությունն իր վրա կրում է ոչ միայն անցյալի, այլև ներկայի կնիքը:

Ճապոնական հասարակությունում պատմության գնահատման և վերանայման հոսանքներն առավելապես ինտենսիվացան 20-րդ դարի վերջին քառորդում: Դա պայմանավորված էր ինչպես ներհասարակական, այնպես էլ միջազգային ու տարածաշրջանային տնտեսական, քաղաքական և մշակութային տարբեր գործոններով: Այդ իսկ պատճառով մենք կանգ կառնենք հատկապես 1990-ական թվականների վերջերին պատմության վերագնահատմանն ու վերաարժեքավորմանն ուղղված, քաղաքականացված զանգվածային մշակույթին բնորոշ մի քանի դրսևորումների վրա՝ փորձելով ներկայացնել նաև այն հնարավոր ազդեցությունը, որ քաղաքականացված զանգվածային մշակույթը՝ որպես *Նիհոն-ձինոոնի* և *Նիհոնբունկառոնի* մերօրյա յուրահատուկ դրսևորում, կարող է ունենալ ճապոնացիների էթնիկական ինքնության հետագա փոխակերպումների վրա:

1998 թ. սկզբին ամերիկաբնակ չինացի Իրիս Չանգը հրատարակեց «Նանկինի բռնաբարությունը» գիրքը, որը կարճ ժամանակում ձեռք բերեց ընթերցողների լայն շրջան: Սակայն հարկավոր է նշել, որ այդ փաստն ինքնին կապված էր ոչ թե դրա պատմական

բովանդակության և պատմագիտական ու աղբյուրագիտական արժեքի կամ էլ այն իրադարձության համատեքստի հետ, որի վրա հիմնվում էր Չանգի աշխատությունը: Այդ երկու առումներով էլ ինչպես Ճապոնիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս գրվել են բավականին հարուստ աղբյուրագիտական հենքի վրա խարսխվող բազմաթիվ աշխատություններ՝ նվիրված Նանկինի հայտնի պատմական դեպքերին¹⁵²: Սակայն Չանգի աշխատությունը դրանցից տարբերվում էր իր բնույթով և քաղաքական նկատառումներով: Այս գիտագեղարվեստական աշխատությունը նախաձեռնվեց ԱՄՆ-ում գործող չինական տարբեր գիտակրթական ու մշակութային կազմակերպությունների կողմից և վայելեց նրանց օժանդակությունը: Իրականում այն նպատակ էր հետապնդում հանդես գալ որպես ԱՄՆ-ում բնակվող չինացիների հավաքական, համայնքային միասնությանը նպաստող գաղափար՝ ծնված երկրորդ աշխարհամարտի տարիներին ճապոնացիների կողմից գործած և դեռևս չդատապարտված «նոր ողջակիզման» դեմ բողոքի արդարացի ձայն բարձրացնելու պահանջից¹⁵³: Չնայած Չանգի աշխատությունն ուղղված էր առաջին հերթին միջազգային հասարակայնությանն ու ԱՄՆ-ում բնակվող միլիոնավոր չինացիներին՝ դրա հրատարակումից կարճ ժամանակ անց այն դարձավ պատմական ոչ վաղ անցյալի՝ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի վերանայման ու վերագնահատման շուրջ բուն Ճապոնիայում ձեռնարկված լայնածավալ քննարկումների ու բանավեճերի կարևոր առարկա:

1998 թ. մայիսին ճապոնական կինոթատրոնների էկրաններին հայտնվեց «Հպարտություն. ճակատագրական պահը» ֆիլմը, որը նվիրված էր Տոկիոյի ռազմական տրիբունալի կողմից պատերազմի հանցագործ ճանաչված և մահվան դատապարտված՝ պատերազմական Ճապոնիայի վարչապետ գեներալ Տոջո

¹⁵² Տե՛ս, օրինակ, Honda K., *The Nanking Massacre: A Japanese Journalist Confronts Japan's National Shame*. (Originally in Japanese published 1987 by Asahi Shimbun Publishing Co.). English version translated by Sandness K., Armonk, Sharpe M., 1999: Թե՛մայի վերաբերյալ ավելի հանգամանորեն տես Yoshida T., *A Battle over History in Japan, The Nanking Massacre in History and Historiography*: Joshua Fogel (ed.). Berkeley, University of California Press, 2000:

¹⁵³ Տե՛ս Bergstrom, նշվ. աշխ., էջ 5:

Հիդեկիին: Ֆիլմում նա ներկայացված էր որպես ազգային հերոս և ճապոնական ժողովրդի մեծ հայր: Զաղաքական նկատառումներով նկարահանված այս ֆիլմը առաջ բերեց ոչ միայն Ճապոնիայի ոչ վաղ անցյալի պատմության հարցում տարընկալումներ ունեցող հարևան երկրների, այլև առաջադեմ ճապոնական մտավորականության բուռն հակազդեցությունը, ինչի հետևանքով ֆիլմը դարձավ պատմական անցյալի շարունակական քննարկումների նոր առարկա: Դիշտ այն ժամանակ, երբ վերը նշված ֆիլմը հաջողությամբ ցուցադրվում էր ճապոնական կինոթատրոններում, նկարահանվեց պատմական նույն խնդիրներին նվիրված, սակայն իր գնահատականներով ու մեկնաբանություններով տրամազծորեն հակառակ մեկ այլ ֆիլմ, որի ցուցադրումներից մեկի ժամանակ Յոկոհամայում աջակողմյան-պահպանողական մտավորականության հրահրմամբ պահպանողական հայացքներ ունեցող մի տեղացի երիտասարդ, բեմ բարձրանալով, դանակով պատռեց էկրանը, ինչն էլ դիտորդներից մեկին առիթ տվեց կարծիք հայտնելու, որ «տպավորություն է ստեղծվում, թե երկրորդ աշխարհամարտը դեռ շարունակվում է, բայց այս անգամ՝ կինոթատրոնների էկրաններին»¹⁵⁴: Այս ամենից շատ չանցած՝ լայն սպառման շուկա հանվեց բանաստեղծ Կոբայասի Յոշիհորիի «Պատմվածքներ պատերազմի մասին» ստեղծագործությունը՝ պատմության վերանայման և վերագնահատման ցայտունորեն արտահայտված շեշտադրումներով: Այն նպատակ ուներ ճապոնական երիտասարդությանը ներկայացնելու երկրորդ համաշխարհային պատերազմի հետ կապված «ամբողջ ճշմարտությունը» և նրանց դաստիարակելու հայրենասիրության ոգով: Թեև այս ստեղծագործությունը ևս առաջ բերեց ճապոնական առաջադեմ մտավորականության վրդովմունքն ու հակազդեցությունը, սակայն առաջին իսկ շաբաթվա ընթացքում վաճառվեց կես միլիոն տպաքանակով, ինչը նման գրքերի համար բավական մեծ թիվ է նույնիսկ Ճապոնիայում:

¹⁵⁴ Gaoette N., *Frustrated Japanese Revise Past*. "Christian Science Monitor", June 22, 1998:

Անցյալի ներկայացման այս զանգվածային մշակութային դրսևորումներից բացի, այսպես կոչված «հանրաժանոք պատմության» և գիտական աշխատությունների միջանկյալ գոտում ծնունդ էին առնում Ֆոժիոկա Նոբուկացուի, Վատանաբե Շոիցիի, Նիշիո Կանձիի և ուրիշների գրած բազմաթիվ այլ ստեղծագործություններ, որոնք իրենց հերթին թափ էին հաղորդում անցյալի և հատկապես երկրորդ աշխարհամարտի պատմության վերանայման ալիքի տարածմանը:

* * *

Ամփոփելով սույն գլուխը՝ կարող ենք նշել, որ Ճապոնիայի հետպատերազմյան բացառիկ արդիականացումը պայմանավորող հիմնական գործոններից մեկը ճապոնացիների էթնիկական ինքնությունն էր. դարերի ընթացքում բյուրեղացած ազգային առանձնահատկությունները հետպատերազմյան իրողությունների պայմաններում իրենց դրոշմը թողեցին պատմական զարգացումների վրա: Մյուս կողմից՝ Ճապոնիայի հետպատերազմյան զարգացումները վկայում են, որ հասարակական ճգնաժամը, անորոշությունը և անցումային անհանգստությունը կարող են պարարտ հող ստեղծել հասարակական զարգացումներում էթնիկական ինքնության դերակատարության աճման և շատ հաճախ այդ հիմքի վրա քաղաքականացված ազգայնական գաղափարախոսությունների հզոր ալիքների ձևավորման համար:

Ինքնության անհատական ու հավաքական շերտերի հարաբերակցությունում հավաքականի անվերապահ առաջնությունը հետպատերազմյան շրջանում ճապոնացիների էթնիկական ինքնության փաստված առանձնահատկություններից մեկն է, որը էական ազդեցություն գործեց հետպատերազմյան արդիականացման տնտեսական ու քաղաքական հարթություններում: Ճապոնացիների խմբային գիտակցությունը կանխորոշեց հանրային ու քաղաքական մի շարք գործընթացների միագիծ, սահուն և անցնցում ընթացքը, ինչն էական դեր խաղաց հետպատերազմյան Ճապոնիայի տնտեսական ու քաղաքական առաջընթացի գործում: Այս առումով հետպատերազմյան արդիականացման համար զգալի նշանակություն ունեցավ հատկապես ընտանիքի հաստատությունը: Աշխատանքային հարաբերությունների

վրա նրա գործառնությունների ու որակների ուղղակի պրոյեկտումը, ճիշտ է, միայն հետպատերազմյան երևույթ չէր և ուներ ավելի հին արմատներ, բայց աշխատանքային հարաբերություններում այն առավել շեշտված ձևով դրսևորվեց հենց հետպատերազմյան շրջանում, երբ երկրի առջև ծառացած էին նախ վերականգնման, ապա՝ զարգացման խնդիրները:

Ճապոնիայի ինչպես հետպատերազմյան արդիականացումը, այնպես էլ այդ գործում ճապոնացիների էթնիկական ինքնության ունեցած դերակատարությունը զուտ այդ երկրին, ավելի ստույգ՝ այդ երկրի պատմության կոնկրետ ժամանակահատվածին բնորոշ երևույթներ են, ուստի Արևմուտքում համընդհանուր ընդունելություն գտած արդիականացման տեսությունների համատեքստում այս պատմամշակութային խնդիրների քննարկումը կարող է հանգեցնել միանգամայն սխալ եզրակացությունների: Նույնքան սխալական կարող են լինել արդիականացման ճապոնական մոդելի մեխանիկական կրկնօրինակման տեսություններն ու ռազմավարությունները, ինչին մինչ օրս կարելի է հանդիպել տնտեսական-բաղաբական խոր ճգնաժամ ապրող երկրներում, որոնք կանգնած են արդիականացման կամ արագ զարգացման ճանապարհին ընտրելու հրամայականի առջև:

Հետպատերազմյան Ճապոնիան չխուսափեց հասարակության մեջ տեղի ունեցող խորքային գործընթացների, արմատական փոփոխությունների ու զարգացումների հետ մեկտեղ նաև պատմական անցյալի վերագնահատման և վերաարժեքավորման փորձերից: Ճապոնիայում մնան փորձերն ընդգրկեցին ոչ միայն պատմագիտական շրջանները, այլև զանգվածային մշակույթի տարբեր ոլորտներ՝ ազդեցության չափաբաժին ունենալով ճապոնացիների էթնիկական ինքնության փոխակերպման վրա:

Այս ամենով հանդերձ՝ համաշխարհային ճապոնագիտության ուշադրությունից մեծ հաշվով վրիպել է մի անչափ կարևոր հանգամանք. ի՞նչ հակադարձ ազդեցություն է ունեցել Ճապոնիայի բացառիկ հետպատերազմյան արդիականացումը ճապոնացիների էթնիկական ինքնության հետագա փոխակերպումների վրա: Հարցադրումը, որն ինքնին պահանջում է հարուստ ազգագրական նյութի հիման վրա բազմակողմանի ու խոր, այդ թվում՝ միջգիտա-ճյուղային, վերլուծություն, դրված է սույն աշխատության հաջորդ

գլխի հիմքում: Այդտեղ փորձ կարվի, նախ, հիմնավորել նման հարցադրման գիտականությունը, ապա վերհանել նման հակադարձ ազդեցության մի քանի առանցքային դրսևորումներ. ինչը ճանապարհ է քաջում պրոբլեմի հետագա, առավել խոր և համակողմանի ուսումնասիրության համար:

Գ Լ ՈՒ Խ Գ

ՃԱՊՈՆԻԱՅԻ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՅՄԱՆ ՀԱԿԱԳԱՐԶ ԱԶԳԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՊՈՆԱՅԻՆԵՐԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՎՐԱ

Ինչպես ցույց տվեցինք նախորդ երկու գլուխներում, երկրորդ համաշխարհային պատերազմում պարտություն կրած ճապոնացիները կարճ ժամանակամիջոցում կարողացան փոխակերպել ոչ միայն քայքայված տնտեսությունը, այլև զուգահեռաբար նկատելի փոփոխությունների հասնել նաև էթնոմշակութային հարթությունում: Սույն գլխում մենք նպատակ ունենք վերլուծել Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման հակադարձ ազդեցությունը ճապոնացիների էթնիկական ինքնության փոխակերպումների վրա: Հիմնվելով ճապոնագիտության բնագավառում տեղ գտած տարբեր կարծիքների և մեկնաբանությունների վրա՝ մենք որպես Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման հակադարձ ազդեցություն առաջին անգամ կդիտարկենք *Նիհոնշինոնը* և *Նիհոնրունկառոնը*, որոնք պայմանավորեցին ճապոնացիների էթնիկական ինքնության առանձին տարրերի հետագա փոխակերպումները:

* * *

1960-ական թթ. վերջին և 1970-ական թթ. սկզբին Ճապոնիայի անշեղ տնտեսական զարգացմանը զուգահեռաբար առաջ եկան երկու փոխշաղկապված երևույթներ, որոնք ստացան առաջին հայացքից բավական ինքնատիպ, թեև ոչ միանշանակ ձևակերպումներ՝ *Նիհոնշինոն* և *Նիհոնրունկառոն*: *Նիհոնշինոն* նշանակում է «ճապոնականության տեսություն», իսկ *Նիհոնրունկառոն* «ճապոնական մշակույթի տեսություն»: Առաջինը գերազանցապես վերաբերում է ճապոնացիների էթնիկական ինքնության ու դրա առանձնահատկությունների ուսումնասիրությանը և ինքնաճանաչմանը, իսկ երկրորդը՝ ճապոնական մշակույթի բացառիկությանը, նրա առանձնահատուկ գծերի քննությանն ու մշակութային կերպի բացահայտմանը: Այս երկու տեսություններն էլ հետպատերազմյան շրջանի լայնամասշտաբ

գիտական ու հասարակական հետազոտությունների և քննարկումների սոսկ մասն էին և ասպարեզ իջան Ճապոնիայի հետպատերազմյան տնտեսական ու քաղաքական արդիականացմանը զուգընթաց:

Ուսումնասիրողները ոչ միանշանակ են ընդունում այս տերմինները և երբեմն առաջ են քաշում «ազգային ինքնադիտման բույժ», «ազգային ինքնավերլուծության բույժ», «ազգային ինքնության որոնումների բույժ», «ճապոնականության բույժ» և այլ նմանատիպ ձևակերպումներ¹⁵⁵: Սկսած 1950-ական թթ. վերջերից, երբ արդեն տեսանելի էին ճապոնական տնտեսության հաջողությունները, լուրջ հասարակական քննարկումների առարկա դարձավ ճապոնացիների էթնիկական ու մշակութային առանձնահատկությունների բացահայտման խնդիրը: Հրապարակվեց գիտական և սիրողական ուսումնասիրությունների արդյունքները ներկայացնող հարուստ գրականություն: Այս յուրահատուկ գիտական ու հասարակական քննարկումները ծավալվեցին որոշակի պարբերականությամբ՝ մերթ ցայտումացնելով, մերթ ճապադեղով հասարակական-գիտական հետաքրքրությունների հիմնական նախապատվությունները: Հատկանշական է, որ այդ շարժումը, որը նաև ուղղված էր մշակութային ինքնաճանաչմանը, հանգեցրեց ավանդական մշակույթի նկատմամբ հասարակական ուշադրության մեծացմանը: Այդ է վկայում ճապոնական կառավարության կողմից Մաթեմատիկական վիճակագրության ինստիտուտին կից ստեղծված ու ֆինանսավորվող «Ազգային բնավորության հետազոտման կոմիտեի» (այն ուսումնասիրում էր ճապոնացիների էթնիկական հոգեկերտվածքում ու մտածողության մեջ տեղի ունեցող փոփոխությունները) 1973թ. և 1978թ. կատարված հետազոտությունների արդյունքների հրապարակումը, որոնց համաձայն՝ նկատելի էր դարձել ավանդական մշակույթի նկատմամբ հասարակության շեշտված հետաքրքրությունը¹⁵⁶: Մենք համաձայն ենք Կոռնիլովի այն դրույթին, որ «այժմ (1980-ականների սկզբին, -Ս.Ֆ.) Ճապոնիան հասել է

¹⁵⁵ Տես "Japanese National Character". Committee of Study of National Character at the Institute of Mathematical Statistics of Japan, v. 4, Tokyo, 1982, էջ 18:

¹⁵⁶ Տես նույն տեղում:

պարտիկույարիզմի և ունիվերսալիզմի ներդաշնակ հավասարակշռության¹⁵⁷»։ Սակայն հարկ է նշել, որ այն կարծիքը, թե ճապոնական մշակույթը կմնա այդ ներդաշնակ հավասարակշռության վիճակում, տարբեր օբյեկտիվ գործոնների ազդեցության հաշվառմամբ թվում է վիճելի։

«Ազգային բնավորության հետազոտման կոմիտեի» աշխատող Հայաշի Տիկիոն *Նիհոնշինոն* և *Նիհոնբունկյառոն* երկույթները պայմանավորում է ճապոնիայում արևմտյան մշակույթի ազդեցության ուժեղացմամբ, իսկ դրանց առաջացման սկիզբ է համարում 1853–1867 թթ.՝ Մեիձիի հեղափոխության ժամանակաշրջանը։ Միևնույն ժամանակ, կարծիք կա, որ նման երկույթները բնութագրական չեն աշխարհի որևէ ժողովրդի, բացի ճապոնացիներից¹⁵⁸։ Նկատի ունենալով 1960–1970-ական թթ. ճապոնիայում հատկապես մշակութային և էթնիկական ինքնաբացահայտման ակտիվացումը՝ ամերիկացի սոցիոհոգեբան Գեորգ դը Վուսը և սոցիոլոգ Ռոբերտ Բելաիը այն բնութագրել են իբրև «ազգային ինքնահիացման» դրսևորում¹⁵⁹։ Խորհրդային ճապոնագիտական դպրոցը այս հարցերում ավելի հակված էր համաձայնվելու այն կարծիքի հետ, թե *Նիհոնշինոն* և *Նիհոնբունկյառոն*, մշակութաբանական հիմքերից զատ, առաջին հերթին կառավարող շրջանների կողմից գործադրված գաղափարախոսական զենք էին, ազգային միասնության՝ «մենք»-ի գիտակցման արտահայտում, ինչն «ավելի ուժեղ է դրսևորվում այն երկրներում, որոնք աչքի են ընկնում էթնիկ և մշակութային միատարրությամբ¹⁶⁰»։ Ինչպես իրավացիորեն նկատում է Կոռնիլովը, *Նիհոնշինոն* և *Նիհոնբունկյառոն*ի մեջ առկա էր նաև ճապոնիայի որոշ կառավարող շրջանների մղումը՝ մշակութային ռեսուրսները ծառայեցնելու ազգային համախմբմանն ու քաղաքական նպատակներին¹⁶¹։

Ավանդականի ու արևմտյանի տեսակարար կշիռների միջև սլաքը (հակաթեզ) պատմական տարբեր ժամանակաշրջաններում

¹⁵⁷ Корнилов М., նշվ. աշխ., էջ 36։

¹⁵⁸ Տես նույն տեղում, էջ 39։

¹⁵⁹ De Vos G., նշվ. աշխ., Bellah R., *Imagining Japan: The Japanese tradition and its modern interpretation*. Berkeley: University of California Press, 2003։

¹⁶⁰ Корнилов М., նշվ. աշխ., էջ 37։

¹⁶¹ Տես նույն տեղում։

թեքվել է տարբեր ուղղություններով՝ պայմանավորված ճապոնական էթնոսի և արտաքին աշխարհի միջև տեղեկատվական հոսքերի ու ցանցերի աշխուժացմամբ կամ թուլացմամբ: Կարելի է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առանձնացնել այդ սլաքի տեղաշարժերի հետևյալ երեք հիմնական փուլաշրջանները: Առաջինը հետպատերազմյան շրջանն է, երբ սլաքը թեքված էր դեպի արևմտյան մշակութային հարթություն: Այն ավարտվեց 1960-ականների վերջին, երբ Ճապոնիայի տնտեսական ու քաղաքական արդիականացման հաջողությունների և *Նիհոնշինռոնի* ու *Նիհոնբունկյառոնի* հետևանքով այդ սլաքը հաստատվեց հավասարակշռության դիրքում: Երկրորդ փուլաշրջանը, որը տևեց 1970-ականների վերջերից մինչև 1990-ականների սկիզբը, կարելի է բնութագրել որպես հավասարակշռված փոխազդեցության ժամանակաշրջան, իսկ 1990-ականների սկզբներից՝ համընդհանրացման գործընթացների խորացման հետևանքով, սլաքն սկսեց կրկին թեքվել դեպի արևմտյան համընդհանուր մշակույթ:

Երկրորդ աշխարհամարտին հաջորդած առաջին տարիներին ինչպես մշակութաբանական, այնպես էլ ազգաբանական ուսումնասիրություններում վերոհիշյալ հակաթեզի մեջ ավանդական մշակույթը բնութագրվում էր իբրև «հետամնաց», «հնամենի», «ավատատիրական» տարրեր պարունակող, իսկ ճապոնացի հետազոտող Մինամի Հիրոշին *Նիհոնշինռոնի* պատմությունն անգամ անվանում է «արևմտյան ժողովուրդների հետ ճապոնացիների արժանիքների հակամարտության և հավասարակշռության համեմատական տեսության պատմություն»¹⁶²: Եթե հետպատերազմյան առաջին շրջանում երկու տարբեր մշակույթների հակադրության համատեքստում ավանդական մշակույթը՝ մայրցամաքային այլ մշակույթների հարաբերակցությամբ շատ հաճախ դիտվում էր իբրև սահմանային, ապա *Նիհոնշինռոնը* և *Նիհոնբունկյառոնը* հարցադրման սլաքը թեքեցին առավելապես դեպի էթնիկական ու մշակութային բացառիկություն:

Կարելի է պնդել, որ *Նիհոնշինռոնը* և *Նիհոնբունկյառոնը* ժամանակի ընթացքում վերածվեցին ճապոնագիտության մի

¹⁶² Hiroshi M., *Nihonjin no shinri to seikatsu*. Psychology and Life of the Japanese, Tokyo, 1980, էջ 72:

յութատեսակ ոսպնյակի, և ճապոնիային նվիրված ցանկացած հետազոտություն, անկախ կատարման վայրից ու քննվող ժամանակաշրջանից, անպայման անցնում էր այդ ոսպնյակի լույսով: Նման կարգի ստեղծագործություններում տվյալ մոտեցումն առավել հաճախ դրսևորվում էր երկու հատկանշական մեթոդաբանական հարցադրումների միջոցով. առաջին՝ էթնիկական ու մշակութային բացառիկության և այլ՝ հիմնականում արևմտյան, ժողովուրդների հետ համեմատությամբ, երկրորդը՝ հետպատերազմյան տնտեսական զարգացման ու արդիականացման և ճապոնացիների էթնոմշակութային առանձնահատկությունների կապերի բաղդատմամբ: Նիհոնշինոռնի և Նիհոնբունկառոնի հիմնական առանցքը կազմող հարցադրումներին տրվել են, կարելի է ասել, գրեթե բոլոր հնարավոր գնահատականները, որոնց տեխնիկական բաղդատումն արդեն ցույց է տալիս դրանց ծայրահեղ լինելու հանգամանքը, ինչն ընդհանրապես բնորոշ է ոչ միայն Նիհոնշինոռնին և Նիհոնբունկառոնին, այլև որևէ այլ նմանատիպ երևույթի:

Այս առումով տեղին կլիներ նշել, որ ճապոնական հասարակության, մշակույթի և պատմության շատ խնդիրների անկողմնակալ ուսումնասիրության վրա Նիհոնշինոռնի և Նիհոնբունկառոնի ազդեցությունը բոլոր դեպքերում չէ, որ ունեցել է դրական հետևանքներ: Նիհոնշինոռնի և Նիհոնբունկառոնի գրականության մեջ ճապոնական էթնոմշակութային բացառիկության խնդիրները դրվում և մեկնաբանվում են միակողմանիորեն, քանի որ մեթոդաբանական առումով, պատկերավոր ասած, բացառիկության իրավունքը վերապահվում է միայն ճապոնական մշակույթին, մինչդեռ մնացած բոլոր հասարակություններն ու մշակույթները քննվում են համընդհանուր սկզբունքներին և կառուցվածքներին համապատասխան՝ ըստ զարգացման միասնական միտումների:

Որոշ ուսումնասիրողներ, մասնավորապես՝ Ստենֆորդի համալսարանի պրոֆեսոր Բեֆու Հարումին, Նիհոնշինոռնը և Նիհոնբունկառոնը դիտում են որպես Արևմուտքի ազդեցության ուժեղացման հետևանքով վտանգված ազգային ինքնությունը հետազոտելու և փոխակերպելու փորձ¹⁶³: Կորեացի ճապոնագետ

¹⁶³ Stū Harumi B., *Civilization and Culture: Japan in Search of Identity*, Japanese Civilization in the Modern World, Senri Ethnological Studies, v. 16, 1984, էջ 59-75:

Լին ճապոնական մշակույթի բացառիկությունը բնութագրում է իբրև առասպել¹⁶⁴: Մեկ այլ ուսումնասիրող՝ Իտոն, *Նիհոնշինոն* և *Նիհոնբունկառոնի* ծավալումը համարում է 1960-ական թթ. վերջին սկսված ճապոնացիների էթնիկական ինքնության մեջ նկատվող ճգնաժամի հակադարձ դրսևորում¹⁶⁵: Մեկ այլ խումբ ուսումնասիրողներ հակված են կարծելու, որ *Նիհոնշինոն*ը կառավարող դասակարգի ձեռքին պարզապես գաղափարախոսական գեներ է, իր հասարակական դիրքերն անխախտ պահելուն ծառայեցվող գաղափարախոսություն, որի նպատակն է շահագործվող դասակարգերին հեռու պահել սոցիալական առճակատումից և հասարակությանը ներարկել հակաթույն՝ ընդդեմ ներդաշնակությանն սպառնացող հնարավոր ընդվզումների¹⁶⁶:

Հարկավոր է նկատի ունենալ, որ *Նիհոնշինոն* և *Նիհոնբունկառոնի*ն վերաբերող տեսակետներից ու աշխատություններից և ոչ մեկում խնդիրը չի ուսումնասիրվել որպես մի երևույթ, որի հիմքում ճապոնացիների էթնիկական ինքնության կերպավորումների հարցում որոշակի դերակատարություն ունեցած հետպատերազմյան արդիականացման հակադարձ ազդեցությունն էր¹⁶⁷:

Ինչպես նշեցինք, *Նիհոնշինոն* և *Նիհոնբունկառոնի* ուսումնասիրություններին բնորոշ հիմնական առանձնահատկություններից մեկը՝ որպես դրանց հետազոտական մեթոդաբանություն, համեմատականությունն է, երբ ճապոնացիների էթնիկական ինքնության, հասարակության, մշակույթի այս կամ այն տարրի վերլուծությունը կատարվում է պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ: Այստեղ որպես համեմատվող բնագավառներ առավել հաճախ հանդես են գալիս ամերիկյան և եվրոպական առանձին մշակույթներ՝ չնայած մեծ թիվ են կազմում նաև հարևան ասիական, երբեմն նաև՝ այլ երկրների օրինակները: Նմանատիպ ուսումնասիրությունների բնութագրական մնուշ կարելի է համարել

¹⁶⁴ Տես Lie J., նշվ. աշխ. էջ 124:

¹⁶⁵ Տես Itoh M., նշվ. աշխ. էջ 8:

¹⁶⁶ Տես Kawamura N., *Some Arguments on Theories of Japanese Culture*. Tokyo, Ningen-no Kagakuksha, 1982:

¹⁶⁷ Տես Ֆարմանյան Ս., *Ճապոնիայի հեղափոխական արդիականացման և էթնոմշակութային կերպավորման փոխառնակցության փոստական խնդիրները*: «Պատմություն և Մշակույթ» հայագիտական հանդես, Բ, 2011, էջ 287:

ճապոնացի հետազոտող Նագասիմա Նոբուհիրոյի «Շրջված աշխարհ» աշխատությունը, որում հեղինակը, փորձելով առանց ազգագրական նյութի վրա հիմնվելու գրաֆիկական տեսքով ներկայացնել և վիճակագրական ճշգրտությամբ տարբերակել ճապոնական պարտիկուլյարիստական և ամերիկյան ունիվերսալիստական մշակույթների առանձնահատկությունները, ընկնում է ծայրահեղությունների մեջ՝ ամերիկացիների և ճապոնացիների էթնիկ նկարագրերին տալով հակոտնյա բնութագրումներ, մասնավորապես՝ ամերիկացիների դեպքում շեշտելով զգացմունքներից նրանց լիովին զուրկ լինելը, իսկ ճապոնացիների պարագայում՝ ուժեղ արտահայտված զգացմունքայնությունը, ամերիկացիներին վերագրելով տրամաբանված ու ցայտունորեն արտահայտված վերլուծական մտածողություն, իսկ ճապոնացիներին՝ չտրամաբանված ու սինթետիկ մտածելակերպ¹⁶⁸:

Նիհոնշինոռնի և *Նիհոնբունկառոնի* նվիրված գրականությունում հիմնական հարցադրումները 1970-ական թվականներին սկսեցին փոխվել: Ռեսումնասիրությունների նոր փուլին բնորոշ էին ճապոնիայում ընթացող աննախադեպ արդիականացման և ճապոնական էթնոմշակութային նկարագրի փոխառնչության խնդիրների բննարկումը, «ճապոնական հրաշքի» պատճառների պարզումը: *Նիհոնշինոռնի* այս նոր փուլը համընկավ արևմտյան մշակույթում ևս տեղի ունեցող դինամիկ փոփոխություններին: Դրա հետևանքով խորհրդանշական դարձավ այն պնդումը, թե «արևմտյան քաղաքակրթությունը հիվանդություն է», և դրա հիմնական հարուցողի դերում դիտվեց արևմտյան անհատականությունը¹⁶⁹:

Նիհոնշինոռնի և *Նիհոնբունկառոնի* երկրորդ փուլի ծավալմանը զուգահեռաբար՝ պետական կամ համալսարանական հաստատություններին կից կամ դրանց շրջանակներում ձևավորվեցին այլ ժողովուրդների պատմության մեջ անծանոթ «ազգային ոգու» ուսումնասիրության կենտրոններ: Դրանցից էին Նագոյայի համալսարանին կից գործող, 34 տարբեր մասնագետներից

¹⁶⁸ Steu Nobuhiro N., *A reversed world: or is it?, Modes of Thought: Essays on Thinking in Western and Non-Western Societies*. Faber and Faber, 1973, էջ 94:

¹⁶⁹ Steu Корнилов М., նշվ. աշխ., էջ 45:

կազմված համատեղ հետազոտական խումբը՝ պրոֆեսոր Յունեո Մուրամացուի գլխավորությամբ, Ճապոնիայի Մաթեմատիկական վիճակագրության ինստիտուտին կից ստեղծված վերոհիշյալ «Ճապոնացիների ազգային բնավորության հետազոտման կոմիտեն» կամ Կյուսյուի համալսարանին կից՝ Յեսիմոտո Ռիսիձիմայի գլխավորությամբ գործող կենտրոնը¹⁷⁰։ Ռիշագրավ է ճապոնացիների էթնիկական ինքնությանն առավել բնորոշ և առանցքային հատկանիշների ցանկը՝ բաղկացած 17 կետից։ Այն «Ճապոնացիների ազգային բնավորության հետազոտման կոմիտեի» հրապարակած աշխատությունների հիման վրա կազմել է Յ. Ռիսիձիման։ Այդ ցանկը, ըստ էության, էթնոմշակութաբանական հետազոտության ծայրահեղության արդյունք էր և *Նիհոնշինոնի* դասական դրսևորում¹⁷¹։ Այդ 17 կետերում հեղինակը փորձ է անում «մաթեմատիկական ճշգրտությամբ» սահմանել ճապոնացիների էթնիկ բնավորության գծերը և շրջանցել ժամանակային ու պատմական գործոնները՝ այդ գծերը դիտելով որպես վաղնջական ժամանակներից ճապոնացիներին բնորոշ ու գրեթե անփոփոխ։ Նման փորձը աղոտ առնչություններ ունեւ ճապոնացիների էթնիկական ինքնության առանձնահատկությունները կոնկրետ ժամանակի մեջ բացահայտելու հետ։

Ճապոնիայի սոցիալ-տնտեսական առաջընթացին ու ժողովրդավարացմանը զուգընթաց՝ երկրի կառավարող շրջանները ձեռնամուխ եղան նաև այդ առաջընթացում ճապոնական ավանդական մշակութային ռեսուրսների դերի գնահատմանը և դրանց նկատմամբ հատուկ պետական վերաբերմունքի ձևավորմանը։ Այսպես, վարչապետ Օհիրային կից գործող «Քաղաքական հարցերի ուսումնասիրության հանձնաժողովը» 1980թ. պատրաստեց և վարչապետին ներկայացրեց «Մշակույթի ժամանակաշրջանը» գեկույցը, որում Ճապոնայի հետպատերազմյան ձեռքբերումների գործում ճապոնական էթնոմշակութային առանձնահատկություններին վերագրվում էր կարևոր դեր, իսկ կառավարությանը կոչ էր արվում պահպանելու և

¹⁷⁰ Տես Королев С., *Изучение этнопсихологии в Японии*. В кн.: «Проблемы этнографии и этнической истории народов Азии». Москва, 1968, էջ 239:

¹⁷¹ Տես նույն տեղում, էջ 239-241:

«նպաստելու ազգային մշակույթի վերածննդին»¹⁷²։ Դեռ 1960-ական թվականներից *Նիհոնշինոնի* և *Նիհոնբունկառոնի* գրականության մեջ սկսեց տիրապետել համատեքստայնության տեսությունը, որը ճապոնական էթնոմշակութային առանձնահատկությունները դիտարկում էր ոչ թե հնամենի-ժամանակակից հակաթեզի տրամաբանությամբ, այլ էքստրավերտ-ինտրավերտ և էքստենսիվ-ինտենսիվ հակաթեզերի միջոցով։

Ուշագրավ է, որ եթե արևմտյան մշակույթում անհատն ընկալվում է որպես մտածողության և որոշումների կայացման առանձին միավոր, որին հատուկ է անհատական մտածելակերպը, ապա ճապոնական, ինչպես և ասիական այլ հասարակություններին բնորոշ են շեշտված փոխկախվածությունը և փոխօգնությունը¹⁷³։ Համատեքստայնության, կամ *կանշինշուզիի*, տեսությունը՝ խմբայնության տեսության հետ մեկտեղ, հաճախ առաջ էր քաշվում ճապոնացիների աշխատասիրությունը և հետպատերազմյան արդիականացման գործում ունեցած դերակատարությունը բացատրելու համար։ Ըստ այդ տեսության՝ համատեքստային անհատը գործում է՝ ելնելով այն բանից, թե ինչ են իրենից սպասում ուրիշները, ընդամին փոխօգնությունը, փոխկապվածությունն ու միջանձնային հարաբերությունները դառնում են առանձին նպատակ, և առաջանում է *համապեղ ինքնությունության գաղափար*։ Այս թեզի կողմնակիցները իրենց տեսակետը հիմնավորելու համար նույնիսկ բերում էին որոշ լեզվական տվյալներ, համաձայն որոնց՝ ճապոներենում չկա բացարձակապես անձնականացված «ես» դերանունը, որի իմաստը փոխվում է ըստ համատեքստի։ Այդ խմբի ուսումնասիրողները (նրանց մեջ առանձնանում է Համագուչի Էսյունը) այն կարծիքին են, որ համատեքստային ինքնությամբ են բացատրվում ճապոնական տնտեսական համակարգի արդյունավետ գործունեությունը և այն, որ այդ տեսակի հավաքական ինքնությունը այլ ժողովուրդների համար դառնում է «սկուտեղի վրա դրված բացառիկ ապրանք»՝ յուրացնելու և ընդօրինակելու համար¹⁷⁴։ Այստեղից էլ սկիզբ առավ *Նիհոնշինոնի*

¹⁷² Տես Корнилов М., նշվ. աշխ., էջ 45։

¹⁷³ Տես նույն տեղում, էջ 53։

¹⁷⁴ Esyun H., *The Japanese Disease or Japanization?*, The Japan Echo, 1981, v. 8, N 2, էջ 55։

և *Նիհոնբունկյառոնի* զարգացման հետագա տրամաբանության համար կարևոր տեղաշարժը էթնոմշակութային «բացառիկությունից» դեպի «ճապոնականացում», որը, ըստ այդ տեսության կողմնակիցների, որպես Ճապոնիայի զարգացման ամենահարմար ուղի պետք է փոխարինի «արևմտականացմանը»:

Ամիրաժեշտ է նկատի ունենալ նաև *Նիհոնշինոնի* և *Նիհոնբունկյառոնի* հետևյալ մեթոդաբանական սահմանափակումները, որոնք մեծապես նպաստեցին այն բանին, որ ուսումնասիրություններն ստանան ծայրահեղ բնույթ: *Մուաջին*, այդ ուսումնասիրություններում հաշվի չէր առնվում ժամանակային գործոնը՝ ժամանակի ընթացքում մշակույթի դինամիկական փոփոխության բնույթը, և բոլոր բննարկվող մշակույթները՝ ճապոնական, արևմտյան թե չինական, դիտվում էին որպես հաստատուն, անփոփոխ երևույթներ: *Երկրորդ*, եթե *Նիհոնշինոնի* և *Նիհոնբունկյառոնի* աշխատություններում նույնիսկ ուշադրություն էր դարձվում մշակույթի փոխակերպմանը և դինամիկային, ապա սովորաբար նկատի էին առնվում ոչ թե համընդհանուր զարգացման արտաքին հանգամանքները, այլ միայն զարգացման ներքին տրամաբանությունը¹⁷⁵: *Երրորդ*, մշակույթը դիտվում էր որպես մի բացարձակ երևույթ, և ուշադրություն չէր դարձվում հասարակության տարբեր խմբերի կողմից մշակույթի ոչ համաչափ սպառմանը: *Չորրորդ*, մշակույթը համարելով հաստատուն, կայուն և անշարժ՝ ուսումնասիրողները նրա բնութագրական շատ հատկանիշներ բացարձականացնում էին և դիտում ընդհանուր էթնոմշակութային համապատկերից դուրս: Եվ *հինգերորդ*, քննելով ճապոնացիների էթնոմշակութաբանական առանձնահատկությունների և պատմական զարգացումներում դրանց ունեցած դերակատարության խնդիրները՝ *Նիհոնշինոնի* և *Նիհոնբունկյառոնի* ուսումնասիրությունների հեղինակները սովորաբար այս կամ այն խնդիրը վերլուծում էին միայն մեկ գիտության շրջանակներում, ինչի հետևանքով շատ դեպքերում բացառվում էր տվյալ հարցերի անկողմնակալ և համակողմանի ուսումնասիրությունը:

¹⁷⁵ Տե՛ս Чугров С., Стереотипы в общественном сознании Японии, Япония: Культура и общество в эпоху научно-технической революции, сб. статей. Москва, 1985, էջ 117:

Որոշ մասնագետներ էլ, գաղափարախոսականացնելով հետպատերազմյան շրջանում ճապոնացիների էթնիկական ինքնության փոխակերպումների խնդիրը, կարծիք են հայտնում, թե *Նիհոնշինոն* ու *Նիհոնբունկառոն* և ընդհանրապես ավանդական ճապոնական մշակույթի նկատմամբ 1960-ականների վերջերին ու 1970-ականների սկզբներին մեծ հասարակական հետաքրքրության առաջացումն այն բանի վկայությունն է, որ հետպատերազմյան արդիականացումը պայմանավորեց ճապոնացիների հավաքական ինքնության մեջ նոր ճգնաժամային երևույթների առաջացում, ինչն իբր կապված էր սեփականության վերաբաշխման ընթացքում անհավասարությունների աճման հետ: Սակայն ճշմարտությունն այն է, որ ավանդականի, էթնոմշակութային կերպը ձևավորող տարրերի նկատմամբ մեծ հասարակական պահանջմունքը հետևանք էր արդիականացմանը զուգահեռաբար ճապոնական մշակութային տեղեկատվական ցանցերում արևմտյան ուղղության տեսակարար կշռի մեծացման, նրա ազդեցության ուժեղացման և այդ ազդեցության առաջ բերած հակազդեցության:

* * *

Ժողովրդի էթնոմշակութային առանձնահատկությունների ուսումնասիրության պահանջմունքը էթնիկական ինքնագիտակցության զարթոնքի համեմատ ավելի է շեշտվում ու մեծանում: Նման պնդումը ևս ապացուցում է, որ էթնիկական զարթոնքը կամ տվյալ ժողովրդի հավաքական ինքնության համար էական նշանակություն ունեցող պատմական անցուդարձերը, զարգացումները, մի կողմից, մեծացնում են ինքնաճանաչման մղումը, մյուս կողմից՝ այդ մղումը, դրա հետագա զարգացումները անպայմանորեն հանգեցնում են այդ նույն հավաքական ինքնության որոշակի փոխակերպումների, որոնք սովորաբար տեսանելի են դառնում ավելի երկարատև պատմական զարգացումների համատեքստում¹⁷⁶:

¹⁷⁶ Այս տեսանկյունից հույժ հետաքրքրական և օգտակար կլինեն նախաձեռնել հայերի էթնիկական ինքնության և հաղթական Արցախյան պատերազմի փոխառնչության միջնորդային համալիր ուսումնասիրություն, որովհետև անհերքելի է, որ Արցախյան գոյապայքարն էական ազդեցություն ունեցավ մեր ժողովրդի էթնիկական ինքնության առանձին տարրերի փոխակերպման վրա:

Ճապոնիայում ինքնաճանաչման նկատմամբ նման շեշտված հետաքրքրություն դրսևորվեց, պատկերավոր ասած, «երկուս և կես» անգամ. առաջին անգամ՝ սկսած 19-րդ դարի կեսերից, երբ Ճապոնիան «բացվեց» Արևմուտքի առաջ, երկրորդ անգամ՝ Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացմանը զուգահեռաբար և դրսևորվեց իբրև *Նիհոնշինոռնի* ու *Նիհոնբունկառոնի* ալիք, իսկ «կեսը» ճապոնական հասարակությունում ներկայումս թափ առնող, սակայն նախորդ երկու ալիքների համեմատությամբ ավելի փոքրածավալ ու թույլ ալիքն է, ինչը պայմանավորված է ճապոնացիների էթնիկական գիտակցության մեջ «արևմտականացման» գործընթացների, հետևաբար և կորուստների ու որակական փոփոխությունների անխուսափելիությամբ¹⁷⁷: Վերջին «կեսի» հանգամանալից վերլուծությունը և ժամանակակից ճապոնական հասարակության խորքային ուսումնասիրությունը հուշում են, որ այդ «կեսը» ժամանակի ընթացքում անխուսափելիորեն կարմատականանա:

Էթնոմշակութային ինքնաճանաչման ներկայիս թույլ ալիքը նախորդ երկու ալիքներից էականորեն տարբերվում է նաև այն բանով, որ ուղղված է արդյունաբերականացմանն ու արդիականացմանը զուգընթաց ավանդական ճապոնական մշակութային ինքնության ուսումնասիրությանը, մինչդեռ նախորդ երկու ավելի հզոր ալիքներն ուղղված էին ինքնաճանաչմանն ու ինքնաբացահայտմանը զուգահեռաբար նաև օտարի՝ «նրանք»-ի ճանաչմանը, ընդօրինակմանը կամ յուրացմանը: Ի միջի այլոց, հարկ է նաև նկատել, որ պատմության ու մշակույթի վերանայումը, վերաարժեքավորումը և վերագնահատումը սովորաբար ավելի մեծ թափ են ստանում ամբողջատիրության, ռազմականացման խորացմանն ու նվաճողական պատերազմների համընթաց, մինչդեռ ճապոնական *Նիհոնշինոռնի* ու *Նիհոնբունկառոնի* ալիքների նշված երեք բարձրակետերը գտնվում են միանգամայն այլ պատմական իրականությունում, ինչը համեմատական հետազոտությունների համար բացում է նոր հետաքրքիր հորիզոններ:

¹⁷⁷ Մշակույթում ավանդականի և նորի փոխհարաբերության ու դրանց փոխազդեցության հերթագայման մեխանիզմի մասին ավելի հանգամանորեն տես Ս.Ա. Арутюнов, *Соотношение традиций и инноваций и ротационный механизм их взаимодействия*. Братислава, 1986:

Երրորդ փուլաշրջանը, որը համընկավ 1990-ական թվականների վերջերի տնտեսական անկման հետ, ճապոնագիտության մեջ առաջ բերեց նոր ալիք: Եթե նախկինում *Նիհոնշինոն* և *Նիհոն-բունկաշինոն* տեսություններում մշակված ճապոնական տնտեսական ու հասարակական մոդելները համարվում էին անխոցելի, ապա «պոպզակների տնտեսության» ի հայտ գալուց հետո հրապարակվեցին աշխատություններ, որոնց հեղինակները փորձում էին, կրկին ընկնելով գիտական ծայրահեղության մեջ, այժմ արդեն ամբողջովին ժխտել Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման վրա ճապոնացիների էթնոմշակութային նկարագրի գործած ցանկացած ազդեցություն: Սակայն այդ հեղինակների մեծ մասն անտեսում էր այն պարզ իրողությունը, որ տնտեսական աճի զգալի նվազման հետևանքով չվերացան ճապոնական տնտեսական ու ձեռնարկատիրական կառուցվածքագործառութային առանձնահատկությունները, ինչը Ճապոնիային օգնեց հետագա տասնամյակներում կրկին հաղթահարելու ստեղծված դժվարությունները¹⁷⁸:

Նիհոնշինոն և *Նիհոնբունկաշինոն* կարելի է բնութագրել նաև որպես մշակութային ազգայնականության դրսևորումներ՝ ուղղված ներքին և արտաքին ծագում ունեցող անբարենպաստ իրավիճակներում հայտնվելու պարագայում ժողովրդի էթնոմշակութային ինքնության պահպանմանն ու ամրապնդմանը¹⁷⁹: Ինչպես և ցանկացած ազգայնականություն՝ լինի այն չափավոր, թե արմատական, այս ճապոնական ազգայնականությունը ենթադրում է երկկողմանի գործընթաց. մի կողմից՝ հասարակության շահագրգիռ շերտերի, հաստատությունների և երբեմն առանձին կազմակերպությունների ու անհատների ջանքերով համապատասխան գաղափարախոսության ու արժեհամակարգի ստեղծում և տարածում, մյուս կողմից՝ այդ գաղափարախոսության ու արժեհամակարգի սպառում և վերարտադրում: Ճապոնացիների էթնիկական ինքնության վրա հետպատերազմյան արդիականացման հակադարձ ազդեցության տեսանկյունից *Նիհոնշինոն* և

¹⁷⁸ Տե՛ս Yoshimura N. and Anderson Ph., *Inside the Kaisha: Demystifying Japanese Business Behaviors*. Harvard Business School Press, 1997, էջ 199:

¹⁷⁹ Տե՛ս Yoshino K., նշվ. աշխ., էջ 18:

Նիհոննոնկառոնի օրինակների անկողմնակալ վերլուծությամբ ապացուցվում է, որ *Նիհոննի* նկատմամբ «արդարացման» ու «սպառման» այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված է:

Յոշինոյի առաջ քաշած այս մոտեցումը ենթադրում է, որ, մի կողմից, ճապոնական պետական մեքենան, ձեռնարկատերերի դասը և այլ շերտեր «արտադրում էին» այդ գաղափարախոսությունը, մյուս կողմից՝ հասարակական լայն զանգվածներն սպառում և վերարտադրում էին այն որպես առօրյա խնդիրների լուծման հնարավոր եղանակ, ինչը հեղինակի կողմից որակվում է որպես ազգայնականության նկատմամբ «առօրյա կյանքի սոցիոլոգիական» մոտեցում¹⁸⁰: Նման «շուկայական» մոտեցումը նոր հորիզոններ է բացում պատմական շատ խնդիրների պարզման համար, երբ հասարակական պահանջմունքի բավարարման նպատակով հասարակության որոշ շերտեր մշակում և առաջ են մղում այդ պահանջմունքների բավարարման մեխանիզմներ:

Յոշինոն *Նիհոննի* և *Նիհոննոնկառոնը* բնութագրել է որպես «երկրորդային ազգայնականություն»՝ նման ազգայնականության համար որպես կարևոր տարբերակիչ առանձնահատկություն դիտելով մշակութային ինքնության վերաբացահայտումն ու ինքնաճանաչումը և զուտ քաղաքական բնույթի նպատակներ չլինելը¹⁸¹:

* * *

Այսպիսով՝ առաջ քաշված տեսությունն ի դեմս *Նիհոննի* և *Նիհոննոնկառոնի* առանձնացնում է երկակի գործընթաց, երբ, մի կողմից, այն «արտադրվում» է, մյուս կողմից՝ հասարակական տարբեր մեխանիզմներով սպառվում և վերարտադրվում: Ուշագրավ է այն հանգամանքը, որ տվյալ դեպքում «արտադրողի» դերում հանդես են գալիս ոչ միայն մտավորականության որոշ շերտեր, այլև պետական մեքենան, իսկ կրթական համակարգը դառնում է վերարտադրման դարբնոց: Մեր համոզմամբ՝ դրա վկայությունն են *Նիհոննի* և *Նիհոննոնկառոնի* անբաժան մաս կազմող պատմության դպրոցական դասագրքերի հետ

¹⁸⁰ Տես նույն տեղում, էջ 12:

¹⁸¹ Տես նույն տեղում, էջ 20:

կապված անվերջանալի թվացող խնդիրները, որոնք ուշադրության կենտրոնում էին հետպատերազմյան ճապոնիայում:

Առասպելների կամ առասպելացված պատմական իրադարձությունների ու մշակույթի տարրերի տարածումը կարևոր նշանակություն ունի ժողովրդի պատմական հիշողության ձևավորման, ձևափոխման և ամրապնդման գործում, ինչն ընդունում են էթնիկական և ազգային ինքնության խնդիրներով զբաղվող ինչպես պատմական, այնպես էլ մոդեռնիստական դպրոցները¹⁸²: Ճապոնացիների պատմական հիշողության ու պատմության արժեքավորման մեխանիզմների օգտագործման իմաստով *Նիհոնշինոռնի* բացառություն չէր:

Նիհոնշինոռնի ու *Նիհոնբունկառոնի* «շուկայական» տեսության համաձայն՝ հիմնական «արտադրողի» դերում հանդես են գալիս հասարակական կարծիքի ձևավորման վրա կարևոր ազդեցություն ունեցող շերտերը՝ գիտական շրջանները, լրագրողական հանրությունը, կրթական համակարգը, գործարար շրջանները և այլն¹⁸³: *Նիհոնշինոռնի* ու *Նիհոնբունկառոնի* լայն ապառումը Բեֆուին առիթ տվեց եզրակացնելու, որ դրանք ավելի շատ զանգվածային սպառման ապրանքներ են, քան գիտական հետազոտություններ¹⁸⁴: *Նիհոնշինոռնի* ու *Նիհոնբունկառոնի* ալիքներն առավել ուժեղացան 1970–1990-ական թվականներին, երբ աճեցին դրանց սպառման ծավալները: Այսօր էլ դրանք շարունակում են պահպանել իրենց ազդեցությունը, թեև՝ ոչ ավանդական պատկերացումներով ու սահմանումներով¹⁸⁵:

Նիհոնշինոռնի ու *Նիհոնբունկառոնի* հիմնական աշխատություններում ներկայացված տեսակետները կարելի է խմբավորել

¹⁸² Տես նույն տեղում, Smith A., *Ethnicity and Nationalism*. Leiden, Brill E., 1992; նույնի՝ *National Identity*. London, 1991; Gellner E., *Thought and Change*. London, Weidenfeld & Nicolson, 1964; նույնի՝ *Nations and Nationalism*. Oxford, Blackwell, 1983:

¹⁸³ Տես Yoshino K., նշվ. աշխ., էջ 18:

¹⁸⁴ Տես Befu H., *The Theory of Japanese Culture as an Ideology*, Tokyo, 1987, էջ 54-67:

¹⁸⁵ Նիհոնշինոռնի մասին ավելի հանգամանորեն տես Mouer R. and Sugimoto Y., *Japanese Society: Reappraisals and New Directions*. “Social Analysis”, 1980, v. 5/6; Befu H., նշվ. աշխ., էջ 62; Tamotsu A., *The Transformation of the Theories of Japanese Culture: Culture and Identity in Postwar Japan*. Tokyo, 1990; Dale P., *The Myth of Japanese Uniqueness*. London, Routledge, 1986:

երեք հիմնական կետերի շուրջ, որոնք սովորաբար արծարծվում են արևմտյան մշակութային արժեհամակարգի հետ համեմատության մեջ: Առաջին տեսակետը, որն այդ գրականության մեջ անցնում է կարմիր թելով (և որը քննարկվեց նաև սույն աշխատության նախորդ գլխում), այն է, որ ճապոնական հասարակությունն աչքի է ընկնում խմբայնությամբ, խմբային կողմնորոշմամբ ու անհատների միջև հարաբերությունների փոխկախվածությամբ, հասարակությունում ուղղաձիգ կապերի տիրապետմամբ, ցանկությունների ու կարծիքների արտահայտման, որոշումների կայացման համատեքստայնությամբ: Երկրորդ խումբ առանձնահատկությունները վերաբերում են ճապոնական հասարակության էթնիկ միասեռությանը, միատարրությանը (*բանիցու մինշոկու*), ներդաշնակությանը՝ ի հակադրություն արևմտյան բազմաէթնիկ հասարակությունների: *Նիհոնշինոռնոմ* և *Նիհոնբունկյառնոմ* նշված վերջին խումբ առանձնահատկությունները վերաբերում են էթնիկ ու ռասայական միասեռության վրա հիմնվող յուրօրինակ էթնոմշակութային նկարագիր ունեցող հասարակությանը¹⁸⁶:

Նիհոնշինոռնոմ ու *Նիհոնբունկյառնոմ* զանգվածային սպառման մասին խոսելիս առաջին հերթին հարկ է նկատի ունենալ հետևյալ հանգամանքը. հասարակայնության լայն զանգվածները հաճախ նույնիսկ մոտավոր պատկերացում չունենին այն մասին, որ կան տեսակետներ, թե Արևմուտքի մշակութային ազդեցության հետևանքով անհրաժեշտ է վերաարժեքավորել ճապոնական ավանդական մշակույթը կամ կառավարող շրջաններն իրենց իշխանությունը օրինականացնելու նպատակով առաջ են քաշում ճապոնացիների էթնոմշակութային բացառիկության վերաբերյալ թեզը: Այս ամենով հանդերձ՝ ճապոնական հասարակության կողմից նման տեսությունների և աշխատությունների լայն սպառումը անհերքելի փաստ է: Յոշիհիդե դա բացատրում է *Նիհոնշինոռնոմ* ու *Նիհոնբունկյառնոմ* «արտադրողների»՝ «սպառողներին» առօրյա կենսական հոգեկան բավարարություն տալու ընդունակությամբ¹⁸⁷: Հետազոտություններով փաստվում է, որ *Նիհոնշինոռնոմ* ու *Նիհոնբունկյառնոմ* առաջնային սպառողների թվում առանձնանում էին

¹⁸⁶ Siau Yoshino K., նշվ. աշխ., էջ 19-21:

¹⁸⁷ Siau նույն տեղում, էջ 23:

հենց գործարար շրջաններն ու ձեռնարկությունները: 1990-ական թվականների սկզբին Յոշինոյի կատարած հետազոտության արդյունքների համաձայն՝ հարցման ենթարկված գործարարների 75,5 %-ը այս կամ այն կերպ *Նիհոնշինոն*ի ու *Նիհոնբունկառոն*ի «սպառող» էր, մինչդեռ երևույթին կարծես ավելի մոտ կանգնած բուհական դասախոսների և դպրոցական ուսուցիչների դեպքում այդ թիվը կազմում էր ընդամենը 28,6 %¹⁸⁸: Տվյալ պարագայում գործարար շրջանները հանդես էին գալիս ոչ միայն որպես «սպառողներ», այլև յուրօրինակ մշակութային միջնորդ՝ կապուղի փոխանցող, վերարտադրող, որոնք ձեռնարկություններում, իսկ ավելի լայն իմաստով՝ տնտեսության մասնավոր հատվածում, աշխատող միլիոնավոր ճապոնացիների շրջանում տարածում էին ակադեմիական շրջանների կողմից ձևավորված տեսություններն ու արժեքները: Յոշինոյի կատարած հետազոտության մեկ այլ արդյունք էլ վկայում է, որ *Նիհոնշինոն*ի և *Նիհոնբունկառոն*ի դասական համարվող աշխատություններից մեկի՝ Չիե Նականեի վերը դիտարկված «Ճապոնական հասարակություն» աշխատության և դրանում առաջ քաշված գաղափարների մասին ավելի շատ լսել ու պատկերացում ունեն գործարարները, քան կրթական ոլորտի համար պատասխանատուները:

Այս համատեքստում է հարկավոր դիտարկել նաև այսպես կոչված «մշակութային ձեռնարկների» խնդիրը: Այս ձեռնարկները ճապոնական մեծ ու միջին ձեռնարկությունների կազմած, խմբագրած, իսկ սակավ դեպքերում նաև գրած աշխատություններն էին, որտեղ *Նիհոնշինոն*ի ու *Նիհոնբունկառոն*ի տեսությունների դիտանկյունից ձեռնարկության միջին աշխատողի համար համառոտակի ներկայացված էին Ճապոնիայի պատմությունն ու մշակույթը, էթնիկական ինքնության և ազգային ոգու առանցքային գծերը, ձեռնարկատիրության և տնտեսվարման ճապոնական մոդելի առանձնահատկությունները, *սալարիինանի* ամենօրյա վարքագծի օրինակելի նորմերը, հասարակական հարաբերությունների հիմնական առանձնահատկությունները, կենցաղի, տոնածիսական կացութաձևի առանձնահատկությունները, հիմնական տոնացույցը և այլն: Նման ձեռնարկները շատ հաճախ

¹⁸⁸ Նույն տեղում, էջ 25:

հրատարակվում էին երկու լեզվով՝ ճապոներեն ու անգլերեն, և հատուկ անգլիախոս «սպառողների» համար պարունակում էին ճապոնական էթնոմշակութային նկարագրի ներկայացման ժամանակ անխուսափելիորեն գործածվող ճապոներեն բառերի բացատրական բառարան: Լայն սպառման համար նախատեսված այս ձեռնարկները հրատարակվեցին այնքան մեծ քանակությամբ, որ նույնիսկ կարող է տպավորություն ստեղծվել, թե 1970–1980 թթ. յուրաքանչյուր մեծ կամ միջին ձեռնարկություն ու տնտեսվարող անձ օրենքով պարտավորված է եղել ֆինանսավորելու նման բրոշյուրների հրատարակումն ու անվճար տարածումը: Կարծում ենք, որ սպառիչ չէ այն պնդումը, թե նման եղանակով մասնավոր ձեռնարկատերերը նպատակ ունեին է՛լ ավելի բարձրացնել աշխատողների արտադրողականությունը: Հակված ենք մտածելու, որ այստեղ տնտեսական շահ չկար, այլ հարյուրավոր հազարներ հաշվվող նման ձեռնարկների հայտնվելը պայմանավորված էր առօրյա կյանքում նկատելի դարձած արևմտականացման պարագայում էթնոմշակութային կերպը վերաարժեքավորելու՝ հետպատերազմյան արդիականացման հետևանքով ամբողջ հասարակության մեջ առաջացած օրինաչափ պահանջմունքով:

Սույն աշխատության հեղինակը ճապոնիայում գտնվելու ժամանակ հնարավորություն է ունեցել ծանոթանալու 1984թ. «Ճապոնական պղնձի կորպորացիայի» կադրերի գրասենյակի հրատարակած «Նիպպոն. երկիրն ու նրա մարդիկ», 1983թ. «Սիցուբիսի» ընկերության հրատարակած «Ճապոներենի բիզնես բառարան» և 1988 թ. Տաիյոո Կոբե Բանկի հրատարակած «Չննող ճապոնացին¹⁸⁹» երկլեզու ձեռնարկներին, որոնք կարելի է համարել նմանատիպ հրատարակությունների յուրատեսակ բյուրեղացումներ, որտեղ *Նիհոնձինոնի* ու *Նիհոնրունկառոնի* տեսությունների դիրքերից բավական մանրամասնորեն ներկայացված են ճապոնացիների էթնոմշակութային ինքնության, հասարակության ու պատմության առանցքային կողմերը, ճապոնական ձեռնարկությունում օգտագործվող տերմինաբանության անգլերեն

¹⁸⁹ Nippon Steel Corporation, Personnel Development Office, *Nippon: Land and its People*, 2nd ed. Tokyo, Gakuseisha, 1984; Mitsubishi Corporation, *Japanese Business Glossary/Nihonjingo*, Tokyo, Kōdansha, 1983; Taiyō Kōbe Bank, *Nipponjin/The Scrutable Japanese*, Tokyo, Gakuseisha, 1988:

թարգմանությունները և այլն, ինչը ձևավորում է քաջածանոթ ընթերցողի այն ճշմարիտ կարծիքը, որ մմանատիպ ձեռնարկները գործարարների կողմից հայտնի ակադեմիական ուսումնասիրությունների արդյունքների մեկնաբանություններ են: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ այդպիսի ձեռնարկներ, որոնք երբեմն գրվում էին հատուկ որևէ մի ձեռնարկության աշխատողների համար և հարմարեցված էին նրանց մասնագիտացմանն ու շատ հաճախ նույնիսկ չէին տարածվում ձեռնարկությունից դուրս, այսօր գնալով ավելի ու ավելի քիչ են հրատարակվում:

Նիհոնշինոռնի ու *Նիհոնբունկառոնի* կարևոր մաս կազմող այդ ձեռնարկները հասցեագրված են առաջին հերթին տվյալ ձեռնարկությունների ներկա և ապագա աշխատողներին, ավագ կուրսերում սովորող և ձեռնարկություններում փորձաշրջան անցնող ուսանողությանը, ինչպես նաև այն օտարերկրացի գործարարներին, որոնք համագործակցում են ճապոնական գործընկերների հետ: Լայն առումով՝ մման ձեռնարկները նպատակ են հետապնդում նոր աշխատողների աշխատանքային սոցիալականացումը զուգակցել նրա կողմից ճապոնական բիզնեսի, էթնիկական ու մշակութային ինքնության, ճապոնական բիզնես միջավայրում ընդունելի վարքագծի կանոնների էական առանձնահատկությունների յուրացման հետ և ըստ այդմ հանդես են գալիս որպես երկրորդային ազգայնականության կարևոր մեխանիզմներ: Թեև դրանք չունեն պետության կողմից հրատարակվող և գրեթե նույն գործառույթը կատարող դպրոցական դասագրքերի լայն տարածումը, սակայն մման բրոշյուրների դերը թերագնահատել չի կարելի: Կարող ենք փաստել, որ եթե աշակերտի պատմական հիշողության ձևավորման կարևոր մեխանիզմի դեպքում մենք գործ ունենք պետության կողմից էթնիկական ինքնության վերարտադրության խրախուսման հետ, ապա մման ձեռնարկների դեպքում գործ ունենք նույն երևույթի մեկ այլ կողմի հետ, երբ նախաձեռնողի դերում հանդես է գալիս ոչ թե պետությունը, այլ մասնավոր հատվածը: Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ եթե գաղութատիրական ճապոնիայում տիրապետող գաղափարախոսության տարածման մեխանիզմների դերում հանդես էին գալիս դպրոցը, բանակը և ոստիկանական համակարգը, ապա *Նիհոնշինոռնի* և

Նիհոնբունկյառոնի մեջ բանակի ու ոստիկանության փոխարեն հանդես եկավ տնտեսության մասնավոր հատվածը:

Այս խնդրի ուսումնասիրողներից մեկը այն կարծիքն է հայտնել, թե Ճապոնիան որքան միջազգայնացում է, այնքան դառնում է ավելի ազգայնական: Ահավասիկ, մնան երկլեզու «մշակութային ձեռնարկների» զանգվածային հրատարակումը կարելի է դիտել նաև որպես Ճապոնիայի միջազգայնացման, համընդհանրացման գործընթացների արդյունք (չնոռանանք, որ այս ձեռնարկներն ուղղված են նաև ճապոնական ընկերությունների օտարերկրյա աշխատողներին և դուստր կազմակերպություններին), սակայն այստեղ աչքի է զարնում մեկ այլ՝ ոչ պակաս հետաքրքիր, ճապոնական երևույթ. էթնոմշակութային ինքնությունը խրախուսվում և վերարտադրվում է Ճապոնիայի միջազգայնացման ու համընդհանրացման անունով:

Երբ խոսում ենք *Նիհոնշինոն* ու *Նիհոնբունկյառոնի* ավելի վաղ դրսևորումների մասին և որպես երևույթ կապում ենք Մեիձիի հեղաշրջումից հետո Արևմուտքի հետ սերտացող մշակութային շփումների հետ, կարող ենք օրինակ բերել Ճապոնիայի պատմության մեջ ամենալուսավոր մտավորականներից մեկը համարվող Շիգա Շիգետակայի գործունեությունը: Աշխարհագրագետ ու լրագրող Շիգետակայն Մեիձիից հետո Արևմուտքի աճող մշակութային ազդեցության վտանգավորության մասին բարձրաձայնելու և դրան հակազդելու նպատակով դեռ 1894 թ. հրապարակեց «Ճապոնական բնապատկեր» աշխատությունը, որտեղ բնաաշխարհագրական պատկերների նկարագրությամբ փորձեց առաջ մղել ճապոնական մշակույթի ինքնատիպությունը և մշակութային ինքնությունը պահպանելու անհրաժեշտության թեզերը¹⁹⁰:

Կորեացի ճապոնագետ Ջոն Լին ևս հակված է *Նիհոնշինոն* և *Նիհոնբունկյառոնի* ծավալումը դիտել որպես պատասխան 1960-ական թվականներին ճապոնացիների էթնիկական ինքնության մեջ նկատվող ճգնաժամին: Սակայն այդ հեղինակը դժվարանում է բացատրել, թե հատկապես որոնք էին տվյալ ճգնաժամի պատճառները, կամ ինչ է որևէ ժողովրդի էթնիկական ինքնության մեջ

¹⁹⁰ Sŕu Gavin M., *Nihon Fukeiron (Japanese Landscape): Nationalistic or Imperialistic?* "Japan Forum", v. 12, N 2, 2000, էջ 220:

առաջացած ճգնաժամն ընդհանրապես: Մյուս կողմից՝ հեղինակն աչք է փակում այն հայտնի փաստի վրա, որ ավելի վաղ պատմական շրջաններում ևս եղել են ճապոնական մշակույթի և էթնիկության ճանաչմանն ուղղված նախաձեռնություններ:

Հարկ է նշել, որ ճապոնագիտական գրականության մեջ տիրապետում է այն մոտեցումը, թե *Նիհոնշինոն* ու *Նիհոնբունկառոնի* տեսությունները հիմնված են ազգային բացառիկության վրա, և այդ ամբողջ ալիքն ուղղված է խթանելու բացառիկության հավաքական գիտակցումը: Սակայն այստեղ պետք է հաշվի առնել երկու էական առանձնահատկություն: Առաջին. *Նիհոնշինոն* ու *Նիհոնբունկառոնը* ներառում են ոչ միայն այն աշխատությունները, որոնց նպատակն է ճապոնացիների էթնոմշակութային նկարագրին վերագրել բացառիկություն, այլև այն աշխատությունները, որոնք իրենց հիմքում սկզբնապես ունեն նման տեսությունների ժխտումը և ուղղված են ճապոնական էթնոմշակութային բացառիկության թեզերի բացասմանը: Երկրորդ էական առանձնահատկությունն այն է, որ *Նիհոնշինոն* և *Նիհոնբունկառոն* երևույթները ներառում են ոչ միայն բուն ճապոնիայում, այլև նրա սահմաններից դուրս ձևավորված ալիքները: Կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ որոշ աշխատություններ կամ ստեղծագործություններ, ստեղծված լինելով ճապոնիայի սահմաններից դուրս, էական ազդեցություն են ունեցել բուն ճապոնիայի ներսում ընթացող գիտական ու հասարակագիտական քննարկումների ու դրանց միջոցով նաև ճապոնացիների էթնիկական ինքնության փոխակերպումների վրա: Բավական է հիշատակել թեկուզ այն մեծ ազդեցությունը, որ ունեցել են Ռուդ Բենեդիկտի կամ Էզրա Ֆոգելի հայտնի աշխատությունները:

* * *

Տոկիոյի «Հոգեվերլուծական միջազգային ընկերակցության» նախագահ, ճանաչված հոգեթերապևտ ու Կեոյի համալսարանի հոգեբանության ամբիոնի նախկին պրոֆեսոր Օկոնոգի Կեյզոնը հակված է ներկայումս ճապոնական հասարակությունում ընթացող խորքային զարգացումները դիտել որպես ճապոնական հասարակության՝ շատ մասնագետների կողմից հանգամանորեն ներկայացվող ճգնաժամ, որը մշակութային կողմնորոշիչների ու

բարոյական արժեհամակարգի փոխակերպումների արդյունք է¹⁹¹: Օկոնոգին այն կապում է հատկապես 1990-ական թվականներից տնտեսական աճման տեմպերի նվազման հետ, երբ, ըստ նրա, «ընտանիքն ու ձեռնարկությունը, որոնք պատմականորեն անհատին մատակարարել են ինքնության ձևավորման ու դրա գիտակցման կառուցվածքներ ու միջավայրներ, այսօր նկատելի փոփոխությունների են ենթարկվում, ինչը հանգեցնում է ճապոնական հասարակության լայնորեն բննարկվող ճգնաժամին¹⁹²»: Միևնույն ժամանակ, Օկոնոգին հակված է ճապոնացիների «էթնիկական ինքնության երրորդ ճգնաժամի» հիմքում տեսնել Սառը պատերազմի ավարտից և ասիական այլ երկրների տնտեսական զարգացումներից ու տարածաշրջանային ինտեգրման գործընթացների ակտիվացումից հետո Ճապոնիայի «վերաասիականացմամբ» պայմանավորված քաղաքակրթական կողմնորոշիչների փոփոխությունները:

Նշենք, որ միայն Օկոնոգին չէ, որ զուտ հոգեբանական վերլուծության դիտանկյունից բարձրաձայնում է ճապոնական հասարակությունում տեղի ունեցող ճգնաժամային երևույթների մասին: Մեկ այլ պրակտիկ հոգեվիրաբույժ՝ Կայամա Ռ-իկան, ևս ընդունում է տվյալ փաստը և այն կապում համընդհանրացման գործընթացների խորացմամբ պայմանավորված՝ հասարակության ներսում «միիզմի» (me-ism) գաղափարախոսության հաղթարշավի հետ¹⁹³: Մեկ այլ հոգեբան՝ Շվեդիայի Լուդիկ համալսարանի ավագ դասախոս Յոհակիմ Բերգստրյոմը, «ճապոնական ինքնության ճգնաժամի» հիմքում տեսնում է զբաղվածության բնագավառում առաջացած խնդիրները, ինչպես նաև ծնելիության ցուցանիշի նվազման¹⁹⁴, ինքնասպանությունների թվի աճման և հոգեկան դեպրեսիայի տարածման, բնավորության ագրեսիվ գծերի

¹⁹¹ Հարցազրույց Օկոնոգի Կեյզոյի հետ, Տոկիո, 2002 թ. հոկտեմբերի 25:

¹⁹² Նույն տեղում:

¹⁹³ Sten Bergström J., *Me and My Nation. National Identity, Group Narcissism, and Historical Discourses in the Wake of Crisis in Japan*, Psykologexamensuppsats, Institutionen för Psykologi Lund Universitet, v. 3, N 15, 2001, էջ 6:

¹⁹⁴ Եթե Ճապոնիայում բնական աճի ցուցանիշը 1950 թ. կազմում էր 3,65, ապա 1980 թ. այն կազմում էր 1,75, իսկ 20-րդ դարի վերջին՝ 1,38:

զարգացման և ուրբանիզացիայի բարձր տեմպերով, ու երկրի արդյունաբերականացմամբ պայմանավորված խնդիրները¹⁹⁵:

Նիհոնշինոռնն ու *Նիհոնբունկառոնն* զգալի դեր խաղացին նաև ինքնավստահության վերականգնման ու քերարժեքության բարդության ձերբազատման գործում: Այսպես, Առկի Տամացուն 1964–1985 թթ. որակում է որպես «ճապոնացիների դրական բացառիկության գիտակցման վերականգնման» ժամանակաշրջան, իսկ այդ գործում *Նիհոնշինոռնի* ու *Նիհոնբունկառոնի* աշխատությունները ժամանակագրական ու բովանդակային առումով բաժանում է երկու հատվածների, որոնցից յուրաքանչյուրը ձևավորվեց առանձին հեղինակների հայտնի աշխատությունների շուրջ: Առաջին փուլն ընդգրկում է 1964–1976 թվականները և ունի երեք հիմնական գազաթներ, որոնք են Չիե Նականեի՝ խմբայնական հասարակությանը և ուղղաձիգ կապերի հայտնի տեսությանը նվիրված աշխատությունները, Կեիիցի Սակուտայի՝ «ամոթի մշակույթի» վերանայմանն ուղղված հետազոտությունները և Կունիո Օդակայի՝ ճապոնական կառավարման համակարգի ու տնտեսական մոդելի վերլուծությանը նվիրված մենագրությունները: Երկրորդ փուլն ընդգրկում է 1976–1985 թվականները և նույնպես ունի երեք հիմնական գազաթներ, որոնք են Համագուչի Էսյունի՝ «ճապոնականության» վերանայմանը նվիրված աշխատությունները, Յասասուկե Մուրակամիի, Սումայեյ Կումոնի ու Սեյձաբուրո Սատոյի՝ ճապոնական ավանդական ընտանիքին կառուցվածքագործառությանին մամանակմամբ ճապոնական հասարակության վերլուծությանը նվիրված համատեղ աշխատությունները և, վերջապես, Էզրա Ֆոգելի վերը հիշատակված աշխատությունը: Առկին, ինչպես Իտոն, պատկանում է այն հեղինակների թվին, որոնք հակված են ճապոնիայում վերջին տարիների համընդհանրացման գործընթացների աննախադեպ ինտենսիվացմամբ պայմանավորված ներհասարակական խնդրումներն ու փոխակերպումները որակել որպես ճապոնիայի հնարավոր «երրորդ բացում», կամ «տեղայինից անցում դեպի համընդհանուր բացառիկություն»¹⁹⁶:

¹⁹⁵ Sten Bergström J., նշվ. աշխ., 2001, էջ 6-11:

¹⁹⁶ Itoh M., նշվ. աշխ., 2000, էջ 89:

Նպատակահարմար է նաև համառոտակի ներկայացնել այն հանգամանքը, թե ինչպես պատերազմում կրած պարտությունը, դրան հաջորդած արագ արդիականացումը և մրցունակ պետության ստեղծումը նպաստեցին ճապոնացիների հավաքական գիտակցության մեջ թերարժեքության, ապա՝ գերարժեքության ախտանշանների կամ բարդույթների, ձևավորմանը: Թերարժեքության բարդույթը երկարատև պատմական ժամանակաշրջանում տեղի ունեցած գործընթացների արդյունք է: Այն ձևավորվում է տվյալ հավաքականության շարունակական պարտությունների, անբարենպաստ պատմական պայմանների, անկախ պետականություն չունենալու պայմաններում: Այստեղից հետևում է, որ նման բարդույթները հավաքական որակ են ստանում միմիային երկարատև և շարունակական գործընթացների դեպքում: Այդ պատճառով մասնագիտական գրականության մեջ առկա է այն տեսակետը, թե երկրորդ համաշխարհային պատերազմում ճապոնացիների անվերապահ կապիտուլյացիան, Դաշնակից ուժերի կողմից ժամանակավորապես նվաճված լինելը ճապոնացիներին ախտահարեցին թերարժեքության բարդույթով:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում տարբերակել թերարժեքության բարդույթը և թերարժեքության ախտանշանը: Երկրորդ տերմինը մենք կսահմանենք որպես որևէ հավաքականության, խմբի կամ նույնիսկ անհատի կյանքում նրանց բնականոն կենսագործունեությունը ու վերարտադրությունը խաթարող և չչ կենսաբանական բնույթի հանգամանք, որի գոյապահպանությունն ու վերարտադրությունը առաջին հերթին պայմանավորվում են նրանցից դուրս եղած խմբերով և հանգամանքներով: Թերարժեքության ախտանշանի առավել կարևոր առանձնահատկությունն այն է, որ նա կարող է գոյություն ունենալ միայն կարճ պատմական ժամանակահատվածում: Եթե երկարատև գործընթացում նա չի վերածվում թերարժեքության բարդույթի, ապա անխուսափելիորեն անհետանում է: Ճապոնացիների էթնիկական ինքնության նկատմամբ նման զուգահեռները հուշում են, որ ճապոնացիների դեպքում մենք գործ ունենք ոչ թե թերարժեքության բարդույթի, այլ թերարժեքության ախտանշանի հետ՝ ի դեմս որոշակի հետպատերազմյան պատմական իրողությունների:

Այս տեսակետը հիմնավորելու համար բերենք մի օրինակ. 1950-ական թթ. սկզբին ճապոնական միջնակարգ դպրոցներից մեկի 6-րդ դասարանի աշակերտների շրջանում անցկացված հարցումներից մեկի ժամանակ այն հարցին, թե ինչ ազդության նրանք կուզենային պատկանել, աշակերտների 53%-ը գերադասեց ծնված լինել ամերիկացի, 22 %-ը՝ շվեյցարացի և միայն 16 %-ը՝ լինել ճապոնացի: Մեկ այլ՝ այս անգամ 1960-ական թթ. սկզբին, անցկացված հարցման ժամանակ, որի նպատակն էր պարզել, թե հարցման ենթարկված ավագ դպրոցի աշակերտության շրջանում ովքեր են վայելում ամենամեծ հեղինակությունը, և ում իրենք կուզենային նմանվել ապագայում, առաջին տեղում եղել է ԱՄՆ-ի նախագահ Աբրահամ Լինկոլնը, մինչդեռ կայսր Հիրոհիտոն իր ունեցած հեղինակությամբ հանդերձ միայն 14-րդն էր: Իսկ արդեն 2000 թ. մեկ այլ նմանատիպ և գրեթե նույն մեթոդաբանությամբ կատարված հարցմամբ պարզվեց, որ դրա մասնակիցների 95 %-ը հպարտ է, «որ ծնվել է ճապոնացի»¹⁹⁷: Ահավասիկ, հասարակական կարծիքում հետպատերազմյան արդիականացմամբ պայմանավորված նման կտրուկ փոփոխությունների դինամիկան պահպանվում է մինչ օրս, ինչի ապացույցն են հեղինակի դաշտային ազգագրական աշխատանքների ժամանակ ստացված արդյունքները, ըստ որոնց՝ հարցման ենթակված ուսանողների 99 %-ը ուրախ է, որ ճապոնացի է¹⁹⁸:

Երկրորդ համաշխարհային պատերազմում կրած պարտության և օտար ուժերի կողմից ճապոնիայի նվաճված լինելու հանգամանքի բերումով ճապոնացիների հավաքական ինքնության մեջ առաջացան էթնիկական և մշակութային թերափոքության ախտանշաններ: Առանձին հեղինակներ հակված են այդ երևույթի մեջ տեսնելու խոր պատմական և մշակութային արմատներ՝ հղումներ անելով ճապոնական մշակույթի և էթնիկական առանձնահատկությունների վրա օտարածին մշակույթների ունեցած ավանդական ազդեցությանը: Նման բացատրությունը իրականում վիճելի է: Դա արդյունք է այն չհիմնավորված

¹⁹⁷ Steu Lie J., նշվ. աշխ., էջ 129-134:

¹⁹⁸ Steu հավելված Գ:

տեսության, թե մշակութային շփումների, փոխհարստացումների և փոխյուրացումների հետևանքով մշակութային արժեքներով սնողը ձեռք է բերում գերարժեքության, իսկ վերցնողը՝ թերարժեքության բարդույթ:

Քննարկելով ճապոնացիների էթնիկական ինքնության մեջ նշված իրողություններով պայմանավորված թերարժեքության ախտանշանի առաջացման խնդիրները՝ Կիոտոյի ճապոնագիտական ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի հետազոտող Յոկինո Օկունոն հարցազրույցում հիշատակեց պատերազմին հաջորդած ժամանակաշրջանում գրական-գեղարվեստական գործունեություն ծավալած արձակագիր Շիգա Նաոյային: Ըստ Յոկինոյի՝ նա 1946 թ. առաջ քաշեց այն ծայրահեղ տեսակետը, թե ճապոնացիները մեծապես կշահեին, եթե ճապոնիայում հիմնական գործածական լեզու դարձնեին ֆրանսերենը, քանի որ Ֆրանսիան առաջավոր երկիր է, և դա կնպաստեր ճապոնիայի զարգացմանը¹⁹⁹: Այդ կարծիքը սերվում էր դեռ Մեիձիի հեղաշրջումից, ապա նաև երկրորդ համաշխարհային պատերազմից հետո երկրի գրական-գեղարվեստական շրջաններում երբեմն հնչող նույնքան ծայրահեղ թեզից, թե ճապոնացիները մեծապես կշահեին, եթե ժամանակին անգլերենը դարձնեին իրենց պետական լեզու՝ *կոկուզոն*, ինչով կբացառվեին պատերազմն ու ճապոնացիների կրած գրկանքները: Իհարկե, հետպատերազմյան ճապոնիայի հանրային կյանքի ամբողջ համապատկերում նման ծայրահեղ տեսակետները բավական հազվադեպ էին, սակայն դրանք, ի հավելումն պատմության անբարենպաստ դասավորության, գալիս են ապացույցելու, որ պատերազմում կրած պարտության հետևանքով ճապոնացիների էթնիկական ինքնության մեջ առաջացավ թերարժեքության ախտանշան: Այս միտքը բնութագրական կերպով հնչեցվեց նաև պատերազմի հանցագործ ճանաչված պաշտոնաթող զինվորականներից մեկի հուշերում, որտեղ նա գրել է. «Եթե ես նորից ծնվեի, ապա կգերադասեի ծնվել որպես խեցգետին, բայց ոչ՝ ճապոնացի²⁰⁰»:

¹⁹⁹ Հարցազրույց Յոկինո Օկունոյի հետ, 2002 թ. հոկտեմբերի 15:

²⁰⁰ Steu Lie J., նշվ. աշխ., էջ 127-128:

Հենվելով բերված օրինակների վրա՝ կարող ենք պնդել, որ ճապոնացիների թերաթեքության ախտանիշն այսօր կարելի է համարել հաղթահարված, ու նաև փաստել, որ այն չվերածվեց թերաթեքության բարդության, որը սովորաբար առաջանում է, օրինակ, անկախ պետականությունը, պատմական հայրենիքը երկար ժամանակ կորցրած, ցեղասպանության ենթարկված ժողովուրդների պարագայում: Ընդհակառակը, որոշ ճապոնագետ ուսումնասիրողներ նույնիսկ հակված են մերօրյա ճապոնացիների էթնիկական ինքնությանը վերագրելու գերաթեքության ախտանիշ կամ բարդությ: Արդ. ի՞նչ գործոններով պետք է պայմանավորել ճապոնացիների հավաքական գիտակցության մեջ տեղի ունեցած նմանատիպ փոխակերպումները: Անշուշտ, առաջին կարևոր հանգամանքը պատերազմի հետևանքների վերացումն ու հասարակական գիտակցությունից դրա դուրսմղումն էին, Ճապոնիայի վերածումը մրցունակ, տնտեսապես զարգացած միավորի, որն արդեն 1970-ական թթ. ստանձնեց տարածաշրջանային առաջատարի դերը: Մյուս կարևոր գործոնը ճապոնական մշակույթի և ընդհանրապես ճապոնականության լայնածավալ գիտական ուսումնասիրությունների ու հասարակական քննարկումների ալիքն էր, երբ հասարակության գրեթե բոլոր կառույցներն ու հաստատությունները այս կամ այն կերպ ներքաշվեցին նման հրատարակումների և տվյալ թեմատիկայի քննարկումների մեջ: Այս առումով իմ գրուցակիցներից մեկը՝ Յոկիմո Օկունոն, առանձնացնելով երկու խորհրդանշական իրադարձություններ՝ 1964թ. Տոկիոյում կայացած Օլիմպիական խաղերը և 1970թ. ճապոնական հասարակության ողղաձիգ կառուցվածքի տեսության հիմնադիր Չիե Նականեի «Ճապոնական հասարակություն» աշխատության հրապարակումը, 1964–1983թթ. համարում է «Ճապոնիայի դրական բացառիկության ճանաչման ժամանակահատված»²⁰¹: Խնդրի մեկ այլ ուսումնասիրող՝ Կիոտոյի Ճապոնագիտական ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի ղեկավար Հաուայո Կավային, կիսում է այս տեսակետը՝ կարծիք հայտնելով, որ *Նիհոնշինոռնի* և *Նիհոնբունկառնի* ծավալումը հետևանք էր հետպատերազմյան արագ արդիականացման

²⁰¹ Հարցազրույց Յոկիմո Օկունոյի հետ, 2002թ. հոկտեմբերի 15:

և սրընթաց տնտեսական զարգացման, ինչը նպատակ ուներ ճապոնացիներին օգնելու ձերբազատվել քերարժեքության ախտից²⁰²:

Հենվելով Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման և ճապոնացիների էթնիկական ինքնության առնչության երկակիության մասին մեր առաջ քաշած թեզի վրա՝ կարող ենք ասել, որ «ճապոնական հրաշքի» շնորհիվ՝ Նիհոնձիկոնոմի ու Նիհոնբոնկիսոնոմի ծավալմանը զուգահեռաբար, քերարժեքության ախտի վերացումն սկիզբ դրեց ժամանակավորապես գերարժեքության ախտի գլուխ բարձրացնելուն: Խնդիրն այն է, որ երբ այդ երկու պատմական իրողությունների հետևանքով հասարակական գիտակցության մեջ արմատավորվեց այն գաղափարը, թե արդիականացման հաջողությունը պայմանավորված էր էթնիկական առանձնահատկություններով, ճապոնացիների հավաքական ինքնության մեջ սկսեցին ձևավորվել իրենց էթնիկական բացառիկության մասին պատկերացումներ: Ընդամին դրանք հիմնականում պրոյեկտվում էին հարևան երկրների հետ համեմատականության լույսով:

Զանի որ մենք նպատակ չունենք մանրամասնորեն վերլուծելու ճապոնացիների էթնիկական ինքնագիտակցության մեջ ազգային ու մշակութային բացառիկության մասին պատկերացման կամ այլ խոսքով՝ գերարժեքության ախտի, սերմանման պատմական նախադրյալները, դրա էությունն ու դրսևորման ձևերը, այլ ձգտում ենք հետազոտելու և հիմնավորելու հետպատերազմյան արդիականացման ու էթնիկական ինքնության փոխառնչության երկակիության մասին թեզը, սահմանափակվենք կոնկրետ փաստի ներկայացմամբ՝ հենվելով մի յուրատիպ լեզվական օրինակի վրա: Ինչպես նշվեց, Ճապոնիայի հետպատերազմյան տնտեսական առաջընթացն առանձնանում էր նաև նոր տեխնոլոգիաների մշակմամբ և դրանց մատչելիության աստիճանի բարձրացմամբ: Այսպես, դեռ 1970-ական թթ. վերջերից ճապոնացիներն սկսեցին զանգվածային սպառման համար արտադրել ավտոմատ գործող լուսանկարչական սարքավորումներ, որոնք ճապոներենում

²⁰² Seta Kawai H., նշվ. աշխ., էջ 158:

ստացան *բակաչոն-կամերա* անվանումը²⁰³: Ճապոներենում *բակա* նշանակում է «հիմար», իսկ *չոն*-ը կորեացիներին տրվող վիրավորական մականուն է: Այսպիսով՝ *բակաչոն-կամերա* նշանակում է լուսանկարչական սարք, որը կարող են օգտագործել նույնիսկ հիմարները և կորեացիները: Միևնույն ժամանակ, հարկավոր է նկատի ունենալ այն հանգամանքը, որ տարբեր պատմական գործոնների հետևանքով հավաքական գիտակցության մեջ նման ազդակները կարող են նվազել կամ ուժեղանալ:

Ճապոնացիների հավաքական գիտակցության մեջ գերարժեքության ախտի սերմանմանը նպաստած մյուս կարևոր գործոնը տարածաշրջանային ինտեգրացիոն խնդիրների ակտիվացումն էր, ինչը տեղի էր ունենում Ճապոնիայի՝ աշխարհի երկրորդ խոշորագույն տնտեսություն ունեցող երկրի վերածվելուն զուգահեռաբար: Իսկ այստեղ՝ կախված Ճապոնիայի տնտեսական հզորությունից, համաասիական ինտեգրացիայի գաղափարները շատ հաճախ քայլում էին Ճապոնիայի առաջնայնության հետ կողք-կողքի, ինչը ճապոնացիների էթնիկական գիտակցության մեջ ուժեղացնում էր ազգային բացառիկության մասին որակապես նոր պատկերացումները: Հետաքրքրական է նաև այն, որ Արևելյան և Հարավարևելյան Ասիայի այլ երկրների տնտեսական զարգացմանը և տարածաշրջանային աշխարհաքաղաքականության մեջ դիրքերի փոփոխություններին զուգընթաց, երբ «Ճապոնիան տարածաշրջանում իր դերակատարությունն ավելի շատ տեսնում է որպես գործընկեր, քան որպես առաջատար», ճապոնացիների հավաքական ինքնության մեջ օրինաչափորեն նկատվում է գերարժեքության ախտի վերացում, ինչը գիտական ուսումնասիրության առանձին նյութ է:

Քննության առնելով ճապոնացիների էթնիկական ինքնության հետագա փոխակերպումների վրա հետպատերազմյան արդիականացման ունեցած ազդեցության խնդիրը՝ անհրաժեշտ ենք համարում պատշաճ ուշադրություն դարձնել նաև համաճապոնական ենթակառուցվածքների, տեղեկատվական ցանցերի ստեղծման, տարածաշրջանային զարգացման և էթնիկական ինքնության փոխառնչության վրա: Այսպես, հետպատերազմյան

²⁰³ Հարցազրույց Հիդյուկի Սակակիի հետ, 2002 թ. հոկտեմբերի 18:

արդիականացումը, ինչպես հայտնի է, փոխեց ճապոնական հասարակության պատկերը՝ այն ագրարայինից վերածելով ուրբանիզացված հասարակության: Նախապատերազմյան ճապոնիայում մեծ անջրպետ կար քաղաքային և գյուղացիական բնակչության կենսամակարդակների, կենսապայմանների, կացութաձևի, կենցաղի, երբեմն նաև սովորույթների, ավանդույթների ու մշակութային նախապատվությունների միջև: Այս շրջանում, երբ չկային գործող համաճապոնական ենթակառուցվածքներ և ցանցեր, երբ ցածր էր ճապոնիայի տարբեր վարչական շրջանների փոխհամեմատվածության աստիճանը, երբեմն առավել առաջնային էր դառնում, այսպես կոչված, «տարածաշրջանային ինքնամույնականացումը»՝ ի հակակշռում համազգայինի: Իհարկե, նպատակահարմար չէ հակադրել ինքնագիտակցության այս երկու հարթությունները, սակայն այստեղ խոսքն ընդամենը հավաքական ինքնության մեջ առաջնայնության մասին է: Ինչպես հավաստում էր իմ զրուցակիցներից մեկը՝ պրոֆեսոր Հիրոյուկի Սակակիին, նախապատերազմյան ճապոնիայում, օրինակ, կարելի էր հանդիպել այնպիսի ինքնամույնականացման, ինչպիսին էր *Սացումա-նո-հիյոնն*, որը բառացի թարգմանվում է որպես «մարդ, որը Սացումայից է»²⁰⁴: Ելնելով իր դիտարկումներից՝ Տոկիոյի համալսարանի 70-ամյա պրոֆեսոր Հիրոյուկի Սակակիին հետպատերազմյան արդիականացմամբ և համաճապոնական ենթակառուցվածքների ստեղծմամբ ու արդյունավետ գործառնամբ է պայմանավորում տարածաշրջանային ինքնագիտակցության՝ որպես ինքնամույնականացման առաջնային օղակի անհետացումը և փոխարենը ճապոնիայի բնակչության շրջանում համազգային ինքնագիտակցության ուժեղացումը: Հետպատերազմյան զարգացումների հետևանքով «տարածաշրջանային ինքնամույնականացումը համազգայինի համեմատությամբ խամրեց», եզրակացնում է նա²⁰⁵:

²⁰⁴ Հարցազրույց Հիրոյուկի Սակակիի հետ, 2002 հոկտեմբերի 18:

²⁰⁵ Նույն տեղում:

Այս համատեքստում տեղին է տալ համընդհանրացման՝ մեր նյութից ու վերլուծությունից բխող սահմանումը (միևնույն ժամանակ, նշել, որ այդ երևույթը դարձել է տարբեր գիտությունների ու միջգիտաճյուղային հետազոտությունների առարկա, ինչի պատճառով ստեղծվել է մի իրավիճակ, երբ, ինչպես պատկերավոր նկատում է Մասամիչի Սասակին, առկա են համընդհանրացման այնքան սահմանումներ, որքան կան այդ խնդրով զբաղվող մասնագետներ²⁰⁶): Ուստի չենք բացառում, որ ազգաբնական կամ այլ միջգիտաճյուղային աշխատություններում ևս տրված լինեն կամ ապագայում՝ սույն աշխատությունից դուրս, տրվեն Ս. Արությունովի՝ էթնոսի տեղեկությանից տեսությունից բխող և մեր կողմից առաջ քաշվող սահմանմանը նման՝ նրա իմաստը բովանդակող կամ մասամբ կրկնող սահմանումներ:

Այսպես. *համընդհանրացումը տեղեկությանի աղբյուրների և այդ տեղեկությանի պահպանողների, փոխանցողների, կրողների ու սպառողների միջև բազմակողմանի տեղեկությանի հոսքերն ու ցանցերն են, որոնք նպաստակառուցված են ինչպես անհատի, այնպես էլ տարբեր խմբերի գոյապահպանությանի սպահովմանը*: Իսկ այն, ինչ տեղի է ունենում վերջին 10–20 տարիների ընթացքում, կարելի է բնութագրել որպես հատուկ ինտենսիվությամբ ընթացող համընդհանրացում: Դրա հիմնական առանձնահատկությունն այն է, որ նշված տեղեկությանի հոսքերն ու ցանցերը գնալով ավելի են ընդլայնվում, հետևաբար և արագանում են տեղեկությանի տարբեր աղբյուրների և սպառողների միջև տեղեկությանի փոխանակման արագությունն ու ծավալը, իսկ մյուս կողմից՝ այն բնութագրվում է այդ հոսքերի ու ցանցերի օրեցօր աճող բազմաճյուղավորմամբ ու բազմազանեցմամբ, ինչի հետևանքով հետզհետե ավելի տեսանելի է դառնում համաշխարհային միասնական տեղեկությանի

²⁰⁶ Տե՛ս Sasaki M., *Globalization and National Identity in Japan*. “International Journal of Japanese Sociology”, 2004, N13, էջ 71:

շտեմարանի կամ մեկ համաշխարհային «ուղեղի» ձևավորման հավանականությունը²⁰⁷:

Ճապոնացի շատ ուսանողներ, որոնց հետ սույն աշխատության հեղինակը ոչ պաշտոնական հանդիպումների ժամանակ բննարկել է միջազգայնացման և համընդհանրացման գործընթացներում Ճապոնիայի ներգրավվածության խորացմանն առնչվող հարցեր, այդ գործընթացներից ակնկալվելիք հետևանքները տեսնում են հիմնականում երկու տարբեր հարթություններում՝ առօրյա կյանքն ավելի հետաքրքրական դարձնելու և, երկրորդ, համընդհանուր կամ տարածաշրջանային քաղաքական ու տնտեսական խնդիրներում ավելի մեծ ներկայացվածություն ապահովելու ձևով: Ի միջի այլոց, համընդհանրացման գործընթացների և մշակութային փոխառությունների օգնությամբ առօրյա խնդիրներն ավելի հեշտ լուծելու և ընդհանրապես կյանքն ավելի թեթև դարձնելու թեզն արժարժվել է ինչպես 1960-ական թվականներին Ճապոնիայում դաշտային ազգագրական աշխատանքներ կատարած Արությունովի²⁰⁸, այնպես էլ 1980–1990-ական թվականներին հետազոտական նպատակներով Ճապոնիայում երկար ժամանակ բնակված կորեացի ուսումնասիրող Լիի աշխատություններում²⁰⁹:

Արությունովը հարուստ ազգագրական նյութի հիման վրա համակողմանիորեն վերլուծել է մշակույթում և կենցաղում, հասարակական կյանքի բոլոր բնագավառներում միմյանցից խիստ տարբեր երկու մշակութային շտեմարաններից սնվող երևույթների

²⁰⁷ Որպես մեկ համաշխարհային «ուղեղի» օրինակ Արությունովը հնարավոր է համարում նոր տեղեկատվական տեխնոլոգիաների աննախադեպ արագ զարգացման շնորհիվ ամբողջ աշխարհում տեղեկույթի փոխանցման ու կառավարման այնպիսի համակարգի ստեղծումը, երբ երկրագնդի ամբողջ տեղեկատվական համակարգի գործունեության անխաթարությունը կախված կլինի միայն մեկ կենտրոնական համակարգի, կամ, պատկերավոր ասած, «համաշխարհային ուղեղի», անխափան գործունեությունից: Այդ «ուղեղը» կներառի և կվերահսկի ամբողջ աշխարհում տարբեր անհատների ու խմբերի ինտենսիվացող բոլոր տեղեկութային հոսքերն ու ցանցերը: Արությունովը նման կարծիք արտահայտել է, մասնավորապես, ԵՊՀ-ում 2005 թ. ապրիլին պատմության ֆակուլտետի ուսանողների և դասախոսների համար կարդացած դասախոսություններից մեկի ժամանակ:

²⁰⁸ Տե՛ս Арутюнов С., *Современный быт японцев*. Москва, 1968:

²⁰⁹ Տե՛ս Lie J., նշվ. աշխ., էջ 49:

ու տարրերի միախառնումը, փոխներգործությունը, փոխներթափանցումը, փոխհարստացումը, ինչը Ճապոնիայի արդիականացմանը և գիտական հետազոտություններում արժարժվող տեսակետների արմատականացմանը զուգահեռաբար մեծ նշանակություն ունեցավ այդ խնդիրներն ավելի բաց կերպով և առանց նախապաշարմունքների բննարկելու համար: Արությունովը դեռ 1968թ. ճապոնացիների կենցաղի հիմնարար ուսումնասիրությանը նվիրված իր աշխատությունում իրավացիորեն նշել է, որ զարգացման ժամանակակից տեմպերի պայմաններում տարբեր ժողովուրդների էթնիկական առանձնահատկությունները և հատկապես նյութական մշակույթի բնութագրական գծերը շատ հաճախ ավելի արագ են փոփոխվում, քան կատարվում են որևէ գիտական երկի խմբագրման և հրատարակման աշխատանքները²¹⁰: Այդ առումով նույնիսկ ընդամենը մի քանի տարի առաջ կատարված դաշտային ուսումնասիրությունների արդյունքները կարող են հակասության մեջ լինել ճապոնացիների էթնիկական ինքնությանը ներկայումս բնորոշ շատ գծերի հետ:

Հետպատերազմյան Ճապոնիայում և անգամ մեր օրերում մշակույթի զարգացումը և փոխակերպումները տեղի են ունենում լրիվ այլ՝ միայն մեր ժամանակաշրջանին բնորոշ, եղանակով՝ տվյալ ժողովրդի շրջանում այլ մշակութային տարրերի տարածմամբ կամ, երբեմն, ամբողջական մշակութային համակարգերի ներթափանցմամբ ու յուրացմամբ: Այդ համակարգերն ընդհանուր առմամբ իրավացիորեն, թեև որոշ դեպքերում՝ միակողմանիորեն, անվանում են «եվրոպական», «արևմտյան», «ամերիկյան», «քաղաքային», «նոր» կամ «ժամանակակից»:

Ճապոնացիների էթնիկական ինքնության և հետպատերազմյան արդիականացման առավել բնութագրական կողմերի ուսումնասիրությունը հաճախ անհնար է առանց պատշաճ ուշադրություն դարձնելու այն բանին, որ համընդհանրացման ու Ճապոնիայի միջազգայնացման փուլերում ի՞նչ դերակատարություն է ունեցել ճապոնացիների վրա «արևմտյան», «եվրոպական» կամ ամերիկյան մշակութային ազդեցությունը: Տարասեռ, տվյալ պարագայում՝ երկրորդ համաշխարհային պատերազմից

²¹⁰ Տես Арутюнов С., նշվ. աշխ., էջ 3:

հետո, ավանդական ճապոնական և արևմտյան մշակույթների փոխներգործությունը բավական մեծ ուշադրության է արժանացել ինչպես Ճապոնիայում, այնպես էլ Արևմուտքում և ԽՍՀՄ-ում: Ընդսմին հիմնականում դիտարկման առարկա են եղել հոգևոր մշակույթն ու հասարակական հարաբերությունները, մինչդեռ նյութական մշակույթի և կենցաղում տարասեռ մշակույթների փոխներգործության հարցը համակողմանիորեն քննարկվեց միայն նախորդ դարի 60-ական թթ. վերջին՝ հարուստ ազգագրական նյութի հիման վրա Ս. Արությունովի գրած «Ճապոնացիների ժամանակակից կենցաղը» հիմնարար աշխատությունում: Թեև այդ արժեքավոր մենագրության լույս ընծայումից անցել է շուրջ 50 տարի, սակայն այն իր արդիականությունը չի կորցրել նաև այսօր: Տվյալ ուսումնասիրության հեղինակը հիմնավորված կերպով պատկերում է հետպատերազմյան Ճապոնիայում տարբեր մշակույթների միախառնման, ձուլման, փոխներարկումների գործընթացները, և նրա կատարած հետևություններն ընդհանուր առմամբ համահունչ են համընդհանրացման հետագա գործընթացների ուղղություններին, ձևերին ու ծավալներին:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո արևմտյան և ճապոնական մշակույթների «հանդիպումը», փոխառնչությունները և փոխյուրացումը Ճապոնիայի համար նոր երևույթ չէր: Այն մեծ թափով սկսվել էր դեռ Մեծի թագավորի հեղաշրջումից հետո, երբ շփման մեջ մտան էականորեն տարբեր երկու մշակույթներ: Արդեն 19-րդ դարի կեսերին պայմաններ ստեղծվեցին այսպես կոչված արևմտյան մշակույթի՝ Ճապոնիա ներթափանցման համար: Արությունովի դիտարկմամբ՝ այդ երկու միանգամայն տարբեր մշակութային համակարգերը որոշ ժամանակ գոյատևեցին կողք-կողքի՝ առանց փոխադարձ ներգործության, բայց շուտով սկսվեց այդ մշակույթների փոխազդեցությունը, որն ըստ էության շարունակվեց մինչ օրս²¹¹: Ընդսմին այդ երկու մշակութային համակարգերում տեղի էին ունենում փոփոխություններ և զարգացումներ, որոնք պայմանավորված էին ներքին օրինաչափություններով և կապ չունեին փոխադարձ շփումների ու փոխազդեցությունների հետ: Սակայն ճապոնական մշակույթի համար առավել մեծ նշանակություն

²¹¹ Сив Арутюнов С., *նշվ. աշխ.*, էջ 7:

ունեցալ հենց այն նոր տեղեկութային համապատկերը, որում ճապոնիան հայտնվեց պատերազմից հետո:

Ս. Արությունովը, քննելով հետպատերազմյան ճապոնական կենցաղը և նյութական մշակույթը²¹², կացութաձևը՝ բնակարան, տարազ, սնունդ, կահ-կարասի, կոնկրետ օրինակներով և բավական հանգամանալից կերպով նկարագրեց նյութական մշակույթի և կենցաղի տարբեր բնագավառներում ավանդական ճապոնական և արևմտյան մշակույթների յուրօրինակ խաչասերումը, երբ իր էությանը արևմտյան (*սեյյուսիկի*, կամ *յուսիկի*) և ավանդական ճապոնական (*վասիկի*) մշակութային համակարգերին բնորոշ առանձին տարրեր, փոխազդելով միմյանց հետ, որոշ դեպքերում հույժ պայմանական դարձրին այս կամ այն առարկայի կամ երևույթի վերագրումը արևմտյան կամ ճապոնական մշակույթին:

Թեև էթնոմշակութային ընդհանուր հաշվեկշռում մշակույթի առանձին տարրերի և դրանց կշռի վիճակագրական հաշվարկումը բավական բարդ գործ է, սակայն խորաթափանց ուսումնասիրողի համար փաստ է և անգեմ աչքով էլ պարզ տեսանելի, որ ժամանակակից ճապոնացիների կենսագործունեության շատ ոլորտներում ավելի գերակշռող է դառնում այսպես կոչված արևմտյան և սինկրետիկ մշակույթների կշիռը:

Արևմտյան այն մշակույթը, որն այսօր մենք տեսնում ենք ճապոնիայում, ըստ էության, վերացական և նոր ձևավորվող համընդհանուր մշակույթի ճապոնականացված, ազգայնացված դրսևորումն է: Եվ ընդհանրապես, ճապոնական հետպատերազմյան մշակույթի վերլուծությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ որևէ մշակույթ, լինի դա արևմտյան՝ ամերիկյան, թե եվրոպական, չի կարող ենթարկվել փոխապատվաստման, և այդ մշակույթների այսօր ծավալվող հաղթարշավը, միևնույն ժամանակ, այլ մշակույթների հետ փոխզիջումային ազգայնացման, տեղայնացման հետևանք է, և որ յուրաքանչյուր մշակույթ նման փոխադարձ շփումների ժամանակ հանդես է գալիս ոչ միայն սպառողի, այլև արտադրողի դերում, երբ համընդհանրացման

²¹² Ճապոնական հոգևոր մշակույթի խնդիրները այդ հեղինակը նույն դիտանկյունից քննել է իր «Ճապոնիայի հին և նոր աստվածները» արժեքավոր աշխատության մեջ (С. А. Арутюнов, *Старые и новые боги Японии*. Москва, "Наука", 1968):

երևույթներով պայմանավորված՝ արևմտյան կամ համընդհանուր մշակույթը հարստանում է ևս մեկ էթնիկական մշակույթին բնորոշ առանձնահատկություններով:

Հետպատերազմյան արդիականացմանը զուգընթաց տեղի ունեցող գյուղական բնակչության թվաքանակի կտրուկ նվազման և բարձր տեմպերով ուրբանիզացիայի հետևանքով տիրապետող և մոդելային դարձավ քաղաքային, ավելի ստույգ՝ «աշխատավարձով ապրող մարդու»²¹³ կենցաղը, ինչը պայմանավորված էր այն բանով, որ տնտեսապես զարգացող ու բարեկեցիկ հասարակության միջին խավում իրենց տեսակարար կշռով մեծամասնություն կազմեցին պետական ծառայողները՝ «սպիտակ վերնաշապիկավորները», և մանր սեփականատերերն ու փոքր բիզնեսով զբաղվողները, որոնց կենցաղը քաղաքային սպառողական էր: Երկրի տնտեսության ճյուղային առանձնահատկությունների ընդհանուր փոփոխությունների հետևանքով գյուղացիական կենցաղում ևս տեղի էին ունենում որոշակի փոփոխություններ: Գյուղատնտեսության վարման ավանդական եղանակները և գործիքները իրենց տեղն էին զիջում ժամանակակից միջոցներին: Գյուղատնտեսության մեջ տեղի էր ունենում նոր՝ մինչ այդ գոյություն չունեցած, այնպիսի ճյուղերի ձևավորում, ինչպիսիք էին, օրինակ, կաթնատու անասնապահությունը, դեկորատիվ ծաղկաբուծությունը և այլն²¹⁴: Տնտեսական և տեխնոլոգիական առաջընթացով պայմանավորված փոփոխություններից բացի, կենցաղում և մշակույթի այլ բնագավառներում կարևոր նշանակություն էին ստանում արևմտյան և ավանդական ճապոնական մշակութային համակարգերի միջև ակտիվ շփումների և փոխներգործության հետևանքով առաջացող փոփոխությունները:

Հարուստ ազգագրական նյութի հիման վրա Արությունովին հաջողվեց ապացուցել, որ նոր խորթ մշակութային համակարգը և դրա տարրերը ավելի մեծ հնարավորություն են ունենում տեղայնացվելու և յուրացվելու, եթե դրանք հարմարեցվում են տեղական մշակույթի տրամաբանությանը և համադրվում նրա հետ: Օրինակ՝ երբ ճապոնական կենցաղ ներթափանցեց աթոռը, սկսեց

²¹³ Անգլերեն՝ *salaryman*:

²¹⁴ Տե՛ս Арутюнов С., նշվ. աշխ., էջ 206:

հետզհետե փոխվել նաև հատակից փոքր-ինչ բարձր գտնվող հարթ մակերևույթին մատելու ավանդական սովորույթը: Ըստ այդմ՝ հետպատերազմյան շրջանում, երբ կենցաղում տարածվեց այնպիսի մի նոր միջոց, ինչպիսին հասարակական տրանսպորտն է, թեև այնտեղ մատատեղերը աթոռատիպ էին, սակայն ճապոնական ավանդական կենցաղային սովորությունների ազդեցությամբ զնացքների վագոններում և հասարակական տրանսպորտի այլ միջոցներում տեղադրվեցին հանգստանալու համար նախատեսված «տատամիներ», որոնք հատակից մի փոքր բարձր էին: Նաև աթոռների և մատատեղերի տակ դրվում էին ոտքերի հանգստի համար նախատեսված հատուկ հարմարանքներ, ինչը ևս սերվում էր ավանդական կենցաղային մշակույթից: Իհարկե, հետագայում մշակութային այս ինքնատիպ համադրումը զարգացավ՝ կորցնելով բնորոշ ճապոնական տարրերը, որոնք այսօր միայն հազվադեպ են պահպանվել, այն էլ՝ մավային տրանսպորտում:

Շատ դեպքերում, երբ զարգացմանը զուգահեռաբար հասարակական պահանջմունքը կտրուկ փոխվում է, նույնքան կտրուկ են փոխվում նաև այդ պահանջմունքների բավարարման ձևերը, որոնք գրեթե միշտ ներմուծվում են որպես պատրաստի լուծումներ, և նման պարագայում ավանդական մշակույթը սակավ, եթե չասենք՝ աննշան, հնարավորություն ունի փոխադարձաբար ներգործելու փոխառյալ մշակույթի վրա: Նման երևույթներ առկա էին նաև հետպատերազմյան ճապոնիայում, երբ առանձին՝ մշակութային առանձնահատկությունների տեսանկյունից մախկինում մեծ կարևորություն ունեցող, առարկաների ու երևույթների նկատմամբ պահանջարկի վերացումը (օրինակ՝ ավանդական սանրվածք, ծխամորճեր և այլն) հանգեցնում էր նաև գործունեության առանձին տեսակների վերացմանը, և դրանց փոխարեն հասարակական կյանք էին ներխուժում լրիվ նոր, արդեն պատրաստի լուծումներ, մշակութային երևույթներ ու տարրեր, ինչպես, օրինակ, թերթավաճառությունը կամ վարսավիրությունը:

Սակայն ամենևին էլ պարտադիր չէ, որ կենցաղային երևույթների և առարկաների՝ հասարակական նոր պահանջմունքներից համապատասխանությամբ կատարվող արդիականացումն ընթանա կա՛մ նորի յուրացման, կա՛մ ավանդականի ու նորի համադրման ճանապարհով: Դա կարող է կատարվել նաև ավանդականի

տեխնիկական կատարելագործման միջոցով: Արդիականացման մեծ օրինակներ են ածխային տաքացուցիչ տարրերի փոխարեն էլեկտրական տարրերով աշխատող «*օկիզոբիացուն*» կամ ավանդաբար փայտով տաքացվող «*ֆուռո*» լոգարանների տաքացումը գազով: Անգեն աչքով նույնիսկ տեսանելի է, որ ճապոնացի քաղաքացու կենցաղում առկա են ավանդականի և փոխառյալի խաղաղ գոյակցություն, փոխներթափանցում ու փոխազդեցություն: Չնայած, որ դա բնորոշ է բոլոր փոխադարձ մշակութային շփումներին՝ աշխարհի ո՛ր ծայրում էլ դա լինի, սակայն ճապոնական մշակութային համադրման առանձնահատկությունը կարելի է բնութագրել բարձր աստիճանի ներդաշնակությամբ:

Ինչպես նշվեց, ժամանակակից՝ հատուկ ինտենսիվությամբ ընթացող, համընդհանրացման պայմաններում ճապոնական մշակույթը հանդես է գալիս ոչ միայն սպառողի, այլև մշակութային արժեքներ արտադրողի ու մատակարարի դերում: Դա հատկապես ցայտունորեն է դրսևորվում արվեստի, ճարտարապետության և կենցաղի, խոհարարության բնագավառներում²¹⁵: Ճապոնական մշակույթին բնորոշ զգալի թվով գծեր զնալով ավելի մեծ տարածում են ստանում Արևմուտքում: Բացի ճարտարապետական լուծումներից և տան ինտերյերի ձևավորումից, դա դրսևորվում է նաև դեկորատիվ զարդարանքի, այգիների, հատկապես՝ ձմեռային այգիների ձևավորման և այլ ասպարեզում: Ճապոնական մշակույթի մաս կազմող բազմաթիվ հանրահայտ դրսևորումների մասին խոսելիս բավական է նշել ճապոնական *սուշի* երևույթը, որը դարձել է համընդհանուր մշակույթի բաղադրիչ: Նույնպիսի վառ օրինակ է աշխարհի գրեթե բոլոր երկրներում ճապոնական արտադրության տեխնիկայի որակի նկատմամբ տասնամյակներ շարունակ ցուցաբերվող բացարձակ վստահությունը, կամ, այլ կերպ ասած, սպառողների անսահման վստահությունը «made in Japan» պիտակի նկատմամբ:

Համընդհանրացման հետևանքով մշակույթի առանձին գծեր կարող են ձեռք բերել էթնիկական (ինչ-որ մի էթնոսին բնորոշ), ենթաէթնիկական (բնորոշ էթնոսի մի մասին՝ տեղային կամ սոցիալական) և վերէթնիկական (բնորոշ մի քանի էթնոսների միաժամանակ)

²¹⁵ Стн Арутинов С., նշվ. աշխ., էջ 212-213:

որակներ: Վերէքնիկական մշակույթը կարող է լինել տարածաշրջանային վերէքնիկական, երբ տվյալ մշակույթը բնութագրական է աշխարհագրորեն ու էքնիկապես մոտ էթնոսների, և միջազգային վերէքնիկական, երբ տվյալ մշակույթը հավասարապես ընդունելի ու կիրառելի է տարբեր ծագում, պատմություն և աշխարհագրական դիրք ունեցող էթնոսների համար: Անգամ պայմանականորեն այդպես կոչվող վերէքնիկական միջազգային մշակույթը չի կարող բնութագրական լինել ամբողջ մարդկության համար. այն հատուկ է աշխարհագրական կամ տնտեսական զարգացածության յուրահատուկ տարածականությանը, իսկ իր արմատներով ձգվում - կապվում է առանձին էքնիկական մշակույթների հետ: Այլ կերպ ասած՝ մշակույթն ինքնին էքնիկական է, և դա ազգաբանության հիմնական մեկնակետն է: Յուրաքանչյուր մշակույթ կամ առանձին մշակութային տարր թեև տարբեր էթնոսների կողմից ստանում է ամենալայն ընդունելություն և կիրառություն, այնուամենայնիվ, իր հիմքում մնում է տեղային, էքնիկական²¹⁶:

Էթնոմշակութային զարգացումների ներկա փուլում կարող ենք, հենվելով համընդհանրացման ներկայիս միտումների վրա, փաստել, որ մշակույթների ավանդական բաժանումը նյութականի և հոգևորի թվում է արդեն հնացած և սակավ կիրառելի: Կարծում ենք, որ առավել արժանահավատը Յու. Սկրտումյանի կողմից առաջ քաշված տեսությունն է, ըստ որի՝ ցանկացած էթնոմշակութային հանրության մշակութային համակարգը բաժանվում է չորս մասի²¹⁷: Ընդունելով նման բաժանումը՝ մենք տեսնում ենք, որ *առաջնային արտադրության մշակույթի* մեջ էքնիկական տարրերը շատ քիչ են արտահայտված: Դրանք անհամեմատ ավելի լայն են ներկայացված կենսապահովման մշակույթում, մինչդեռ հումանիտար մշակույթում առկա են ինչպես էքնիկական, այնպես էլ վերէքնիկական մշակույթի դրսևորումներ, սակայն նա գերազանցապես հակված է ձգտելու համամարդկայինի, վերէքնիկական դրսևորումների, քանի որ ժամանակակից մարդու

²¹⁶ Տե՛ս Арутюнов С., *К проблемам этничности и интерэтничности культуры*. «Советская этнография», 1980, N 3, էջ 62:

²¹⁷ Տե՛ս Мкртумян Ю., *Основные компоненты культуры этноса: Методологические проблемы исследования этнической культуры*. Материалы симпозиума, Ереван, 1978:

հումանիտար գիտելիքները առավելապես նպատակաուղղված են իրենց առջև դնելու համամարդկային բնույթի խնդիրներ: Իսկ ահա սոցիոնորմատիվ մշակույթում բոլորից շատ են դրսևորվում էթնիկական առանձնահատկությունները, և այստեղ են եփվում, դաջվում ներկայացված մշակութային բաժինների տարրերը:

Խորհրդային ազգագրության մեջ կարծիք կար, թե էթնոսների ավանդական նյութական մշակույթները սովորաբար փոխհարաբերվում են ոչ թե մեկը մյուսի հետ, այլ խառնէթնիկ կամ համաշխարհային մշակույթի հետ՝ աստիճանաբար իրենց տեղը զիջելով վերջինիս²¹⁸: Սակայն, նախ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ համաշխարհային կամ միջազգային, համամարդկային մշակույթ կոչվածը մի վերացական հասկացություն է, փիլիսոփայական վերացարկում. իրականում գոյություն ունեն միայն նրա առանձին գոտիական տարբերակները: Երկրորդ, համաշխարհային, կամ համընդհանուր, նյութական մշակույթը սնուցող վերջնային երակներ մնում են տեղային, էթնիկական, ավանդական մշակույթները, որոնք փոխադարձ շփումների միջոցով հարստացնում են միմյանց՝ հաճախ ոչ թե ուղղակի, այլ անուղղակի ճանապարհով, համընդհանուր անվանվող մշակույթի և յուրահատուկ գոտիական մշակույթի շփման հետևանքով: Երրորդ, էթնիկական մշակույթը, շփվելով համընդհանուրի հետ, մի կողմից՝ հարստացնում է այն, իսկ մյուս կողմից՝ ոչ այնքան իր տեղն է զիջում, որքան իրեն է հարմարեցնում, յուրացնում այն:

Մշակույթի համընդհանրացումը, անշուշտ, դրական երևույթ է: Այն չպետք է դիտվի որպես հստակ ժամանակային սահմաններ ունեցող մշակութային գործընթաց, որն սկսվել է մի կետում և մեկ այլ կետում պետք է ավարտվի: Մշակութային համընդհանրացման գործընթացները ասպարեզ են եկել ամենատարրական մակարդակներում տեղեկության ի հոսքերի մատչելիության աճմանը զուգընթաց: Հետևաբար դրանք կարող են դադարել միայն այն ժամանակ, երբ վերանա մշակույթը, ասել է թե՛ մարդը: Ճապոնիայի կենցաղից վերցված օրինակները ցույց են տալիս,

²¹⁸ Стн Козлов В., *Этнос и Культура: К проблеме соотношения национального и интернационального в этнографическом изучении культуры*, "Советская этнография", 1979, N 3, с. 83:

որ յուրաքանչյուր էթնիկական մշակույթ փոխշփման ժամանակ փոխանցում է որոշ մշակութային չափումներ և շերտեր, որոնք հետագայում համընդհանրանում են, և որոնք իրենց հերթին տեղայնացվում են տարբեր տեղային մշակույթներում՝ տեղական առանձնահատկություններին համապատասխան:

Էթնոսի մշակույթում և էթնիկական հոգեբանության մեջ հիմքային, կայուն մի շարք առանձնահատկությունների հետ մեկտեղ առկա են էթնիկական ինքնության շատ գծեր, որոնք պատմամշակութային այս կամ այն գործոնների ազդեցությամբ ենթարկվում են փոփոխությունների: Կարելի է բերել շատ օրինակներ, երբ սոցիալ-տնտեսական և մշակութային-տեղեկատվական դաշտերի փոփոխման՝ ընդարձակման կամ նեղացման, հետևանքով տարբեր էթնոսների հոգեբանությունից անհետացել կամ փոխակերպման են ենթարկվել այն տարրերը, գծերը, որոնք տվյալ էթնոսի համար եղել են նույնիսկ առանցքային: Օրինակ՝ հետպատերազմյան Ճապոնիայում, երկրի սոցիալ-տնտեսական ծաղկմանը զուգընթաց, լրջորեն դրվում էր նախկինում երկրից հեռացած ճապոնացիների հայրենիք վերադառնալուց կամ արտասահմանում պաշտոնական ծառայությունն ավարտելուց հետո ճապոնական հասարակության մշակութային օրենքներով նրանց ապրելու և համապատասխան վարքագիծը վերականգնելու համար «վերականգնողական» կամ «ճապոնականացման» կարճաժամկետ ուսումնական ծրագրեր ունենալու խնդիրը: Ոչ առանց հիմքի կարծում էին, որ այդ ժամանակահատվածում ճապոնացիներն այնքան էին հեռանում ճապոնական կացութաձևից, որ այն հնարավոր էր վերականգնել միայն վերականգնողական դասընթացների միջոցով:

Գրականության մեջ մշակութային փոխազդեցությունների ու խաչասերումների վերաբերյալ ապագայաբանական (ֆուտուրոլոգիական) բնույթի աշխատությունների պակաս չի զգացվում: Եթե անգամ հիմք ընդունենք այն չիմնավորված թեզը, թե էթնիկ և ձևավորվող մեծ էթնոքաղաքական հանրույթները միտում ունեն դառնալու նաև պոպուլյացիոն հանրույթներ, և թե մոտ կամ հեռու ապագայում չի բացառվում ընդհանրապես պետական սահմանների ու պետականությունների վերացումը, ապա միևնույն է խիստ թերարժեք կլինի այն պնդումը, որ ապագայում

երկրագնդի բնակիչները կունենան մարդաբանական նույն տիպը, մեկ համընդհանուր մշակույթ և կիսուեն մեկ ընդհանուր լեզվով: Իհարկե, համաշխարհային հաղորդակցության մեկ համընդհանուր լեզու արդեն ձևավորվում է. դա անգլերենն է: Այդ միտումն ավելի է խորանում տեղեկատվական տեխնոլոգիաների ու համացանցի մատչելիության աստիճանի բարձրացմամբ: Կարելի է նաև պնդել, որ արդեն ձևավորվել է քաղաքային նյութական մշակույթի և վարքագծի կանոնների միասնական համաշխարհային համակարգ, թեև դա ամենևին էլ չի նշանակում, որ բացառվում են դրա տեղական առանձնահատկություններն ու տարբերությունները: Ինչպես ժամանակին Թոմաս Մորը, ելնելով իր դարաշրջանի Եվրոպայի տնտեսական հնարավորություններից, կարծում էր, որ սոցիալիստական հասարակությունում բոլորը պետք է հագնեն միևնույն, ընդ որում՝ բավական կոպիտ, հագուստ, այնպես էլ արդի շատ հետազոտողներ, տրվելով վերացականությանը, ասում են գրեթե նույնը լեզվի և մշակույթի մասին: Բայց, միևնույն ժամանակ, ինչպես ցույց է տալիս Ճապոնիայի համընդհանրացման և միջազգայնացման փորձը, կա այսպես կոչված երկմշակութայնություն, երբ տարբեր ծագում ու տարբեր մեկնակետեր ունեցող զանազան մշակույթներ հաջողությամբ գոյակցում են, զուգահեռաբար զարգանում են՝ գտնվելով փոխադարձ ազդեցության և փոխհարստացման անվերջ գործընթացում: Սակայն երկմշակութայնությունը ինչպես Ճապոնիայում, այնպես էլ աշխարհի շատ այլ հասարակություններում այն անցումային իրավիճակը չէ, որը կարճ ժամանակում կհանգեցնի միասեռ մշակույթի ստեղծմանը: Դրա համար պետք է շատ ավելի երկար ժամանակ: Նույն դատողությունները կարելի է հաջողությամբ արտածել նաև երկլեզվության և բազմալեզվության երևույթների վրա, երբ, ինչպես Պարագվայի և Լյուքսեմբուրգի օրինակով ցույց է տվել Ս. Արությունովը, դրանք չպետք է պարտադիր կերպով դիտվեն որպես միալեզվությանը տանող անցումային իրավիճակ ու գործընթաց: Փորձը վկայում է, որ դա նորմալ գոյակցության տարբերակ

է, որն ընդամին համընդհանրացման ինտենսիվության աճմանը համեմատ գնալով ավելի է տարածվում²¹⁹:

Ընդհանրապես էթնիկական ինքնագիտակցության և ինքնության հարցերում հույժ բարդ է հիմնվել աղբյուրների և գրականության մեկ կամ ընդամենը մի քանի խմբերի վրա, մանավանդ, եթե քննության են առնվում էթնոժազման կամ էթնոսի պատմության առավել վաղ շրջանների խնդիրները²²⁰: Սակայն Մապոնիայի հետպատերազմյան շրջանի համար այս հարցադրումների լուսաբանումը հիմնավորված է թվում, երբ մենք հենվում ենք ինչպես դաշտային աշխատանքների արդյունքների, այնպես էլ այլ հետազոտողների կողմից հրապարակված արժեքավոր աշխատությունների և հեղինակի անձնական դիտարկումների վրա, որոնք երբեմն ծառայում են որպես հետևությունների համար կարևոր սկզբնաղբյուր:

Չարգացնելով էթնոսի առաջացման և վերջին ժամանակներում մեծ ընդունելություն ստացած տեղեկությանին տեսությունը՝ Արությունովը և Չեբոկսարովը եզրակացնում են, որ էթնիկ հանրության բոլոր տեսակները հիմնված են տեղեկատվական կապերի վրա²²¹: Այս տեսության դիրքերից խոսելով ապագայում հնարավոր համընդհանուր մշակութային և էթնիկ տեղաշարժերի մասին՝ հեղինակները պնդում են, որ գնալով ավելի նկատելի են դառնում տարբեր ներէթնիկական և միջէթնիկական տեղեկատվական հոսքերի ինտենսիվացումը, ճյուղավորումը և փոխալսյամանավորումը: Եթե այս գործընթացները դիտարկում ենք օրեցօր զարգացող և մատչելիության աճմամբ աչքի ընկնող համացանցի, որն իրավամբ կարելի է պատկերավոր ձևով բնութագրել որպես «21-րդ դարի գնացք», ինչպես նաև համընդհանրացմանը նպաստող այլ՝ ոչ պակաս կարևոր, գործոնների օրինակով, ապա ճշմարիտ է թվում Արությունովի և Չեբոկսարովի այն կանխատեսումը, թե *Homo*

²¹⁹ Տե՛ս Арутюнов С., *Двуединство дивергенции и гомогенизации*. “Советская этнография”, 1976, N 4, էջ 133:

²²⁰ Տե՛ս Арутюнов С. и Хазанов А., *Проблемы археологических критериев этнической специфики*. “Советская этнография”, 1979, N 6, էջ 88:

²²¹ Տե՛ս Арутюнов С. и Чебоксаров Н., *Передача информации как механизм существования этносоциальных и биологических групп человечества*. “Расы и Народы”, 1972, N 2, էջ 20:

sapiens տեսակի տեղային կենսաբանական միավորները ապագայում նորից կվերածվեն երկրագնդային մարդկային հանրության միայն տեղական միկրոպոպուլյացիաների²²²։ Վերլուծության ենթարկելով Բրազիլիայում բնակվող ճապոնական համայնքին բնորոշ ազգաբանական գծերը և հատկապես երկշերտ էթնիկական ինքնագիտակցության խնդիրները՝ Արությունովը, հիմնվելով էթնոսի տեղեկության տեսության վրա, առաջ է քաշում ըստ էության գաղութների, սփյուռքի էթնիկական և մշակութային դիմագծի պաշտպանության գործում լեզվի ունեցած կարևոր դերակատարության խնդիրը։ Այսպես, երբ *խստեյը* խոսում է այլ ճապոներենով, իսկ *նիստեյը* և առավել ևս *սանստեյը* ճապոներենին տիրապետում են այն մակարդակով, որ կարողանան գործածել կենցաղում, ապա տեղեկության մատակարարման կապուղին չի ապահովվում ուղղաձիգով, ինչն անչափ կարևոր է տարբեր սերունդների միջև էթնիկական ինքնությանը բնորոշ գծերի ժառանգականության առումով։ Ըստ էության, երբ սփյուռքում, մանավանդ՝ Բրազիլիայում ճապոնական սփյուռքի դեպքում, վերանում, թուլանում, անհետանում են տարածամանակյա (դիախրոն) տեղեկատվական հոսքերը, էթնիկական ինքնության մեջ տեղի է ունենում ամենաեական փոփոխությունը՝ էթնիկ պատկանելության գիտակցման փոփոխությունը²²³։

Կրթության նկատմամբ ճապոնացիների ունեցած յուրահատուկ, շատ գծերով հայերի հետ զուգահեռվող վերաբերմունքի վկայությունն է նաև Բրազիլիայում համեմատաբար սովորաբիվ ճապոնական գաղութի պատմությունը։ Այստեղ կրթության կազմակերպման գործում ճապոնացիների ցուցաբերած հատուկ շահագրգռվածության պատճառով Բրազիլիայում տարածված է մի ասույթ, թե «բրազիլացիները, բնակություն հաստատելով նոր վայրում, կառուցում են եկեղեցի, իսկ ճապոնացիները՝ դպրոց²²⁴»։ Օրինակ՝ Բրազիլիայում ճապոնական համայնքի ազգաբանական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, չնայած շեշտված

²²² Տես նույն տեղում, էջ 30։

²²³ Տես Арутюнов С., *Японцы в Бразилии*. «Расы и Народы», 1972, N 2, էջ 264; Арутюнов С., *Народы и культуры: развитие и взаимодействие*. Москва, 1989, էջ 23։

²²⁴ Տես նույն տեղում, էջ 260։

մարդաբանական և մշակութային տարբերություններին, շատ *նիսեյների*²²⁵ էթնիկական ինքնագիտակցությունը երկակի է, և գործում է «ոգով ճապոնացի, մտքով՝ բրազիլացի» սկզբունքը²²⁶:

Տարբեր ավանդական մշակույթների հաշվին համընդհանուր կամ, ինչն ավելի բնութագրական կլինի, համընդհանուր արդյունաբերական-քաղաքային մշակույթի հարստացումը շարունակական գործընթաց է, և չպետք է երբեք սպասել, որ մի օր այդ գործընթացը կդադարի երկկողմանի բնույթ ունենալուց: Օրինակ՝ Հարավային Ամերիկայի մի քանի երկրների համար ավանդական տարազ համարվող պոնչոն 1970-ական թթ. ներխուժեց եվրոպական քաղաքային մշակույթ և դարձավ նրա բնութագրական բաղկացուցիչը: Ճապոնիային վերաբերող նյութի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ առաջիկայում ևս ձևավորվող համընդհանուր մշակույթի համար որպես ակունք և սնուցող արմատ հանդես են գալու տարբեր էթնիկական մշակույթներ, և այս գործընթացը լինելու է շարունակական, ինչպես այն եղել է ամբողջ պատմության ընթացքում: Որպես օրինակ կարելի է բերել նաև ջազը, որը ծագումով լինելով աֆրիկյան, ներգաղթողների հետ ներթափանցեց ամերիկյան մայր ցամաք, ամերիկանացավ և այժմ հանդես է գալիս որպես ամերիկյան համընդհանուր մշակույթի կարևոր տարր:

Այս գործընթացների ուսումնասիրությունը հանգեցնում է նաև մեկ այլ կարևոր հետևության, որ դրանց ընդգրկումների և տեղեկատվական հոսքերի ու ցանցերի բազմաճյուղավորմանն ու ինտենսիվացմանը զուգահեռաբար ձևավորվող համընդհանուր մշակույթը դառնում է փոքր ժողովուրդների համար մի անկառավարելի և նրանց կամքից անկախ երևույթ, որի վրա ռեալ ազդեցության հնարավորությունները բավական սուղ են, եթե չասենք, որ իրականում՝ խորքային առումով, պարզապես չկան: Այստեղից էլ հետևում է, որ ժամանակակից, փոքր շուկա ու սահմանափակ

²²⁵ «Նիսեյ» նշանակում է երկրորդ սերունդ. դա այն ճապոնացիներն են, որոնք ծնվել են արդեն Բրազիլիայում, սակայն որոնց ծնողները ծնվել են Ճապոնիայում: Նույն սկզբունքով Ճապոնիայում ծնված և Բրազիլիա ներգաղթած սերունդը կոչվում է «իսսեյ», կամ առաջին սերունդ, իսկ արդեն Բրազիլիայում ծնված ճապոնացուց ծնված ճապոնացին կոչվում է «սանսեյ», կամ երրորդ սերունդ:

²²⁶ Տես նույն տեղում, էջ 261:

սպառողներ ունեցող հասարակությունների, երկրների, ազգերի ու պետությունների համար «կո՞ղմ եք համընդհանրացմանը, քե՛ղեմ» հարցադրումը դառնում է ավելի շատ արձագանք էթնոմշակութային դիմագծի պարտադրված փոփոխություններից ածանցված հավաքական մտահոգություններին, հավաքական ինքնության մեջ տեղաշարժեր հարուցող իրողություններին ու գործոններին: Ճապոնական նյութը ևս գալիս է ապացուցելու, որ համընդհանրացումը երկկողմանի գործընթաց է, ինչը մշտապես բնութագրական է եղել մարդկությանը, ուստի և փոքր ժողովուրդների համար անհանգստանալու պատճառ չկա, քանի որ նրանցից քիչ բան է կախված: Ճապոնիայի օրինակը նաև հուշում է, որ այն ժողովուրդները, որոնք ձևավորվող համընդհանուր մշակույթի ճարտարապետության մեջ ներդրում են ավելի շատ շաղաղ և ցեմենտ, ունեն իրենց ինքնության և մշակութային կերպի պահպանման ու տարածման ավելի մեծ հնարավորություններ: Սա օբյեկտիվ գործընթաց է, որն սկսվել է մարդկության ծագման հետ, և նման խնդիրների քաղաքականացումը կապ չունի իրական, խորքային մշակութային գործընթացների հետ:

Միջազգայնացման հաջորդ կարևոր գործոնը մասնագիտական վերպետական ասոցիացիաների գործունեության ակտիվացումն է, երբ ձևավորվում են համաշխարհային ընդգրկմամբ «համքարություններ», հաճախակի են դառնում միջազգային քննարկումները, սիմպոզիումները, հավաքները և այլն: Տեղի են ունենում ցուցադրություններ, միջազգային փառատոներ, կրթական փոխանակման ծրագրերի, կառավարական ու մասնավոր միջոցներից գոյացած տարբեր հիմնադրամների կողմից իրականացվող ծրագրերի ինտենսիվացում և այլն: Այս ամենը ևս նպաստում է մշակույթների երկխոսությանը և հանդիսանում է համընդհանուր մշակույթի ձևավորումը խթանող կարևոր գործոն: Նաև այդ գործընթացի շնորհիվ է, որ արևմտյան և ավանդական մշակույթները փոխներթափանցում և համադրվում են: Եվրոպական փողկապը կամ բաճկոնը Ինդոնեզիայում դարձել են տոնական տարազի մի մասը, մինչդեռ կառավարման ճապոնական համակարգը տեղայնացվում է գերմանական կամ նորգելանդական ընկերություններում՝ դրանց աշխատողների կարիքներին համապատասխան: Այս առումով համընդհանուր և էթնիկական

մշակույթների նման փոխներթափանցումն ընդգրկում է գրեթե բոլոր բնագավառները՝ կենսապահովման, հումանիտար և սոցիոնորմատիվային ոլորտները:

* * *

Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման ու ճապոնացիների էթնիկական ինքնության փոխառնչության՝ մեր առջև դրված խնդիրների քննարկումը և հետևությունները անհնարին կլինեին առանց հեղինակի կողմից Ճապոնիայում կատարված դաշտային ազգագրական աշխատանքի արդյունքների հաշվառման: Դաշտային աշխատանքի հիմնական արդյունքը, բացի հեղինակի անձնական դիտարկումներից, ութ անհատական հարցազրույցներն են և խմբային հարցախոյզը:

Տվյալ խնդիրներով զբաղվող և հայտնի ճապոնագիտական կենտրոններում աշխատող մասնագետների հետ այդ ութ անհատական հարցազրույցները (տես հավելված երեք) անցկացվել են առանց նախապես մշակված հարցարանի, թեև հեղինակը նախապես կազմել էր այն պարտադիր հարցերի շրջանը, որոնք քննարկվել են հարցազրույցների ընթացքում: Ըստ այդմ՝ հավելվածում ներկայացվում է միայն անհատական հարցազրույցների ցանկը: Նման ընտրությունը պայմանավորված է ինչպես հարցազրույց տալու պատրաստակամություն հայտնած անձանց մասնագիտական գործունեությամբ և այդ բնագավառում նրանց ունեցած դիրքով, այնպես էլ թեմային առնչվող հնարավորինս լայն շրջանով խնդիրների վերաբերյալ նրանց տեսակետներն ու մոտեցումները պարզելու անհրաժեշտությամբ: Քանի որ այդ մասնագետներից մի քանիսը տարբեր ճապոնագիտական հանդեսներում ունեն մեզ հետաքրքրող խնդիրների վերաբերյալ անգլիալեզու բազմաթիվ հրապարակումներ, շատերի հետ ունեցած հարցազրույցներում մենք հիմնական շեշտը դրել էինք այդ հրապարակումներում նրանց հայտնած այս կամ այն տեսակետի կամ ընդհանրացման վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ, մեկնաբանություններ ու փաստեր ստանալու վրա: Մյուս կողմից՝ հարցազրույցների վարման նման սկզբունքը, որն ապահովում էր մտքերի փոխանակման ոչ ձևարկված մթնոլորտ և խլում էր շատ ավելի ժամանակ, քան կտևեր կոնկրետ հարցարանով անցկացվող հարցազրույցը,

հնարավորություն էր տալիս հաղթահարելու ճապոնացիների հետ շփումներին բնորոշ այն դժվարությունը, որ նրանք, մանավանդ անգլերենով գրուցելիս, գերադասում են մինչև վերջ չարտահայտել, չբացահայտել խոսակցության առարկայի նկատմամբ իրենց իսկական մոտեցումներն ու տեսակետները:

Խմբային հարցախույզի հարցարանը հեղինակը դաշտային ազգագրական աշխատանքների մեկնելուց առաջ՝ 2002 թ. ամռանը, քննարկեց ինչպես ԵՊՀ ազգագրության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, երջանկահիշատակ Յուրի Սկրտումյանի, այնպես էլ շվեդական Լուդֆի համալսարանի Արևելյան և Հարավարևելյան Ասիայի երկրների ուսումնասիրությունների կենտրոնի դասախոս Հանս Հագերդալի ու նույն համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի պրոֆեսոր Սվանտե Լուդդերգի հետ: Նրանց արժեքավոր դիտողությունները նկատի առնվեցին ինչպես խմբային հարցախույզի հարցարանի վերջնական տարբերակի մշակման, այնպես էլ անհատական հարցազրույցների ժամանակ պարտադիր հարցերի ու խնդիրների շրջանակը ճշգրտելու հարցում:

Խմբային հարցախույզում ընդգրկված որոշ, հատկապես Ճապոնիայի պատմության ոչ վաղ անցյալին վերաբերող հարցերի դեպքում, որոնց ձևակերպումները կարող էին շոշափել հարցվողի հայրենասիրական զգացմունքները, որպես հարցադրումների հնարավոր սրությունը չեզոքացնող լուծում պայմանականորեն ներառում էին այսպես կոչված «բառակապակցությունը»: Մենք ելնում էինք այն նկատառումից, որ հարցվողները հարցարանում եղած առանձին հարցեր կարող էին որոշակի կարծրատիպերի ազդեցությամբ համարել իրենց համար վիրավորական:

Հարցարանը բաղկացած էր 49 հարցից: Ընդհանուր առմամբ դրանք կարելի է բաժանել 4 հիմնական խմբերի՝ ըստ մեր առջև դրված խնդիրների:

Առաջին խմբում ներառված հարցերի նպատակն էր պարզել ինչպես հարցվող երիտասարդության ինքնության տարբեր առանձնահատկություններ, այնպես էլ ընդհանուր խնդիրների վերաբերյալ նրանց տեսակետներն ու ընկալումները, ինչը մեծապես օգնեց որոշելու հարցախույզի այլ բաժիններում ստացված

տվյալների արժանահավատությունը և հետագա հետազոտությունների համար բացեց նոր հորիզոններ:

Հարցերի երկրորդ խումբը հնարավորություն էր տալիս պարզելու հարցվողների պատկերացումները Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման և այդ գործում ճապոնացիների էթնիկական ինքնության ունեցած դերակատարության հարցը: Այս խնդիրների նկատմամբ ժամանակակից ճապոնական երիտասարդության մոտեցումների պարզորոշումը կարևոր էր ոչ միայն հետպատերազմյան արդիականացման ներկայիս փուլաշրջանի հետ որևէ ժամանակային առնչություն չունեցող սերնդի կողմից անցյալի ձեռքբերումների հարցում ճապոնացիների էթնոմշակութային առանձնահատկությունների դերի ընկալման տեսանկյունից, այլև ինտենսիվ համընդհանրացման հետևանքով առաջ եկած երևույթները հաջողությամբ հաղթահարելու կարողությամբ օժտված ճապոնական երիտասարդության կողմից իր ինքնությունը ճանաչելու և գիտակցելու աստիճանի որոշման համար:

Երրորդ խմբի հարցերը նպատակաուղղված էին ի հայտ բերելու ճապոնական երիտասարդության պատկերացումները Ճապոնիայի նորագույն պատմության, անցյալի մութ էջերի և այդ էջերը լուսաբանող զանգվածային մշակույթի տարբեր դրսևորումների մասին, երիտասարդության վրա տվյալ դրսևորումների ունեցած ազդեցության իրական աստիճանը և հարցվող խմբի կողմից պատմական անցյալի հարցում երկրում ընթացող բանավեճի «սպառման» չափը:

Վերջին՝ չորրորդ, խմբի հարցերի նպատակն էր համակողմանիորեն պարզել հարցվողների պատկերացումները ճապոնացիների էթնիկական ինքնության փոխակերպման գործում առանցքային դերակատարություն ունեցող այնպիսի երևույթի մասին, ինչպիսին է այսօր գրեթե բոլորի շուրթերից հնչող համընդհանրացումը:

Չնայած հեղինակին ի սկզբանե պարզ էր, որ հարցվող խումբը դժվար թե խոր գիտելիքներ ունենա հայերի ցեղասպանության և ընդհանրապես Հայաստանի մասին, այնուամենայնիվ, հարցարանում ընդգրկվեց հրեաների ողջակիզման հետ մեկտեղ նաև հայերի ցեղասպանությանն առնչվող մեկ հարց: Դա նաև նպատակ էր հետապնդում գոնե մի որոշ չափով բարձրացնել թուրքական

կառավարության կողմից 20-րդ դարում իրականացված առաջին ցեղասպանության մասին հարցվող երիտասարդության իրազեկվածության մակարդակը²²⁷:

Խմբային հարցախույզի հարցարանը կազմվեց անգլերեն (հայերեն թարգմանությունը ներկայացված է հավելված 1-ում), այնուհետև Լուսինի համալսարանի Արևելյան և Հարավարևելյան Ասիայի երկրների ուսումնասիրությունների կենտրոնի ճապոներենի ավագ դասախոս Կաժուո Լունդստրյոմ-Սուժուկիի օգնությամբ թարգմանվեց ճապոներեն, որն էլ տրվեց քիրախային խմբին: Այնուհետև լրացված հարցաթերթիկները հավաքվեցին, և պատասխանները թարգմանվեցին անգլերեն ու ամփոփվեցին (հայերեն թարգմանությունը ներկայացված է հավելված 2-ում):

Խմբային հարցախույզն անցկացվեց երիտասարդության երկու առանձին խմբերի հետ: Առաջին խումբը կազմեցին Տոկիոյի արվարձաններից մեկի պետական միջնակարգ դպրոցի նախաավարտական դասարանի 16-17 տարեկան 103 աշակերտ: Հարցվողներին բաժանված 103 հարցաթերթիկներից լրացված վերադարձեցին 100 հոգի: Թեև հարցաթերթիկներում ինչպես այս, այնպես էլ մյուս խմբերի հարցվողներից պահանջվել էր լրացնել նաև պատասխանողի սեռն ու բնակության վայրը, սակայն սույն աշխատության խնդրո առարկայի տեսանկյունից այդ տվյալները՝ առանձին հարցերի առնչությամբ տարբեր սեռատարիքային ու բնակավայրային խմբերի տեսակետների միջև տարբերությունները, էական չեն, ուստի և այստեղ հատուկ ուշադրության կամ անդրադարձի չեն արժանացել:

Հարցվողների երկրորդ խումբը կազմեցին Տոկիոյի համալսարանի Արդյունաբերական հետազոտությունների ինստիտուտի երկրորդ տարվա ուսանողները՝ ընդհանուր թվով 100-ը:

²²⁷ Պատմական ոչ վաղ անցյալի կնճռոտ հարցերի վերաբերյալ ճապոնական երիտասարդության տեսակետները հարցարանի միջոցով հնարավորինս համակողմանիորեն վերհանելու ցանկությունը բացատրվում է նաև հեղինակի մտադրությամբ հետագայում նախաձեռնելու գիտական ուսումնասիրություն՝ նվիրված Օսմանյան Թուրքիայում իրագործված հայերի ցեղասպանության ու երկրորդ աշխարհամարտի տարիներին ճապոնական միլիտարիզմի անմարդկային գործողությունների մասին պատմական հիշողությանը և դրա վերաձևման գործում զանգվածային մշակույթի դերակատարությանը:

Հարցվողներին բաժանվեցին 100 հարցաթերթիկներ, և նույնքան էլ վերադարձվեցին: Հարցվողների երկրորդ խմբի միջին տարիքը 21-22 տարեկան էր: Այսպիսով՝ ընդհանուր առմամբ խմբային հարցախույզին մասնակցեցին 200 պատանի ու երիտասարդ: Ինչպես արդեն նշեցինք, անհատական հարցազրույցներով և խմբային հարցախույզի միջոցով ստացված տվյալները թեև այստեղ օգտագործվում են հատվածաբար, սակայն կարևոր նշանակություն ունեն ինչպես քննարկվող խնդիրների նկատմամբ հասարակական տրամադրությունների պարզորոշման, այնպես էլ հետագա հետազոտությունների ձեռնարկման տեսանկյունից: Դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ մեր առջև դրված խնդիրները քննելու համար զուտ մեթոդաբանական առումով հակված ենք ավելի մեծ նշանակություն տալու մասնագիտական գրականությանն ու օգտագործված այլ տեսակների աղբյուրներին: Եվ երկրորդ, դաշտային նյութի՝ հարցումների արդյունքների սահմանափակությունն ինքնին խոչընդոտում է դրա՝ որպես հետազոտության առաջնային աղբյուրի գործածմանը:

Խմբային հարցախույզի արդյունքները վկայում են, որ ժամանակակից ճապոնական երիտասարդության շրջանում էթնիկական ինքնության համար առանցքային նշանակություն ունեցող այնպիսի հարթությունում, ինչպիսին խմբային կողմնորոշումն է՝ ընտանիք, ուսումնական հաստատություն, ձեռնարկություն և այլն, հետպատերազմյան արդիականացման հետևանքով տեղի են ունեցել էական փոփոխություններ: Այս տեսակետից հետաքրքիր կլինեն ունենալ ոչ միայն Ճապոնիայում, այլև Հայաստանում անցկացված համապատասխան հետազոտության արդյունքներ և դրանց համեմատական վերլուծությամբ տեսնել հատուկ ինտենսիվությամբ ընթացող համընդհանրացման պայմաններում ավանդական արժեհամակարգի մեջ տեղի ունեցող փոփոխությունների դինամիկան:

Այն, որ հարցվողների հարաբերական մեծամասնությունը՝ 62 հոգի, որպես պատկանելության առաջնային հարթություն ընտրել են Ճապոնիան, իսկ դրանից մի փոքր պակաս՝ 60 հոգի, ընտրել են ընտանիքը, խոսում է այն մասին, որ, չնայած «միիզմի» անխուսափելի թվացող հաղթարշավին, ժամանակակից ճապոնական երիտասարդության շրջանում մինչև օրս շարունակում է

տիրապետող մնալ ինքնության ներդաշնակ եռաշերտության մոդելը, որը բազմիցս քննարկվել է *Նիհոնշինոռնի* ու *Նիհոնբունկառոնի* տեսակետներում և մասամբ վերլուծվել սույն աշխատության մեջ:

Մյուս կողմից՝ պետք է նկատի ունենալ, որ հարցախույզի մնան արդյունքները ճապոնականության և ճապոնական մշակույթի ինքնատիպության հարցերի լայն հասարակական քննարկումների անուղղակի ազդեցության արգասիքներ են:

Ինքնության ճապոնական և ասիական շերտերի վերաբերյալ հարցին տրված պատասխանները համահունչ են մեր այն պնդմանը, թե որևէ էթնիկ հանրության կյանքում միջմշակութային տեղեկութային հոսքերի էական տեղաշարժերին զուգահեռաբար, հատկապես՝ սկզբնական փուլերում, նկատելի է ինքնության ավելի լայն հարթություններին որոշակի դիմակայություն (ինչպես, օրինակ, վկայում են իրենց ասիացի կամ համայն մարդկության ներկայացուցիչ համարելու վերաբերյալ հարցերին ճապոնացիների տված պատասխանները), որի նպատակն է ինքնության ավելի նեղ հարթությունների գիտակցումն ուժեղացնելը: Սա մաս ինքնապահպանման բնագծի որոշակի դրսևորում է և ոչ միշտ է կառավարվում գիտակցությամբ:

Ճապոնիայում հետպատերազմյան շրջանում ամերիկյան ազդեցության (ինչպես մշակութային, այնպես էլ քաղաքական-ռազմական) կամ մասնագիտական գրականության մեջ երբեմն հանդիպող «ամերիկանացման» մասին վերը քննարկված դրույթները հաստատվում են մաս խմբային հարցախույզի արդյունքներով: Այսպես, հարցվողների 50 %-ից ավելին որպես Ճապոնիային առավել մոտ կանգնած երկիր նշեցին հենց ԱՄՆ-ը, իսկ նրանց 48 %-ը ցանկանում է ուսումնավարտելուց հետո աշխատել ամերիկյան կազմակերպություններում և ապրել ԱՄՆ-ում: Չնայած միայն խոր սոցիոլոգիական հետազոտությունները կարող են պատասխանել այն հարցին, թե ինչպես բացատրել, որ հարցվողները դրսևորում են, մի կողմից, ազգայնականության նկատմամբ ըստ էության դրական վերաբերմունք, մյուս կողմից՝ պատմական ոչ վաղ անցյալի դեպքերի նկատմամբ բավականաչափ «բացություն», այնուամենայնիվ, նրանց պատասխանները հնարավորություն են տալիս ենթադրելու, որ ճապոնական երիտասարդության շրջանում ինքնության

նման դրսևորումները որոշակի առնչություն ունեն գրեթե ամբողջ հետապատերազմյան ժամանակահատվածում ճապոնական հասարակությանն ուղեկցած ճապոնականության և ճապոնական մշակույթի շուրջ քննարկումների հետ:

Խմբային հարցախույզին մասնակցածների 76 %-ը կարևորեց Ճապոնիայի պատմության ուսումնասիրությունը, իսկ 78 %-ը այն համարեց հետաքրքրական: Մյուս կողմից՝ հարցվածների 64 %-ն իրեն ճապոնացի զգալու համար կարևորեց իր ժողովրդի պատմության իմացությունը: Թեև այս արդյունքներն ստացվել են մոտ տաս տարի առաջ, և չենք բացառում, որ ներկայումս ճապոնական երիտասարդության շրջանում տեղի ունեցած լինեն տեսակետների որոշ փոփոխություններ, սակայն նման ցուցանիշները և պատմության նկատմամբ բավական մեծ հետաքրքրությունը կարելի է դիտել որպես պատմական անցյալի վերաարժեքավորման հասարակական ու գիտական լայնածավալ քննարկումների ու բանավեճերի ազդեցության ակնառու հետևանք:

Պահպանողական պատմագրության և աջակողմյան մտավորականության կողմից հասարակական քննարկումների ասպարեզ բերված «ինքնախարագանման ոճով շարադրված պատմության» թեզը, ինչպես ցույց են տալիս մեր դաշտային աշխատանքի տվյալները, իրականում այդքան էլ լուրջ բովանդակային ազդեցություն չի ունեցել հիմնական թիրախային խմբի՝ ճապոնական երիտասարդության վրա: Հարցված երիտասարդների 85 %-ն իր ուսումնասիրած, հատկապես՝ երկրորդ աշխարհամարտին վերաբերող պատմագրության մեջ «հակաճապոնական» երանգներ չի տեսնում, թեև, մյուս կողմից, հարցվածների միայն 34 %-ն է ամբողջովին կամ մասամբ համաձայն Ճապոնիայի պատմության դպրոցական դասագրքերի բովանդակության հետ: Միևնույն ժամանակ, այն հանգամանքը, որ հարցվածների մոտ 15 %-ը կրթական հաստատություններում դասավանդվող Ճապոնիայի պատմության մեջ նկատում է որոշ «հակաճապոնական երանգներ», մոտ 65 %-ը արտահայտում է մեծ կամ սակավ անհամաձայնություն այդ դասագրքերի բովանդակության հետ, կամ մոտ 33 %-ի կարծիքով ժողովրդի պատմության մեջ կան որոշ ցավալի էջեր, ինքնին կարելի է դիտել որպես պատմության վերանայման

շուրջ ընթացող լայնամասշտաբ հասարակական քննարկումների մասնակի հետևանք:

Աջակողմյան մտավորականության կողմից քաղաքականացված զանգվածային մշակույթի, պատմագիտության և այլ մեխանիզմներով հասարակական քննարկումների դաշտ բերվող այն թեզը, թե Ճապոնիան Տոկիոյի դատավարությամբ արդեն իսկ ընդունել է պատերազմական հանցագործություններում իր մեղսակցությունը, և որ այլևս կարիք չկա հարևան երկրներից կրկին ներդրություն խնդրելու կամ փոխհատուցելու, կամ էլ այդքան խոսելու երկրորդ համաշխարհային պատերազմի մասին, մյուս կողմից, տասնամյակներ շարունակ արժարժվող այն թեզը, թե Ճապոնիան ոչ թե պատերազմ հրահրող էր, այլ զոհ, թվում է, այդքան էլ էական ազդեցություն չեն ունեցել ճապոնական երիտասարդության մոտեցումների վրա:

Խմբային հարցախույզով ստացված տվյալների ամփոփումը ցույց է տալիս, որ հարցվածների 85 %-ը համաձայն չէ Ասիան ազատագրելու նպատակով պատերազմի մեջ ներքաշվելու թեզին, 76 %-ը համաձայն չէ Ճապոնիայի՝ երկրորդ աշխարհամարտի զոհ լինելու տեսակետին, 72 %-ը դրական է գնահատում երկրորդ աշխարհամարտի մասին բանավեճերն ու քննարկումները, 74%-ը համարում է, որ ճապոնացիները պետք է ավելի հանդուրժողական լինեն և ընդունեն պատերազմի ժամանակ իրենց գործած մեղքերը, իսկ ուղիղ կեսը մերժում է երկրորդ աշխարհամարտի ժամանակ զոհված ճապոնացիներով հպարտանալու հանգամանքը: Չնայած վերջին տվյալը մեր կողմից հարցի ձևակերպման նրբության պատճառով հնարավորություն չի տալիս ընդհանրացնելու, թե արդյոք ճապոնական երիտասարդության կարծիքը տարածվում է առաջին հերթին պատերազմի այն մասնակիցների վրա, որոնք իրենք են դարձել ճապոնական միլիտարիզմի զոհը, թե վերաբերում է Տոկիոյի ռազմական տրիբունալի կողմից պատերազմական հանցագործներ ճանաչվածներին, այնուամենայնիվ, ելնելով այն փաստից, որ նրանց ընդամենը 21 %-ն է դիտել պատերազմի հանցագործ ճանաչված գեներալ Տոջո Հիդեկիին նվիրված «Հպարտություն. ճակատագրական պահը» ֆիլմը, իսկ դիտածների շուրջ 72 %-ը մասամբ կամ ընդհանրապես չի ընդունում ֆիլմում առաջ քաշվող գաղափարները, կարող ենք ենթադրել, որ

պահպանողական մտավորականության և աջակողմյան պատմագրության կողմից այդ ուղղությամբ գործադրված ջանքերը չեն տվել ակնկալվող արդյունքները:

Հարցերի այս խմբի առնչությամբ նկատենք, որ դրանցից մեկն ուղղված էր պարզելու, թե պատմական անցյալի նման ակտիվ քննարկումների ու, միևնույն ժամանակ, համընդհանրացման գործընթացների մեծ ինտենսիվության պարագայում ինչպես է ժամանակակից ճապոնական երիտասարդությունը տեսնում երկրորդ համաշխարհային պատերազմում ճապոնացիների գործած հանցագործությունների համար պատասխանատվության ճանաչման և ճապոնիայի կողմից ավելի մեծ միջազգային դերի ստանձնման միջև եղած կապը, քանի որ հայտնի են ճապոնիայի շարունակական ջանքերը՝ դառնալու ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ, ինչպես նաև արագ զարգացող Արևելյան ու Հարավարևելյան Ասիայի տարածաշրջանում պահպանելու տնտեսական առաջնորդի իր արդեն խամրող կարգավիճակը: Բացի այդ, հարցարանում նման հարցի ընդգրկումը նպատակ ուներ վերը ներկայացված պատմական անցյալի քննարկումների քաղաքականացման պայմաններում պարզելու, թե արդյոք հարցախույզի թիրախային խումբը ևս պատմական անցյալի խնդիրները տեսնում է քաղաքական հարթության մեջ և ճապոնիայի ապագա քաղաքական հեռանկարները կապում է պատմական անցյալի գնահատման հարցում հարևանների հետ ունեցած տարբերակվածությունների վերացման ու եղած կնճիռների հարթեցման հետ: Տվյալ հարցի բովանդակությունը մեզ համար հետաքրքրական էր նաև պատմական անցյալի շուրջ հայ-թուրքական կնճռի տեսանկյունից, քանի որ ժամանակակից Թուրքիան ևս, մասնակցելով համընդհանրացման և ինտեգրման գործընթացներին և հավակնելով Եվրոպայի Միությանը անդամակցությանը, միևնույն ժամանակ, պատմական անցյալի հետ կապված նման, եթե ոչ ավելի բարդ խնդիրներ ունի Հայաստանի ու հայ ժողովրդի հետ: Անշուշտ, հետաքրքիր կլինեին այս տեսակի հարցախույզ անցկացնել նաև ժամանակակից Թուրքիայում, ինչպես նաև Չինաստանում, Կորեայում ու Հայաստանում, համադրել դրանց միջոցով ստացված արդյունքները, ինչը կօգներ հասկանալու առկա խնդիրների հնարավոր լուծումները:

Եվ այսպես. հարցմանը մասնակցած ճապոնացի երիտասարդների 64 %-ը մասամբ կամ ամբողջովին ընդունում է այն տեսակետը, որ Ճապոնիան իր միջազգային հեղինակությունն ու կարգավիճակը պահպանելու համար պետք է ճանաչի երկրորդ համաշխարհային պատերազմում իր գործած մեղքը և դրա դիմաց վարձահատույց լինի: Նման արդյունքները, մի կողմից, հուշում են, որ Ճապոնիայում աջակողմյան պատմագրությունն զգալի հաջողությունների չի հասել, մյուս կողմից՝ որոշակի հիմք են տալիս ենթադրելու, որ տեղեկատվության ազատության և հատուկ ինտենսիվությամբ ընթացող համընդհանրացման պայմաններում, չնայած պատմական անցյալի ուրացման և կեղծման հնարավոր բոլոր փորձերին, հասարակական կարծիքի նժարը, այնուամենայնիվ, թեքվում է պատմության հետ հաշվի նստելու կողմը: Այս ամենն իր հերթին հիմք է տալիս կանխատեսելու, որ համընդհանրացման ու եվրաինտեգրման գործընթացների խորացմանը և Թուրքիայի եվրոպականացմանը զուգահեռաբար թուրքական հասարակության մեջ գնալով կաճի իր պատմությանը «բաց աչքերով» նայելու կողմնակիցների հարաբերական կշիռը, ինչի ականատեսը մենք դառնում ենք վերջին երկու-երեք տարիներին, հատկապես՝ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի նախաձեռնության համատեքստում:

Ճապոնական երիտասարդության վրա պատմական անցյալի վերաարժեքավորման՝ 1990-ական թվականներից նոր թափ առած շարժման, մասնավորապես՝ աջակողմյան-պահպանողականների ունեցած ազդեցության սահմանափակության վկայությունն են նաև պատմական անցյալի առանձին հարցերի վերաբերյալ հարցախույզի տվյալները: Այսպես. հարցման ենթարկված ճապոնացի 200 երիտասարդների 89 %-ը հավատում է Նանկինի զանգվածային կոտորածների պատմական իսկությանը, 55 %-ը դրականորեն է վերաբերվում Ճապոնիայի կողմից Մանջուրիայի գրավման հարցի քննարկումների ծավալմանը, 89 %-ը հավատում է, որ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ գործել են «կայսերական հասարակական տներ»,

իսկ «731-րդ ստորաբաժանման»²²⁸ մասին լսածների շուրջ 80 %-ը հավատում է դրան: Բավական հետաքրքրական է այս տվյալները համեմատել երկրորդ աշխարհամարտի ժամանակ գերմանացիների կողմից հրեաների ողջակիզման մասին հարցվածների իրազեկվածությունը փաստող տվյալների հետ: Ընդունված է համարել, որ պատմական անցյալի մութ էջերի ճանաչման, դատապարտման ու հատուցման հարցերին տեղյակ օտարերկրացիները սովորաբար լինում են ավելի օբյեկտիվ և առաջադեմ, քան տվյալ հասարակությունը²²⁹: Սակայն մեր ունեցած տվյալները հակասում են այդ տեսակետին. հարցվածների գրեթե նույն մասն է տեղեկացված, մի կողմից, ողջակիզման, մյուս կողմից՝ Նանկինի կոտորածների ու «731-րդ ստորաբաժանման» մասին²³⁰:

Հարցախույզի տվյալ խմբի հարցերից ստացված արդյունքների ամփոփումը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ, չնայած պատմական անցյալի շուրջ ծավալված ու վերը ներկայացված զանգվածային քննարկումներին ու դրանց քաղաքականացմանը, այդուհանդերձ դրանք գաղափարական առումով էական ազդեցություն չեն գործել ճապոնական երիտասարդության վրա:

²²⁸ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Ճապոնիայի կայսերական զինված ուժերում մարդկանց վրա կենսաբանական և քիմիական հետազոտություններ կատարող հատուկ բանակային միավոր:

²²⁹ Sēu Bergstrom J., *Me and My Nation: National Identity, Group Narcissism, and Historical Discourses in the Wake of Crisis in Japan*. Lund, Psykologexamensuppsats, Institutionen för Psykologi av Lund Universitet, v. 3. N 15, 2001, էջ 81:

²³⁰ Այստեղ ցավով պետք է արձանագրել, որ ինչպես այդ երկրում, այնպես էլ Արևելյան ու Հարավարևելյան Ասիայի տարածաշրջանում ընդհանրապես հայոց ցեղասպանության վերաբերյալ իրազեկվածության աստիճանը ցածր է: Ըստ մեր խմբային հարցախույզի ամփոփ արդյունքների՝ հարցվածների միայն 5 %-ն է լսել այդ մասին: Թեև առաջին հայացքից անգամ այս թիվը կարող է զարմանք հարուցել, սակայն այստեղ պետք է նկատի ունենալ ինչպես իրավիճակային պատասխանների հավանականությունն ու հարցարանի համատեքստը, այնպես էլ որոշ ճապոնացի հեղինակների կողմից հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված բրոշյուրների ու էլեկտրոնային կայքերի հրապարակումը. Հայաստան ժամանող զբոսաշրջիկների խմբերի թվի աճումը, Հայաստանի ու հայ ժողովրդի մասին ճապոնական հեռուստածրագրերով հազվադեպ հեռարձակվող հաղորդումները: Այս ամենի մասին ավելի հանգամանորեն տե՛ս Ն. Հովհաննիսյան, Ռ. Կարապետյան և Մ. Ամիրխանյան, *Հայաստան-Ճապոնիա*: Երևան, 2005:

Ամփոփելով երրորդ գլուխը՝ կարող ենք նշել, որ Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացումն իր հերթին որոշակի հակադարձ ազդեցություն է գործել ճապոնացիների էթնիկական ինքնության փոխակերպումների վրա, ինչը շարունակական և անընդհատ գործընթաց է, որը չի սկսվում մի կոնկրետ կետում և չի էլ ավարտվում մեկ այլ կոնկրետ կետում: Հարկ է նշել, որ արդիականացման և էթնիկական ինքնության փոխառնչության խնդիրների հետազոտման՝ սույն ուսումնասիրության հիմքում դրված ժամանակագրական բաժանումը հարաբերական է և խարսխված է ճապոնացիների հանրային, հավաքական գիտակցության մեջ հետպատերազմյան արդիականացման՝ որպես կայացած ու փաստացի իրողության հավաքական ընկալման հանգամանքի վրա:

